Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԼԵՎՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
(ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ)

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ
1 9 3 2

636
Լ-44

30 JUL 2010

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ
ԼԵՎՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

636
Լ-44

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1932

02 MAY 2013

21.214

Նվիրում եմ գյուղատնտես
ՍԱՐԳԻՍ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻՆ

Հեղինակ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3677
41

КНИГОИЗДАТЕЛЬСТВО
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ"

ՃԱԳԱՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Ընտանի կենդանիներից և վոչ մեկն այնքան ոգտաբեր չե մարդու համար, վորքան ճագարը, այդ փոքրիկ, գեղեցիկ, յերկարականջ արարածը. բայց և միևնույն ժամանակ անասնաբուծության վոչ մի ճյուղն այնքան արհամարհված չի յեղել մեզ մոտ, վորքան ճագարաբուծությունը։

Կովկասը, հեղափոխությունից առաջ, համարյա թե գաղափար չի ունեցել ճագարաբուծության մասին, վորը համարվել ե պարապ ժամանցության առարկա և վորով, իրոք վոր, զբաղվել են գուցե միայն մի քանի տասնյակ սիրողներ իրենց անձնական հաճույքի համար։

Ճագարաբուծությունը, վորպես գյուղատնտեսության մասնաճյուղ, մեր յերկրում գոյություն չի ունեցել։

Համարյա նույնն ե յեղել և ամբողջ մինչ հեղափոխական Ռուսաստանում։ Բացառությամբ Ուկրայնայի մեկ-յերկու գավառների և Մոսկվայի նահանգի Պոդոլսկի գավառի, վորտեղ ճագարաբուծությունը հիմք ե դրել դեռ հեռավոր անցյալում և փոքր ի շատե նկատելի տեղ գրավել այդ գավառների ժողովրդական տնտեսության մեջ, Ռուսաստանը, ընդհանուր առմամբ, անցյալում համարյա ծանոթ չի յեղել անասնաբուծության այդ ճյուղին։

Բոլորովին այլ ե յեղել և այլ ե այժմ արտասահմանում, վորտեղ ճագարաբուծությունը վաղուց ե արժանի կերպով գնահատվել և զարգանալով ու տարածվելով, դարձել ե շատ յերկրների համար հսկայական յեկամուտների աղբյուր։ Վորպեսզի հասկանալի լինի, թե ճագարաբուծությունը զարգացման ինչ աստիճանի յե հասած յեղել արտասահմանում պատերազմից առաջ, բավական ե հաշվի առնել թեկուզ միայն այն, վոր այն ժամանակ համաշխարհային շուկաներում վաճառվելիս ե յեղել տարեկան 125 միլիոն հատ ճագարի մորթի։

Վերջերս ճագարաբուծությունը զարգացման էլ ավելի ուժեղ թափ է ստացել արտասահմանում, վորտեղ ներկայիս, անասնաբուծության այդ ճյուղն համարյա այնքան է ընդհանրացած ու տարածված, վորքան մեզ մոտ հավաբուծությունը։ Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Իտալիայի, Բելգիայի, և Հոլանդիայի վորոշ գավառներում ճագարաբուծությունը դարձել է նույնիսկ գյուղական բնակչության հիմնական զբաղմունքը։ Խոշոր քայլերով առաջ է խաղում ճագարաբուծությունը նայեվ Ամերիկայում և Ավստրալիայում։

Ահավասիկ մի քանի հետաքրքրական թվական տեղեկություններ այդ յերկրների ճագարաբուծության մասին։

Բելգիան, վորը տասը անգամ փոքր է Հյուսիսային Կովկասից և հազիվ Հայաստանի չափ մի յերկիր է, տալիս է տարեկան 30 միլիոն հատ ճագարի մորթի, վորից մի մասը, 6 միլիոն ռուբլու արժողությամբ արտահանվում է Ամերիկա։ Ֆրանսիայում վաճառվում է տարեկան 120 միլիոն հատ ճագարի մորթի։ Այդ յերկրում 1926 թ., ճագարի առեվտուրն ունեցել է 216 միլիոն ռուբլու շրջանառություն։ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները գործ են ածում տարեկան 150 միլիոն հատ ճագարի մորթի, վորից 60 միլիոն հատն արտադրվում է յերկրի ներսում, իսկ մնացածը ներմուծվում է դրսից։ Անգլիայում ճագարի մորթու տարեկան պահանջը կազմում է ավելի քան 100 միլիոն, վորից 60 միլիոնը ներմուծվում է ուրիշ յերկրներից։ Գերմանիան արտադրում է տարեկան 50 միլիոն հատ մորթի։ Չինաստանը՝ 20 միլիոն։ Ավստրալիան, չհաշված յերկրի ներսում գործածվածը, արտահանում է տարեկան 100 միլիոն հատ մորթի։

Մեր օրերում համաշխարհային շուկաներում, ընդհանուր առմամբ, վաճառվում ու գնվում է ավելի քան տարեկան 400 միլիոն հատ ճագարի մորթի։ Հաշվելով մորթու հետ նայեվ միս, աղիքներ և բրդի արժեքը, ճագարների այդ ահռելի քանակությունը կկազմի ավելի քան 2 միլիարդ ռուբլի հնչուն վոսկով։

Խորհրդային Միությունը արմատական սոցիալիստական վերափոխության յենթարկելով ամբողջ ժողովրդական տնտեսությունը և նպատակ ունենալով յերկրի բոլոր արտադրող ուժերի վերելքն ու զարգացումը, կյանքի յե կոչել նաև մինչ այժմ մեզ մոտ անուշադրության մատնված ճագարաբուծությունը, վորը նույնպես բռնել է այժմ զարգացման ու բարգավաճման ուղին։ Գյուղատնտեսության այդ ճյուղը Խորհրդային Միության համար կրկնակի առավելություններ ունի. նա վոչ միայն արտահանության նյութ (մորթի) կարող է տալ և ուրեմն լայնացնել մեր վալյուտային աղբյուրները, այլ և, վորպես միս արտադրող մասնաճյուղ, կարող է զգալի գործոն հանդիսանալ թե գյուղական ազգաբնակության և թե քաղաքների ու արդյունաբերական կենտրոն-

ների սննդամթերման այժմյան ժամանակավոր դժվարությունները վերացնելու խնդրում։ Այդ յերկու հավասարապես կարեվոր հանգամանքները դրդում են մեր յերկրի համապատասխան մարմիններին առանձին ուշադրություն դարձնել ճագարաբուծության վրա, վորն արդեն, վերջին յերկու յերեք տարվա ընթացքում, սկսել է բավական ամուր դիրքեր գրավել մեր ժողովրդական տնտեսության մեջ։ Կոլտնտեսական ճագարաբուծությունը զարգացման ուժեղ թափ է ստացել Համկոմկուսի Կենտկոմի և Ժողկոմխորհի 1931 թվի հուլիսի 30-ի դիմումից հետո, վորում ասված է՝ «Անասնաբուծության բնագավառում սոցիալիստական սեկտորի (խորհրդ. տնտեսությունների և կոլտնտեսական ապրանքային ֆերմերի) ստեղծումն ու ամրացումը համարել մոտ ժամանակվա կենտրոնական խնդիրը գյուղատնտեսության բնագավառում։ Առաջարկել կոլտնտմիությանը դնել կոլտնտեսությունների առաջ ճագարաբուծական ռայոններում ամեն մի կոլտնտեսության մեջ կոլեկտիվ կերպով 100-ից 200 ճագար մեծացնելու և կոլեկտիվ կերպով պետությանը վաճառելու խնդիրը։ Առաջարկել Ցենտրոսոյուզին նույնպիսի խնդիր դնել գյուղական սպառողական ընկերությունների առաջ»։

Խորհրդային միության բոլոր ծայրերում այժմ արդեն հարյուրավոր կոլտնտեսային ճագարաբուծական տնտեսություններ են կազմակերպված։ Ստեղծված են մերձ-քաղաքային կոոպերատիվ ճագարանոցներ։ «Գոստորգը», «Ցենտրոսոյուզը», «Սոյուզպուշնինան» և այլն բազմաթիվ խորհրդային տնտեսություններ են կազմակերպվել արտասահմանից բերված, զտարյուն ճագարները բազմացնելու նպատակով։ Անցյալ 1931 թվին Միության սահմաններում մթերվել է արդեն 7 միլիոն հատ ճագարի մորթի։ Շնորհիվ մի շարք միջոցառումների, անասնաբուծության այդ ճյուղը խոստանում է զարգացման հսկայական թափ։

Մոսկվայում կազմակերպված է ճագարաբուծական կոլտնտեսական կենտրոն (Кролиководколхозцентр), վորն իր բազմաթիվ բաժանմունքներն ու լիազորներն ունի Միության շատ ու շատ մասերում։ Համաձայն միութենական Հողժողկոմի կարգադրության, այդ կազմակերպությունը պետք է, 1932 թվին, կոլտնտեսային ապրանքային ճագարաբուծական ֆերմերի թիվը հասցնի 11.000-ի և ցեղային ֆերմերի թիվը 804-ի, վորոնց հիմնական հոտը հանելու յե 8.500.000 գլխի։ Նույն թվին հիշյալ կոլտնտեսային ֆերմերը պետք է տան 10.000 տոնն միս և 12.000.000 հատ մորթի։

Բացի դրանից, Համամիութենական վորսորդական միության ճագարների հիմնական հոտը պետք է կազմի 1.250.000 գլուխ, Սպառողական միությանը՝ 3.000.000 գլուխ, Հաշմանդամների միությանը՝ 100.000 գլուխ և յերկաթուղային ճաշարաններինը՝ 60.000 գլուխ։

Զարգանում է նաև կոլտնտեսությունների չհամայնացված ճագարաբուծությունը շնորհիվ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի այս տարվա մարտի 26-ի վորոշման, վորում ասված է՝ «Կուսակցության նպատակը կայանում է նրանում, վոր ամեն մի կոլտնտեսական ունենա իր կովը, մանր անասունը, թռչունը»։ Այս վորոշումը մեծ գործոն հանդիսացավ կոլտնտեսականների և անհատականների ագարակային ճագարաբուծության տարածման խնդրում։ Կոլտնտեսականները պատասխանեցին այդ վորոշմանը անհամար ագարակային ճագարանոցներ ստեղծելու միջոցով, վորոնց թիվն այս տարի հասցվելու յե 5.500.000-ի։

Սակայն ճագարաբուծությունը վճռականորեն և բուռն թափով առաջ է շարժվում Կենտկոմի այս տարվա մայիսի 8-ի վորոշումից հետո՝ «Ճագարաբուծական տնտեսություններ կազմակերպել գործարանների կից, բանվորական փակ բաշխիչների յեվ գործարանային ճաշարանների միջոցով։ Ձեռնարկություններից դուրս գոյություն ունեցող ժողսննդի ճաշարաններին կից՝ Դպրոցներին, մանկասներին, հիվանդանոցներին յեվ հանգստյան տներին կից»։ Այս վորոշումը վերջնականապես կենտրոնացրեց խորհրդային հասարակայնության և բոլոր շահագրգռված կազմակերպությունների ուշադրությունը ճագարաբուծության վրա, վորն այժմ արդեն, իրոք վոր, դառել է բոլորի հետաքրքրության ու փայփայանքի առարկան։ Կուսակցության Կենտրոնական որգանի՝ «Պրավդայի» և ամբողջ խորհրդային մամուլի այդ առթիվ վերջերս տարվող կամպանիան մեծ արձագանք գտավ ամբողջ Միության մեջ և այժմ հազարավոր գործարաններ, ճաշարաններ, մերձքաղաքային կոոպերատիվ տնտեսություններ և բանվորական փակ բաշխիչներ սեփական ճագարանոցներ են կազմակերպում իրենց սպառողների մսի պահանջն ամենայն արագությամբ բավարարելու նպատակով։

Միաժամանակ լայն չափերով տարածվում է ճագարաբուծությունը նաև բանվորների մեջ։

Ընթացիկ 1932 թվին խորհրդային ճագարաբուծությունը պետք է տա 41.300.000 հատ ճագարի մորթի և 15.000 տոնն ապրանքային միս։

Հյուսիսային Կովկասն իր ահագին հողային տարածություններով, կերի իր լայն աղբյուրներով, կլիմայական ու տեղագրական պայմաններով, բոլոր նախադրյալներն ունի ճագարաբուծության զարգացման համար։ Անասնապահության այդ ճյուղը մուտք գործելով մեր յերկրամասը, դեռ 1923—24 թվականներին տարածվել է լայն չափերով, ընդգրկելով ավելի քան 46 ռայոն, վորոնց մեջ աչքի յեն ընկնում մանավանդ Մեչոտկայի, Սալի, Բելոգլինի, Ստավրոպոլի, Եսենտուկու և Կրասնոդարի ռայոնները։ Հյուսիսային Կովկասն ունի 8 խորհրդ. ճագարաբուծական տնտեսություն՝ մոտ 3720 ցեղային ճագարներով, 165 կոլտնտեսային ճագարաբուծական ֆերմա, տասնյակ հազարավոր ճագարներով, 37

մերձքաղաքային և այլ ճագարաբուծական ընկերություններ և այլն։ Զարմանալի արագությամբ տարածվում է ճագարաբուծությունը նաև կոլտնտեսականների մեջ։

Ընթացիկ 1932 թվին մեր յերկրի կոլտնտեսային ապրանքային ճագարաբուծական ֆերմերի թիվն հասնելու յե 1044-ի, 666.375 արտադրող ճագարով և ցեղային ֆերմերի թիվը 32-ի՝ 7.425 արտադրող ճագարներով։ Կոլտնտեսային ֆերմերի համար անասուններ ձեռք բերելու նպատակով հատկացված է 1.039.500 ռուբլի և շինարարության համար՝ 1.038.400 ռուբլի։

Թե ինչ թափով է զարգանում մեր յերկրամասում անասնաբուծության այդ ճյուղը, շատ լավ յերևում է վերջին 4 տարվա ընթացքում մթերված մորթիների քանակությունից.

1927-28 թ.	մթերված է	28.270	մորթի
1928-29 թ.	»	82.000	»
1929-30 թ.	»	406.873	»
1931 թ.	»	1.528.308	»
1932 թ.	ծրագրված է	4.500.000	»

Հետզհետե ուժեղացվում է պայքարը ճագարաբուծության գլխավոր խոչնդոտի—վարակիչ հիվանդությունների դեմ, վորոնք (մանավանդ կոկցիդիոզը) յերբեմն մեծ ավերումների պատճառ են լինում մեր ճագարաբուծական տնտեսություններում։ Յեռանդուն միջոցներ են ձեռք առնվում մեր յերկրի հասարակ ճագարների ազնվացման համար։ Հատուկ ուշադրություն է կենտրոնացվում կերի աղբյուրների կազմակերպման վրա։ Մոտակա ապագայում իրենց գործնական լուծումը կստանան աշխատանքի կազմակերպության խնդիրները։

Շնորհիվ այս բոլոր միջոցառումների, խորհրդային ճագարաբուծությունը զարգանալու այնպիսի պայմաններ է ձեռք բերում, վորոնց մասին կապիտալիստական յերկրներում յերազել անգամ չեն կարող։

Մոտակա 4—5 տարվա ընթացքում մեր ճագարաբուծական տնտեսությունները կկարողանան այնքան միս և մորթի արտադրել, վոր լի ու լի բավարարելով ներքին կարիքները, կհեղեղեն նայև արտասահմանյան շուկաները, իրենց կամքը թելադրելով նրանց։

Մենք պետք է հասնենք և առաջ անցնենք կապիտալիստական յերկրներից նայև ճագարաբուծության բնագավառում։

ՃԱԳԱՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Ճագարը շատ շատերի համար անծանոթ մի կենդանի յե, վորին սովորաբար անտեղյակ մարդիկ շփոթում են նապաստակի հետ, շնորհիվ նրանց արտաքին նմանության։ Սակայն չնայած դրան և չնայած, վոր

ճագարը վորպես խոտակեր կրծող կենդանի, պատկանում ե նապաստակների ընտանիքին, նա նապաստակ չե և շատ ու շատ իր նշաններով ու հատկություններով զգալի չափով տարբերվում ե նրանից։

Վորո՞նք են այդ տարբերվող նշանները։

Նապաստակը ման ե ածում ձագերին իր արգանդում 50 օր, իսկ ճագարը՝ միայն 30—32 օր։

Նապաստակը սովորաբար ծնում ե վոչ ավելի քան 4 ձագ, վորոնք աշխարհ են գալիս բրդով ծածկված և բաց աչքերով ու համարյա բոլորովին պատրաստ ինքնուրույն, առանց մոր կաթին ապրելու։ Ծնելուց միքանի օր հետո մայրն ազատ ե արձակում ձագերին, թողնելով նրանց բախտի քմահաճույքին։ Իսկ ճագարը ծնում ե 8—12 և մինչև անգամ 16 ձագ, մերկ (առանց բրդի), փակ աչքերով ու բոլորովին անօգնական վիճակում և բավական յերկար ժամանակ՝ 45—60 օր, պահում ե նրանց իր մոտ, կերակրում իր կաթով, խնամում քնքշորեն ու մեծացնում։

Նապաստակը մեծ մասամբ թափառական կյանք ե վարում և կարելի յե ասել, մշտական բույն յերբեք չի ունենում, օգտագործելով այդ նպատակի համար բնության մեջ գտնվող պատրաստի հարմարությունները — փտած ծառերի խոռոչը, գետնի մեջ յեղած բնական փոսերը և այլն։ Իսկ վայրի ճագարը, վորից և ծագել ե մեր այժմյան ընտանի ճագարը, ինքն ե շինում իր բույնը, վոլործուն խոռոչ փորելով գետնի տակ։ Նա օրվա մեծ մասն անց ե կացնում բնի մեջ և դուրս ե գալիս արածելու՝ գլխավորապես գիշերները։ Ճագարը, վորպես գիշերվա կենդանի, ավելի զարգացած լսողություն և տեսողություն, ունի շատ ավելի շարժուն ե ու խորամանկ, քան նապաստակը ու թեպետ այնքան արագ չի վազում, վորքան նապաստակը, բայց ավելի ճարպիկորեն ե փախչում ու խույս տալիս թշնամիներից։

Նապաստակը սովորաբար ձմեռները ծածկվում ե սպիտակ մորթով, իսկ ճագարը ձմռանը իր գույնը չի փոխում։

Նապաստակը յերբեք այնքան փոքր չի լինում, վորքան լինում ե ճագարը, վորի քաշը յերբեմն հազիվ հավասար ե լինում 1 կիլոգրամի (ամենախոշոր ճագարի քաշը 9 կիլոգրամ ե)։

Նապաստակի և ճագարի միջև յեղած այս տարբերություններից բացի արժանի յե ուշադրության և այն, վոր այդ կենդանիները զարմանալի ատելությամբ են լցված իրար դեմ։ Նրանք հանդիպելիս անպայման կատաղորեն հարձակվում են միմիանց վրա և բռնվում անխնա կռվի, վորը շատ անգամ վերջանում ե ծանր վերքերով և կամ մեկն ու մեկի մահով։

Արժանի յե ուշադրության և այն, վոր նապաստակի ու ճագարի զուգավորումից սերունդ չի ստացվում։ Այդ խնդրով շատ գիտնականներ են հետաքրքրվել և բազմաթիվ փորձեր կատարել, բայց վոչ մի

արդյունք չեն ստացել։ Խնդրի այսպիսի լուծումը վերջնականապես հերքում ե դեռ մինչև այժմս շատերի ունեցած այն կարծիքը, թե ճագարն ուրիշ վոչինչ ե, յեթե վոչ ընտանիացած նապաստակ։ Մեր ընտանի ճագարը ծագել ե վոչ թե նապաստակից, այլ վայրի ճագարից, վորը դեռ մինչև հիմա յել գոյություն ունի բնության մեջ և բավական տարածված ե Միջերկրական ծովի հյուսիսային ափերում (Ֆրանսիայում և Իսպանիայում)։

Վայրի ճագարը փոքրիկ մի կենդանի յե. նրա մարմնի յերկարությունը լինում ե մոտ 40 սանտիմետր, իսկ քաշը տատանվում ե 1—$2^{1}/_{2}$ կիլոգրամի միջև։ Նրա գլուխը կլոր ե, մռութը տափակ, քթածակերը խոշոր, շրթունքն հաստ և շարժուն, աչքերը խոշոր և մի քիչ դուրս ընկած։ Ականջները շատ մեծ չեն, նրանց յերկարությունը գլխի յերկարությունից կարճ ե։ Պոչը նույնպես կարճ ե՝ 6—7 սմ. և վեր ե ցցված։ Հետևի վոտներն ավելի յերկար են քան առաջինները։ Հետևի վոտքերին հինգ մատ կա, իսկ առաջիններին՝ չորս։

Վայրենի ճագարն իր գույնով շատ լավ հարմարվել ե միջավայրին։ Սիրելով ապրել ավազոտ գետնի մեջ, սարերի թփոտ ու մացառոտ լանջերում, նա ձեռք ե բերել համապատասխան պաշտպանողական գույն։ Նրա մոխրագույն կռնակի, վզի և վոտքերի վրա տեղ-տեղ ցրված են ժանգի գույն ունեցող լաքաններ։ Գլուխն ու կուրծքն ամբողջովին ծածկված են շեկ դեղնավուն գույնով։ Փորը սպիտակ ե, իսկ պոչը ներքևից սպիտակ, իսկ վերևից սև։

Վայրի ճագարի եգը 5—6 ամսական հասակում արդեն ընդունակ ե սերունդ արտադրելու. ծնում ե նա տարեկան 6—7 անգամ (գարնանից մինչև ուշ աշուն), բերելով ամեն անգամ 8 ձագ, վորոնք ապրում են մոր արգանդում 30—32 օր։ Վորձը, վորն առհասարակ եգից խոշոր ե լինում, մտնում ե սեռական հասունության շրջանը 6—7 ամսական հասակում։ Վայրի ճագարներն ապրում են խմբերով։ Նրանց կյանքը տևում 6—8 տարի։

Թե վորն ե վայրի ճագարի բուն հայրենիքը, դեռևս վերջնականապես պարզված չե։ Պրոֆեսոր Բողդանովը յենթադրում ե, վոր այդ կենդանին ծագել ե հենց այնտեղ, վորտեղ նա այժմ ամենից ավելի ե տարածված իր վայրի վիճակում, այսինքն Միջերկրական ծովի հյուսիսային ափերում։ Շատ մասնագետներ ասում են, վոր ճագարի հայրենիքը Հյուսիսային Աֆրիկան ե, վորտեղից նա իբր անցել ե Յեվրոպա։ Սակայն ամենից ավելի տարածված կարծիքն այն ե, վոր ճագարը ծագել ե հարավային Ասիայում, վորտեղ, դեռ հեռավոր անցյալներում իմացել են նրան պահելու և բազմացնելու միջոցները։

Ասում են Կոնֆուցիոսը, մեզանից դեռ 24 դար առաջ, ուշադրություն ե դարձրել ճագարի օգտակարության վրա և քարոզել ե տարա-

ծել նրան։ Չինաստանում և Հնդկաստանի մի մասում ճագարն համարվել է սրբազան կենդանի, արժանի աստվածներին զոհաբերելու։ Այդ յերկրներում ճագարը դեռ ամենահեռավոր ժամանակներում, վորոշ դեր է խաղացել վորպես բնակչության սննդի աղբյուր։

Ասիայից Յեվրոպա ընկնելով ճագարը տարածվել է հին Հունաստանում, Հռոմում և մանավանդ Իսպանիայում։ Հույները նույնպես աստվածացնում եյին այդ կենդանուն նրա աճեցողության համար և մարմարյա քանդակներ կերտում նրա պատվին։ Հռոմեյացիները գնահատել են գլխավորապես ճագարի միսը, վորն այն ժամանակում, բարձր արժեք ունենալու պատճառով, միայն պալատներին յեղել է մատչելի։ Իսպանիայում վայրենի ճագարն այնքան է տարածված յեղել վոր սկսել է վոչնչացնել ցանքերն ու ահագին վնասներ հասցնել ազգաբնակչությանը։ Իտալացի պրոֆեսոր Ֆրանչեսկո Մայոկկոն ասում է, վոր ճագարների դեմ կռվելու համար Իսպանիացիները ստիպված են յեղել ոգնություն խնդրել Հռոմի կայսերներից։ Հռոմեյացիները, մեզանից դեռ 1800 տարի առաջ, Իսպանիան գրավելու ժամանակ, այդ յերկրին «ճագարների յերկիր» են անվանելիս յեղել։ Վոմանք յենթադրում են նույնիսկ, վոր Իսպանիա՝ բառը, վոչ այլ ինչ է, յեթե վոչ փյունիկերեն Spania (սպանիա) բառը, վորը ճագար է նշանակում։ Իսպանիայից ճագարները տարածվել են Ֆրանսիա և Մեծ Բրիտանիա և հետզհետե անցել են աշխարհի բոլոր մասերը, ինչպես նայև Ամերիկա ու Ավստրալիա։ Ուր վոր մուտք է գործել այդ կենդանին, հարմարվել է միջավայրին, հաստատվել և բազմացել զարմանալի արագությամբ։ Շատ բնորոշ է այդ տեսակետից Ավստրալիայում տեղի ունեցած իրողությունը։

Մինչև 18-րդ դարը Ավստրալիայում ճագար գոյություն չի ունեցել։ 1860-կան թվականներին տանում են այդ յերկիրը 7 հատ եգ ու վորձ ճագար, ազատ արձակում բնության մեջ և շուտով մոռանում նրանց մասին, կարծելով, վոր այդ քնքույշ արարածներն անպայման պետք է կորչեն ու վոչնչանան կյանքի նոր պայմաններում։ Սակայն մի քանի տարի անց ճագարներն իրենք են հիշեցնում իրենց մասին։ Նրանք այդ ժամանակամիջոցում այնքան են բազմանում, վոր ուտելով ու վոչնչացնելով ցանքսերն ու այգիները, մեծ վնասներ են հասցնում գյուղատնտեսության։ Բանն այնտեղ է հասնում, վոր ազգաբնակչությունը ստիպված է լինում ցանցով շրջապատել բոլոր ցանքսերն ու բանջարանոցները։ Հատուկ պարգև է նշանակվում ամեն մի սպանած ճագարի համար։ Իշխանությունը, ճագարների դեմ կռվելու համար, ահագին քանակությամբ վարձու վորսկաններ է պահում։ Սակայն այդ միջոցներով չի հաջողվում ճագարների առաջն առնել, վորոնք ամսե ամիս աճելով, հեղեղում են ամբողջ յերկիրը։ Այդ բոլորը ստիպում է իշխանությանը, դիմել

մի ուրիշ միջոցի։ Յեվրոպայից Ավստրալիա են բերում և նույնպես ազատ արձակում ճագարի ամենավոխերիմ թշնամիներին՝ աղվեսին, ժանդաքիսին և ամերիկյան աքիսին։ Այդ գիշատիչ կենդանիները անխնայորեն լափելով ճագարներին, իրենք յեվս սկսում են աճել ու բազմանալ չտեսնված արագությամբ, այնպես վոր մինչ այդ՝ հիշյալ կենդանիների մասին գաղափար չունեցող Ավստրալիան այժմ ամեն տարի արտահանում է 800 հազար աղվեսի մորթի, այդքան էլ ժանտաքիսի և աքիսի մորթի։ Իսկ թե վորքան է հաջողվել վոչնչացնել ճագարներին Ավստրալիայում, յերևում է նրանից, վոր 1926 թվին, այդ յերկիրն արտահանել է 60 միլիոն հատ ճագարի մորթի, 1927 թվին 70 միլիոն հատ, իսկ ներկայիս արտահանում է տարեկան 100 միլիոն հատ և ահագին քանակությամբ էլ ինքն է գործածում։

Պետք է յենթադրել, վոր ճագարը, բազմանալու իր այս զարմանալի ընդունակությամբ միայն, Իսպանիայում և Ավստրալիայում չէ վոր վնասներ է հասցրել և մեծ հոգսերի պատճառ դարձել բնակչության համար։ Հավանական է, վոր հեռավոր անցյալներում, ճագարն Ասիայի շատ յերկրներումն էլ է ահ ու սարսափ տարածել, քանդելով նրանց տնտեսությունը։ Գուցե հենց դա յէ պատճառը, վոր Մովսեսն անիծել է ճագարին և արգելել է իր հետեվորդներին պահել այդ կենդանուն և կամ ուտել նրա միսը։ Մահմեդը նույնպես է վարվել, քարոզելով վոչնչացնել յերկրի յերեսից «անիծված» ճագարներին։ Այնտեղ, ուր այդ կրոնները դեռևս ազդեցություն ունեն, ճագարներն «հարամ» են համարվում։

Հյուսիսային Կովկասի լեռնցիները դեռևս չեն թոթափել իրենց ուսերից անցյալից ժառանգած անմիտ վերաբերմունքը դեպի ճագարը։ Հայերը յերկար դարեր ապրելով փոքր Ասիայի մահմեդական ժողովրդների մեջ, ընդունել են նրանցից այդ նախապաշարմունքը։ Մեր գյուղացիության մեջ այնպիսի կարծիք կա, վոր ճագարը դժբախտություն է բերում նրան, ում տանը վոր ապրում է։ Չնայած, վոր Ռուսաստանի վորոշ մասերում ճագարաբուծությունը շատ վաղուց է հայտնի, ռուս գյուղացիությունն ընդհանուր առմամբ, համարյա նույնպես, հեղափոխությունից առաջ, յերես է դարձնելիս յեղել ճագարից։

Ճագարաբուծությունը տարածված է ներկայիս բոլոր առաջավոր կապիտալիստական յերկրներում։ Նա պետք է ամենալայն չափով տարածվի և մեր յերկրում. անասնաբուծության այդ ճյուղն, հսկայական յեկամուտների աղբյուր ստեղծելով հանդերձ, միաժամանակ վորոշ կուլտուրական դեր կարող է խաղալ, քանդելով արմատացած պապենական նախապաշարմունքները։ Ճագարը նախապաշարմունքների և կրոնի դեմ մղվող պայքարում նույնպես վորոշ գործոն է։

ԸՆՏԱՆԻ ՃԱԳԱՐԸ

Այն մասին, թե երբ և վոր յերկրումն է ճագարն առաջին անգամ ընտանիացվել,— տարբեր կարծիքներ կան։ Գերմանացի պրոֆեսոր Նախտսհեյմն ասում է, վոր ճագարը, վորպես ընտանի կենդանի, հայտնի յե յեղել Իսպանիայում դեռ առաջին դարի յերկրորդ կեսերում։ Ըստ Ն. Լիսովսկու, դրանից առաջ Հռոմում արդեն գոյություն է ունեցել հատուկ ճագարաբուծարաններ պալատներին միս մատակարարելու համար։ Պատմական հիշատակարաններն ասում են, վոր Լուկուլլոսի խնջույքների ժամանակ, ճագարի մսից պատրաստված կերակուրներ են գործածելիս են յեղել։ Վոմանց կարծիքով, մինչ այդ Հունաստանում արդեն ծանոթ են յեղել ճագար պահելու ձևերին։ Իսկ պրոֆեսոր Մակարեվսկին ասում է, վոր մարդն առաջին անգամ սկսել է ճագար պահել և բազմացնել Չինաստանում, մեզանից դեռ 2400 տարի առաջ։

Հազարավոր տարիներ ապրելով մարդու հետ և մարդու խնամքի ներքո, ճագարն, իր մարմնի ձևերով և մորթու գույնով, մեծ փոփոխություններ է վերապրել։ Ճագարի վրա, ավելի քան ուրիշ վորևե ընտանի կենդանու վրա, նկատվում է մարդու կամքի ազդեցությունը, վորն համարյա անճանաչելի յե դարձրել այդ կենդանուն՝ նրա նախորդների հետ համեմատած։

Այնտեղ, ուր ճագարն հարկավոր է յեղել վորպես մսացու կենդանի, մարդն աշխատել է զարգացնել նրան այդ ուղղությամբ և յերկար ժամանակ սերնդից սերունդ ձեռքի տակ յեղած ճագարներից ամենաշատ միս տվող եզը զուգավորվելով ամենաշատ միս տվող վորձի հետ, կարողացել է առաջ բերել հատուկ մսացու ճագարներ։ Թե ինչ աստիճան՝ հաջողություն է ունեցել մարդն այդ խնդրում յերևում է նրանից, վոր այժմ գոյություն ունեցող ճագարների մի քանի տեսակները վեց անգամ ավելի խոշոր են քան վայրի ճագարները և ուրեմն շատ ավելի յեն միս տալիս քան վերջինները։

Այնտեղ, ուր գնահատվել է ճագարի մորթին և ուրեմն ուշադրություն է դարձվել վերջինիս գույնի, փափկության և այլ հատկությունների բարելավման վրա, այդ նույն արհեստական ընտրության միջոցով, էլ ավելի զարմանալի արդյունքների յե հասել։ Այժմ գոյություն ունեցող ճագարների տեսակներն իրենց բազմազան ու գեղեցիկ գունավորությամբ այնքան են տարբերվում վայրի ճագարից, վոր այդ տարբերությունը, շատերի համար, հիմք է դառել կարծելու, թե իբր վայրի և ընտանի ճագարները բոլորովին տարբեր ցեղերի պատկանող կենդանիներ են։

Ընտանի ճագարները, ժամանակի ընթացքում փոփոխության յենթարկվելով և հեռանալով իրենց նախահայրերից թե մարմնի ձևերով

և թե գույներով, միաժամանակ, իրենց զարգացման ընթացքում, հետզհետե հեռացել են նաև միմյանցից, ավելի ու ավելի տարբերվելով իրարից։ Մարդու կամքի և կլիմայական ու այլ բնական պայմանների ազդեցության շնորհիվ, հետզհետե առաջ են յեկել ընտանի ճագարների բազմաթիվ տեսակներ, վորոնք առաջ բնության մեջ գոյություն չեն ունեցել։

Ընտանի ճագարների այդ տեսակներն իրենց խոշորությամբ զգալի չափով տարբերվում են միմիանցից. Նրանց ծանրությունը (քաշը) հասնում է 2-ից մինչև 9 կիլոյի։ Նրանց տարբերությունն էլ ավելի ակնհայտ է մորթիների գունավորության մեջ, վորոնք զարմացնում են իրենց բազմազանությամբ։ Զգալի չափով տարբերվում են միմիանցից նաև իրենց մազերի (բրդի) յերկարությամբ. Թեպետ սովորաբար ընտանի ճագարների մազերը կարճ են՝ 2—3 սանտիմետր, բայց գոյություն ունեն մի քանի տեսակ ճագարներ ավելի կարճ մազերով՝ 1—1½ սանտիմետր և մի քանի տեսակ ճագարներ անհամեմատ ավելի յերկար մազերով, վորոնք հասնում են մինչև 24 սանտիմետրի։

Ինչպես ասված է վերևում, ճագարները տարբերվում են միմիանցից նաև իրենց մարմնի ձևերով, սկսած գլխի մեծությունից, կոնակի և կրծքի լայնությունից՝ մինչև ականջների ու պոչի յերկարությունը և այլն, սակայն այդ մասին կխոսվի առանձին «ճագարների տեսակները» անունը կրող գլխում։

Թեպետ ճագարն իր ծագումով տաք յերկրի կենդանի յե, բայց նա կապելով իր բախտը մարդու բախտին ու նրա հետ միասին տարածվելով աշխարհի բոլոր ծայրերը, հարմարվել է ամենատարբեր կլիմաներին։ Ճագարը կարող է տարածվել ու բազմանալ ամբողջ Կովկասում, սկսած արևառատ Արարատյան դաշտից մինչև Կարաչայի ձյունապատ լեռները և Դոնի ու Սալի տափարակները։

Ընտանի ճագարները շատ ու շատ հատկություններ ձեռք բերելով և, ինչպես տեսնում ենք, զգալի չափով տարբերվելով իրենց նախահայրերից թե արտաքին և թե ներքին նշաններով,—համարյա անխախտ են պահել իրենց նախահայրերի արժեքավոր գծերից մեկը, դա այն է, վոր նրանք կերի վերաբերյալ խստապահանջ չեն։ Նրանց հիմնական կերակուրը խոտն է, ծառերի տերևներն ու ճյուղերը։ Ուտում են նաև գազար, տակ, հացահատիկներ և այլն։ Միաժամանակ, չնայած, վոր ճագարի որգանիզմն անդադար լարված գործունեյության մեջ է (արագ մեծանալը, հաճախ ծնելը և այլն) նա շատակեր ու բկլատ չե։

Ընտանի ճագարը սակավապահանջ է նաև ապրելու հարմարությունների խնդրում։ Նա անտրտունջ անց է կացնում իր ամբողջ կյանքը վանդակում և կամ ցանկապատած վորևե հողամասում, գետնի տակ բուն փորելով իրեն և իր ձագերի համար։

Այս բոլոր հանգամանքներն այն են ասում, վոր ճագարն արժանի յե մեր առանձին ուշադրության: Քիչ պահանջներ ունեցող այս կենդանին տալիս ե շատ արժեքավոր արտադրանք. միս, մորթի, կաշի և այլն, վորոնք ահագին դեր կարող են խաղալ թե վորպես արտահանության նյութ և թե մեր յերկրի ներքին համապատասխան պահանջները բավարարելու խնդրում:

ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ՃԱԳԱՐԸ

ՄԻՍԸ

Ճագարը, նայած ցեղին, տալիս ե 1-ից մինչև 6 կիլոգրամ միս, վորն իր համով, սննդարարությամբ և մարսողականությամբ բարձր ե մարդու գործածած բոլոր տեսակի մսերից: Սակայն չնայած դրան, մեզանից դեռ 15—20 տարի առաջ, ճագարի միսը, պապենական նախապաշարմունքների պատճառով, այնքան լայն գործածության առարկա չի յեղել, վորքան հիմա:

1914 թվին պատերազմի ժամանակ, յերբ մսի պահանջն, հասկանալի պատճառներով, ահռելի չափերի յե հասնում և պատերազմող պետությունների շատերի համար ծանր վիճակ ստեղծվում,—բնականորեն բոլոր նախապաշարմունքներն ոդն են ցնդվում: Անգլիայում, Գերմանիայում, Բելգիայում հենց այդ ժամանակվանից ե ճագարաբուծությունը զարգացման ուժեղ թափ ստանում և ճագարի միսն ել նըկատելի տեղ գրավում սննդի առարկաների շարքում:

Վորպեսզի հասկանալի լինի թե ճագարի մսի գործածությունն ինչ չափերի յե հասել մեր որերում, բավական ե գիտենալ թեկուզ այն, վոր միայն Լոնդոնն ուտում ե տարեկան մոտ 48 միլիոն հատ ճագար: Անգլիայում ճագարի մսից պատրաստված կերակրները թե բանվորների և թե լորդերի սիրած ուտելիքն են հանդիսանում: Ամերիկան արտահանում ե Մեծ Բրիտանիա տարեկան 17 հազար տոնն (10 միլիոն փութ) ճագարի միս:

Ֆրանսիայում, վորտեղ ճագարաբուծությունն ավելի առաջ ե տարածվել, ճագարի միսն համարվում ե լայն սպառման առարկա: Փարիզի բոլոր ճաշարանների կերակրների որացուցակում ճագարը միշտ իր տեղն ունի: Ֆրանսիան 1926 թվին գործ ե ածել յերկրի ներսում և արտահանել ե ուրիշ յերկրներ 160 միլիոն ռուբլու ճագարի միս:

Այժմ ճագարի միսը գործ ե ածվում բազմազան կերպով. տապակած, խորոված, ծեծված, ջրալի կերակրի մեջ, վորպես ապուխտ, յերշիկ և պահածոյի ձևով և այլն: Կանադայում և Ավստրալիայում գոյություն ունեն հատկապես ճագարի մսից պահածոներ պատրաստող հսկայական գործարաններ, վորոնց տասնյակ միլիոն ռուբլիների հասնող արտադրանքը տարածվում ե ամբողջ աշխարհում և մանավանդ Անգլիայում:

Շատերի այն կարծիքը, թե իբր ճագարի միսը նապաստակի մսի նման կապտավուն գույն ունի և նրա պես ել անհամ ե,—բոլորովին սխալ ե: Ով թեկուզ մի անգամ ճաշակում ե ճագարի միսը, նա համոզվում ե, վոր այդ կարծիքն անհիմն ե և վոր ճագարի միսն իրոք վոր գովական ուտելիք ե: Ճագարի միսը 1930 թվի ձմռան առաջին անգամ հանդես գալով Հյուսիսային Կովկասի բանվորական ճաշարաններում, շատ լավ ընդունելության ե արժանացել: Ճագարի միսը ըսպիտակ ե, հյութալի և հրաշալի հոտ ունի: Համեղ ե մանավանդ չաղացած ճագարի միսը, վորը կարելի յե համեմատել վառեկի և կամ, ավելի շուտ, հնդկահավի մսի հետ: Ճագարի մսի համը կախված ե գլխավորապես նրանից, թե ինչ սնունդ ե ստացել նա մորթվելուց առաջ: Որինակ, կաղամբով կերակրված ճագարների միսն անհամ ե լինում, իսկ խոտով, հացահատիկներով և արմատապտուղներով կերակրված ճագարը, յեթե մանավանդ դրանց հետ խառնված են նաև լավ բուրմունք ունեցող խոտեր,—հրաշալի միս ե տալիս:

Արտասահմանում սովորաբար ճագարի միսը վաճառվում ե գառի կամ հորթի մսի գնով, իսկ հացահատիկներով և արմապտուղներով կերակրված և գերացած ճագարի միսը գնահատվում ե հավի մսի արժեքով:

Ընտիր համի հետ միասին ճագարի միսն առաջնակարգ տեղ ե բռնում բոլոր մսերի մեջ իր սննդարարությամբ: Մսի սննդարարությունը վորոշվում ե նրա մեջ պարունակվող սպիտակուցային նյութերի քանակությամբ. ահավասիկ մի քանի թվեր, վորոնք ամենայն պերճախոսությամբ ապացուցում են ճագարի մսի սննդարարությունը:

ՋԱՆԱԶԱՆ ՄՍԵՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (Գրամներով) — *Աղյուսակ № 1*

Մսի տեսակները	Ջուր	Սպիտակուց	Ճարպ
Ճագարի մսի 100 գրամի մեջ պարունակվում ե	67	21	10
Կովի » » » » » »	71	20	8
Հորթի » » » » » »	72	18	7
Նիհար խոզի » » » » » »	73	20	7
Չաղ խոզի » » » » » »	47	15	37
Հավի » » » » » »	70	19	9
Սագի » » » » » »	30	16	46

Ըստ Բունգարցի լավ գերացրած ճագարի ճարպը կազմում է նրա մսի մոտ 19 տոկոսը։

Ճագարի մսի դրական հատկություններից մեկն էլ այն է, վոր նա շատ արագ է մարսվում մարդու ստամոքսում։ Այսպես, օրինակ, տավարի միսը մարսվում է 3 ժամ 25 րոպեյի ընթացքում, իսկ ճագարի միսը՝ 2 ժամ 15 րոպեյի ընթացքում։

Ճագարի կմախքը շատ բարակ է և թեթև. Նրա քաշը հազիվ կազմում է ամբողջ անասնի 12—15 տոկոսը։ 4 կիլոգրամ կշռող ճագարի կաշին բռնում է 520 գրամ (13 տոկոս), աղիքները 680 գրամ (17 տոկոս), իսկ մնացածը, այսինքն ինչ վոր ուտվում է՝ միսը, սիրտը, յերիկամունքը, լյարդը, թոքերը և այլն կազմում են 2 կիլո 320 գրամ (58 տոկոս), իսկ ուրեմն վոսկորների հետ միասին կշռում է 2 կ. 800 գրամ, կամ ամբողջ ճագարի 70 տոկ.։ Մյուս կենդանիները ճագարի այդ 70 տոկոսի դիմաց տալիս են հետևյալ տոկոսները (միսն ու վոսկորները միասին հաշված).

Զալացած կովը	*58 տոկոս*
Նիհար կովը	*50 »*
Հորթը	*65 »*
Վոչխարը	*50 »*
Խոզը	*80 »*

Այս բոլորին պետք է ավելացնել և այն, վոր ճագարը, վորպես ամենից ավելի սերունդ տվող կենդանի, վերջին հաշվով ամենից ավելի յել միս է տալիս։ Հյուսիսային Կովկասում 3 տարեկան յերինջը (դեռևս չծնած կով) միջին թվով կշռում է մոտ 215 կիլոգրամ և մորթելուց հետո տալիս է 119 կիլոգրամ միս։ Իսկ ճագարն այդ նույն ժամանակամիջոցում, տալիս է 165 կիլոգրամ միս։ Ի՞նչպես է այդ փոքրիկ անասունը մրցում յերինջի հետ։ Ճագարը ծնում է տարեկան 4 անգամ և ամեն անգամ բերում միջին թվով 7—8 ձագ, բայց յեթե նույնիսկ ընդունենք, վոր ամբողջ տարվա ընթացքում ճագարը ծնում է միայն 20 ձագ և հաշվի առնենք այն, վոր ձագերից ամեն մեկը 7—8 ամսական հասակում տալիս է 2 և կես կիլոգրամ միս և մոտ 300 գրամ ճարպ, կտեսնենք, վոր մեկ ճագարը տալիս է 50 կիլոգրամ միս և 6 կիլոգրամ ճարպ և ուրեմն 3 տարվա ընթացքում՝ 150 կիլոգրամ միս և 18 կիլոգրամ ճարպ։

ՄՈՐԹԻՆ

Ճագարը տալիս է նաև հրաշալի մորթի, վորը գործ է ածվում հագուստեղենի արդյունաբերության մեջ, օգտագործվելով վորպես

մուշտակ վերարկուներ, գլխարկներ և այլ տաք իրեր կարելու համար։ Ճագարի մորթու պահանջն օր ավուր ավելանում է ամբողջ աշխարհում։ Դրա պատճառն այն է, վոր մուշտակեղեն գործածել սիրող մարդկանց քանակությունը քանի գնում՝ ավելանում է, իսկ գեղեցիկ մորթի ունեցող վայրի գազանները, անխնայորեն կոտորվելով, արագությամբ պակասում են ու վոչնչանում, և ճագարն այն սակավաթիվ կենդանիներից է, վորը գալիս է նրանց փոխարինելու։

Մորթի արտահանող բոլոր յերկրները, նույն թվում և Ռուսաստանը, վորը դեռ հնուց հայտնի յե յեղել վորպես մուշտակեղենի յերկիր, այժմ արդեն առաջվա չափ մորթի մթերել չեն կարողանում և, քանի գնում, աղքատանում են այդ բնագավառում։ Պատերազմից մի քանի տարի առաջ մեր յերկիրը մի տարվա ընթացքում մթերել է. Սիբիրի սամույրի (սոբոլի) մորթի 100.000 հատ, կզաքիսի (կունիցայի)՝ 80.000 հատ, ջրամույրի (վիդրայի)՝ 20.000 հատ, ժանտաքիսի (խորյոկի)՝ 1.500.000 հատ, սկյուռի՝ 15.000.000 հատ և նապաստակի՝ 16.000.000 հատ։ Հիմա, չնայած վոր վորսորդները վոտնատակ են անում Խորհրդային Միության ամենավորսառատ վայրերն ու անտառների ամենախուլ անկյունները, ձեռք ձգել այդ քանակությամբ մորթի այլևս չի հաջողվում։ 1927 թվին Ռուսաստանը մթերել է. Սիբիրի սամույրի մորթի 11.000 հատ, կզաքիսի՝ 917.000 հատ, սկյուռի՝ 8.000.000 հատ, սպիտակ աղվեսի (պեսեցի)՝ 103.000 հատ, սովորական աղվեսի՝ 4.348.000 հատ և նապաստակի՝ 6.000.000 հատ։ Իսկ վիդրայի՝ վոչ մի հատ։

Ավելի վատ է դրությունն արտասահմանում, ուր մուշտակավոր գազաններն ավելի մեծ թափով են վոչնչացվել և ուր կուսական վայրեր համարյա այլևս չեն մնացել։ Այդ գործով զբաղվող աշխարհի խոշորագույն ձեռնարկությունը՝ Ոստենդի ընկերությունը, վորը մեզանից 50 տարի առաջ մթերելիս է յեղել տարեկան 80.000 հատ ծովակատվի (կոտիկի) մորթի, 1910—14 թվականներին ձեռք է ձգել տարեկան հազիվ 300—400 հատ, իսկ հիմա համարյա բոլորովին չի գտնում այդ մորթուց։

Ամերիկան, վորը, մի 20—25 տարի առաջ, հատը 25 ռուբլով շինշիլլ կոչվող կենդանու մորթի յեր մատակարարում ամբողջ աշխարհին (տարեկան 200.000 հատ), այժմ իր սեփական կարիքների համար էլ չի կարողանում գտնել։ Շինշիլլը չքանալու վրա յե և վորսվում է տարեկան հազիվ 20—30 հատ և նրա մորթին գնահատվում է բարձր արժեքով։ Նույնը կարելի յե ասել կղբի (բոբրի) և սև աղվեսի մասին։

Հասկանալի յե ինքնըստինքյան, վոր կապիտալիստական յերկրներում վորքան վայրի գազանները պակասում են, այնքան նրանց մորթու գինը բարձրանում է։ Մեզանից 200 տարի առաջ Ռուսաստանը

ծախելիս է յեղել արտասահմանում սկյուռի մորթին հատը 4 կոպեկով, կզաքիսինը հատը 15 կ. և այլն։ Այժմ Ամերիկայում գնահատվում են հնչուն վոսկով սկյուռի մորթին 2 ռուբլի, կզաքիսինը 7—10 ռուբլի։ Սև աղվեսի մորթին, վոր առաջ արժեր 6—10 ռուբլի, հիմա գնահատվում է հատը 500—700 ռուբլի։ Իսկ ծովակատվի, կղբի և շինշիլլի մորթիները խլխլվում են ինչ գնով ել վոր լինի։

Ճագարի մորթին, ինչպես ասացինք, գալիս է փոխարինելու չքացող վայրի գազանների մորթիներին։ Յեվ վորովհետև նա շատ լավ ներկվում է և իրոք վոր հաջողությամբ նմանեցվում արժեքավոր մորթիների շատ տեսակներին,—վաղուց արդեն դարձել է արտասահմանում լայն գործածության առարկա, խոշոր տեղ գրավելով մորթիների համաշխարհային շրջանառության մեջ։ Յեվրոպացիները վարպետորեն շինում, սարքում են ճագարի մորթին և զանազան, յերբեն նույնիսկ գոյություն չունեցող կենդանիների մորթու անվան տակ, տարածում են յերկրագնդի բոլոր ծայրերում։ 1925 թվին ամբողջ աշխարհում վաճառված բոլոր մորթեղենի 73 տոկոսը կազմել է ճագարի մորթին։

Ճագարի մորթու շատ տեսակները գործ են ածվում նաև իրենց բնական վիճակում։ Որինակ, «շինշիլլ» կոչվող ճագարի մորթին, վորը զարմանալի նմանություն ունի թանգարժեք վայրի շինշիլլի մորթուն, իրացվում է հենց այնպես, ինչպես վոր մաշկվում է ճագարի վրայից։ Նույնն է և «ֆլանդրը», «շամպայնը», «ռեքսիրը» և այլ շատ տեսակների մորթիները, վորոնք իհարկե ավելի բարձր արժեք ունեն, քան այն մորթիները, վորոնց ներկելու և կեղծելու վրա վորոշ աշխատանք է թափվում։

Առհասարակ ճագարի մորթու գույները շատ բազմազան են. լինում են պայծառ սպիտակ գույնի, մաքուր սև գույնի, կապտավուն, դեղնավուն, արծաթավուն, շագանակագույն, մոխրագույն և շատ այլ գույների, վորոնք զարմացնում են իրենց գեղեցկությամբ ու գրավչությամբ։

Ճագարի մորթին ծածկված է փափուկ, խիտ և տաք բրդով, վորը սովորաբար բաղկացած է լինում յերկու շերտից. առաջին շերտը բարակ և քնքույշ մանրամազն է (ОСТЬ), վորը ծածկված է ավելի խոշոր և յերկար մազերից բաղկացած շերտով։ Վորքան մանրամազը խիտ է և յերկար, իսկ յերկրորդ շերտի մազերը քիչ և կարճ, այնքան մորթին ավելի լավն է համարվում։ Ձմեռը, ինչպես բոլոր գազանները, նույնպես ել ճագարը, ցրտից պաշտպանվելու համար, ծածկվում է ավելի խիտ մանրամազով և այդ պատճառով ել ճագարներին սովորաբար մորթում են ձմեռը՝ լավ վորակի մորթի ստանալու համար։ Ամառվա մորթու մանրամազը, հասկանալի պատճառներով, շատ նոսր է լինում և դրա համար ել այդ ժամանակվա մորթու գինն անհամեմատ ավելի ցածր է։

Համարյա վոչ մի արժեք չունի վորպես մուշտակացու ճագարի գարնան և աշնան մորթին, վորովհետև այդ ժամանակ է կատարվում մազափոխությունը, և մորթին սովորաբար համարյա կիսով չափ մերկացած է լինում։

Լավ մորթի ստանալու ամենահարմար հասակը բոլոր տեսակի ճագարների համար նույնը չէ։ Մանր տեսակները 6—7 ամսական հասակում արդեն բոլորովին հասունացած են լինում, և այդ ժամանակ նրանց մորթին ծածկված է լինում հարուստ բրդով։ Իսկ խոշոր տեսակներն ավելի ուշ են հասունանում. նրանց մորթին կազմակերպվում 10—11 ամսում։

Ճագարի մորթին բավական թեթև է. նրա ծանրությունը, միջին հաշվով հավասար է 75—100 գրամի, իսկ մեծությունը, նայած ճագարի տեսակին, տատանվում է 500 և 3000 քառակուսի սանտիմետրի միջև։ Մեկ միջակ մեծություն ունեցող ճագարի մորթուց մի վերարկույի վզնոց է դուրս գալիս։ Այն կարծիքը, թե իբր ճագարի մորթին շուտ է մաշվում, նույնպես սխալ է և հավանականորեն ծագում է նրանից, վոր հաճախ, գործին անտեղյակ մարդիկ, մաշկում են ճագարին մազափոխության ժամանակ, յերբ, ինչպես ասացինք, բուրդն ինքն իրեն է քայքայվում։ Ընդհակառակը, ճագարի մորթին, յերբ նրան մշակում են ինչպես հարկն է, բավական ամուր է և կարող է, ինչպես և շատ ուրիշ կենդանիների մորթիները, բանեցվել մի քանի տարի։

Մինչ հեղափոխական Ռուսաստանը ներմուծում եր Յեվրոպայից տարեկան 3.000.000 ճագարի մորթի, իսկ այժմ Խորհ. Միությունն ինքն է սկսել արտահանել արտասահման։ Մեր արտահանվող մորթիները դեռևս շատ չեն իրենց քանակով, նրանք կազմում են համաշխարհային շուկաներում վաճառվող բոլոր ճագարի մորթիների հազիվ 0,15 տոկոսը, կամ ուրիշ խոսքով վաճառվող ամեն տասը հազար մորթուց միայն 15-ն է մերը։ Բայց մոտ ապագայում Խորհրդային Միությունը կմտնի ճագարի մորթի արտադրող խոշոր յերկրների շարքը։ Դրան յերաշխիք է վոչ միայն պլանով գործադրվող բոլոր միջոցները, այլև ճագարի մորթու մեզ մոտ գոյություն ունեցող բարձր գները, վորոնք ուժեղ դրդիչ են հանդիսանում ճագարաբուծության զարգացման համար և մանավանդ արժեքավոր մորթիներ տվող տեսակների բազմացման համար։

Ավելորդ չենք համարում մեջ բերել այստեղ այն գները, վորոնցով Սոյուզպուշնինան ընդունում է ճագարի մորթիները (տես 20-րդ եջի աղյուսակ № 2)։

Յեթե հաշվի առնենք այն, վոր ճագարի մորթու արժեքի դիմաց պետական գներով ապրանք է տրվում (70 տոկոս), կտեսնենք վոր իրոք այս գները խրախուսում են և արագացնում մեր յերկրում ճագա-

բաբուծության զարգացումը, դարձնելով նրան անասնաբուծության շահավետ ճյուղերից մեկը։

Աղյուսակ № 2

ՃԱԳԱՐԻ ՄՈՐԹՈՒ ԳՆԵՐԸ

Ճագարի վոր տեսակին է պատկանում:	Ինչքան է վճարվում մեկ մորթուն							
	1-ին տեսակ		2-րդ տեսակ (1-ին տեսակի 75%-ի արժեքով):		3-րդ տեսակ (1-ին տեսակի 50%-ի արժեքով)։		4-րդ տեսակ (1-ին տեսակի 20%-ի արժեքով)։	
	Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.
1. «Սպիտակ ածղաձա», «Ֆլանդր», Շինշիլլ»։								
խոշոր	5	—	3	75	2	50	1	—
միջակ	3	75	2	80	1	85	—	7[illegible]
մանր	2	50	1	85	1	25	—	50
2. «Վենայի կապույտը» յեվ «Շամպայնը»։								
խոշոր	4	—	3	—	2	—	—	80
միջակ	3	—	2	25	1	50	—	60
մանր	2	—	1	50	1	—	—	40
3. «Վենայի սպիտակը»։								
խոշոր	3	—	2	25	1	50	—	60
միջակ	2	25	1	70	1	10	—	45
մանր	1	30	1	10	—	75	—	30
4. «Գորնոստայը»։								
խոշոր	2	50	1	85	1	25	—	50
միջակ	1	85	1	40	—	90	—	40
մանր	1	25	—	95	—	60	-	25
5. Մյուս բոլոր տեսակները։								
1-ին չափը	3	—	2	25	1	50	—	60
2-րդ չափը	2	50	1	85	1	25	—	50
3-րդ չափը	2	—	1	50	1	—	—	40
4-րդ չափը	1	50	1	10	—	75	—	30
5-րդ չափը	1	—	—	75	—	60	—	20

Ծանոթություն.— *Խ. Միության սահմաններում ստանդարտային են համարվում ճագարների այն տեսակները, վորոնց անունը հիշվում է այս ցուցակում։ Մյուս բոլոր տեսակները համարվում են արտաստանդարտային։*

Մսի մասին խոսելիս մենք տեսանք, վոր ճագարը, 3 տարվա ընթացքում, ավելի յե միս տալիս, քան 3 տարեկան խոշոր յեղջյուրավոր անասունը: Այստեղ պետք է ավելացնել և այն, վոր ճագարն (իր ձագերով միասին) 3 տարվա ընթացքում տալիս, է նաև առնվազը 60 մորթի (յեզի մի կաշվի դիմաց), վորոնց ընդհանուր արժեքը կլինի մոտ 180 ռուբլի:

Ավելորդ չէ շեշտել այստեղ նաև այն, վոր ճագարի մորթու պահանջն անսահման է. նրան հաճույքով գործ են ածում վոչ միայն պճնազարդ փարիզուհիները, այլ և Յեվրոպայի և Ամերիկայի միլիոնավոր բանվորները. վորովհետև ճագարի մուշտակը և գեղեցիկ է և տաք, դիմացկուն է և բավական մատչելի իր արժեքով։

Ճագարի մուշտակը լայն գործածության առարկա կդառնա նաև մեր բանվորների և կոլտնտեսականների համար։

ԲՈՒՐԴԸ ՅԵՎ ԱՂՎԱՄԱԶԸ

Այն դեպքում, յերբ ճագարի մորթին ինչ-ինչ պատճառներով չի գործադրվում վորպես մուշտակացու, սովորաբար նրա բուրդը բաժանում են կաշուց և այդ յերկու առարկաները, այսինքն բուրդն ու կաշին, ոգտագործում են տարբեր նպատակներով։ Այդպես լինում է գլխավորապես այն ժամանակ, յերբ ճագարին մորթում են մազափոխության միջոցին և մորթին նոսրացած լինելու պատճառով, վորպես մուշտակ անպետք է դառնում։ Այդպես է լինում և այն ժամանակ, յերբ մորթին, ներկելիս, փչանում է։ Այդպիսի դեպքերում բուրդը խուզում են մկրատով, հատուկ մեքենայով և կամ քիմիական նյութերի ներգործության միջոցով. Լավ կազմակերպված տնտեսություններում բուրդը հավաքում են նաև կենդանի ճագարների վրայից, գլխավորապես նրանց մազափոխության շրջանում, ձեռքով պոկպոկելու և կամ սանրելու միջոցով։ Ձագերի մեծանալուց հետո հավաքում են նաև այն բուրդը, վոր սովորաբար մայր ճագարը փռած է լինում նրանց տակը։

Մի ճագարը միջին հաշվով տալիս է տարեկան 50 գրամից մինչև 130 գրամ բուրդ։ Ճագարի բուրդը գործ է ածվում գլխավորապես ֆետր պատրաստելու համար։ Ֆետր—ֆրանսերեն բառ է, վորը նշանակում է թաղիք, (քեչա)։ Ճագարի բուրդը գանգուր (խուճուճ) չունենալու պատճառով, հեշտությամբ չի կպչում իրար, և դրա համար առհասարակ, հատուկ քիմիական բաղադրությունների միջոցով գանգուր են առաջ բերում և ապա, ծեծելու և հղկելու միջոցով թաղիք շինում։

Ճագարի ֆետրից հրաշալի գլխարկներ և բոտեր, այսինքն տաք կրկնակոշիկներ են պատրաստում, վորոնք թե մեզ և թե արտասահմանում, բավական բարձր են գնահատվում։ Ֆետրի բուն հայրենիքը Ֆրանսիան է, վորտեղ արտադրության տնայնագործության ձևերը հետզհետե տեղի յեն տվել մեքենայական արտադրության։ 1923 թ. Ֆրանսիայում 75 միլիոն հատ ճագարի մորթի յե գործածված ֆետր պատրաստելու նպատակով։ Այդքան ֆետրից դուրս է յեկել 15 միլիոն հատ գլխարկ, վորոնք, ըստ սովորականի, տարածվել են աշխարհի բոլոր ծայրերը հատը 30 ֆռանկով։

Ֆետրի արտադրությունը վաղուց գոյություն ունի նաև Ռուսաստանում (Պոդոլսկի շրջանում), սակայն իհարկե անհամեմատ ավելի փոքր չափերով և ավելի ցածր տեսակի, վորովհետեվ մեզ մոտ իբր հումույթ ծառայելիս է յեղել վոչ թե ճագարի, այլ նապաստակի բուրդը: Պատերազմից առաջ արտասահմանից ներմուծվելիս է յեղել Ռուսաստան տարեկան 3.000 կիլոգրամ ճագարի բուրդ ու պատրաստի գործվածքներ: Ռուս տնայնագործները ճագարի բուրդը նապաստակի բրդին խառնելով, վորոշ չափով լավացնելիս են յեղել իրենց արտադրած ֆետրի վորակը:

Բացի բրդից, ճագարի վորոշ տեսակները—«անգորայինը» և «Սիբիրի ճագարը» տալիս են նաև շատ արժեքավոր աղվամազ, վորը նույնպես հավաքում են պոկպոկելու միջոցով: Հիշյալ ճագարները տալիս են տարեկան 300-ից մինչև 400 գրամ աղվամազ, վորը գզվում է հատուկ սանդերքով, մանվում և դառնում է շատ լավ հումույթ գործ-

Նկ. 1 Ի՞նչ են պատրաստում ճագարի մորթուց

վածքային արդյունաբերության համար: Ճագարի աղվամազից պատրաստում են հրաշալի տաք հագուստներ՝ բաճկոններ, վարտիքներ, շալեր, գուլպաներ, ձեռնոցներ, գլխարկներ և շատ ու շատ ուրիշ իրեր, վորոնք իրենց վորակով՝ թեթեվությամբ, փափկությամբ և տաքությամբ ավելի բարձր են, քան վոչխարի, այծի և նույն իսկ ուղտի բրդից պատրաստված իրերը: Շնորհիվ այն հանգամանքի, վոր ճագարի աղվամազն էլեկտրականություն է պարունակում իր մեջ (ըստ Գագլիացկու), նրանից գործված սպիտակեղենը շատ օգտակար է

համարվում ռեվմատիզմով, թոքախտով և այլ հիվանդություններով տառապող մարդկանց համար: Հատկապես խորհուրդ է տրվում ճագարի աղվամազից գործած շորերը հագցնել յերեխաներին:

Պատերազմի ժամանակ գերմանական զորքը գործ է ածել ահագին քանակությամբ ճագարի աղվամազից գործած հագուստներ, վորոնք հարմար են մանավանդ օդաչուներին և ձմեռը ցուրտ խրամատներում ապրող զինվորներին:

Մի ճագարի տված աղվամազից, այսինքն 400 գրամից ստացվում է 350 գրամ մանած թել, վորից դուրս է գալիս 2 կանացի շալ: Յերբ ճագարի աղվամազը մեքենայով են մանում, մի կիլոգրամ աղվամազից ստացվում է 100.000 մետր բարակ թել: Այդքան թելով գործում են մեկ մետր լայնություն և 3 1/4 մ, յերկարություն ունեցող հրաշալի կտոր, վորը գործ է ածվում կանանց հագուստեղեն կարելու համար: Ճագարի աղվամազից գործած բարակ կտորները մրցում են քիշմիրի գովական կտորների հետ: Արտասահմանում ներկայիս գոյություն ունեն բավական քանակությամբ գործարաններ, վորոնք «անգորայի» ճագարի աղվամազից արժեքավոր գործվածքներ են արտադրում:

Խորհրդային ճագարաբուծությունը խոշոր դեր ունի խաղալու ֆետրի և գործվածքային իրերի արդյունաբերությանը հումույթ մատակարարելու գործում: Համապատասխան մարմիններն արդեն ձեռնարկում են գործնական միջոցներ: «Պուշնոսինդիկատը» հայտարարել է ի գիտություն բոլոր ճագարաբուծական տնտեսությունների, վոր իր բաժանմունքները խնամքով հավաքված ճագարի բուրդն ընդունում են 1 կիլոգրամը 30 ռուբլիով: «Տերստ» կոչվող համամիութենական փայատիրական ընկերությունը մտադիր է «անգորայի» աղվամազի 1 կիլոգրամի գինը նշանակել 50-ից մինչեվ 75 ռուբլի: Կասկած չկա, վոր այս խրախուսիչ գներն իրենց հերթին զարկ կտան ճագարաբուծության զարգացման ընդհանրապես և մասնավորապես աղվամազավոր ճագարների տարածման, վորոնք մինչ այժմ արհամարհված են յեղել մեզ մոտ՝ աղվամազի հաստատ պահանջ չլինելու պատճառով:

Աղվամազավոր ճագարների տարածման վրա պետք է ուշադրություն դարձվի մանավանդ Հայաստանում, վորտեղ անասնաբուծության այդ ճյուղը կարող է վորոշ դեր խաղալ տրիկոտաժի նորակառույց գործարանի հումքի աղբյուրները լայնացնելու գործում: Ճագարի աղվամազը վոչխարի բրդի կամ բամբակի հետ խառնված, հրաշալի գործվածքներ կարող է տալ: Շիրակի հովիտը 3—4 տարվա ընթացքում կարելի յե դարձնել Լենինականի գործարանին հավելյալ արժեքավոր հումույթ մատակարարող մի վայր:

ԿԱՇԻՆ

Գործին անտեղյակ մարդիկ յերբեք չեն կարող յենթադրել, վոր ճագարը, այդ նազելի կենդանին, կարող ե վորեվե բանի համար պետքական կաշի ունենալ։ Սակայն իրականությունը ցույց ե տալիս, վոր նրա կաշին շատ լավ ե իր հատկություններով և կարող ե ոգտագործվել շատ, բազմազան կարիքների համար։

Արտասահմանում վաղուց են հասկացել ճագարի կաշու գործնական նշանակությունը։ Յեվրոպայի և Ամերիկայի շուկաներն հեղեղվում են նրանցից պատրաստված ձեռնոցներով, ռեդիկյուլներով, պորտֆելներով, պորտմաններով և ուրիշ շատ ու շատ իրերով, վորոնց զգալի մասը սպառվում ե նաև գաղութային յերկրներում։

Ն. Լիտովսկին ասում ե, վոր պատերազմի ժամանակ Գերմանիան, զրկվելով իր գաղութներից և կտրվելով իրեն կաշի մատակարարող այլ յերկրներից, ստիպված ե լինում հատկապես հետաքրքրվել, թե չի՞ կարելի արդյոք ճագարի կաշուց կոշիկներ կարել զորքի համար։ Գործն յանձնվում ե մասնագետներին, վորոնց ուսումնասիրությունը ցույց ե տալիս, վոր ճագարի կաշին ամենայն հաջողությամբ կարելի յե ոգտագործել կոշիկների յերեսների համար. Նա ամուր ե, թեթեվ, փափուկ և լավ նստում ե վոտքին։ Ճագարի կաշին ավելի ամուր ե, քան վոչխարինն և այծինը, նա ավելի նման ե հորթի կաշվին։ Այդ ուսումնասիրության հետեվանքն այն ե լինում, վոր գերմանական զորքն ահագին քանակությամբ ճագարի կաշուց կարած կոշիկներ ե ստանում։ Այդ նույն ժամանակ և նույն նպատակով ճագարի կաշին մեծ չափերով ոգտագործվում ե նաև Իտալիայում և մանավանդ Ֆրանսիայում։

Ներկայիս ճագարի կաշուց ընտիր տեսակի լայկ, զամշ և շեվրո յեն պատրաստում, վորոնք գործադրվում են գլխավորապես կանանց և յերեխաների կոշկեղեն կարելու համար։ Ճագարների խոշոր տեսակների կաշուց և պառաված ճագարների կաշուց պաղոշ են շինում։

Հասկանալի յե ինքն ըստ ինքյան, վոր ճագարի կաշին այն դեպքում ե ոգտագործվում, յերբ նրա մորթին, ինչ-ինչ պատճառներով, անպետք ե համարվում վորպես մուշտակացու։ Մի խոշոր կաշուց դուրս ե գալիս մի զույգ կանացի կամ մանկական կոշիկ։ Տղամարդկանց մի զույգ կոշիկը ստացվում ե յերկու միջակ կաշուց։ Ավելացած խոշոր կտորները գործ են ածում վորպես զամշ՝ ապակեղեն և մետաղյա իրեր սրբելու համար, իսկ մանր կտորտանքից սոսինձ են պատրաստում։

ՍՈՍԻՆՁ

Ճագարի ականջները, թաթիկները, վզի մի մասը և կաշվի կտորտանքը գործ են ածում սոսինձ պատրաստելու համար։ Ճագարի սոսինձն ել իր հատկություններով ամենալավն ե համարվում։ Նա շատ մածուցիկ ե (կպչող) և նուրբ, շատ շուտ չորացող և բոլորովին հոտ չունի։ Գործ են ածում յերաժշտական գործիքներ շինելիս, պատկերների շրջանակների մասերն իրար կպցնելիս, զանազան բարակ փայտե, գիպսե և կարդոնե իրեր կպցնելիս և այլն և այլն։

Արտասահմանում հատուկ գործարաններ կան, վորոնք ահագին քանակությամբ ճագարի սոսինձ են արտադրում։ Որինակ, Ֆրանսիայում 1923 թվին արտադրվել ե 2 միլիոն կիլոգրամ ճագարի սոսինձ, 1 կիլոգրամը 4 ֆրանկ արժողությամբ

Պատերազմից առաջ ճագարի սոսինձն արտասահմանից բերվում եր Ռուսաստան, կիլոգրամը 1 ռուբլի 50 կոպեկով։ Մի ռուս կապիտալիստ, դեռ այն ժամանակ, հատուկ գործարան ե կառուցում Լենինգրադում, բայց բավարար չափով համապատասխան հումույթ չգտնելու հետեվանքով, ստիպված ե լինում շինել սոսինձը նապաստակի ականջներից և թաթերից։ Սակայն շուտով պարզվում ե. վոր նապաստակի սոսինձն, իր հատկություններով շատ ցածր ե և ճագարինի հետ համեմատվել չի կարող։

Դեռ մինչեվ այժմ ել Խորհրդային Միությունը, թանկ գնով ներմուծում ե ճագարի սոսինձն արտասահմանից։ Սակայն ներկայումս մեր յերկիրն արդեն հնարավորություն ունի ավելի քան բավարար չափով արտադրելու այդ նյութը, վորովհետեվ գոյություն ունեցող ճագարների քանակությունն ապահովում ե հումույթի աղբյուրը։

ԱՂԻՔՆԵՐԸ, ՎՈՍԿՈՐՆԵՐԸ, ԱՐՅՈՒՆԸ, ԱՂԲԸ

Ճագարի աղիքները նույնպես պետքական առարկա յեն հանդիսանում. նրանցից լարեր են շինում յերաժշտական գործիքների համար։ Ճագարաբուծությունը, զարգացնելով լարերի արտադրության հնարավորությունները մեր յերկրում, միաժամանակ նոր նյութ կմատակարարի արտահանության համար։ Այն աղիքները, վորոնք լար շինելու համար անպետք են, նմանապես և ճագարի ստամոքսը, սովորաբար խաշում են ու նրանցով կերակրում ընտանի թռչուններին։

Ճագարի այն վոսկորները, վորոնք մսի հետ չեն գնում, մասամբ գործ են ածվում սոսինձ պատրաստելու համար, մասամբ ել փշրվում են, ալյուր աղացվում, վորը գործ ե ածվում վորպես կեր թռչունների և խոզերի համար և կամ վորպես պարարտանյութ այգիների համար։

Ճագարի արյունը *առայժմս նույնպես գործ են ածում վորպես կերակուր ընտանի թռչունների համար. արյունը ալյուրի կամ թեփի հետ խառնված տալիս են հավերին, վորոնք շնորհիվ այդ սննդի, ավելի արագ են մեծանում և ավելի շատ են ձու ածում։ Բայց ճագարի արյունն, ինչպես և տավարի ու վոչխարի արյունը կարելի յե գործ ածել նաև զանազան դեղորայք (ալբումինա) պատրաստելու համար, վորոնք շատ ոգտակար են վորոշ հիվանդություններով տառապող մարդկանց։*

Ճագարի աղբը *շատ լավ պարարտանյութ ե։ Նա պարունակում ե 2—3 տոկոս բորակածին, 1,5 տոկոս պոտաշ և 1,9 տոկոս ֆոսֆորային թթվուտ։ Գործ ե ածվում գլխավորապես բանջարանոցների, այգիների, և ծաղկանոցների պարարտացման համար։ Ճագարն իր քաշի համեմատ, շատ ավելի յե աղբ տալիս, քան մյուս բոլոր ընտանի կենդանիները. նա տալիս ե խոզից 2 անգամ ավելի աղբ, ձիուց 2 և կես անգամ, հավից 3 անգամ, վոչխարից 3 և կես անգամ, կովից 7 անգամ և այլն։ Ճագարի աղբն իր պարարտացնող հատկություններով, մրցում ե թռչունների աղբի (գուանոյի) հետ։*

ՃԱԳԱՐԸ ՅԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Այս բոլոր բազմազան ու բազմաթիվ ոգուտներից բացի, ճագարը տալիս ե նաև մի այլ մեծ անգնահատելի ոգուտ։ Դա այն ե, վոր նա ոգնում ե մեզ մեր հիվանդությունների դեմ մղվող պայքարում։ Ճագարը, վորպես արագ աճող և կարճ ժամանակամիջոցում շատ սերունդ տվող կենդանի, հնարավորություն ե տալիս, իր միջոցով ուսումնասիրել բնագիտության ու բժշկականության զանազան ճյուղերը։ Շնորհիվ այն հանգամանքի, վոր ճագարն ընդունում ե մարդկանց մեջ տարածված հիվանդություններից շատերը, նա բոլոր կենդանիներից ավելի հարմարն ե զանազան փորձեր կատարելու համար։ Շատ ու շատ դեղորայք և բժշկության այլ միջոցներ ստուգվել են ու ստուգվում են ճագարի վրա։ Շատ ու շատ հիվանդություններ ուսումնասիրված են ու պարզված շնորհիվ ճագարի։

ՃԱԳԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՑԵՂԱԿԱՆ, ՄԵՏԻՍ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿ ՃԱԳԱՐՆԵՐԸ

Առհասարակ բնական պայմանները՝ կլիման, բուսականությունը և այլն շատ մեծ ազդեցություն ունեն բոլոր կենդանիների, նմանապես և ճագարների թե արտաքին տեսքի և թե արդյունավետության վրա։ Յերբ ճագարներին խնամելու, կերակրելու և բազմացնելու խնդրում մարդու ազդեցությունը մեծ չե, և ուրեմն այդ անասունները կենակցելով մարդու հետ, ապրում ու աճում են իրենք իրենց գլխին և բնական պայմանների ազդեցության տակ, նրանք կոչվում են հասարակ *ճագարներ։*

Իսկ յերբ ճագարները սերնդից սերունդ ապրում ու բազմանում են մարդու կամքի անմիջական մասնակցությամբ, յերբ զուգավորվող եգերի ու վործերի մեջ անընդհատ ընտրություն ե կատարվում վոչ միայն ըստ նրանց արտաքին նշանների, այլ և ըստ արդյունավետության (միսը, մորթին և այլն) և յերբ առաջ են գալիս ճագարների միանման արժեքավոր նշաններ ու հատկություններ ունեցող խմբեր, վորոնք տարբերվում են մյուս բոլոր ճագարներից,—նրանք կոչվում են ցեղական*։ Սակայն պետք ե ասել, վոր մաքուր ցեղական, կամ այսպես կոչված, զտարյուն համարվում են այն ճագարները, վորոնց մեջ մարդու ազդեցությամբ առաջ յեկած արժանիքներն ամրացած են լինում և վորոնք ընդունակ են այդ արժանիքները կայունորեն սերունդներին փոխանցելու։*

Իսկ այն ճագարները, վորոնք առաջ են գալիս ցեղական և հասարակ ճագարների խառնուրդից և վորոնք այս կամ այն չափով կրում են իրենց մեջ ցեղական ճագարների արժեքավոր նշաններն ու հատկությունները, կոչվում են մեստիս, *կամ ազնվացրած ճագարներ։*

Այժմ գոյություն ունեցող ցեղային ճագարները բաժանվում են բազմաթիվ տեսակների, վորոնք տարբերվում են միմյանցից իրենց արդյունատվությամբ արտաքին ձևերով, մեծությամբ, մորթու գունավորությամբ, մազերի յերկարությամբ և շատ ուրիշ նշաններով ու հատկություններով։ Ճագարի տեսակների թիվն հավասար ե մոտ 20-ի, իսկ յենթատեսակների հետ միասին մոտ 50-ի, վորոնց ուսումնասիրելիս սովորաբար բաժանում են մի քանի խմբի, համաձայն նրանց այս կամ այն նշանի ու հատկության։

Վոմանք ճագարի տեսակները բաժանում են 3 հիմնական խմբի՝ տարբերելով նրանց միս, մորթի և աղվամազ տալու ընդունակությամբ։ Սակայն այս բաժանումն հարմար չե, վորովհետեվ հաճախ դժվար ե լինում միացնել այս կամ այն խմբին ճագարի այն տեսակները, վորոնք, որինակ, միաժամանակ տալիս են և շատ միս և արժեքավոր մորթի։ Ավելի հարմար ե բաժանել ճագարների տեսակները մոտավորապես խմբի ըստ նրանց մեծության, անվանելով նրանց խոշոր, միջակ յեվ մանր *տեսակներ։*

Այս գրքում, վորում մեջ ե բերվում ճագարի կարևորագույն տեսակների նկարագրությունը, կիրառվում ե բաժանման այդ յերկրորդ միջոցը՝ ըստ տեսակների մեծության։

ԽՈՇՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ*

«ՖԼԱՆԴՐԸ»

Այս ճագարի հայրենիքը Բելգիայի Ֆլանդր գավառն է և այդ պատճառով նա միաժամանակ կոչվում է «Բելգիական հսկա»։ Հսկա անունը իզուր չի տրված նրան. «ֆլանդրը» ճագարների բոլոր տեսակներից ամենախոշորն է. Նրա յերկարությունը 60—75 սանտիմետր է, սովորական քաշը 4-ից մինչև 6 կիլոգրամ, իսկ յերբեմն նույնիսկ 8—9 կիլոգրամ և ավելի։



Նկ. 2 Ֆլանդր

Անհավասիկ «ֆլանդրի» արտաքինի նկարագրությունը։ Նրա իրանը սովորաբար լինում է յերկարաձիգ և առջևի մասում փոքր ինչ ավելի բարձր, քան հետևի մասում։ Կուրծքը լայն է, վոտներն ուժեղ են ու լավ զարգացած։ Կռնակն ուղիղ է, հորիզոնական։ Ճակատը լայն է։ Ականջները ուղիղ ցցված են վեր, և նրանց յերկարությունը լինում է 15-ից մինչև 20 սանտիմետր, այսինքն, մարմնի յերկարության մոտ մեկ քառորդի մասը։ Ֆլանդրի ականջների այս յերկարությունը նրա զըտարարության գլխավոր հատկանիշն է։ Վիզը հաստ է և կարճ։ Բզի տակը կաշին ծալք է տալիս և կազմում է բըուկ կոչվող ուռվածքը (բոխախ)։ Վորձերի բըուկը սովորաբար փոքր է լինում, հազիվ նկատելի, իսկ եգերինը շատ մեծ։ Պառաված եգ «ֆլանդրի» բըուկը կրկնակի ծալք տալով այնքան է մեծանում, վոր կախվում է անասնի կրծքին և նրա նստած ժամանակ ծածկում է նրա վոտքերը։



Նկ. 3 Ճագարի յերկարության չափումը



Նկ. 4 Ականջների չափումը

«Ֆլանդրի» ամենատարածված գույներն են՝ բաց մոխրագույնը, (յերկաթագույն) և մուգ մոխրագույնը։ Այս գույները գոյանում են սպիտակ և սեվ մազերի յուրահատուկ դասավորությունից։ Բաց մոխրագույնների մորթին միապաղաղ գույն ունի, վոր հավասարապես տարածված է լինում մարմնի բոլոր մասերում։ «Ֆլանդրն» ունենում է նաև «Նապաստակի» գույն, այսինքն շեկ է և մոխրագույնի առանձին մի խառնուրդը, վորը նույնպես հավասար կերպով տարածված է լինում մարմնի բոլոր մասերում։ Լինում են նաև սեվ, սպիտակ, շեկ գույնի և տատրակի գույնի «ֆլանդրներ», վորոնք սակայն շատ քիչ են տարածված։

«Ֆլանդրի» աչքերը խոշոր են և նշաձև, իսկ նրանց գույնն համապատասխանում է մորթու գույնին։ Ճանկերը նույնպես համապատասխան են մորթու գույնին, այսինքն, բաց մոխրագույն ֆլանդրների ճանկերը բաց շագանակագույն են, մուգ մոխրագույնները՝ մուգ շագանակագույն, սեվինը, սեվ և այլն։

«Ֆլանդրի» տնտեսական նշանակությունը շատ մեծ է։ Արժեքավոր է նախ և առաջ նրա մորթին, վորը բոլոր ճագարների մորթուց խոշորն է։ Մոխրագույն «ֆլանդրի» մորթին արտասահմանում բավական բարձր գին ունի, վորովհետև վաճառվում է առանց ներկվելու։ Ավելի ևս բարձր է լինում գինը, յերբ հաջողվում է գտնել մի քանի

* Յեվրոպացիները հատուկ պահանջ են մշակել ցեղային ճագարի բոլոր տեսակների համար, մանրակրկիտ կերպով նկարագրելով այն բոլոր արտաքին նշանները. վորոնք պարտադիր են նրանցից ամեն մեկի համար։ Այդ նշաններն են. բրդի կազմությունը, մորթու գույնը, ականջների յերկարությունը, մարմնի բոլոր մասերի ձևերն ու համաչափությունը, աչքերի և ճանկերի գույնը և այլն, վորոնք, ընդհանուր առմամբ, պայմանավորում են, այսպես ասած, ճագարի զտարյունությունը։ Մըշակված այդ պահանջը կոչվում է **ստանդարտ**, վորը նշանակում է՝ տվյալ տեսակի համար անհրաժեշտ բոլոր արտաքին նշանների գումարը։ Ս. Միությունը դեռևս չունի իր սեփական ստանդարտը, և մեր ճագարաբույծներն առայժմ ղեկավարվում են գերմանական ստանդարտով։ Ցեղային ճագարների տեսակները նկարագրելիս, մենք նույնպես հենվում ենք գերմանական ստանդարտի վրա։

հատ միանման մորթիներ։ Սպիտակ «ֆլանդրի» մորթին իր մազերի խտությամբ ու փափկությամբ և բոլոր գույներով ներկվելու զարմանալի ընդունակությամբ շատ լավ նյութ է հանդիսանում սակավ գտնվող վայրի գազանների արժեքավոր մորթիներին նմանեցնելու համար։ Վերջապես, «ֆլանդրի» կաշին, որը բավական ամուր է ու հաստ, գործ է ածվում ոչ միայն լայկ, զամշ շինելու համար, այլ և որպես պաղոշ։

Սակայն «ֆլանդրի» ոչ պակաս կարևոր նշանակությունը կայանում է նրանում, որ նա բոլոր ճագարներից ավելի մսատու է։ Սակայն նրա մսի տեսակարար կշիռն ամբողջ մարմնի վերաբերյալ շատ մեծ չէ, որովհետև նրա կմախքը հաստ է և աղիքներն էլ բավական մեծ։

Մորթած «ֆլանդրի» քաշն հավասար է կենդանի քաշի 62 տոկոսին։ Բայց շնորհիվ այն հանգամանքի, որ նա շատ աճուն է, վերջին հաշվով աճադին քանակությամբ միս է տալիս։ Մորթել կարելի յե «ֆլանդրին» 6—7 ամսական հասակում, սակայն նրա մսի ամենահամեղ ժամանակը 8—9 ամսական հասակն է, յերբ նա սկսում է արդեն գերանալ ու ճարպակալել։

«Ֆլանդրի» եգը սեռական հասունության շրջանն է մտնում 8—9 ամսական հասակում։ Ամեն ծնելիս նա տալիս է մինչև 16 ձագ։ Կարող է ձագ հանել տարեկան 4—5 անգամ։ Ճագարների այս տեսակը սակավապահանջ է կերի վերաբերյալ և բավական հանգիստ բնավորություն ունի։

«Ֆլանդրը» շնորհիվ իր այս բոլոր հատկությունների, ավելի ու ավելի յե տարածվում Հյուսիսային Կովկասում։ Սակայն անհրաժեշտ է գիտենալ այն, որ բացի սպիտակից, բոլոր գույնի «ֆլանդրները» ցուրտ և խոնավություն չեն տանում և այդպիսի պայմանների մեջ ընկնելով արագությամբ այլասերվում են ու մանրանում։ Իսկ սպիտակը հեշտությամբ հարմարվում է ցրտին և կարող է ամբողջ տարին ապրել բացօդյա։ Պետք է աչքի առաջ ունենալ և այն, որ «ֆլանդրի» եգը թեպետ շատ է ծնում, բայց լավ մայր չէ. նա չի կարողանում խնամել ու կերակրել իր ձագերին ինչպես հարկն է և այդ պատճառով, սովորաբար, մոր մոտ թողնում են ոչ ավելի քան 5—6 ձագ։ Այդ հանգամանքը հաճախ ստիպում է «ֆլանդր» պահող տնտեսություններին պահել միաժամանակ ճագարի այնպիսի տեսակները, օրինակ՝ «սեվահարը», վորոնք լավ ծծմայր են և անհրաժեշտ դեպքում կարող են ընդունել ու պահել «ֆլանդրի» ձագերին։

«Ֆլանդրի» արժանիքներից մեկն էլ այն է, որ նա զարմանալի կերպով տալիս է սերունդներին իր ցեղային հատկությունները և այդ պատճառով նա շատ հարմար է հասարակ ճագարների ազնվացման համար։

ՍՊԻՏԱԿ ԱԺԴԱՀԱՆ

«Սպիտակ աժդահան», վորի հայրենիքը Գերմանիան է, իր արտաքին տեսքով շատ նման է «ֆլանդրին», վորից էլ հավանականորեն ծագել է։ Նա մի քիչ փոքր է «ֆլանդրից»—(յերկարությունը 50—65 սանտիմետր)։ Նրա քաշը տատանվում է 4-ի և 6,5 կիլոգրամի միջև, սակայն նրա մարմնի ձևը նույնն է ինչ վոր «ֆլանդրինը», նույնպես յերկար է և լեցուն, կուրծքը լայն և ուժեղ, վոտքերը զարգացած։ Վորձերը առանց բրուկի յեն, իսկ եգերը բավական մեծ բրուկով։ Ականջները ցցված են, նրանց յերկարությունը մարմնի յերկարության համեմատ լինում է 16-ից 18 սանտիմետր։ Աչքերը կարմիր են իսկ ճանկերը սպիտակ-վարդագունախառն։



Նկ. 5 Սպիտակ աժդահան

Ճագարի այս տեսակի գույնն, ինչպես ցույց է տալիս նրա անունը, սպիտակ է։ Նրա մորթին պայծառ սպիտակ գույն ունի, առանց վորևէ բծի կամ խառնուրդի և աչքի յե ընկնում իր խտությամբ և փայլով։ Ներկվում է բոլոր գույներով և հաջողությամբ փոխարինում է թանգարժեք կզբի (բոբրի), ծովակատվի (կոտիկ) և խըլուրդի մորթիներին և այդ պատճառով նա արտասահմանում ավելի բարձր ու կայուն գին ունի, քան «ֆլանդրինը»։ Կաշին իր հրաշալի հատկություններով (հաստ, ամուր և միաժամանակ կակուղ) հեշտությամբ գործ է ածվում համապատասխան արտադրության մեջ։ Գեր-

մանիայում, պատերազմի ժամանակ։ «սպիտակ ածդահայի» կաշին օգտագործվել է շատ լայն չափերով։

«Սպիտակ ածդահան» շատ համեղ միս ունի, որը շնորհիվ կմախքի բարակության, տեսակարար կշռով ավելի յէ, քան «ֆլանդրի» միսը։ Այս ճագարն ավելի արագ է մեծանում և 6 ամսական հասակում այնքան միս է տալիս, որքան «ֆլանդրը» տալիս է 9—10 ամսական հասակում։

«Սպիտակ ածդահան» անգին է որպես մորթի և միս տվող ճագար, և շնորհիվ իր զարմանալի աճեցողության, որում նա տալիս ու անցնում է նույնիսկ ֆլանդրից,—արագությամբ տարածվում է ամենուրեք, նմանապես Հյուսիսային Կովկասում։

Արագ տարածման պատճառներից մեկն էլ այն է, որ «սպիտակ ածդահան» հեշտությամբ հարմարվում է բոլոր պայմաններին։ Այս ճագարի էգը բարեխղճորեն խնամում է ու մեծացնում իր ձագերին։ Վանդակում «սպիտակ ածդահա» պահող տնտեսությունները, պետք է առանձին խստությամբ հետեվեն նրա բնի մաքրությանը, որովհետեվ սպիտակ մորթին կեղտոտվելուց փչանում է ու կորցնում իր արժեքը։

Ճագարի այս տեսակը կարող է պահվել նաև Հայաստանում և Անդրկովկասի մյուս վայրերում։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԹԻԹԵՌ

«Թիթեռ» անունը տրված է այս ճագարին շնորհիվ նրա մորթու առանձին գունավորության. սպիտակ մարմնի վրա տարածված են մուգ լաքաններ (սեվ, կապույտ, մոխրագույն) որոնց մի մասը, կուտակվելով դեմքի վրա և յուրահատուկ կերպով դասավորվելով, հիշեցնում է թեվերը բացած թիթեռի։ Ծագել է այս ճագարը «ֆլանդրից», որին և շատ նման է իր մարմնի ձեվերով։ Համարյա նույնքան խոշոր է, որքան իր նախահայրը. միջին քաշը 5—6 կիլո յէ և ավելի, յերկարությունը 60—65 սանտիմետր։ Ականջները ցցված են և հիմքում միացած լինելով, վերեվի մասում բաժանվում են միմիանցից, ընդունելով լատինական V տառի ձեվը։



Նկ. 6 Գերմանական թիթեռ

«Գերմանական թիթեռի» մորթին փափուկ է, խիտ ու կարճ բրդով և շնորհիվ վերոհիշյալ յուրահատուկ գունավորության, արտասահմանյան շուկաներում մեծ պահանջ ունի։ Նա գործ է ածվում ոչ միայն իր բնական դրությամբ, այլ և սև գույնով ներկված, որովհետեվ նա հաջողությամբ փոխարինում է ծովակատվի թանգարժեք մորթուն։

Թեպետ «Գերմանական թիթեռը» տալիս է շատ համեղ և դյուրամարս միս, բայց և այնպես ճագարի այդ տեսակը, որպես մսացու մեծ արժեք չունի, նախ նա դանդաղ մեծացող է,—մորթելու համար հարմար է միայն տարին լրացնելուց հետո, և յերկրորդը՝ կմախքը հաստ լինելու պատճառով, նրա միսը շատ չէ։

«ՆՈՐՄԱՆԴԱԿԱՆԸ»

Ծագել է այս տեսակը Ֆրանսիայի Նորմանդիա գավառում՝ տեղական ճագարների և «ֆլանդրի» խառնուրդից։ Մարմնի արտաքին ձեվերն համաչափ են և գեղեցիկ։ Մորթու գույնը մաքուր սեվ է կամ սեվ-մոխրագույն։ Միջին քաշը՝ 4—5 կիլոգրամ է։ Բավական շուտ հասունացող է, սակավապահանջ և դիմացկուն։ Զաղացնել նրան կարելի յէ չորս ամսական հասակում, այդ ժամանակ նա շատ համեղ միս է ունենում։ Պատկանում է արագ աճող տեսակների շարքին. ամեն ծնելիս բերում է 6-ից մինչև 12 ձագ։

«Նորմանդականը» որպես մսացու, արժանի յէ առանձին ուշադրության։ Նա շատ լավ կարող է ապրել ու բազմանալ թե Հյուսիսային Կովկասում և թե Անդրկովկասի բոլոր մասերում, բացառությամբ ճահճային վայրերի։

«ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՈՅԸ»

«Խոյ» անունը կրում են ճագարների այն տեսակները, որոնք իրենց արտաքին տեսքով, այսինքն՝ իրենց տափակ ճակատով, սափաթավոր քթով և մանավանդ ահագին, կախ ընկած ականջներով որձ ոչխարների յեն նմանվում։ Ասում են «խոյերը» գոյություն են ունեցել մեզանից դեռ չորս հարյուր տարի առաջ և իբր ծագել են «սպիտակ հսկայի» ու «նորմանդականի» արյան խառնումից։ Ներկայիս կան «խոյի» յերեք տարբեր տեսակներ. «ֆրանսիական», «անգլիական» և «գերմանական»։ Անգլիական խոյը տարբերվում է աշխարհի բոլոր ճագարներից իր զարմանալի ականջներով, որոնց յերկարությունը հասնում է 65—70 և յերբեմն նույնիսկ 77 սանտիմետրի։ Նրա ականջների առանձնահատկությունն այն է նայեվ, որ նրանք հիմքում բավական նեղ են, ապա, հետզհետե լայնանալով, մեջտեղում հասնում են 20 սանտիմետրի, իսկ վերջում նորից նեղ ձեվ են ընդունում։

«Անգլիական խոյը» բավական խոշոր է. նրա քաշը 5—6 կիլոգրամ է։ Նրա մորթին լինում է կամ խայտաբղետ և կամ մի որոշ գույնի՝ սև, կապույտ մոխրագույն և դեղին։ Այս ճագարի տնտեսա-

Նկ. 7 Անգլիական խոյը

կան նշանակությունը շատ աննշան է. նրան միայն սիրողներն են պահում ու բազմացնում համարյա միմիայն սպորտի, մրցության համար և որքան նա յերկար ականջ է ունենում, այնքան ավելի յե գնահատվում։

«ՊԱՏԱԳՈՆՅԱՆ ՃԱԳԱՐԸ»

Այս ճագարի հայրենիքը հայտնի չէ. ոմանք ասում են, որ նա ծագել է Ամերիկայում, ոմանք՝ Ֆրանսիայում և կամ Անգլիայում։ Այս ճագարն հայտնի յե որպես շատ և համեղ միս տվող։ Նա համարյա նույնքան խոշոր է, որքան «ֆլանդրը», որին եվ բավական նման է իր մարմնի ձևով. նրա քաշը հասնում է 8—9 կիլոգրամի։ Արժեքավոր է նաև այս ճագարի յերկաթագորշ գույն ունեցող մորթին, որը գործ է ածվում թե որպես մուշտակացու և թե կաշի ու պարգոշ շինելու համար։ Պատագոնյան ճագարը լավ մայր է, նա զարմանալի քնքուշությամբ պահում ու մեծացնում է իր ձագերին։

Այս տեսակը, ցավոք սրտի, մեզ մոտ քիչ է հայտնի։ Նա որպես մսացու ճագար, աչքի ընկնող դեր կարող եր խաղալ մեր յերկրի պարենավորման խնդրում։ Բացի դրանից, նա կարող եր շատ օգտակար լինել մեր հասարակ ճագարներին ազնվացնելու և խոշորացնելու գործում։

ՄԻՋԱԿ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«ՎԵՆԱՅԻ ԿԱՊՈՒՅՏԸ»

Շնորհիվ իր բազմազան դրական հատկությունների և մանավանդ մորթու առանձին գեղեցկության, ճագարի այս տեսակը, որը ծագել է Վենայի ճագարաբույծների ջանքերով (մեզանից 40 տարի առաջ), մեծ չափերով տարածվել է թե Յեվրոպայում և թե Ամերիկայում։ Մորթու արժանիքներն այն չեն միայն, որ նա փայլուն է, փափուկ և խիտ, այլ և այն, որ նրա գույնը հավասար չափով տարածված է մարմնի բոլոր մասերում, և այդ պատճառով մորթին գործադրվում է ամբողջովին։

Ճագարի այս տեսակն, ինչպես և նրա անունն էլ ցույց է տալիս, կապույտ գույն ունի. բաց, միջին և մուգ կապույտ։ Սակայն կապույտ բառը այստեղ սովորական մտքով չպետք է հասկանալ։ Այս

Նկ. 8 Վենայի կապույտը

ճագարի գույնը բնության մեջ վոչ մի առարկայի գույնին չի կարելի նմանեցնել և բառերով անհնարին է նկարագրել այնպես, որ ընթերցողն առանց այդ ճագարին տեսնելու, կարողանա պատկերացնել նրան։ Նրա գեղեցիկ ու հետաքրքիր գույնի մասին մոտավոր գաղափար կարող է տալ կապույտին տվող պողպատը, յեթե պատկերացնել նրան փոքր ինչ ավելի մուգ գույնի։

Արտասահմանյան շուկաներում բարձր գին ունի մուգ կապույտ մորթին, որի պահանջն ոլ ավուր ավելանում է՝ ստիպելով ճագարա-

բույծներին հատուկ ուշք դարձնել այդ գույնն ամրացնելու և նրան կայուն բնույթ տալու վրա։ Այդ նպատակով մերթ ընդ մերթ «վենայի կապույտը» զուգավորվում են մուգ մոխրագույն «ֆլանդրի» հետ։ «Վենայի կապույտը» իր այդ արժեքավոր կապույտ գույնը կորցնելու հակումն ունի և նրա սերունդների մորթին արագորեն խունանում է ու տգեղանում, յեթե համապատասխան միջոցներ ձեռք չեն առնըվում։ Կապույտ գույնն ամրացնելու միջոցներից մեկն էլ այն է, վոր «վենայի կապույտի» արյան մեջ յերբեմն խառնում են սև գույն ունեցող ճագարի արյունը։

«Վենայի կապույտի» մորթին հանելու ամենալավ ժամանակը 6-ից մինչև 10 ամսական հասակն է։

«Վենայի կապույտը» միաժամանակ հանդիսանում է միս արտադրող ճագար, շնորհիվ իր արագ աճեցողության։ Եգերն ամեն ծնելիս բերում են 8—12 ձագ, վորոնք շատ արագ են մեծանում և 5—6 ամսական հասակում արդեն լավ մսացու յեն։ «Վենայի կապույտը» ըստ մեծության լինում է յերկու չափի՝ մանր և խոշոր։ Նրա սովորական քաշը 3—5 կիլոգրամ է։ Շնորհիվ կմախքի բարակության, կենդանի քաշի 70 տոկոսը կազմում է միսը, վորը շատ համեղ է։

Այս տեսակի արժանիքներին կարելի յե ավելացնել և այն, վոր նա սակավապահանջ է կերի վերաբերյալ, զարմանալի կերպով հարմարվում է տարբեր պայմաններին և բավական դիմացկուն է ցրտի, վորից նրա մորթին էլ ավելի խտանում, փարթամանում և գեղեցկանում է։

«Վենայի կապույտի» մանր տեսակի եգը հասունանում է 7 ամսական հասակում, իսկ խոշոր տեսակի եգը՝ 9—10 ամսական հասակում։ Հենց այդ ժամանակն էլ համարվում է առաջին զուգավորման ամենալավ ժամանակը։ Վորձերը մտնում են սեռական հասունության շրջանը եգերից մեկ ամիս ուշ։

«Վենայի կապույտը», վորն իր մորթու և մսի ընտիր վորակով արդարացիորեն առաջնակարգ տեղ է բռնում ճագարների մեջ, ամենայն հաջողությամբ կարող է պահվել Հյուսիսային Կովկասի բոլոր մարզերում (բացի ծովափնյա տաք ռայոններից) և Անդրկովկասի լեռնային շրջաններում։

«ՎԵՆԱՅԻ ՍՊԻՏԱԿԸ»

Այս ճագարի ծագումը նույնպես վերագրում են Վենայի ճագարաբույծներին և դա շատ հավանական է, վորովհետև այս ճագարն իր արտաքին ձևերով շատ նման է «վենայի կապույտին», վորից տարբերվում է միայն իր իրանի կարճությամբ (40—50 սանտիմետր) և

մորթու սպիտակ գույնով։ Նրա քաշը լինում է 3 կիլոգրամ և ավելի։ Մորթին բավական խիտ է, փայլուն և փափուկ։ Մեծ մասամբ սպիտակ գույնը, առանց վորև է բծի, տարածված է մարմնի բոլոր մասերում։ Աչքերը կապույտ են, ճանկերը սպիտակ։ «վենայի սպիտակի» տնտեսական նշանակությունը դեռևս մեծ չէ, վորովհետև նա քիչ է տարածված։ Սակայն նա, ըստ իր դրական հատկությունների՝ մորթու վորակով և մսի համեղությամբ, արժանի յե ուշադրության ու տարածման։

Ճագարի այս տեսակը մեծ հետաքրքրություն է առաջ բերում բոլոր ճագարաբույծների մեջ իր աչքերի կապույտ գույնով։ Մինչ այժմ գոյություն ունեցող բոլոր սպիտակ ճագարների աչքերը կարմիր են, և «վենայի սպիտակ» ճագարի կապույտ աչքերը բացառիկ յերևույթ է։

«ՇԻՆՇԻԼԼԸ»

Հարավային ամերիկայում մի ժամանակ չափազանց բազմացել էր ու տարածվել «շինշիլլ» կոչվող վայրի գազանը, վորն Ավստրիալիայի ճագարների նման վնասներ էր հասցնում գյուղատնտեսությանը։ Սակայն այդ գազանը, շնորհիվ իր գեղեցիկ մորթու, շուտ ուշադրության արժանանալով, այնպիսի արագությամբ է կոտորվել, վոր 25 տարի առաջ ամեն տարի ահագին քանակությամբ շինշիլլի մորթի արտահանող Ամերիկան՝ հիմա կարողանում է վորսալ տարեկան հազիվ 20—30 հատ։

Շինշիլլի մորթու մեծ պահանջն ստիպել է ճագարաբուծներից շատերին բազմաթիվ փորձեր կատարել այդ թանկարժեք վայրի գազանի նման մորթի ունեցող ճագար ստանալու ուղղությամբ։ Հաջող յելքը վիճակվել է 14 տարեկան ճագարաբույծ Դուբովսկուն (Ֆրանսիայում), վորը ճագարի յերեք տեսակների («սևահուրի», «գորնոստայի» և «բեվյոնի») արյունը զանազան կոմբինացիաներով միմյանց խառնելով, 1910 թվին ստացել է ճագարի մի նոր տեսակը՝ «շինշիլլը»։ Այդ նոր տեսակի մորթին զարմանալի կերպով նման է վայրի շինշիլլի մորթուն և կարող է ամենայն հաջողությամբ փոխարինել նրան՝ բավարարելով անգամ ամենախստապահանջ ճաշակին։

«Շինշիլլ» ճագարի մորթին վերին աստիճանի խիտ, բարակ, կարճ ու փափուկ մազեր ունի, վորոնց ներքևի մասը (արմատի մոտ) տատրակի գույն ունի, մեջտեղը մոխրագույն, ծայրում կապտավուն։ Իսկ մեջ-մեջ ցրված են սև ծայրավոր մազեր։ Գույների այդ դասավորությունը շատ հետաքրքրական ու գեղեցիկ տեսք է տալիս մորթուն, վորը բավական նման է արծաթավուն ճագարի մորթուն։ Արժեքավոր է համարվում «շինշիլլի» այն մորթին, վորն ամբողջովին հավասար գույն ունի, բայց այդպիսիները դեռևս սակավաթիվ են. սովորաբար այդ ճա-

գարի փորի մազերը բաց գույնի յեն լինում և կամ բոլորովին սպիտակ։

«Շինշիլի» յերկու տեսակները գոյություն ունեն՝ խոշոր և մանր, վորոնք տարբերվում են միմիանցից գլխավորապես մարմնի չափով, իսկ մնացած հատկությունները համարյա նույնն են։ Մարմնի քաշը սովորաբար 2—2,5 կիլոգրամ է, իսկ խոշորներինը՝ 3—4 կիլոգրամ։

«Շինշիլի» իրանը փոքր ինչ յերկարաձև է, բայց բոլոր մասերն համաչափ են և ընհանուր առմամբ գեղեցիկ։ Եզերը յերբեմն բլուկ են ունենում։ Ականջներն ուղիղ ցցված են վեր։ Աչքերը փայլուն են, շագանակագույն և կամ մորթու գույնին։

«Շինշիլը» պատկանում է աճուն տեսակներին. Նա հասունանում է 6—7 ամսական հասակում և առանց իր օրգանիզմը վնասելու՝ կարող է ծնել տարեկան 4 անգամ, տալով ամեն անգամ 6—8 ձագ, վորոնք հաճախ աշխարհ են գալիս սև կամ սպիտակ գույնով, իսկ հետո արդեն հետզհետե նմանվում են իրենց ծնողներին։ Մայր ճագարը լավ խնամում ու կերակրում է ձագուկներին, սակայն սովորաբար նրա մոտ թողնում են վոչ ավել քան 5-6 ձագ, վորովհետև ճագարի այս տեսակի սերունդը շատ արագ մեծացող է և շատ կաթ է պահանջում։

Ճագարի այս տեսակը զարմանալի դիմացկուն է ցրտերի. Նա կարող է ապրել բացոդյա 15—20 աստիճան սառնամանիքների ժամանակ։ Մեծ շոգեր նա չի սիրում և այդ պատճառով ամառ ժամանակ նրան պաշտպանում են արևի ճառագայթներից։ Նա բավական սակավապահանջ է կերի վերաբերյալ։

«Շինշիլն» արժանի յե ամենայն ուշադրության և տարածման։ Բացի նրանից, վոր այս տեսակի մորթին արտասահմանում բոլոր ճագարների մորթուց թանկ է գնահատվում, նա տալիս է և շատ լավ միս։ Իսկ նրա ցրտի դիմանալու ընդունակությունն ազատում է շենքեր կառուցելու ծախսերից և, ուրեմն, շահավետ դարձնում նրան թե Հյուսիսային Կովկասի և թե Անդրկովկասի բոլոր ցուրտ ձմեռներ ունեցող ռայոնների համար։

«Շինշիլը» ճագարների այն տեսակն է, վորից 1929 թվին արտասահմանից ահագին քանակությամբ ներմուծվել է Խորհրդային Միություն՝ հատկապես մեր ճագարների վորոշ տեսակներն ազնվացնելու համար։ Նրանցից մոտ 300 հատ բերվել է Հյուսիսային Կովկաս, վորտեղ նրանք շատ լավ ապրում են ու բազմանում, արագորեն ընտելանալով մեր պայմաններին։ «Շինշիլից» վորոշ քանակությամբ ուղարկված է նաև Հայաստան։

«ԲԵԼԳԻԱԿԱՆ ՆԱՊԱՍՏԱԿԸ»

Ճագարների այս տեսակը նապաստակ անունը կրում է լոկ արտաքին նմանության պատճառով, իսկ իր ներքին կենսաբանական բոլոր

նշաններով ու հատկություններով ճագար է իհարկե և վոչ թե նապաստակ։ «Բելգիական նապաստակը» մշակվել է և իր այժմյան տիպն ստացել Անգլիայում, բայց բելգիական անունն է կրում հավանականորեն այն պատճառով, վոր նրա յերակներում անգլիական հասարակ ճագարի արյան հետ միասին հոսում է նաև «բելգիական հսկայի», «ֆլանդրի» արյունը։

«Բելգիական նապաստակը» կարմրավուն, ժանգի գույն ունի։ Փորը սովորաբար լինում է սպիտակ և կամ շեկ գույնի։ Կռնակի վրա մեջ-մեջ անկանոն կերպով ցրված են սև մազեր։ Մորթին խիտ է և փափուկ, բուրդը՝ միջակ յերկարություն ունեցող։

Ճագարի այս տեսակը շուտ հասունացող է և աճող։ Եգը սովորաբար ամեն ծնելիս, տալիս է 6—8 ձագ, բայց հաճախ պատահում է և ավելի՝ 10—12 ձագ։ Ձագերն աշխարհ գալու առաջին օրերում



Նկ. 9 Բելգիական նապաստակը

տարբեր գույներ են ունենում, բայց հետագայում հետզհետե ստանում են իրենց տեսակին հատուկ գունավորությունը։ Եգերը լավ մայրեր են և խնամքով կերակրում ու մեծացնում են ձագերին։ Ճագարի այս տեսակը բազմանալիս, յերբեմն զուգավորում են միմիանց հետ ամենամոտ արյան կապ ունեցողներին՝ քույրը յեղբոր հետ, մայրը տղայի հետ և այլն։ Այդ միջոցով ավելի ու ավելի ամրացնում են այն ցեղային դրական հատկությունները, վորոնք հատուկ են այս տեսակին։

«Բելգիական նապաստակն» առանձնահատուկ տեղ է բռնում իր մսի համեղությամբ։ Այդ խնդրում այս ճագարը տալիս ու անցնում է մյուս բոլոր տեսակներից։ Կերի վերաբերյալ սակավապահանջ լինելով հանդերձ, նա շատ շուտ չաղացող է և, բարակ կմախք ունենալով, մսի բարձր տոկոս է տալիս։ Նրա քաշը 3—3,5 կիլոգրամ է։ Յեթե հաշվի առնենք և այն, վոր այս տեսակ ճագարին պահելն ու խնամելը միուսներից հեշտ է, ինքն ըստինքյան հասկանալի կլինի, վոր ժամանակա-

կից պայմաններում «բելգիական նապաստակն» արժանի չէ մեծ ու-
շադրության ու տարածման՝ վորպես մսացու անասուն։

«Բելգիական նապաստակը» տարափոխիկ հիվանդությունների
շատ չի յենթակա, նա լավ դիմանում է ցրտի և կարող է ամբողջ տա-
րին պահվել բաց օդում։

Հյուսիսային Կովկասի բոլոր ռայոններում (բացի ծովափնյա տաք
ռայոնների) և Հայաստանի ու Անդրկովկասի ցրտոտ վայրերում, այս
ճագարն հաջողությամբ կարող է պահվել ու բազմացվել։

«ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՐԾԱԹԱՎՈՒՆԸ»

«Ֆրանսիական արծաթավունը», վորը միաժամանակ «Շամպայն»
է կոչվում, այժմ ամենատարածված ճագարն է Ֆրանսիայում, վորի



Նկ. 10 Շամպայնը

յերկու քաղաքներում (Լիոն և Տրուա) հատկապես այդ ճագարի մոր-
թին ու մսի արտադրանքը վաճառող հսկայական շուկաներ կան։ Մի
ժամանակ այդ ճագարը պահվում ու բազմացվում եր Ֆրանսիայում
բացառապես նրա մսի համար, վորը շատ համեղ է և դյուրամարս։
Բայց հետզհետե նրա հրաշալի մորթին ուշադրության է արժանացել
և մեծ պահանջ ստեղծել։ Նրա մորթին խիտ է, փափուկ և մետաքսի

նման փայլուն։ Մազերը միջին յերկարություն ունեն։ Մորթու գույնը
նման է հին արծաթի գույնի։ Սակայն այս համեմատությունը դեռ
լրիվ գաղափար չի տալիս նրա մորթու գեղեցկության մասին, վորը
կարելի յե հասկանալ միայն սեփական աչքերով տեսնելիս։ Նրա բուր-
դը կազմված է 3 գույնի մազերից՝ մոխրա-կապտավուն, սպիտակ և
թունդ սև։ Սև մազերը փոքր ինչ յերկար են մյուսներից և հավասար
չափով տարածված են մարմնի բոլոր մասերում։ Արծաթավուն տեսքը հե-
տևանք է այդ տարբեր գույնի մազերի յուրահատուկ դասավորության։

«Շամպայնի» մարմինը գեղեցիկ է և իր մասերով համաչափ։ Թե-
պետ եգերը հաճախ բռուկ են ունենում, բայց նա մեծ չէ։ Ականջները
ցցված են, նրանց յերկարությունը մոտավորապես 14 սանտիմետր է։
Աչքերը շագանակագույն են, կլոր, խոշոր և փայլուն։ Ճանկերը բաց շա-
գանակագույն։ Քաշն հասնում է 3,5—4 կիլոգրամի։

Այս ճագարը նույնպես պատկանում է շուտ հասունացող և շուտ
աճող տեսակների շարքին։ Եգը մտնում է սեռական հասունության
շրջանը 6 ամսական հասակում, իսկ վործը՝ 7 ամսական հասակում։
Եգը հեշտությամբ ծնում է տարեկան 4 անգամ, հանելով ամեն ան-
գամ 6—9 ձագ և ավելի, վորոնք սովորաբար աշխարհ են գալիս սև
գույնով, իսկ յերբեմն սպիտակ, բայց հետագայում բոլորն էլ ստանում
են իրենց տեսակին բնորոշ արծաթավուն գույնը։

«Ֆրանսիական արծաթավունը» քնքուշ ճագարներից չէ. նա բա-
վական լավ դիմանում է ցրտին և կարող է ամառ-ձմեռ ապրել դրսում։
Ցրտից նրա մորթին ավելի գեղեցկանում է։

Պահվել կարող է Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի բոլոր
ցուրտ շրջաններում։

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐԾԱԹԱՎՈՒՆԸ»

Գերմանիայի ճագարաբույծները նպատակ են ունեցել առաջ բե-
րել «արծաթավուն» ճագարի այնպիսի մի նոր տեսակը, վորն ունենա-
լով «շամպայնի» ու «անգլիական արծաթավունի» բոլոր դրական հատ-
կությունները, լինի միաժամանակ նրանցից խոշոր։ Խոշորացման
խնդրում նրանք վորոշ նվաճումներ են կատարել—«գերմանական ար-
ծաթավունը» կշռում է 4-ից մինչև 5 կիլոգրամ և այդ պատճառով նա
միաժամանակ կոչվում է «գերմանական խոշոր արծաթավուն»։ Աչքի
ընկնող նվաճում է կատարվել նաև աճեցողության խնդրում. նա ծնում
է ամեն անգամ 10—12 ձագ։ Բայց «գերմանական արծաթավունը» մոր-
թու գեղեցկությամբ «ֆրանսիականի» ու «անգլիականի» հետ մրցել
դեռևս չի կարողանում։ Նրա գույնը բավական գեղեցիկ է՝ մոխրա-ար-
ծաթավուն և մոխրա-կապտավուն և մորթին, շնորհիվ մազերի համա-

պատասխան դասավորության, համարյա նույն արծաթավուն փայլն ունի, ինչ որ «շամպայնը» և «անգլիականը»։ Բայց «գերմանական արծաթավունի» մորթին ավելի քիչ է սպառվում այն պատճառով, որ նրա գույնը հավասար կերպով չի տարածված ամբողջ մարմնի վրա և, որ գլխավորն է, նրա գլուխը յերբեմն լինում է սև գույնի, կուրծքը սպիտակ և ամբողջ մորթին էլ մի տեսակ ժանգի գույնով պատած։

ՄԱՆՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՐԾԱԹԱՎՈՒՆԸ»

Անգլիացի ճագարաբույծները համառ ուշադրության, հատուկ խնամքի և ազնվացման միջոցով, հասցրել են ճագարի այս տեսակը զարմանալի կատարելագործության։ Յեվ այժմ «անգլիական արծաթավուն» կոչվող ճագարը, շնորհիվ իր բազմազան [դրական տնտեսական արժեքների և մանավանդ, իր մորթու ընտիր վորակի ու գեղեցկության, արդարացիորեն վաստակել է «հարուստ» անուն և գրավել ամենաարժեքավոր տեսակների շարքը։



Նկ. 11 Անգլիական արծաթավունը

Նա մեծ ճագար չէ. Նրա քաշը սովորաբար լինում է 2—2,5 կիլոգրամ։ Նրա մարմինը գեղեցիկ է և համաչափ իր բոլոր մասերով։ Աչքերը կապույտ գույնի յեն, խոշոր ու արտահայտիչ։ Բըուկ չունի բոլորովին։ Ականջները նեղ են, յերկարությամբ մոտավորապես 10 սանտիմետր։ Ճանկերը մորթու գույնին են։

Մորթին խիտ է, փափուկ և փայլուն։ Գույներով բազմազան են՝ լինում է կապույտ, դեղին, շագանակագույն և մոխրագույն, վորոնցից ամեն մեկն իր հերթին, լինում է յերեք տեսակի՝ մուգ, միջին և բաց։ Գույներից ամենատարածվածը և գնահատելին մոխրագույնն է, վորն իր արծաթավուն տեսքով, առանձին գեղեցկություն ու գրավչություն ունի։ Մորթու արծաթավուն փայլքն, ինչպես և «շամպայնինը» հետևանք է նրա բրդի առանձին կազմության. խիտ մոխրա-կապտավուն

և կամ գորշ-մոխրագույն աղվամազի մեջ հավասար կերպով ցրված են փոքր ինչ ավելի յերկար մազեր, վորոնց ծայրերը սև են, մոխրագույն և սպիտակ։ Շնորհիվ մազերի այդ դասավորության, մորթին յուրահատուկ առկայծող տեսք է ստանում։ Հասկանալի յե ինարկե, վոր այդ հրաշալի արժանիքներն ունեցող մորթին գործ է ածվում հենց այնպես, ինչպես վոր մաշկվում է ճագարի վրայից՝ առանց ներկելու։ Արտասահմանյան շուկաներում այդ մորթու շատ մեծ պահանջ կա։

Անհրաժեշտ է գիտենալ, վոր այս տեսակին պատկանող ճագարները քանի ծերանում՝ այնքան ավելի ալեզարդվում են, այնպես վոր նրանց կյանքի չորրորդ տարում մորթին բոլորովին սպիտակում է և կորցնում իր գեղեցկությունն ու արժեքը։ Մորթու ամենագեղեցիկ ժամանակը համարվում է առաջին մազափոխությունից անմիջապես հետո։

«Անգլիական արծաթավունը» շուտ հասունացող տեսակներից է. Նա մտնում է սեռական հասունության շրջանը 7—8 ամսական հասակում։ Նա շուտ չաղացող է և համեղ միս ունի։ Նրա մսի տեսակարար կշիռը շատ բարձր է։

«Անգլիական արծաթավունը» ցրտի շատ դիմացկուն է և ամբողջ տարին կարող է ապրել դրսում։ Դա նույն իսկ անհրաժեշտ է նրա համար, վորովհետև ցուրտը լավացնում է նրա մորթու վորակը։ Ցուրտ տեղում ապրող ճագարներն ավելի շուտ են արծաթավուն փայլ ստանում։ Իսկ տաքությունն ավելի արագ է բսեցնում մազերը, վորոնք չափից ավելի յերկարանալով, կորցնում են իրենց փայլքը։

Այս արժեքավոր տեսակը կարող է հաջողությամբ պահվել Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ցուրտ շրջաններում։

«ՍԵՎԱՀՈՒՐԸ»

«Սևահուրը» հայտնի յե իր յուրահատուկ մորթիով, վորը կազմված լինելով յերկու միմիանցից խիստ տարբերվող գույնի մազերից (թունդ սև և դեղին կրակի գույն), շատ գեղեցիկ ու գրավիչ տեսք ունի։ Սև գույնով ներկված են նրա կուրծքը, դեմքը, ականջների և վոտքերի կողմը։ Մարմնի մնացած մասերը դեղին են։ Դեղին գույնը սովորաբար նախշեր է կազմում. այսպես, օրինակ, աչքերի շուրջը դեղին ժապավենը օղակ է կազմում, իսկ բաշի վրա դեղինը յեռանկյունու կամ ձվի ձև է ունենում։

«Սևահուր» ճագարի այդ գեղեցիկ մորթին բավական խիտ է բըսնում, փափուկ է և փայլուն։ Սակայն, չնայած այդ հանգամանքներին, այս ճագարի տնտեսական նշանակությունն այնքան մեծ չէ, վորովհետև մուշտակեղենի համար գործ է ածվում մորթու միայն կռնակի մասը, իսկ մնացածը գնում է կաշու տեղ։ Բայց «սևահուրն» ունի մի այլ

կարևոր հատկություն, վորով նա անգնահատելի յե դառնում ճագարաբուծական տնտեսությունների համար․ Նա հրաշալի ծծմայր ե և հեշտությամբ ընդունում ու կերակրում ե ուրիշ ճագարների ձագերին,



Նկ. 12 Սևահուրը

յերբ ինչ-ինչ պատճառներով նրանք մնում են առանց մայրական խընամքի։

Նրա քաշը լինում ե 2—3 կիլոգրամ, բայց կմախքի բարակության պատճառով, միսը բավական շատ ե և իր համեղությամբ հիշեցնում ե վայրի ճագարի միսը։ «Սևահուրը» սակավակեր ե։ Սեռական հասունության շրջանը մտնում ե 7—8 ամսական հասակում, բայց աճեցողությամբ նա աչքի չի ընկնում. մի ծնելուն 5—6 ձագից ավելի համարյա յերբեք չի տալիս։

«ՀԱՎԱՆՆԸ»

Մեզանից 23 տարի առաջ ֆրանսիացի ճագարաբույծ Լեմարյեին հաջողվում ե, ճագարների 5 տարբեր տեսակների արյունը միմյանց խառնելով, ստանալ մի նոր տեսակ ճագար*, վորը կրում ե «հավաննի» անունը—իր գույնով հայտնի հավաննական ցիգարներին նմանվելու պատճառով։

Այս ճագարը շատ արժեքավոր ե, վորովհետեվ մորթին կարելի յե նմանեցնել կզբի (բոբր), ջրադվեսի (վիդրա), սիբիրի ամույրի (սոբոլ),

* Յենթադրում են, վոր «հավաննը» ստացվել ե «վիենայի կապույտի», «բելգիական նապաստակի», «գորնոստայի», «սևահուրի» և «գորշախտի» խառնուրդներից։

կզաքիսի (կունիցա) և կապիկի մորթիներին։ «Հավաննի» մորթին մեծ մասամբ՝ միապաղաղ, ամբողջ մարմնի վրա հավասար կերպով տարածված գույն ունի։ Նրա գույներն են՝ մուգ և բաց շագանակագույն ծխախոտի գույն, և այլն։ Շնորհիվ իր բնական գեղեցկության, «հավաննի» մորթին հաջողությամբ օգտագործվում ե առանց ներկվելու և ամուր լինելով, նա դիմանում ե բավական յերկար ժամանակ։ Շատ գեղեցիկ և ամուր ե մանավանդ ձմռան կեսին մորթված ճագարի մորթին։

«Հավաննը» շուտ հասունացող ե, 6—7 ամսական հասակում եգն արդեն ընդունում ե վործին, վորը սովորաբար մեկ ամսով ուշ ե մտնում սեռական հասունության շրջանը։ Ձագերի քանակությունը լինում ե 5-ից մինչև 12՝ ամեն ծնելիս։

«Հավաննի» ծանրությունը 2—3 կիլոգրամ ե։ Մարմնի մասերը համաչափ են և գեղեցիկ։ Աչքերը փայլուն են, շագանակագույն, ճանկերը նույնպես շագանակագույն են։ Ականջները ցցված են դեպի վեր։ Բրուկ չունի։

«Հավաննը», վոր վերին աստիճանի արժեքավոր ճագարներից ե և ցավոք սրտի, դեռևս շատ քիչ ե տարածված Խ. Միության սահմաններում, արժանի յե ամենալուրջ ուշադրության։

«ԳՈՐՆՈՍՏԱՅԸ» ԿԱՄ «ՌՈՒՍԱԿԱՆ» ՃԱԳԱՐԸ

Թե վորտեղ ե այս «ռուսական» կոչվող ճագարի հայրենիքը, դեռևս պարզված չե։ Նրան միաժամանակ անվանում են «չինական», «աֆրիկական», «հիմալայական» և այլն։ Յենթադրություն կա նաև, վոր նա ծագել ե Անգլիայում։ Սակայն այս կարծիքներից և վոչ մեկը պատշաճ կերպով հիմնավորված չե և թե իրոք վորտեղ և ինչ տեսակների խառնուրդներից ե նա ստացվել, հայտնի չե։

«Գորնոստայը» չնայած իր փոքրության (նրա քաշն ե 1,5—2 կիլոգրամ), արժեքավոր ե իր մորթիով, վորը շատ նման ե վայրի գորնոստայի մորթուն։ Նա խիտ ե, բարակ և ավելի փափուկ, քան մետաքսը։ Նրա մարմնի մեծ մասը պայծառ, մաքուր սպիտակ գույն ունի, վորը կուսական ձյունի նման, վոչ մի բծով չի արատավորված։ Ականջները, վոտքերն ու պոչը թունդ սև գույն ունեն։ Սևի ու սպիտակի այդ յուրահատուկ դասավորությունը մի առանձին գեղեցկություն ե տալիս «ռուսականի» մորթուն, վորը սակայն հաջո-

Նկ. 13 Գորնոստայը կամ ռուսական ճագարը

ղությամբ ներկվում է և դառնում ամբողջովին սև։ Այս տեսակի մորթին հանելու ամենալավ ժամանակը ճագարի 6 ամսական հասակն է։

«Գորնոստայը» շուտ հասունացող և շուտ աճողներից է։ Էգը սովորաբար 7 ամսական հասակում արդեն մայր է և ամեն ծնելուն 8—10 ձագ է հանում, որոնց շատ լավ խնամում ու մեծացնում է։ Ձագերը նոր ծնվելիս վարդագույն են լինում և մի քանի օրից ծածկվում են սպիտակ, իսկ յերբեմն մոխրագույն մազերով։ Սև նշանները սկսում են յերեվալ 1 ամսական հասակից։ «Գորնոստայի» տեսքը ձևավորվում է 5—6 ամսական հասակում։ Նա լավ ծծմայր է։

«Գորնոստայը» բավական համեղ միս ունի։

Նա շատ լավ դիմանում է ցրտերին և կարող է ցուրտ վայրերում և ամբողջ տարին ապրել դրսում։ Նրան պահելու կարևորագույն պայմաններից մեկը՝ մաքրությունն է. անմաքուր պայմաններում նրա մորթին դեղնում է ու կորցնում իր արժեքը։ Նա դեղնում է և արևի ճառագայթներից։ Այդ է պատճառը, որ նրան սովորաբար պահում են վանդակների մեջ։

«Գորնոստայի» բնորոշ գծերը հետևյալներն են. մարմինը կարճ է ու հաստլիկ։ Վորձերի գլուխը կլորաձև է, իսկ էգերինը՝ փոքր ինչ յերկար։ Առջևի ոտքերն անհամեմատ ավելի փոքր են ու բարակ՝ քան հետևի ոտքերը։ Ականջները նեղ են և միմյանց շատ մոտ տեղավորված, նրանց յերկարությունը հազիվ հասնում է 6 սանտիմետրի։ Աչքերը կարմիր են։

«Գորնոստայի» մորթու մեծ պահանջ կա թե մեզ մոտ, և թե արտասահմանում, որտեղ նրա գինը բավական բարձր է։ Ժամանակակից ճագարաբույծների նպատակն է առաջ բերել ճագարի մի այնպիսի նոր տեսակը, որն ունենալով «գորնոստայի» մորթու դրական հատկությունները, լինի միաժամանակ նրանից մեծ։ Ասում են, որ Ֆրանսիայում արդեն հաջողությամբ է պսակվել ճագարաբույծների փորձերը. ստացվել է հիշյալ պահանջներին համապատասխանող ճագար, որը «ֆլանդրի» մեծություն ունի և որին անվանել են «ռուսական աժդահա»։

Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ցուրտ ռայոններում այս ճագարը հաջողությամբ կարող է պահվել ու բազմացվել։ Հայաստանում այս ճագարի համար ամենալավ վայրը Ցելինովկայի և Բայազեդի ռայոններն են։

«ԼԵՀԱԿԱՆԸ»

«Լեհականը»՝ ճագարների ամենափոքր տեսակն է. նրա մարմնի յերկարությունը 28—30 սանտիմետր է, սովորական քաշը 1,5-ից մինչև 2 կիլոգրամ, բայց արտասահմանում միմյանց հետ մրցող ճագարա-

բույծներն ավելի ու ավելի փոքրացնելով այս տեսակը, հասցրել են նրա քաշը մինչև 1 կիլոգրամի։ Չնայած իր փոքրությանը, «լեհականը» պատկանում է ճագարների օգտակար տեսակներին. նրա պայծառ սպիտակ գույն ունեցող մորթին շատ լավ փոխարինում է վայրի գորնոստայի մորթուն, իսկ սև ներկած՝ նմանեցվում է ծովակատվին (կոտիկ)։

Շատ գեղեցիկ, քնքուշ ու գրավիչ է այս կենդանին. նրա գլուխը փոքր է, կլորաձև, ականջների յերկարությունն հազիվ հասնում է 7 սանտիմետրի, թաթիկները բարակ են ու յերկար, աչքերը խոշոր են, վարդագույն։

Այս նազելի տեսակը սակայն բավական դիմացկուն է ցրտի ու հիվանդությունների։ Էգն հասունանում է 6 ամսական հասակում և ծնում ամեն անգամ 4—5 ձագ։ Մորթին լավն է լինում 5—6 ամսական հասակում։ «Լեհական» ճագարը լավ մայր չէ. նա չար է բնավորությամբ և ձագերին խնամել շատ չի սիրում։ Այն ճագարաբուծական տնտեսությունները, որոնք այս տեսակներից են պահում, պետք է միաժամանակ պահեն և լավ ծծմայրություն անող ճագարներ, ինչպիսիք են «սեվահուրը», «հավաննը», որոնք պետք յեղած դեպքում, կերակրում ու մեծացնում են «լեհականի» ձագերին։ Վերջերս այս ճագարը շատ տարածվել է Անգլիայում, որտեղ նրա մորթու մեծ պահանջ կա։

«ՏՐՈՒՍԸ» ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿ ՃԱԳԱՐԸ

«Տրուս» ռուսերեն նշանակում է վախլուկ։ Այսպես կոչվում են հասարակ ճագարներ, որոնք այժմս բավական տարածվել են Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի գյուղերում և որոնց այդ անունը տված է նրանց դողդողալու սովորություն ունենալու պատճառով։ Նրանք մանր են՝ հազիվ 1,2—1,6 կիլոգրամ ծանրությամբ։ Նրանց գույնը չալ է, սպիտակի ու սևի և կամ սևի ու կապտավունի խառնուրդը։

Մորթին, որպես մուշտակ, առանձին արժեք չունի, նա շատ փոքր լինելով հանդերձ կոշտ բուրդ ունի, որն օգտագործվում է միայն հասարակ կոպիտ բաներ գործելու համար։ Միսն էլ շատ քիչ է և իր համով էլ աչքի չի ընկնում։ Սակայն «տրուսն» ունի մի ուրիշ շատ արժեքավոր հատկություն. դա այն է, որ նա թե ցրտի, թե քաղցի և թե հիվանդությունների ավելի դիմացկուն է, քան մեր յերկրում ապրող ճագարների բոլոր տեսակները։ Նա կարող է ապրել ամենավատ պայմաններում և մյուսներից ավելի արագ աճել ու բազմանալ։

Ահա այդ տեսակետից «տրուսը» լավ նյութ է մետիզացման համար և, յեթե այդ գործը լավ կատարվի, կարող են ստացվել թե մոր-

թիյով և թե մսով անհամեմատ ավելի օգտաբեր և միաժամանակ շատ դիմացկուն ճագարներ։

«ԱՆԳՈՐԱՅԻ» ՃԱԳԱՐԸ

«Անգորայի» ճագարն իր արտաքին տեսքով այնքան է տարբերվում մյուս բոլոր տեսակներից, վոր անտեղյակ մարդիկ նրան ճագարի տեղ անգամ չեն դնում։ Այդ տարբերությունն առաջ բերողը նրա բուրդն է, աղվամազը, վորն առատությամբ բսնում է ճագարի այդ տեսակի վրա և ամբողջովին պարուրում նրան իր մեջ ու նմանեցնում նրան բամբակի մի գնդի, վորի միջից հազիվ նշմարվում են նրա գլուխն ու ականջները։

Վո՞րտեղ և յերբ է ծագել այդ տարօրինակ և հետաքրքրական արարածը, հայտնի չէ։ Յենթադրություն կա, վոր նրա հայրենիքը փոքր Ասիան է, Տաճկաստանի այժմյան մայրաքաղաքը Անգորան, վորի անունը և կրում է նա։ Սակայն շատերը ժխտում են այդ, կարծելով թե այդ ճագարը «անգորայի» անունն ստացել է շնորհիվ իրեն բրդոտության, վորով նա հիշեցնում է այդ նույն անունը կրող բրդոտ կատուներին, վորոնց մեզ մոտ «Վանա կատու» յեն անվանում։ Այս կարծիքն ավելի հավանական է, վորովհետև Տաճկաստանը, ճագարաբուծության մեջ, առանձնապես աչքի ընկնող տեղ չի գրավել և դժվար է յենթադրել, վոր տասնյակ սերունդների հատուկ ուշադրության և խնամքի նշաններն իր վրա կրող «անգորայի» ճագարը ըստացված լինի այդ յերկրում։ Ամենահավանական կարծիքն հետևյալն է։ Յեվրոպայի ճագարաբույծները նկատած լինելով, վոր առհասարակ, յերբ ճագարն ապրում է տաք բներում, նրա մազերը յերկարանում են, հատկապես ուշադրություն են դարձրել բներն ել ավելի տաքացնելու վրա և, շարունակաբար, յերկար բրդավոր եզը յերկար բրդավոր վորձի հետ զուգավորելով, վերջ ի վերջո ստացել են այժմյան փարթամ աղվամազ ունեցող ճագարը։

Նկ. 14 Անգորայի ճագարը

Անկախ նրանից, թե յերբ և վորտեղ է ծագել «անգորայի» ճագարը, հայտնի յե այն, վոր Գերմանիայում նա պահվել ու բազմաց-

վել է դեռ 15-րդ դարում։ 16-րդ դարում Գերմանական կառավարությունը հատուկ խրախուսական միջոցներ է ձեռք առել «անգորայի» ճագարը յերկրում տարածելու համար, նպատակ ունենալով զարկ տալ գործավարձային արտադրության զարգացմանը։ Մեծ չափերով տարածվել է այս տեսակը մանավանդ Ֆրանսիայում, վորտեղ, վաղուց ի վեր, ճագարի աղվամազով հագուստեղեն և այլն իրեր պատրաստող շատ գործարաններ կան։ Անգլիայում «անգորայի» ճագարը տարածվել է հսկայական չափով։ Վերջին 4—5 տարվա ընթացքում այս տեսակի թիվն ավելացել է Անգլիայում 30 անգամ և այդ յերկրում ըստացվող աղվամազն առաջին տեղն է բռնում աշխարհում իր ընտիր վորակով։

«Անգորայի» աղվամազի յերկարությունը սովորաբար լինում է 10—15 սանտիմետր, իսկ յերբեմն, ցուցահանդեսներ բերվող ճագարների աղվամազն հասնում է 28—33 սանտիմետրի։ Վորքան յերկար է աղվամազն, այնքան ավելի լավ է մանվում և հյուսվում և ուրեմն, այնքան ավելի հարմար է գործվածքային պահանջների համար։ Այդ պատճառով վորքան յերկար է աղվամազը, այնքան նրա գինը բարձր է։ «Անգորայի» ճագարը, սկսած 5—6 ամսից մինչև մի տարեկան հասակը, տալիս է ընդամենը 50—75 գրամ աղվամազ, վորն այդ ժամանակ վորակով ցածր է լինում։ Իսկ մի տարեկանից մինչև 7—8 տարեկան հասակը տալիս է տարեկան 300—400 գրամ և ավելի հրաշալի աղվամազ, վորը թե արտասահմանում և թե մեզ մոտ բարձր գին ունի։

«Անգորայի» ճագարը սովորաբար փոքր է լինում, քաշով մոտ 2 կիլոգրամ, այդ պատճառով մենք դասում ենք նրան մանր տեսակների շարքին։ Բայց հաճախ պատահում են 2,5 նույն իսկ 4 կիլոգրամ ծանրություն ունեցողները։ Այս տեսակի մարմինը փոքր ինչ յերկարաձև է։ Ականջները յերկար չեն՝ 9—11 սանտիմետր։ Մորթու գույնը լինում է տարբեր՝ սպիտակ, սև և կապտա-մոխրագույն։ Ամենատարածվածն ու արժեքավորը սպիտակ գույն ունեցողն է։

«Անգորայի» ճագարն ուտելիքի վերաբերյալ շատ պահանջկոտ չէ, սակայն աղվամազի վորակը լավացնելու համար պետք է ավելի հաճախ տալ նրան սպիտակուցային և ճարպային նյութերով հարուստ բույսեր։ Այս ճագարը ցրտից չի վախենում և կարող է ամբողջ տարին պահվել բացօդյա։ Բայց վորովհետև ցրտից նրա աղվամազը կարճանում է ու կոշտանում, նրան առհասարակ պահում են փակ վանդակում, խոնավությունից և միջանցիկ քամիներից ազատ շենքի մեջ։ Կարևորագույն պայմաններից մեկն այս տեսակի համար՝ մաքրությունն է, վորովհետև վանդակը կեղտոտ լինելու դեպքում սպիտակ աղվամազը դեղնում է ու կորցնում իր արժեքը։

«Անգորայի» ճագարի եգը սեռական կյանքն սկսում է 7 ամսական հասակից և պառավում է 4 տարեկան հասակում։ Ծնում է ամեն անգամ 6—8 ձագ, վորոնց յեռանդով խնամում ու մեծացնում է։ Ավելորդ վորձերին սովորաբար կրտում են, բրդի վորակը լավացնելու համար։

Հակառակ այն հանգամանքին, վոր «անգորայի» ճագարն իր հրաշալի աղվամազով կարող է անհագին դեր խաղալ գործվածքային արդյունաբերության հումույթի աղբյուրները լայնացնելու գործում, նա, Խորհրդային Միության սահմաններում, մեծ չափերով չի տարածվել։ Դրա պատճառն այն է, վոր մինչև հիմա մեր յերկրում ճագարի աղվամազի վերաբերյալ կազմակերպված պահանջ գոյություն չի ունեցել։ Իսկ այժմ, յերբ համապատասխան մարմինները գործնական միջոցների յեն դիմում այդ բնագավառում և ամեն կերպ խրախուսում «անգորայինի» տարածումը· այդ տեսակի պահելն ու բազմացնելը դառնում է վերին աստիճանի ձեռնտու և արդյունավետ մի գործ։

Թե Հյուսիսային Կովկասը և թե Անդրկովկասը պետք է առանձին ուշադրություն դարձնեն «անգորայի» ճագարի վրա, վորն իր աննման աղվամազից բացի՝ տալիս է նաև համեղ ու դյուրամարս միս։ Այդ ճագարը պետք է տարածել մանավանդ Հայաստանում, վորտեղ նրա աղվամազը կարող է հրաշալի նյութ դառնալ վանեցի և արաբկիրցի տնայնագործների համար։ Պետք է ընտելացնել «անգորայի» ճագարը պահելու և բազմացնելու գործին Շիրակի հովտի բոլոր կոլտնտեսություններին, վորոնք կարճ ժամանակամիջոցում կդառնան Լենինականի գործվածքային արդյունաբերության հումույթի մի նոր լրացուցիչ հենարանը։

ՃԱԳԱՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«ԿԱՍՏՈՐԵՔՍԸ»

Վերջին ժամանակներս (1919 թ.) Ֆրանսիայում առաջ է յեկել ճագարի մի նոր տեսակը, վորը տարբերվում է բոլոր գոյություն ունեցող ճագարներից՝ իր մորթու զարմանալի հատկություններով։ Ինչպես ասված է այս գրքի սկզբում, ճագարի բուրդը կազմված է լինում յերկու շերտից. ներքին շերտը՝ քնքույշ մանրամազն է, վորը ծածկված է յերկրորդ ավելի յերկար ու ավելի կոշտ մազերից բաղկացած շերտով։ Սովորաբար, ճագարի մորթին վորեվե վայրի գազանի մորթու նմանվելու համար, մուշտակագործները խուզում են այդ կոշտ մազերը և այդ աշխատանքի (խուզելու) ծախսը զգալի չափով բարձրացնում է մորթու ինքնարժեքը։ Այս «կաստորեքսը» այն բացառիկ

տեսակն է, վորի մորթին ծածկված է միմիայն բարակ ու քնքույշ մանրամազով, իսկ կոշտ մազերը բոլորովին բացակայում են։

Այսպիսի մորթի ունեցող ճագարի աշխարհ գալն այնքան տարօրինակ ու զարմանալի մի յերեվույթ էր համարվում, վոր անհագին աղմուկ ու հետաքրքրություն էր առաջ բերել բնագետների ու ճագարա



Նկ, 15 Կաստորեքսը

բույծների մեջ։ Այժմ գոյություն ունի այն կարծիքը, վոր «կաստորեքսը», իր այդ չտեսնված հատկությամբ, հեղաշրջում է առաջ բերում ճագարաբուծության մեջ, վորովհետև նրա մորթին, իր կազմությամբ, ավելի քան բոլոր մյուս տեսակների մորթիները, նմանվում է թանգարժեք վայրի գազանների մորթուն։ Մասնավորապես նրա մորթին նաև իր գույնով (շագանակագույն) այնքան է նման վայրի կղբին (բոբրին), վոր հիմք է ծառայել նրան «կաստորեքս» անունը տալու, վորը նշանակում է «կղբերի թագավոր»։

«Կաստորեքսը» պատկանում է միջակ մեծություն ունեցող տեսակներին. նրա քաշը լինում է 2,5-ից մինչև 3,8 կիլոգրամ։ Նրա իրանը յերկարաձև է։ Վորձի գլուխը հաստլիկ է, իսկ եգինը՝ բարակ և գնչի մոտ նեղ։ Բրուկ չունի։ Ականջները տնկված են վեր, նրանց գույնը մորթու գույնին է, իսկ ծայրերը սեվ են։ Աչքերը մուգ շագանակագույն են, իսկ բիբերն ավելի մուգ։ Պոչը յերկար է և ծայրում սպիտակ գույն ունի։ Մորթու գույնը հավասար չի տարածված ամբողջ մարմնին. կռնակը կղբի գույնի յե, իսկ փորի տակը և վոտքերը մուգ մոխրագույնի յեն տալիս։

Շատ յերկրների ճագարաբույծներն աշխատում են գործնական միջոցներ գտնել «կաստորեքսի» հիշյալ արժեքավոր հատկությունը մյուս տեսակի ճագարներին փոխանցելու նպատակով։

Արդեն զգալի նվաճումներ են կատարված այդ ուղղությամբ։ Գերմանիայում «կաստորեքսի» հատկություններն էլ ավելի զարգացնելով, ստացվել են ճագարի մի նոր տեսակը, որը զարմանալի նման է ջրաղվեսին (վիդրա) և որի մորթին բոլոր մորթիներից 4 անգամ ավելի թանկ է գնահատվում։ Վերջերս զանազան յերկրներում ստացված են «կաստորեքսի» նման ու նրանից էլ ավելի արժեքավոր տեսակներ. «շինշիլլռեքս», «բլյուռեքս», «ռեդռեքս» և այլն, որոնք ընդհանուր առմամբ կոչվում են ռեքսեր։ Նրանք բոլորն էլ իրենց մորթի ձևերով նման են «կաստորեքսին»։

Սակայն պետք է ասել, որ այս նոր ստացված տեսակների դրական հատկությունները դեռևս ամրացված չեն և նրանց վրա դեռ շատ աշխատանք պետք է թափել։

ՃԱԳԱՐ ՊԱՀԵԼՈՒ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ

ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճագարաբուծությունն, ինչպես տեսանք նախնթաց գլուխներից, անասնաբուծության ամենահին ճյուղերից մեկն է։ Մարդը, հեռավոր ժամանակներից, ընտանիացնելով ճագարին ու աշխատելով որքան կարելի յե շատ օգուտ ստանալ նրանից, ուսումնասիրել է նրան ու մշակել նրան պահելու բազմաթիվ սիստեմներ (միջոցներ), որոնք սերնդից սերունդ անցնելով, յեկել հասել են մեզ և որոնք սակայն դեռևս վերջնականապես չեն ձևակերպվել և դեռ ավելի պիտի զարգանան ու մշակվեն։

Ճագար պահելու այժմ գործածվող սիստեմները շատ բազմազան են։ Սակայն նրանց միջև կա մի հիմնական տարբերություն, դա այն է, որ նրանցից մի քանիսը փոքրի շատե ազատ պայմաններ տալով անասուններին, մոտեցնում են նրանց ապրելակերպը բնության մեջ ապրող վայրի ճագարի ապրելակերպին, իսկ մի քանիսը, սահմանափակելով անասունների ազատությունը, ստեղծում են նրանց համար ապրելու արհեստական պայմաններ։ Համաձայն այդ տարբերության, ճագար պահելու սիստեմները կարելի յե բաժանել յերկու հիմնական խմբերի, անվանելով նրանց՝ «արհեստական» ու «կիսաբնական» սիստեմներ։

Ծանոթանանք կարևորագույն սիստեմներին։

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ

ՎԱՆԴԱԿԸ

Ճագարը պահելու ամենատարածված սիստեմն ամբողջ աշխարհում, դեռևս վանդակի սիստեմն է։ Այդ սիստեմն, ինչպես և ցույց է տալիս նրա անունը, կայանում է նրանում, որ ճագարին տեղավորում են հատուկ շինված վանդակի մեջ և այնտեղ նրան խնամում, կերակրում և այլն։ Ճագարն իր ամբողջ կյանքն անց է կացնում վանդակում. նրա մեջ մեծանում, նրա մեջ էլ ինքն է ծնում բազմաթիվ անգամ ու ապրում մինչև ծերության հասակը, յեթե ի հարկե մինչ այդ չի ընկնում դանակի տակ և կամ զոհ չի գնում որևէ հիվանդության։

Քանի որ ճագարի ամբողջ կյանքն անցնում է վանդակում, բնականորեն վանդակի հատկությունները պետք է վճռական նշանակություն ունենան անասունի համար։ Վանդակների շատ տեսակներ կան այժմ, որոնք մշակվել են զանազան յերկրներում, տեղական պայմանների ու պահանջների համեմատ։ Սակայն ինչպես արտասահմանյան, այնպես էլ մեր ճագարաբույծները դեռևս չեն պարզել վերջնականապես, թե գոյություն ունեցող վանդակներից որն է լավագույնը՝ թե ճագարին ապրելու հարմարություններ տալու և թե ճագարին խնամող մարդու աշխատանքն հեշտացնելու տեսակետից։

Այսպես թե այնպես գոյություն ունի այն ընդհանուր կարծիքը, որ վանդակը պետք է համապատասխանի գոնե հետևյալ նվազագույն պահանջներին.

1. Նա պետք է բավական արձակ լինի, որպեսզի ճագարը կարողանա տեղավորվել նրա մեջ իր ձագերի հետ միասին և շարժվելու տեղ ունենա։

2. Նա պետք է այնպես շինված լինի, որ նրա ներսում միջանցիկ քամիներ չլինեն և անձրևն ու ձյունն էլ չթափանցեն ներս, որովհետև վանդակում ապրող ճագարները քնքույշ են լինում և խոնավություն չեն տանում։

3. Նրա մեջ պետք է բավական լույս լինի և օդն էլ մաքուր, որովհետև ինչպես բոլոր կենդանի արարածների, այնպես էլ ճագարի առողջության համար այդ յերկու պայմանները ամենաանհրաժեշտն են հանդիսանում։ Միաժամանակ վանդակի մի մասում պետք է փոքր ինչ մութ լինի, որովհետև ճագարը ծնելու ժամանակ և ձագերին կերակրելու սկզբի շրջանում սիրում է առանձնանալ։

4. Նա պետք է յերկու հատակ ունենա. մի հատակը, որին անմիջապես շփվում է ճագարը, պետք է ծակոտիկներ ունենա, որպեսզի մեզն ու աղբը թափվեն ցած և անասնի տակը միշտ չոր լինի։ Իսկ մյուս

հատակը (վորն առաջին հատակի տակն է գտնվում), պետք է փոքր ինչ թեք լինի և չծծող նյութից շինված։

5. Նա պետք է այնպես լինի շինված, վոր ավելորդ խորշ ու փորդություններ չունենա և հեշտ լինի նրա մաքրելն ու հականեխելը։

6. Պետք է այնպես լինի շինված, վոր ճագարի կերակուրը դրվի մի տեղից, իսկ աղբը դուրս հանվի մյուս տեղից, վորպեսզի կերն ու կեղտոտությունները յերբեք միմիանց չդիպչեն։

7. Նա պետք է այնպես շինված լինի, վոր ճագարի կատաղի թըշնամիները՝ մուկը, աքիսը, կատուն և այլն չկարողանան ներս մտնել։

8. Այս բոլոր կարեվորագույն պահանջներին բավարարելուց բացի, նա պետք է լինի բավական ամուր ու դիմացկուն և գործադրվի տնտեսության մեջ յերկար տարիներ։

Ժամանակակից կուլտուրական ճագարաբուծական տնտեսությունները, վանդակները շինելիս, հիմնականում պահպանում են այս բոլոր պայմանները։ Խորհրդային Միության սահմաններում գործածվող բազմապիսի վանդակներից ամենից ավելի համապատասխանում է հիշյալ պահանջներին այն վանդակը, վորի նկարը ցույց է տրված 55-րդ եջում։ Այդ վանդակը մշակվել է անասնաբուծական միության մասնագետների ձեռքով և վորոշ փոփոխության է յենթարկվել այս գրքը կազմողի կողմից։

Ինչպես նկարից յերևում է, այս վանդակի առաջին հատակը շինված է 5—6 սանտիմետրանոց ձողերով (ռեյկաներով,) վորոնք ամրացված են միմիանցից մեկ սանտիմետր հեռավորության վրա։ Վորպեսզի աղբը դեմ չընկնի և չմնա արանքներում, ձողերի ներքևի կողմն ավելի նեղ է, իսկ վերևինը՝ լայն։ * Ճագարը ման գալիս, վոտքերով սեղմում է աղբն ու հատակի արանքներով քշում ցած։ Վորպեսզի հեշտ լինի այդ հատակը վանդակից հանելն ու լվանալը, նրան շինում են յերկու մասից բաղկացած։

Այս նկարագրած հատակի տակ գտնվում է յերկրորդ, թեք հատակը, վորն ուրիշ վոչինչ է, յեթե վոչ ցինկապատ թիթեղով շինված շարժական մի արկղ, վորի մեջտեղում սարքած է խողովականման յերկար մի տաշտակ, վերևից թափվող մեզն ու աղբն իր մեջ հավաքելու համար։ Այդ տաշտակը նույնպես շարժական է և, նրա միջից աղբը թափելու ժամանակ, դուրս է քաշվում վանդակի միջից։ Այս տեսակի հատակն ամենահարմարն է վանդակի մեջ պատշաճ մաքրություն պահելու համար։ Սակայն վորովհետեվ ցինկապատ թիթեղն այժմ հեշտությամբ չի ճարվում, նրան փոխարինում են ուրիշ վորևէ չծծող նյութով։ Սովորաբար յերկրորդ հատակն հիմա շինում են բարակ տախ-

* Նկարում սխալմամբ ընդհակառակն է ցույց տված։ Ձողերի նեղ կողմն անպայման պետք է լինի նրանց ներքևում։

տակով (ֆաներ) և ծածկում նրան կպրով (ТОЛЬ), կամ ներկում նրան թանձր յուղաներկով։ Սակայն ամենալավ չծծող նյութն հանդիսանում



Նկ. 16 Ճագարի վանդակը

է այդ նպատակի համար պատրաստվող խառնուրդը, վորը բաղկանում է 6 մաս ավազից, 2 մաս ցեմենտից և 1 մաս սղոցուկից (փայտի թեփ)։ Այդ նյութերը ջրով բաց անելով քսում են տաշտակին 2-3 միլիմետր հաստությամբ։

Այս վանդակի դիմացի կողմը բաժանված է յերկու մասի, մեկը լայն է, մյուսը՝ նեղ։ Լայն մասը՝ դա յերկաթալարի ցանցով պատած դուռն է, վորն ազատ բաց ու խուփ է լինում դեպի դուրս։ Իսկ նեղ մասը տախտակե անշարժ պատն է։ Ցանցի միջով թե օդը և թե լույսն առատությամբ անցնում են վանդակի մեջ, իսկ տախտակե պատի հետեվում փոքր ինչ մութ է մնում, վորոշ հարմարություն տալով ճագարի բնական պահանջներին։

Ճագարի վանդակներն առհասարակ շինվում են փայտից, վորի ինչ ծառից լինելը նշանակություն չունի։ Ամենահարմար նյութը ֆա-

ներն ու 8—10 սանտիմետրանոց ռեյկան ե։ Այստեղ նկարագրած վանդակը շինելու համար պահանջվում են մոտավորապես հետեվյալ շինանյութերը.

Ֆաներ 4—5 միլիմետրանոց	$1^1/_2$ հատ
Ձող (ռեյկա) 8×8 սմ.	15 մետր
Մետաղալարե ցանց	0,6 քառ. մետր
Ցինկապատ թիթեղ	1 թերթ
Մեխ զանազան չափերի	200 հատ
Ողակ	4 հատ
Կեռ (չանգալ)	2 հատ

Այս վանդակը հարմարեցրած ե ճագարի խոշոր տեսակների համար և նստում ե մոտավորապես 16 ռուբլի՝ շինանյութերն ու շինավարձը միասին հաշված։ Ի հարկե փոքր տեսակների համար ավելի փոքր վանդակներ են պահանջվում, վորոնք, մի քանի ռուբլով արժան են նստում։ Անհավասիկ վանդակների այն նվազագույն չափերը, վորոնք անհրաժեշտ են խոշոր, միջակ և փոքր տեսակների համար։

Աղյուսակ № 3

Ճագարի մեծությունը	Վանդակի յերկարությունը։	Վանդակի լայնությունը։	Վանդակի բարձրությունը։
Խոշոր	105 սմ	82 սմ	70 սմ
Միջակ	80 սմ	70 սմ	60 սմ
Մանր	65 սմ	60 սմ	50 սմ

Ամեն մի վանդակ պետք ե ունենա իր առանձին սարքավորումը՝ իր մսուրը, կերամանը և յերբեմն ծննդարանը։

Կերամանը վոր գործ ե ածվում չոր կամ ջրալի կերակուր տալու համար, պետք ե չծծող նյութից լինի շինված, վոր լավ մաքրվի։ Փայտե կերամանները շատ անհարմար են, վորովհետեվ բացի նրանից, վոր նրանք ծծում են կերակուրն ու հետեվապես լավ չեն լվացվում, նրանց ճագարները կարող են կրծոտել։ Ամենից լավ կերամանները հասարակ հատ ապակուց են լինում շինված և կամ թրծված ու գելված կավից։ Կերամանը պետք ե բավական բարձր կողքեր ունենա, վորպեսզի ճագարները նրանց մեջ չկեղտոտեն (և չնստեն), միաժամանակ նրանք պետք ե բավական ծանր լինեն, վորովհետեվ ճագարները սովորություն ունեն նրանց այս ու այն կողմը շարժելու։

Կերամանի ընդունված չափը 15 սմ. յերկարություն, 10 սմ. լայնություն և 7 սմ. բարձրությունն ե համարվում։ Հաճախ շինում են 10 սմ. յերկարություն և 10 սմ. լայնություն ունեցող և կամ կլոր ձեվ ունեցող կերամանները, վորոնք ի հարկե ամենից ավելի հարմար են

հեշտությամբ մաքրվելու տեսակներից։ Կերամանները սովորաբար տեղավորվում են վանդակի վորեվե անկյունում, հատակի վրա։



Նկ. 17 Կերամաններ

Մսուրը ծառայում ե ճագարին խոտ կամ տերեվներ տալու համար։ Ամենից լավը սովորական մետաղալարե մսուրներն են։ Նրանց այնպես են տեղավորում, վոր ստիպված չլինեն ամեն կերակրելիս վանդակը բաց անել։ Վանդակի պատին մի քառակուսի ծակ են բաց անում և այդ ծակի մեջ այնպես են տեղավորում մսուրը, վոր նրա մի կեսը լինում ե վանդակի ներսում, իսկ մյուս կեսը՝ դրսում։ Դրսի կեսը սովորաբար ծածկում են տախտակե արկղով, վորն ունենում ե դեպի վերեվ բացվող դռնակ։ Ճագարին կերակրելիս բաց են անում միայն այդ դռնակը և խոտն ու տերեվները դրսից դնում են անմիջապես մսուրի մեջ։ Ճագարը ներսից ատամներով պոկում ե կերը մետաղալարե ցանցի միջից և ուտում, յերբ վոր ինքն ե ցանկանում։



Նկ. 18 Մսուրը

Այս տեսակի մսուրները շատ հարմար են այն տեսակետից, վոր կերակուրը չի թափվում ճագարի վոտների տակ, չի կեղտոտվում ու փչանում։ Բացի դրանից, այս մսուրներն զգալի չափով հեշտացնում են կերակրելու աշխատանքը խոշոր տնտեսություններում։

Շատ ճագարաբուծներ մսուրն ամրացնում են վանդակի կողքին, բայց դա խոշոր տնտեսությունների համար անհարմար ե, վորովհետեվ վանդակները, միմիանց մոտ շարելիս, ավելի յեն տեղ բռնում և ուրեմն ավելի մեծ շենք են պահանջում։

Վերջին ժամանակներս տարածվում ե մսուրների մի նոր տեսակը, վորի ներքեվի մասում ամրացված ե շարժական կերամանը։

Ծննդարանը։ Շատ ճագարանոցներում, ճագարի ծնելու շրջանում, վանդակի մեջ ժամանակավորապես տեղավորվում են այսպես կոչվող ծննդարանը, վորն ուրիշ վոչինչ ե, յեթե վոչ շարժական մի արկղ (60×40×40 սանտիմետր), վորի մի կողմում կլոր անցք ե լինում բաց-

ված։ Ճագարն հաճույքով մտնում է այդ արկղը և այնտեղ ծնում ու տեղավորում նոր աշխարհ յեկած ձագերին, իր նախորոք պատրաստած փափուկ և տաք բնում։ Ծննդարանն անհրաժեշտ է ցուրտ յերկրներում, ճագարի ուշ աշնանն ու վաղ գարնանը ծնելու դեպքում, մանավանդ յերբ վանդակը պահում են բաց օդում, կամ չտաքացվող շենքում։ Ծննդարանի մեջ, վորի անցքը սովորաբար ծածկում են վարագույրով, ավելի տաք է լինում և ձագերն անհամեմատ ավելի քիչ են յենթակա մրսելու վտանգին։

Սակայն ծննդարանն ունի և իր բացասական կողմերը։ Նախ արկղի մեջ օդը շատ շուտ է փչանում և ձագերն իրենց կյանքի սկզբի, ամենավտանգավոր շրջանում, շնչում են կեղտոտ և սեփական մեզի հոտով ապականված օդը. յերկրորդը՝ ծննդարանը մի վանդակից մյուսը տեղափոխվելիս տանում է իր հետ և տարածում վարակիչ հիվանդությունները։ Այդ յերևույթների դեմ կռվելու համար խորհուրդ է տրվում ծննդարանի վերևի կողմում խուփ շինել, վորն հարմարություն է տալիս վոչ միայն ցանկացած ժամին ծննդարանի օդը փոխելու և բույնը կանոնավորապես մաքրելու, այլ և, ընդհանրապես, հսկելու ձագերին և ժամանակին ընտրություն կատարելու նրանց միջև։ Իսկ հիվանդությունների տարածումը կանխելու համար, ծննդարանը, տեղա-



Նկ. 19 Ծննդարանը



Նկ. 20 Հասարակ արկղից շինված վանդակը



Նկ. 21 Տակառից շինված վանդակը

փոխելուց առաջ, խիստ հականեխման են յենթարկում յեռացված ջրով և մարած կրով։ Ծննդարանը մաքրելու ժամանակ ձագերին զգուշությամբ հանում են դուրս և տեղավորում բնի մի վորևե անկ-

յունում։ Ծննդարանը թողնում են վանդակում մինչ այն ժամանակ, յերբ ձագերն իրենք սկսում են ներս ու դուրս անել անցքով։

Վանդակի սարքավորման առարկաների շարքին է պատկանում նաև ծղճոտը, վորը փռվում է ճագարի տակը։

Ճագարարույծները յերբեմն վանդակի մեջ, հատակից 15—20 սմ.



Նկ. 22 Վանդակը մաքրելու գործիքները

բարձրության վրա, 20—25 սմ. լայնություն ունեցող թարաք են շինում։ Մայր ճագարները, հաճույքով բարձրանում են այդ թարաքին ու պառկում այնտեղ, մեկուսանալով անհանգստացնող ձագերից։

Ինչպես ասացինք, լավ վանդակը պետք է համապատասխանի

Նկ. 23 Վանդակի մաքրումն ու հականեխումը

այստեղ հիշված բոլոր պայմաններին։ Սակայն անհրաժեշտ է ավելացնել, վոր ճագարաբուծությամբ պարապել ցանկացող կոլտնտեսականներն ու անհատականները կարող են սկզբում պահել ճագարներին ավելի պարզ վանդակում, մինչև վոր հնարավորություն ունենան բո-

յոր պահանջներին համապատասխանող վանդակներ ձեռք բերել։ Ճագարներին, վորոշ ժամանակ, կարելի յե պահել վորեվե հասարակ արկղի կամ տակառի մեջ, տեղավորելով նրանց կտուր ունեցող վորեվե շենքում՝ մարաքում, նախասենյակում, պատշգամբում և այլն:

Բոլոր վանդակ գործածող ճագարաբույծների կարեվորագույն պարտականությունն է, ամենայն աչալրջությամբ պահպանել նրա մաքրությունը։ Անհրաժեշտ է ամեն որ և կամ ամենաշատը որը մեջ հիմնականապես մաքրել, լվալ ու հականեխել վանդակի ներսն ու դուրսը մարգանեցի ուժեղ լուծույթով, մաշած կրով և կրակով։

ՓԱԿ ՃԱԳԱՐԱՆՈՑՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ

Վանդակի սիստեմը գործադրող տնտեսությունները մինչև այժմ մեծ մասամբ տեղավորում են ճագարներին փակ շենքի մեջ և պահում նրանց այնտեղ ամբողջ տարին։ Հասկանալի յե ինքն ըստ ինքյան, վոր լավ ճագարանոցը պետք է այնպես լինի կառուցված, վոր նրա մեջ միշտ մաքուր օդ լինի, լույսն ազատ մուտք ունենա, խոնավություն և միջանցիկ քամիներ չլինեն և այլն։

Նկ. 24 Փակ ճագարանոցը

Փակ ճագարանոցները շատ տարբեր են լինում իրենց մեծությամբ։ Խորհրդային Միության մեջ կառուցվում են հատուկ շենքեր, սկսած 50-ից մինչև 300 վանդակի համար։ Իսկ յերբ տնտեսությունները ավելի խոշոր են, սովորաբար միմիանցից վորոշ հեռավորության վրա կառուցվում են մի քանի շենք (յերբեմն 10—15 և ավելի), վորոնք հարմարեցված են լինում 200-ական և ավելի վանդակի համար։

Փակ ճագարանոցներում, տեղ քիչ գրավելու նպատակով, վանդակները շարում են վոչ միայն մոտիկ, իրար կողքի, այլև իրար վրա, յերբեմն յերեք և նույնիսկ չորս հարկ բարձրությամբ։

Ճագարանոցների կառուցման խնդրի վրա կանգ չենք առնում այստեղ, վորովհետեվ այդ սիստեմն ամբողջովին մենք համարում ենք անընդունելի։ Նա աննպատակահարմար է նախ այն պատճառով, վոր փակ շենքում, վորքան էլ վոր հսկողություն լինի, յերբեք չեն կարող

պատշաճ կերպով ապահովել անասնաառողջապահական պահանջները։ Իսկ դրա հետեվանքն այն է լինում, վոր ճագարները, բանտարկված ու հակաբնական անշարժության մատնված լինելով, հետզհետե քնքշանում են, դառնում յենթակա ամեն տեսակ հիվանդությունների։

Աննպատակահարմար է այս սիստեմը նաև այն տեսակետից, վոր նա անօգուտ դրամական միջոցներ ու դիֆիցիտային շինանյութեր է պահանջում և ուրեմն զգալի չափով բարձրացնում է ճագարի մորթու և մսի ինքնարժեքը։

Մեր ճագարաբուծական խորհտնտեսություններից մի քանիսը կանգ առնելով այդ սիստեմի վրա, նոր շենքեր են կառուցել, վորոնք իրենց հարմարություններով համապատասխանում են ժամանակակից ամենախիստ պահանջներին։ Սակայն, յերբ այդ խորհտնտեսությունները հաշիվ են անում, թե ինչքան ծախս է կատարվել շենքերի վրա, ստացվում են շշմեցուցիչ թվեր։ Բանից դուրս է գալիս, վոր մի քանի տնտեսություններում ամեն մի մայր ճագարի վրա ծախսված է 240—320 ռուբլի։

Ավելորդ է իհարկե խոսել այստեղ այն մասին, վոր ճագարների համար այդպիսի պալատներ կառուցելը միանգամայն ավելորդ է, քանի վոր այդ տնասուններից կարելի յե նույնքան օգուտ ստանալ՝ անհամեմատ ավելի քիչ ծախսեր կատարելով։ Մեր որերում, յերբ դեռևս բանվորական բնակարանային շինարարությունը «նեղ» տեղերից մեկն է, գլխավորապես շինությունների պակասության պատճառով, գործադրել այդ շինանյութերը ճագարանոցներ կառուցելու համար այնպիսի սխալ է, վորը շատ նման է վնասարարության։

Փակ ճագարանոցները թույլատրելի են միայն այն կոլտնտեսություններում, վորոնք «անգորայի» ճագար, կամ «գորնոստայ» են պահում։ Այդ տեսակները պահելու առանձին պայմաններ են պահանջվում (տաքություն, առանձին մաքրություն), վորոնք հնարավոր է իրագործել միայն փակ շենքում։ Մնացած տեսակների համար փակ շենքերը բոլորովին ավելորդ են։

ԱՐՏԱՔԻՆ ՎԱՆԴԱԿՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ

Ճագարների առողջապահության պահպանության տեսակետից անհամեմատ ավելի հարմար է արտաքին վանդակների սիստեմը, վորը կայանում է նրանում, վոր ճագարները թեպետ պահվում են վանդակներում, բայց վոչ թե փակ շենքի մեջ, այլ դուրսը, բակում։ Բաց յերկնքի տակ, գետնից 50—60 սմ. բարձրություն ունեցող տախտակամածի վրա շարում են վանդակները, յերեսի կողմը դեպի հարավ կամ հարավ-արեվմուտք ուղղված և ճագարներին պահում նրանց մեջ

գիշեր ու ցերեկ, ամառ ու ձմեռ։ Թեպետ այս սիստեմը գործադրելիս, ճագարները դարձյալ բանտարկված վիճակումն են գտնվում և զուրկ են ազատ շարժումներ կատարելու հնարավորությունից, բայց շատ ավելի լավ են զգում իրենց, որովհետև միշտ գտնվում են մաքուր օդում։ Փոքր հասակից վարժվելով դրսի ցրտին և նույնիսկ սառնամանիքներին, արտաքին վանդակում ապրող ճագարներն ամրանում են ու առողջանում և անհամեմատ ավելի լավ են դիմադրում հիվանդություններին։

Բացի դրանից դրսում ապրող ճագարների մորթին ավելի խիտ է լինում և գեղեցիկ։

Այս սիստեմս ավելի նպատակահարմար է նաև այն տեսակետից, որ շատ ավելի պակաս դրամական ու նյութական միջոցներ է պահանջում գործը կազմակերպելու համար։ Այստեղ թանկ արժեցող շենքեր պետք չեն։ Վանդակներն էլ արժան են նստում, որովհետև նրանք շինվում են ոչ թե առանձին առանձին, այլ տասնյակներով մի միանց կպած, ամբողջ 8—9 մետրանոց տախտակների յերկարությամբ։ Հասկանալի յե, իհարկե, որ այստեղ վանդակները պիտի ծածկված լինեն չծծող նյութերից շինված տանիքով։



Նկ. 25 Արտաքին վանդակների սիստեմը

Մոսկվայի մոտ գտնվող Չեկոդայեվի հայտնի խորհտնտեսությունում այս սիստեմով պահվում են 5000 մայր ճագարներ, որոնք տալիս են տարեկան 60—70 հազար ձագ։

Շատ տնտեսություններում ճագարներին անձրևից ու ձյունից պատսպարելու նպատակով, վանդակները տեղավորում են թեպետ բացօթյա, բայց առանձին տանիքի տակ և մի կողմից էլ պատ են շարում, քամիների դիմացն առնելու համար։

Արտաքին վանդակների մեջ ապրող ճագարները, տարվա կեսը ցրտում անցկացնելով, ավելի շատ են կեր գործածում, որովհետև ինչպես հայտնի յե, առհասարակ, ցուրտ ժամանակ յուրացված կերի մի մասը գնում է անասունների մարմինը տաքացնելու։ Բացի այդ, դարձյալ ցրտի պատճառով, նրանք ծնում են տարեկան մեկ կամ յերկու անգամով պակաս, քան փակ շենքում ապրող ճագարները։ Սա-

կայն, չնայած այս հանգամանքներին, արտաքին վանդակների սիստեմը, որպես ճագարների առողջությունն զգալի չափով ապահովող, որպես մորթու հատկությունները լավացնող և որպես ավելի քիչ դրամական և նյութական միջոցներ պահանջող սիստեմ—անկասկած ավելի նպատակահարմար է մեր կոլտնտեսությունների համար։ Նահարմար է մանավանդ Հ. Կովկասի և Անդրկովկասի այն ռայոնների համար, որոնք տաք ձմեռներ ունեն, որովհետև այդ ռայոններում վերոհիշյալ անհարմարությունները (պակաս ծնելը) վերանում են։

Ճագարներին վանդակի մեջ պահող տնտեսությունները (թե փակ շենքում և թե դրսում) պետք է աչքի առաջ ունենան, որ ձագե-



Նկ 26 Արտաքին վանդակները կտուրով ծածկված

րին կարելի յե թողնել մոր մոտ ոչ ավելի, քան մեկ ու կես ու ամենաշատը յերկու ամիս։ Մոր և ձագերի համակեցությունն ամիս ու կեսվա ընթացքում անհրաժեշտ է, որովհետև այդ ժամանակամիջոցում ձագերը մոր կաթով են ապրում։ Իսկ դրանից հետո, յերբ ձագերն անցնում են առանձին կերի և, բավական մեծացած լինելով, նեղվածք են առաջ բերում վանդակում, նրանց մոր մոտ թողնելը ոչ մի միտք չունի։ Ձագերին ընդհանուր վանդակից շուտով հեռացնելն անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, որ մայրն յերկու, յերկու և կես ամսից արդեն նորից է պատրաստվում ծնելու։

Շատ տնտեսություններում ձագերի համար առանձին մեծ վանդակներ են պատրաստում 5—12 գլուխ և ավելի, միասին տեղավորելու համար, բայց դա անհրաժեշտ չէ։ Ձագերին յերեք-յերեք կամ չորս-չորս, կարելի յե պահել և սովորական վանդակներում, աչքի առաջ ունենալով միայն այն, որ եգերին ու որձերին պետք է բաժանել միմյանցից՝ յերեք և ամենաշատը չորս ամսական հասակում։

ՎՈԼՅԵՐՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ

Խորհրդային Միության սահմաններում ճագար պահելու սիստեմներից, վերջին ժամանակներս, ամենատարածվածը վոլյերների սիստեմն է, վորը հիմնականում տարբերվում է մյուս վերևում նկարագրված սիստեմներից նրանով, վոր այստեղ ճագարին մի փոքր ազատություն է տրվում: Այստեղ վանդակը դրվում է համարյա գետնի վրա (նրանից 5—7 սմ. բարձր) և ամեն մի վանդակի առաջ 5—6 քառ.



Նկ. 27 Վոլյերի սիստեմը

մետր տարածություն է ցանկապատվում, վորտեղ թե մայր ճագարը և թե ձագերը իրենց կամքով և ցանկացած ժամանակ կարող են ըզբոսնել: Վանդակի դռնակն այստեղ միշտ բաց է դեպի այդ ցանկապատած բակը:

Ճագարին տրվող այդ չնչին ազատությունն զգալի չափով փոխում է նրա ապրելակերպը և անհամեմատ ավելի լավ պայմաններ է ստեղծում նրա համար: Մաքուր ոդով և կենսատու արևի ճառագայթներով ոգտվելու այդ հնարավորությունն ամրացնում է նրանց որգանիզմն ու ապրելու և հիվանդություններին դիմադրելու ավելի ընդունակ դարձնում:

Վոլյերները (բակերը) սովորաբար շարված են լինում իրար կողքի, մեկը մյուսին կպած: Ամեն մի վոլյերը հատկացվում է մի ընտանիքի՝ մի մորն իր ձագերով: Իսկ յերբ ձագերը դառնում են մեկ ու կես յերկու ամսական, նրանց հեռացնում են մորից և տեղավորում առանձին վոլյերի մեջ 8—10 հատը մի տեղ: Չորս ամսական հասակից եգերին ու վորձերին բաժանում են միմյանցից և պահում նրանց ա-

ռանձին բակերում: Զուգավորելու ժամանակ եգերին բռնում տանում են վորձի մոտ:

Ցանկապատի համար, վորի բարձրությունը պետք է լինի մեկ ու կես մետր, սովորաբար յերկաթալարե ցանց են գործածում, բայց այս դժվար ձեռք բերվող առարկան չգտնվելու դեպքում, կարելի յե գործադրել փայտե ձողեր, յեղեգն և կամ այլ տեղական եժանագին նյութեր: Վորպեսզի ճագարները չկարողանան կրծել ու ճանկերով քանդել ցանկապատը, սովորաբար, նրա ներքևի մասում, գետնից կես մետր բարձրությամբ, տախտակով կամ քարով են պատում: Վորովհետև ճագարները սիրում են փորփրել գետինն իրենց համար բուն փորելու նպատակով, պետք է բակի հատակը խեժով պնդած լինի, վորպեսզի նրանք չկարողանան ծակել հողն ու դուրս փախչել բակից:

Վոլյերում գործադրվող վանդակներում տանիքն առհասարակ շարժական է լինում, այնպես վոր կերակուրը վերից են դնում վանդակի մեջ: Վերևից ել մաքրում են վանդակի ներսը: Յերբ պետք է լինում ճագարներին բռնել, նրանց կերով գրավում են վանդակի մեջ և, վերևից իջեցնելով դռան շարժական տախտակը, փակում են նրանց նահանջի ճանապարհը:

Տաք ռայոններում, վորտեղ ամառներն արևը շատ է կիզում, անասուններին շոգից պատսպարելու նպատակով, վոլյերները ծածկում են սյուների վրա հենվող հարդե թեթև տանիքով: Իսկ ցուրտ ռայոններում, վորտեղ ձյունը լցնում է բակն ու վանդակը, անհրաժեշտ է ամեն որ դուրս թափել ձյունը, վորպեսզի անասունները կարողանան ազատ շարժվել:

Խորհրդային հյուսիսում վոլյերի սիստեմը գործադրող մի քանի խոշոր տնտեսություններ, ճագարների համար փոքրի շատե տաք պայմաններ ստեղծելու նպատակով, փորձում են տեղավորել նրանց դարձյալ փակ շենքում, բայց այնպես, վոր վանդակների դռները դեպի դուրս լինեն ուղղված և անասունները կարողանան ըստ իրենց ցանկության դուրս գալ բակն զբոսնելու: Սակայն այդ նորությունը, վորը դարձյալ կապված է մեծ ծախսերի հետ և վոչ մի աչքի ընկնող դրական պայման չի ստեղծում ճագարների համար, պետք է համարել ավելորդ:

ԿԻՍԱԲՆԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐ

ԳԱՐԵՆՆԻ ՍԻՍՏԵՄԸ

Դեռ շատ հեռավոր ժամանակներում և մինչև այժմ ել շատ յերկրներում ճագարներին պահում են գարեննի սիստեմով, այսինքն

բաց են թողնում նրանց ցանկապատով շրջապատված վորեվե արձակ տարածության մեջ, թողնելով նրանց իրենց կամքին։

Ճագարները՝ ընկնելով այս կիսաբնական պայմանների մեջ, ստիպված են լինում, իրենց նախահայրերի նման, գետնի տակ բուն փորել ցրտից ու շոգից պատսպարվելու և ձագերին տեղավորելու համար։

Թե վորքան տարածության վրա վորքան ճագար կարող է ապրել, դա կախված է գարեննի բնական պայմաններից։ Նախ պետք է

Նկ. 28 Ճագարի բույնը գետնի տակ

վոր հողամասը գտնվի անպայման չոր վայրում, վորովհետեվ ճագարները խոնավությունից հիվանդանում են։ Յերկրորդ, հողամասը պետք է թեք լինի, վորպեսզի անձրևներից ու հալվող ձյուներից գոյացող ջրերը չհավաքվեն ու չճահճանան։ Յերրորդ՝ հողամասի յերեսը պետք է ծածկված լինի բուսականությամբ, իսկ տակն ավազ կամ փխրուն հող լինի, վորովհետեվ ճագարները քարքարոտ հողի մեջ բուն փորել չեն կարող։

Յեթե հողամասն ինքնին հարուստ է ճագարի սիրած խոտերով, թփերով և մացառներով և դրա հետ միասին հարմար է խոտեր կամ հացահատիկ ցանելու համար, այդ դեպքում ամեն մեկ ճագարին կարելի յե հատկացնել 8—10 քառ. մետր տարածություն։ Յեթե տեղն աղքատ է բուսականությամբ և ցանքսեր կատարելու հնարավորություն չկա, ամեն մի ճագարին կարելի յե տալ 15—20 քառ. մետր տարածություն։ Միջին թվով, մեկ հեկտար հողի վրա կարող են ապրել 60—70 գլուխ մայր ճագար, համապա-

տասխան քանակությամբ վորձերի հետ միասին (10 եգին մեկ վորձ)։ Այդ նույն տարածության վրա կարող է ապրել նաև նրանց սերունդը։

Այստեղ ավելորդ չէ նկատել, վոր վորքան խորթ ու բորթ է լինում գարեննին հատկացվող տեղը, վորքան ծուռ ու մուռ, այնքան ճագարները լավ են զգում իրանց։ Անհրաժեշտ է սակայն աչքի առաջ ունենալ, վոր ճագարաբույծները պարտավոր են հաճախակի պտույտներ կատարել գարեննում և այնպես կարգի բերել բների բերանները (մուտքերը), վոր անձրևների ժամանակ ջրերն հոսեն ու անցնեն



Նկ 29 Գարեննում գործածվող կերատաշտերը

բների կողքով և վոչ թե թափվեն նրանց մեջ։ Հակառակ պարագային ջուրը կարող է լցվել բնի խոռոչը և խեղդել անասուններին։ Այն տնտեսությունները, վորոնք աչալուրջ կերպով չեն հետեվում գարեննի բների պահպանությանը, հաճախ մեծ վնասներ են կրում։

Սովորաբար գարեննին հատկացված տեղում ցանում են այն բույսերը, վորոնք ճագարն հաճույքով է ուտում և վորոնք ամենից ավելի օգտակար են նրա համար. որինակ՝ վարսակը, յերեքնուկը, առվույտը, վայրի գազարը (պաստերնակ) և կռաբանճարը։

Սակայն թե ամառը և ձմեռը, անկախ նրանից, թե ինչ է ցանված գարեննում, անհրաժեշտ է հավելյալ կեր տալ ճագարին։ Այդ նպատակով գարեննի մեջ, մի կամ մի քանի տեղ, հատուկ կերատաշտեր են դնում և որական յերկու կամ յերեք անգամ վորեվե կեր լցնում նրանց մեջ, որինակ,՝ վարսակ, արմատապտուղներ, կանաչ խոտ, չոր խոտ և այլն։ Այդ կերատաշտերը յերբեմն տեղավորում են տանիքի տակ, վորը պաշտպանելով կերը անձրևներից ու ձյունից, միաժամանակ պատսպարում են անասուններին կերակրվելու ժամանակ։ Այդ տանիքի տակ ձմեռները սովորաբար բավական քանակությամբ հարդ են դնում, վորպեսզի ճագարները շատ ցուրտ յեղանակին, պատսպարվեն նրա մեջ։

Ձմեռները ճագարներին ջուր տալն անհրաժեշտ չէ, նրանք իրենց ծարավը հագեցնում են ձյունով, իսկ ամառներն անպայման թարմ ջուր պետք է տալ նրանց։ Շատ հարմար է, յերբ գարեննի միջով մի փոքր առու յե անցնում և անասունները միշտ մաքուր ջուր ունեն խմելու։

Գարեններում ապրող ճագարները տարվա ցուրտ յեղանակներին սեռական կյանքով չեն ապրում և չեն բազմանում։ Իսկ գարնան, ամառվա և աշնան ընթացքում, նայած տեղի կլիմայական պայմաններին, ծնում են 2-ից մինչև 5 անգամ։ Միջին հաշվով, գարնան ամեն 10 էգ ճագարից աշնանն ստացվում է 200 գլուխ ճագար։ Մի հեկտար հողը կարող է տեղավորել մինչև 800—1000 գլուխ ճագար, մայրերն ու ձագերը միասին հաշված,

Աշնան վերջին, յերբ, ճագարների մազափոխությունը վերջանալուց հետո, մորթին ամրանում, խտանում ու գեղեցկանում է և յերբ, ընդհանրապես, ճագարները գիրացած են լինում, նրանց բոլորին բռնում են և ջոկջոկում։ Նախ բոլորի միջից ջոկում են ամենալավ, այսինքն ստանդարտին համապատասխանող, ջահել ու առողջ էգերին և նորից, հարկավոր քանակությամբ, արձակում նրանց գարեննը, իսկ պառաված էգերին ուղարկում են մորթելու։ Մատղաշ ճագարներից 5—8 ամսական որձերին նույնպես մորթում են, իսկ 5 ամիսը չլրացածներին կրտում են և կրկին բաց թողնում գարեննը։ Հին որձերին նույնպես սովորաբար մորթում են, իսկ նրանց փոխարեն, արձակում են գարեննը ուրիշ, անպայման որևէ հեռու տեղից բերված որձեր։ Այսպիսով, տարեց տարի, ճագարների արյունն օտար արյունով թարմացնելով, որոշ չափով թուլացնում են այլասերման վտանգը։

Գարեննի սիստեմը գործադրող կոլտնտեսությունները պետք է խուսափեն տարբեր տեսակ ճագարներ պահելուց, որովհետև, գարեննի ազատ պայմաններում, նրանք անպայման խառնվում են միմիանց և դրա հետևանքն այն է լինում, որ արժեքավոր տեսակները, հետզհետե կորցնելով իրենց գնահատելի հատկությունները, ձուլվում են ու անհետանում։ Առանձին ուշադրություն պետք է դարձնել մանավանդ որձերի վրա, ընտրելով նրանցից այնպիսիներին, որոնք իրենց տեսակի ճագարների մեջ աչքի յեն ընկնում խոշորությամբ, ուժեղ մկանունքներ ու ճանկներ ունեն և լավ են դիմանում ցրտին։

Գարեննի պարիսպը պետք է ունենա մեկ և կես մետր բարձրություն, որպեսզի նախ, ճագարները չկարողանան դուրս փախչել և յերկրորդը, որպեսզի ներս չմտնեն ճագարների կատաղի թշնամիները՝ աղվեսը, ժանտաքիսը և ուրիշ գիշատիչ գազաններ։ Պարիսպը

միաժամանակ պետք է կես մետրի չափ թաղված լինի գետնի տակ, որպեսզի ճագարները չկարողանան փորել նրա տակը և դուրս գալ գարեննից։ Առհասարակ գարեննի պարիսպը շինում են յերկաթալարե ցանցով, բայց նրա փոխարեն, կարելի յե գործածել փայտ, ծառի ճյուղեր, յեղեգն և այլ տեղական էժանագին նյութեր։ Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի լեռնային շրջաններում, որտեղ մանավանդ շատ մոտ են քարհանքները, կարելի յե ցանկապատել գարեննը նաև քարով։

Գարեննի սիստեմն ունի իր դրական ու բացասական կողմերը։ Նա նպատակահարմար է այն տեսակետից, որ.

ա. հատուկ շինություն և շինարարային նյութեր չպահանջելով, շատ չնչին նյութական միջոցներ է պահանջում գործի կազմակերպման նախնական շրջանում.

բ. կերի խնդիրը զգալի չափով թեթևացնելով և սպասարկման ծախսերն անհամեմատ պակասացնելով, շատ ավելի աժան է նստում քան մյուս սիստեմները և իջեցնելով արտադրանքի ինքնարժեքը, ավելի մեծ օգուտ է տալիս տնտեսությանը.

գ. ճագարները գտնվելով համարյա բնական պայմաններում և իրենց վայրի նախահայրերի նման, ազատ ապրելով արևի տակ, մաքուր օդի մեջ և ազատ շարժումներ կատարելով, ուժեղանում են, զարգանում ֆիզիկապես և շատ լավ դիմադրում բոլոր տեսակի հիվանդություններին։ Լինում են դեպքեր, յերբ վանդակի մեջ ապրող հիվանդ ճագարներին արձակում են գարեննը և նրանք կարճ ժամանակամիջոցում առողջանում են։

Գարեննի սիստեմի պակաս կողմերն այն են, որ.

ա. ինչքան էլ որ օտար տեղից նոր որձեր բերվեն, ճագարները հետզհետե այլասերվում են, որովհետև այստեղ միյեվնույն ծնողներից ծնված էգերն ու որձերը, համարյա 4—5 ամսական հասակից, սկսում են սեռական կյանքով ապրել։ Հաճախակի սեռական հարաբերությունների և արնախառնության հետևանքն այն է լինում, որ ճագարներն անխուսափելիորեն մանրանում են և իջեցնում մթերատվությունը։

բ. յերիտասարդ որձերն անընդհատ կռվի բռնվելով միմիանց հետ, գզգզում ու փչացնում են միմիանց մորթին.

գ. հսկողության, պատշաճ խնամքի անհարմարության պատճառով, այստեղ հնարավոր չի լինում մեկուսացնել անմիջապես հիվանդ ճագարներին, որոնք շատ անգամ սատկում են մարդու աչքից հեռու, այս կամ այն թփի տակ, իսկ տարափոխիկ հիվանդությունները առաջանալու դեպքում, ճագարների գլխովին կոտորվելու մեծ վտանգ է ստեղծվում։ Հիվանդությունները վարակում են ամբողջ հողն ու բները, որոնց հականեխելու միջոցը դեռ չի գտնված։

ՊԱՐԿԵՏԻ ՍԻՍՏԵՄԸ

Այս սիստեմը համարյա նույնն է, ինչ վոր գարեննի սիստեմը, միայն այն տարբերությամբ, վոր այստեղ ցանկապատած տարածությունն անհամեմատ փոքր ե լինում և ճագարների քանակությունն էլ սահմանափակ։

Սովորաբար պարկետի համար հատկացնում են 150 քառակուսի (10×15) մետր տարածություն (վորն անպայման պետք ե թեք լինի) և պահում են այնտեղ միայն 10 եգ ճագար, վորոնք, ինչպես և գարեննում, գետնի տակ բուն են փորում, այնտեղ իրենք տեղավորում և այնտեղ էլ ձագ հանում։ Յերբ պետք ե լինում, վործին բերում և արձակում են եգերի մոտ ժամանակավորապես, 10—12 որով և հետո



Նկ. 30 Պարկետի սիստեմը

նորից բռնում և պահում են առանձին վանդակում։ Այդ ժամանակամիջոցը նրան շատ անգամ բավական ե լինում բոլոր եգերի հետ զուգավորվելու համար։ Անցած յերկու ու կես ամիս, վործին նորից են բերում պարկետ, նորից հեռացնում և այլն։ Այդ միջոցով կարողանում են ղեկավարել անասունների սեռական կյանքը, վորոնք, նայած կլիմայական պայմաններին, ծնում են տարեկան 3—5 անգամ, տալով 10 եգ ճագարին միջին հաշվով տարեկան 200 գլուխ սերունդ։

Սակայն անհաժեշտ ե այստեղ շեշտել, վոր ավելի նպատակահարմար ե զուգավորման ժամանակ եգերն մեկ-մեկ տանել վործի մոտ. այդ դեպքում զգալի չափով իջնում ե չբերք եգերի տոկոսը։

Վորպեսզի վործ ճագարներին էլ հնարավորություն տրվի ազատ, վանդակից դուրս, մաքուր օդի մեջ ապրելու և ֆիզիկապես ամրապնդվելու, կարելի յե նրան էլ մշտականապես թողնել գարեննում, միայն այնպես, վոր նա եգերի հետ անմիջապես շփում չունենա։ Դրա համար պետք ե պարտեզի անկյուններից մեկում, առանձին, 15—20 քառ. մետրանոց մի տեղ հատկացվի նրան, բաժանելով այդ տեղը ցանցով, վորի հիմքը կես մետրի չափ պետք ե խրված լինի գետնի մեջ, վորպեսզի ճագարները չփորեն ու չանցնեն ցանցի տակից։

Վործերին և առհասարակ բոլոր ճագարներին պետք յեղած ժամանակ բռնելու համար, հատուկ թակարթ են շինում, վորի մասին կխոսենք հետեվյալ գլխում։

Պարկետում ապրող ճագարների կենցաղը բնական պայմաններին մոտեցնելու համար ցանում են նրանց սիրած բույսերը, վորոնցով նրանք, տարվա տաք ամիսներին, զգալի չափով բավարարում են իրենց սննդի պահանջը։ Այստեղ սակայն միևնույն ժամանակ հավելյալ կեր են տալիս նրանց (կանաչ խոտ, ծառի ճյուղեր, արմատապտուղ, վարսակ և այլն),

Պարկետում հատուկ կեր են տալիս նաև ձագերի համար։ Նրանց համար առանձին կերատաշտեր են դնում, վորոնք այնպես են շինված վոր մեծ ճագարները չեն կարող գլուխները կոխել մեջը և ուտել ձագերին



Նկ. 31 Գարեննում և պարկետում գործածվող մսուրը

հատկացված կերը (տես նկար № 29)։ Ձագերին տալիս են թեփ և կամ ավելի լավ ե հացահատիկներ (վարսակ) ամեն մի գլխին, միջին թվով, 20—25 գրամի հաշվով։ Վոսկորներն արագ մեծանալու և ամրանալու համար տալիս են ձագերին նաև 5-ական գրամ վոսկրալյուր։ Հետաքրքիր ե այստեղ նկատել, վոր թե գարեննում և թե պարկետում, շատ անգամ մայրերն ու ձագերը խառնվում են ու կորցնում իրար և ձագերն հաճախ կպչում են այն եգերին, վորոնց կաթն առատ ե

Մեկուսացրած վործերին ինարկե, կերակրում են առանձին։

Շատ ցանկալի յե, վոր բոլոր պարկետների միջով ջրի առու լինի անցկացրած, վորպեսզի անասունները կարողանան ազատ ոգտըվել ջրով։ Միայն առուների ցանցն այնպես պետք ե լինի կառուցված, վոր ամեն մի պարկետ առանձին ջուր ունենա, այսինքն, վորպեսզի մի պարկետով անցած ջուրն մյուս պարկետը չմտնի։ Դա անհրաժեշտ ե վորպես հիվանդությունների տարածման դեմ կռվելու նախազգուշական միջոց։ Այդ նպատակին հասնելու համար, պետք ե պարկետների կողքով անցկացնել մաքուր ջուր բերող առու, վորը ճյուղավորվելով և, արյան յերակների նման, փոքր առուների բաժանվելով, հասցնի կենսատու հեղուկն ամեն մի առանձին պարկետին։ Մաքուր ջուրը պետք ե մտնի պարկետը մի կողմից և, դուրս գալով մի-

յուս կողմից, լցվի կեղտոտ ջրերը դուրս տանող առվի մեջ։ Ահավասիկ առուների ցանցի մոտավոր սքեման (տես նկար № 32)։

Սովորաբար յերբ ձագերը դառնում են $1^1/_2$—2 ամսական, նրանց բոլորին բռնում են և, վորձերին ու եգերին միմյանցից բաժանելով, տանում լցնում են տարբեր պարկետներ, ամեն մի գլխին 5 քառակուսի մետր տարածություն հատկացնելով և թողնում են նրանց այնտեղ մինչև 4 ամսական հասակը։ Այդ ժամանակ նրանց տեղը



Նկ. 32 Պարկետի և բլինդաժի սիստեմներում գործադրվող առուների սքեման

մայրական պարկետներում բռնում են արդեն նոր ծնվող ձագեր, վորոնք, նույնպես $1^1/_2$ ամիս հետո, հեռացվում են այնտեղից, տեղի տալով դարձյալ նոր աշխարհ յեկող ձագերին։ Յերբ մայրերից բաժանած ձագերը դառնում են 5—6 ամսական, նրանց դարձյալ յերկրորդ անգամ, տեղափոխում են ուրիշ պարկետներ, ամեն մեկին 10 քառակուսի մետր տեղ տալով։ Իսկ յերբ նրանք դառնում են 7—9 ամսական, այսինքն, յերբ, մեծ մասամբ, մտնում են սեռական հասունության շրջանը, նրանց կամ տեղավորում են վերջնականապես այն պարկետում, վորտեղ նրանք պետք է ապրեն ու բազմանան և կամ մորթում են, վորովհետև այդ հասակը սովորաբար ճագարի մսի և մորթու ամենալավ ժամանակն է։ Մորթելու դեպքում, իհարկե, նախորոք խիստ ընտրություն են կատարում. առողջ և ստանդարտին համապատասխանող ճագարներին աշխատում են պահել տոհմի համար, յեթե իհարկե կոլտնտեսությունը դեռևս իր ճագարանոցը մեծացնելու ձգտում ունի։

Թեպետ պարկերում, ինչպես ասացինք, 10 եգ ճագար են տեղավորվում, բայց դա չի նշանակում, վոր այս սիստեմն անպետք է խոշոր տնտեսությունների համար։ Այսպիսի պարկետներ կարելի յե շինել վորքան ուզեք։ Մոսկվայի մոտ գտնվող մի խորհտնտեսությունում (Սալտիկովկա) այս սիստեմով պահվում է 1000 գլուխ ճագար։ Միմյանցից 3—4 մետր հեռավորության վրա, յերկաթալարե ցանկապատով բաժանված, բազմաթիվ փոքր ու մեծ պարկետներ են սարքը-

ված այնտեղ և նրանց մեջ ապրում են, իրենց ձագերով միասին, արժեքավոր «շինշիլլ» տեսակի ճագարները։

Պարկետի սիստեմը, ինչպես և գարեննինը, հնարավորություն տալով ճագարներին բացոթյա ապրելու, ազատ շարժվելու ու արևի կենսատու ճառագայթներով օգտվելու, առողջացնում է նրանց ու ապրելու և բազմանալու ավելի ընդունակ դարձնում։ Այստեղ ավելի հեշտ է հսկել ճագարներին և ուրեմն խնամքն էլ անհամեմատ ավելի հեշտ է կատարվում։

Այստեղ տարափոխիկ հիվանդություն առաջ գալու դեպքում կարող են փչանալ մի (կամ մի քանի) պարկետի ճագարները, իսկ մյուսները, միմյանցից բաժան լինելով, փրկվում են։ Այստեղ հնարավոր է ղեկավարել ճագարի սեռական կյանքը և այդպիսով բոլորովին ազատել նրանց այլասերման վտանգից։

Կոլտնտեսականներն ու անհատական տնտեսությունները կարող են իրենց բակում մի պարկետ սարքել, պահելով այնտեղ 8—10 գլուխ մայր ճագար։

ԲԼԻՆԴԱԺԻ ԿԱՄ ԽՐԱՄԱՏԻ ՍԻՍՏԵՄԸ

Բլինդաժի սիստեմն այն է, յերբ նույն, վերևը նկարագրած պարկետի նման, 150 քառ. մետրանոց ցանկապատած հողամաս են հատկացնում ճագարներին և յերբ այդ պարկետում հատուկ բլինդաժ, (ծածկված խրամատ) են փորում, անասուններին ապրելու վորոշ հարմարություններ տալու համար։

Պարկետի վերևի մասում փորում են 8 մետր յերկարություն և 1 մետր խորություն ունեցող մի խրամատ (յերկար փոս)։ Այդ խրամատի մի կողմն ուղղահայաց իջնում է ցած, իսկ մյուս կողմը թեք է և այդ պատճառով փոսի բերանն ավելի լայն է, քան հատակը։

Ուղղահայաց իջնող պատի ներքևի մասում (հատակի մոտ), միմյանցից հավասար հեռավորության վրա, հորիզոնական ուղղությամբ փորում են 10 նեղ ծակեր, վորոնց լայնությունը 15—20 սանտիմետր է լինում, իսկ խորությունը՝ 40—50 սանտիմետր։

Յերբ 10 եգ ճագարներ արձակում են պարկետ, նրանք, իրենց համար բնի տեղ վորոնելով, շրջում են պարկետի բոլոր անկյունները և խրամատի թեք կողմով իջնելով ցած, գտնում են հիշյալ պատրաստ ծակերը։ Այդ ծակերը նրանք իրենց սեփական ճանկերով լայնացնելով ու խորացնելով՝ բույն են դարձնում իրենց համար։ Ամեն մի ծակին տեր է դառնում մի մայր ճագար և շատ սակավ է պատահում, վոր նրանք այդ ծակերի համար կռվի բռնվեն։ Կռիվ լինում է նրանց մեջ այն ժամանակ, յերբ նրանցից ամեն մեկը իրեն բույնը իր ցանկացած ուղղությամբ խորացնելով, գետնի տակ հանդիպում են միմյանց։

Սակայն պետք է ասել, որ հաճախ ճագարները բոլորովին չեն օգտագործում պատրաստի ծակերը և իրենց համար բուն են փորում վորև է ուրիշ տեղ։

Վորովհետև ճագարների համար փորված խրամատը ձմեռները կարող է ձյունով լցվել և գարունն ու աշունն էլ ջրով հեղեղվել ու խեղդել անասուններին, սովորաբար, խրամատը ծածկում են ճկուրով։ Նրա բոլոր կողմերում հատուկ ակոս է փորվում, հոսող ջրերին վորոշ



Նկ. 33 Բլինդաժային կտրվածքի սքեման

ուղղություն տալու համար։ Շատ անգամ խրամատը շրջապատում են նաև պատով, վորի մի կողմում ծակեր են բացվում ճագարներին ներս ու դուրս անելու հնարավորություն տալու համար։

Խրամատի տակ հողի մեջ ապրող ճագարները, թե ամառը և թե ձմեռը, որվա մեծ մասն անց են կացնում բակում, ազատ վազվզելով



Նկ. 34 Բլինդայի ներսը

և կեր վորոնելով խոտերի ու թփերի մեջ։ Կերակրելու միջոցներն այստեղ նույնն են, ինչ վոր գարեննում և պարկետում. ամառները խոտ ու հացահատիկ է ցանվում անասունների համար, և ամբողջ տարին հավելյալ կեր տրվում նրանց։

Ճագարներին սովորաբար կերակրում են ցանկապատի մոտ։ Մըշտականապես, որվա վորոշ ժամին կեր ստանալով, ճագարներն ընտելանում, հարմարվում են այդ ժամանակին և, յերբ կերակրելու ժամը մոտենում է, նրանք իրենք հավաքվում են մսրի մոտ և սպասում։ Այդտեղ շատ հեշտ է նրանց բռնելը։ Դրա համար կերատաշտը կամ մսուրը տեղավորում են հատուկ շինված թակարդի մեջ այնպես, վոր ճագարներն, ըստ սովորության, համարձակ մոտենալով նրանց, մըտնում են թակարդի մեջ և այլևս չեն կարողանում դուրս գալ, վորովհետև, պետք յեղած դեպքում, վերևից իջեցվում է նահանջի ճանապարհը փակող դռնակը։

Խոշոր տնտեսություններում այսպիսի բլինդաժներ կարելի յե կառուցել տասնյակներով և ավելի, դասավորելով նրանց միմյանցից վորոշ հեռավորության վրա (առնվազը 2 մետր)։ Սակայն հազարներով ճագար պահող տնտեսություններում, հիվանդությունների տարածման դեմ կռվելու համար, ավելի լավ է բաժանել ճագարներին հավասար խմբերի, դիցուք 500-ական գլխի և առանձնացնել նրանց միմյանցից։ Այդ խմբերը, վորոնք ուրեմն 50-ական բլինդաժից են բաղկանում, պետք է գտնվեն իրարից բավական հեռու՝ գոնե 300—500 մետր։ Այդ մեկուսացած խմբերից ամեն մեկին պետք է սպասարկե կոլտնտեսականների առանձին կազմ (բրիգադ), վորը յերբեք չպետք է վոտք դնի մյուս խմբերը, վորպեսզի տարափոխիկ հիվանդությունները մի խմբից մյուսը չտարվեն։ Հյուսիսային Կովկասում, մանավանդ Մեչոտկայի ռայոնում, շատ ու շատ անհատականներ իրենց ճագարները պահում են բլինդաժի սիստեմով։

Ահա սրանք են ճագար պահելու ժամանակակից կարեվորագույն «արհեստական» ու «կենսաբանական» սիստեմները։ Նրանք բոլորն էլ, ինչպես տեսնում ենք, իրենց դրական ու բացասական կողմերն ունեն։

Խորհրդային ճագարաբուծությունը գործադրելով նրանց, դեռևս կանգ չի առել վերջնականապես նրանցից և վոչ մեկի վրա, ապրելով համառ վորոնումների շրջանը։ Այս բոլոր սիստեմները, հիմնականում ծագել են արտասահմանյան մանր սեփականատիրական, անհատական տնտեսավարության պայմաններից և թեպետ մեզ մոտ նրանց, փոքր կամ մեծ չափով, նրանք փոփոխությունների յեն յենթարկված, բայց և այնպես լրիվ կերպով չեն համապատասխանում մեր պահանջներին։ Սոցիալիստական ճագարաբուծությունը կամ կանգ առնելով այս սիստեմներից վորևէ մեկի վրա, կհասցնի նրան կատարելագործության գագաթնակետին և կամ կգտնի իր սեփական այնպիսի մի նոր սիստեմ, վորն ազատելով մեր տնտեսությունները հիվանդություններից և այլ պատահարներից, հաստատապես ապահովի ժողովրդական տնտեսության այս նոր ճյուղի ամենաարագ զարգացումը։ Մեր ճագարաբուծական խորհրդային տնտեսությունները և կոլտնտեսային ճագարա-

նոցները պետք է դառնան մսի և մորթու հսկայական, մեքենայացված ու էլեկտրականացված գործարաններ, որոնք իջեցնելով արտադրանքի ինքնարժեքն, ընդունակ լինեն բարձրացնել այդ ճյուղի ապրանքայնությունը չտեսնված մակարդակի:

ՃԱԳԱՐՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

ԻՆՉՈՎ ՊԵՏՔ Է ԿԵՐԱԿՐԵԼ ՃԱԳԱՐՆԵՐԻՆ

Կերն, ինչպես բոլոր կենդանիների, այնպես էլ ճագարի կյանքի զարգացման ու աճման համար վճռական նշանակություն ունի: Կերի տեսակից, որակից ու քանակից է կախված, թե ինչ արագությամբ է ճագարը մեծանում, ինչ թափով է նա բազմանում և, առհասարակ ինչ օգուտ է տալիս նա:

Այն խնդիրը, թե ինչով և ինչպես պետք է կերակրել ճագարին, յերկար ժամանակ վեճի առարկա յե յեղել ճագարաբույծների համար: Սակայն վերջերս գիտական ուսումնասիրությունները, թե մեզ մոտ և թե արտասահմանում, հետզհետե պարզելով այդ խնդիրը, մոտեցնում են նրան իր վերջնական լուծման:

Նախ քան ճագարի կերի տեսակների և կերակրելու մասին խոսելը, կանգ առնենք մի վայրկյան այն խնդրի վրա, թե ընդհանրապես բոլոր անասունները և այս դեպքում ճագարները ինչ նյութեր են պահանջում անհրաժեշտորեն իրենց զարգացման և առհասարակ նորմալ կյանքի համար: Գիտությունը պարզել է, որ այդ նյութերը հետևյալն են. 1. ազոտային նյութեր (կամ սպիտակուց), 2. ածխաջրածնային նյութեր (կամ կրախմալ), 3. ճարպային նյութեր, 4. բնափայտ (դրևեսինա), 5. մոխրային կամ հանքային նյութեր և 6. ջուր:

Սպիտակուցը բարդ և կարևորագույն սննդանյութերից մեկն է, որը բնության մեջ առանձին (ինչպես օրինակ ջուրը) չի գտնվում, այլ գոյանում է բույսերի մեջ և կերի հետ միասին մտնում է կենդանիների մարմինը: Ամեն մի կենդանի պետք է անպայման բավարար քանակությամբ սպիտակուց ստանա, որովհետև այդ նյութից է գոյանում կենդանու միսը (մկանունքները), բոլոր օրգանները, մազերը, կաթը և այլն: Ճագարի համար սպիտակուցը ևս առավել նշանակություն ունի, որովհետև այդ նյութից է կազմվում նրա մորթին: Որքան կերն ավելի յե սպիտակուց պարունակում, այնքան նա արժեքավոր է համարվում: Յերբ կենդանու ստացած կերի մեջ սպիտակուցը պակաս է, թեկուզ և մյուս սննդանյութերը տրվեն բավարար քանակությամբ, նա չի կարող մեծանալ, ձագերին արգանդում մեծացնել և առհասարակ մթերատվություն ունենալ:

Ածխաջրածինը նույնպես անհրաժեշտ է կենդանուն: Ածխաջուրը այն նյութն է, որը տաքացնում է կենդանու մարմինը և որից գոյանում է մարմնի ճարպը: Կենդանու ույժը (մկանունքների շարժումը) նույնպես գոյանում է այդ նյութից:

Ճարպային նյութերը կենդանու սննդի խնդրում նույն դերն են խաղում, ինչ որ ածխաջրածինը: Սակայն նրանց սննդարարությունը մոտ 2,4 անգամ ավելի յե քան ածխաջրինը: Բացի դրանից, նրանք զգալի չափով աջակցում են ստամոքսի մարսողությանը: Անհրաժեշտ է, որ ճարպային նյութերը մտնեն կենդանու օրգանիզմը որոշ քանակությամբ. յերբ կերի մեջ այդ նյութերը պակաս են, ստամոքսի մարսողությունը դժվարանում է, իսկ յերբ չափից ավելի յեն՝ մարսողությունը բոլորովին խանգարվում է:

Բնափայտը շատ քիչ սնունդ է տալիս կենդանուն: Նա չափազանց պինդ է և շատ դժվարությամբ է մարսվում՝ նույն իսկ որոճող կենդանիների ստամոքսում: Բայց և այնպես այս նյութը, չափավոր քանակությամբ, անհրաժեշտ է կենդանուն, որովհետև նա խոշոր դեր է խաղում մյուս սննդանյութերի մարսման գործում:

Մոխրային կամ հանքային նյութեր: Յեթե կերն այրես, նրա մեջ գտնվող բոլոր վերոհիշյալ նյութերը վառվում են, իսկ տակին մնում է մոխիրը, որը պարունակում է իր մեջ կենդանիների համար անհրաժեշտ հանքային նյութեր: Ամեն մի կենդանի պետք է անպայման վորոշ քանակությամբ ընդունի այդ նյութերից, որոնք ծախսվում են օրգանիզմում գլխավորապես ոսկորների գոյացման վրա: Յերբ կերի հետ բավարար քանակությամբ հանքային նյութեր չեն մտնում օրգանիզմը, կենդանու նորմալ զարգացումը խանգարվում է, ոսկորները թուլանում են և անխուսափելիորեն ոսկրացավ և այլ հիվանդություններ են առաջ գալիս:

Ջուրը նույնքան է անհրաժեշտ կենդանուն, որքան և մյուս սննդանյութերը: Քրտինքի, մեզի և կաթի հետ արտադրվող ջրի փոխարեն, կենդանին միշտ պահանջ է զգում նոր, թարմ ջրի, որի պակասության դեպքում խանգարվում է օրգանիզմի նորմալ աշխատանքը, մարսողությունը, արյան շրջանառությունը և այլն, իսկ բացակայության դեպքում մի քանի օրվա ընթացքում հասցնում է կենդանուն մահվան: Կերի բոլոր տեսակների մեջ, բացի չոր նյութերից, քիչ կամ շատ քանակությամբ, գտնվում է նաև ջուր, որը սակայն ամեն անգամ չի բավարարում կենդանու պահանջը և կարիք է լինում նրան առանձին ջուր տալու: Դեռ մինչև այժմ գոյություն ունեցող այն կարծիքը, որ իբր ճագարները ջրի կարիք չեն զգում— սխալ է իհարկե և ուրիշ ոչինչ է, քան մարդկանց տգիտության արդյունք:

Ահա սրանք են այն հիմնական նյութերը, վորոնք, ինչպես ասացինք, անհրաժեշտ են բոլոր կենդանիներին, ուրեմն նմանապես և ճագարներին։ Ճագարն իր վայրենի վիճակում բնազդաբար վորոնում է բնության մեջ և գտնում այնպիսի բույսեր, վորոնք կազմված են հիշյալ նյութերից։ Ընտանիացված ճագարին մենք զրկել ենք ազատ շրջելու և իր պահանջներին համապատասխան կեր հայթայթելու հնարավորությունից։ Ապա ուրեմն մենք ինքներս պետք է տանք նրան կերի այնպիսի տեսակներ, վորոնց մեջ բավարար չափով կան անասնի կյանքն ու աճումն ապահովող բոլոր հիշյալ նյութերը։ Դրա համար մենք պետք է գիտենանք, թե ինչ է ուտում ճագարը և ինչ սննդանյութեր են պարունակում նրա սիրած բույսերը։

ԿԵՐԻ ՀՅՈՒԹԱԼԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կանաչ խոտը, ճագարների ամենասիրած ուտելիքը լինելով հանդերձ, վերին աստիճանի օգտակար է թե մեծ ճագարների և թե ձագերի համար, մանավանդ վերջիններիս վոսկորների ամրացման շրջանում։ Կանաչ խոտը բավական հարուստ է սննդանյութերով, վորոնց 2% մարսելի սպիտակուցն է, 13% ածխաջրածինը, 1% ճարպային նյութերը, 4% բնափայտը և 2,5% հանքային նյութերը (ջուրը 76%)։

Կանաչ խոտը տալիս են ճագարներին թարմ-թարմ, սակայն պետք է խուսափել կերակրելու անձրևից անմիջապես հետո և կամ ցողի ժամանակ, վորովհետև թաց խոտը կարող է վնաս բերել անասուններին։ Վանդակներում ապրող ճագարներին կերակրելու համար, նպատակահարմար է թաշած խոտը նախորոք հնձել (1—2 ժամ առաջ) ու չորացնել, փռելով ստվերոտ մի տեղում։ Պետք է խուսափել նաև ճահճային վայրերում բսնող խոտերից։ Ամենալավ խոտը, սննդարարությամբ և համեղությամբ, համարվում է առվույտը (լյուցերնա), յերեքնուկը (կլևեր) և այլն, վորոնց ճագարին պետք է վարժեցնել հետզհետե, կերցնելով քիչ-քիչ, վորովհետև շատ տալու դեպքում տիմպանիտ կոչվող հիվանդությունն է առաջ գալիս (փորի փքոց)։ Անվնաս են լեռնային արոտատեղերի խոտերը։ Այդ խոտերն ուտող ճագարների միսը շատ համեղ է լինում։ Ճագարները շատ սիրում են նաև զանազան հոտավետ բույսեր։

Գարեննի սիստեմը գործադրող կոլտնտեսությունները, ինչպես ասել ենք արդեն, պետք է հատուկ բույսեր ցանեն անասունների համար. յերեքնուկ, առվույտ, վարսակ, վայրի գազար (պաստեռնակ), կռաբանջար, կռատուկ և այլն։ Նույնը պետք է կատարեն և պարկետի ու խրամատի սիստեմները գործադրող տնտեսությունները, հակառակ դեպքում պետք է դրսից բերվող թարմ խոտ տալ անասուններին։

Ծառի կանաչ ճյուղերն ու տերևները նույնպես պատկանում են ճագարի սիրած ուտելիքների շարքին։ Այդ կերն, ինչպես Վոլկոնսկին է ասում, ճագարի համար կանաչ խոտին հավասար արժեք ունի և կարող է նրան փոխարինել։ Պարկետներում և մանավանդ գարեննում պահվող ճագարների համար, պետք է նախապես այնպիսի ծառեր տնկել, վորոնց ճյուղերը և տերևները ճագարներն ուտեն և մարսեն։ Ամենայարմարը կակուղ և հյութալի ճյուղեր ունեցող ուռենին է, վորն, ինչպես համարյա ամեն տեղ բսնող և արագ մեծացող ծառ, կարող է լավ ծառայություն մատուցել այդ խնդրում։ Լավ են նաև բարդին, վոլորենին, չինարը, լորենին (ակացիա), հաճարենին, թխկին և այլն։ Յերբ ուռենին կամ մյուս ծառերն ու թփերը ցածր են բսնում, ճագարներն իրենք են հաճույքով կրծում ճյուղերն ու տերևները, իսկ յերբ այնքան բարձր են, վոր անասունները չեն հասնում, պետք է, որվա վորոշ ժամանակ, կտրատել ճյուղերը և թափել նրանց առաջը։ Այդ կերից պետք է տալ իհարկե նաև վանդակներում ապրող ճագարներին։

Պետք է աչքի առաջ ունենալ, վոր ճագարը, վորպես կրծող կենդանի, շատ արագ մեծացող ատամներ ունի։ Ծառի ճյուղերով կերակրելով ճագարին, մարդը միաժամանակ բավարարություն է տալիս նրա կրծելու և ատամները մաշելու բնական պահանջին։ Հակառակ պարագային ճագարի ատամներն այնքան են մեծանում, վոր նա այլևս վոչինչ չի կարողանում ծամել և վերջի վերջո սատկում է։ Բացի այս հանգամանքից պետք է ասել, վոր ճյուղերն ու տերևները շատ լավ ազդեցություն են գործում ճագարի ստամոքսի վրա։

Գազար. Բոլոր արմատապտուղներից ավելի ճագարը սիրում է հում գազարը, վորը նա հաճույքով ուտում է ամբողջ տարվա ընթացքում։ Գազարը միաժամանակ շատ օգտակար կեր է համարվում ճագարի համար. նրա մեջ 1,2% կազմում է սպիտակուցը, 7,3% ածխաջրածինը 0,4% ճարպը և 1,0% հանքային նյութերը (ջուրը 88,%)։ Գազարը, ինչպես և մյուս արմատապտուղները, սառած ժամանակ չի կարելի կերցնել անասուններին, մանավանդ, յերբ վերջիններս փակ ճագարանոցում են պահվում։ Սառած կերից աղիքները ցրտահար են լինում և ստամոքսում բարդ հիվանդություններ են առաջ գալիս։ Սովորաբար այս արմատապտուղները տալիս են ճագարներին առանց կտրատելու և դրանով նպաստում են նրանց արագ բսնող ատամների մաշվելուն։ Գազարի կարեվորագույն հատկություններից մեկն էլ այն է, վոր նա արագացնում է ճագարի մորթու բսնելը և առանձին փայլք է տալիս նրան։ Աչքի առաջ ունենալով այդ, պետք է այս արմատապտուղը կերցնել ճագարներին, գլխավորապես, մազափոխության ժամանակ։ Ճագարները լավ ուտում են նայեվ գազարի տերևները։

Ճակնդեղը. Թեպետ այս բույսը ճագարը մեծ հաճույքով չի ուտում և գազարի նման էլ չի մարսում, բայց և այնպես շատ ոգտակար է. Նրա 1,4% սպիտակուցն է, ածխաջուրը 9%, բնափայտը 1%, հանքային նյութերը 1,1% (ջուրը 90,9%)։ Ճակնդեղը որական մի անգամից շատ չեն կերցնում անասուններին, յեթե մանավանդ նրանք դեռ լավ չեն ընտելացել այդ կերին։ Այս արմատապտուղը նույնպես տալիս են ճագարներին հում-հում, բայց ավելի լավ է նրան մի քիչ ալյուր կամ թեփ խառնել և կամ կերցնել կտրտված չոր խոտի հետ խառնված։ Սրա տերևները նույնպես ուտում են հաճույքով։ Կարմիր ճակնդեղը ճագարները չեն սիրում։

Կարտոֆիլը բավական սննդարար կերակուր է. Նրա մեջ սպիտակուցը կազմում է 2,1%, ածխաջրածինը 17,5%, ճարպային նյութերը 0,1% և հանքային նյութերը 1% (ջուրը 79%)։ Այս բույսն ավելի լավ է կերցնել ճագարներին յեփած ու տրորած։ Կարտոֆիլը կարելի յե տալ ճագարներին առանց կճպելու, վորովհետև նրանք հաճույքով ուտում են կճեպով։ Կարտոֆիլի տերևները հում ժամանակ թունավոր են, իսկ յեփելուց հետո կարելի յե քիչ-քիչ կերցնել։ Բողբոջնած կարտոֆիլը նույնպես վնաս է բերում ճագարներին։ Սառած կարտոֆիլը կերցնել, մանավանդ վանդակում ապրող ճագարներին, չի կարելի։

Շաղգամը, գնդեղը յեվ յերալմասին (տոպինամբուր) ճագարները նույնպես հաճույքով են ուտում։ Շաղգամն ու գնդեղը վորպես ճակնդեղից քիչ ավելի ջուր պարունակող բույսեր, նրանից ավելի սննդարար են։ Այս բույսերը կերցնում են ճագարներին և հում և յեփած դրությամբ, իսկ նրանց տերևները կերի տեղ բոլորովին չեն գործածում։ Յերալմասին իր տերևների հետ միասին շատ լավ կեր է հանդիսանում ճագարների համար։

Կաղամբը։ Թեպետ այս բույսը ճագարներն ուտում են հաճույքով, բայց շատ կերցնել չի կարելի, նրանից տիմպանից (փորի փքոց) է առաջ գալիս։ Առհասարակ կաղամբն արժեքավոր կեր չի համարվում. նա փչացնում է ճագարի մսի համը։ Այս կերը պետք է տալ այն ճագարներին, վորոնք դեռ շուտ մորթվելու չեն։

Սիլոսը։ Այսպես կոչվում է այն կերը, վորը պատրաստվում է բույսերը թթու դնելու միջոցով։ Սիլոսացնելու համար գործ են ածում ճակընդեղի, գազարի և այլ բանջարանոցային բույսերի տերևները, նմանապես և յեղիճը, յեղևի խոտը և ուրիշ զանազան խոտեր և հարդ։ Ամերիկայում փորձել են սիմինդրի սիլոսով կերակրել ճագարներին և հետևանքը շատ դրական է յեղել։ Հյուսիսային Կովկասում կարելի յե գործածել նաև արևածաղկի սիլոսը, իսկ Անդրկովկասում՝ թթենու տերևներից պատրաստած սիլոսը։

Սիլոսով սովորաբար կերակրում են ճագարներին այն ժամանակ, յերբ կանաչ խոտը և հյութալի կերը վերջանում է։ Սիլոսին անցնելիս պետք է անասուններին զգուշորեն կերցնել, մինչև վոր նրանց ստամոքսը սովորի այդ նոր կերին։ Սիլոսը պետք է կազմի վոչ ավելի, քան ճագարի կերի որաբաժնի 25—30 %։

ԿԵՐԻ ԿՈՇՏ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Չոր խոտը։ Ձմեռները ճագարի հիմնական կերը չոր խոտն է, վորի 4% կազմում է սպիտակուցը, 35% ածխաջրածինը, 2,5% ճարպը և 7% հանքային նյութերը։ Աշնանը կանաչ խոտից չոր խոտին անցնելու ժամանակ պետք է փոխել կերը վոչ թե միանգամից, այլ հետզհետե, զգուշությամբ, վարժեցնելով անասուններին այդ նոր կերին։ Շատ լավ է այդ շրջանում չոր խոտը մանրել, թրջել և տալ անասուններին ալյուրի կամ թեփի հետ խառնած։ Պետք է զգույշ վարվել նաև գարնանը, չոր խոտից կանաչ խոտին անցնելիս։ Հակառակ դեպքում ստամոքսի հիվանդությունները համարյա անխուսափելի յեն։

Սննդարարության տեսակետից ամենալավ չոր խոտը առվույտի և վիկի խոտն է։ Լավ է ինարկե, յերբ կոլտնտեսությունն այնքան ունի այդ խոտերից, վոր նրանք բավականանում են անասուններին աշնանից մինչև գարունը կերակրելու համար, հակառակ դեպքում պետք է գոնե այնքան ունենալ այդ խոտերից, վոր խառնելով նրանց ուրիշ հասարակ խոտերին՝ բարձրացնել վերջինների սննդարարությունը։

Հարդը։ Սննդանյութերով աղքատ այս կերը ճագարներն ուտում են առանց հաճույքի (հարդի մեջ սպիտակուցը կազմում է 1%)։ Այս կերը սովորաբար գործ են ածում այն ժամանակ, յերբ տնտեսությունը չոր խոտի պակասություն ունի։ Հարդը նույնպես պետք է մանրել, թրջել, խառնել թեփի կամ ալյուրի հետ և այնպես կերցնել անասուններին։

Ծառի չոր ճյուղերն ու տերևները։ Ամառվա սիրած այս կերը ճագարները մեծ հաճույքով են ուտում նաև ձմեռները։ Աշնանը, տերևաթափից դեռ շատ առաջ, պետք է կտրել ծառերից բարակ, կես սանտիմետր հաստություն ունեցող, ճյուղերն իրենց տերևներով միասին և չորացնել վորևե ստվերոտ քամիներ չշարժվող տեղում։ Ապա ցախավելի նման՝ իրար կապելով, պետք է կախել կամ շարել իրար վրա և այսպես պահել ձմեռը կերակրելու համար։

ԿԵՐԻ ՈՒԺԵՂ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Վարսակը։ Կերի ուժեղ տեսակներից, նմանապես և հացահատիկներից ճագարի համար ամենից ավելի սիրելին և ավելի ոգտակարը

վարսակն է, որը պարունակում է իր մեջ 12% սպիտակուց, 5% ճարպանյութեր, 60%ածխաջրածին և 3% հանքային նյութեր։

Սննդարար և միևնույն ժամանակ մարսողական այս կերը պետք է քիչ-քիչ կերցնել ճագարներին, որովհետև շատ տալու դեպքում վնաս է բերում։ Վարսակն անասնին տալուց առաջ, սովորաբար մի քիչ թրջում են յեռացող ջրի մեջ և կամ խաշում ու տրորում։ Սակայն ճագարներն ուտում են վարսակը նաև չոր, բնական վիճակում և կամ մի քիչ ծեծած (փշրած)։

Ինչ ձևով էլ որ տրվի վարսակն անասուններին, պետք է հետևվել, որ նրա կեղևները չկորչեն, որովհետև այդ կեղևների մեջ գտնվում է մի այլ կարևոր նյութ (վիտամինը), որը նպաստում է անասունների մեծանալուն և նրանց ոսկորների ամրանալուն։

Գարին։ Թեպետ գարին ավելի դժվար է մարսվում, բայց և այնպես նա շատ կարևոր կեր է համարվում ճագարների համար, յերբ, մանավանդ, ցանկանում են վերջիններիս չաղացնել մորթելու համար։ Գարին պարունակում է 9% սպիտակուց, 69% ածխաջուր և, 2,5% հանքային նյութեր։ Ածխաջրի այս հսկայական քանակությունը նպաստում է անասնի ճարպանալուն։ Այս կերի արժեքավոր հատկություններից մեկն էլ այն է, որ նա առանձին փայլ է տալիս ճագարի մորթուն։ Գարին տալիս են անասուններին նույնպես ծեծած կամ թրջած։

Սիմինդրը։ Ճագարներին չաղացնելու համար լավ կեր է համարվում նաև սիմինդրը, որը 70% կազմված է ածխաջրից, 5% ճարպանյութից, 10% սպիտակուցից և այլն։ Սիմինդրի հատիկները նույնպես փշրված են կերցնում անասուններին։ Սիմինդրի տերևները ճագարները չեն ուտում։

Ցորենը։ Թե սննդարարությամբ և թե մարսողությամբ, ցորենն առաջնակարգ տեղ է բռնում հացահատիկների շարքում (սպիտակուց 11%, ճարպանյութ 2%, ածխաջուր 72%), բայց առհասարակ նրան մեզ մոտ իբրև կեր քիչ են գործածում։

Սիսեռը, ոսպը և լոբին նույնպես սննդարար կեր են և ճագարների սիրած ուտելիքն են համարվում։ Այս բույսերը սովորաբար խաշած են տալիս անասուններին։ Սիսեռը պարունակում է 23% սպիտակուց, 2% ճարպային նյութեր, 53% ածխաջրածին և 2,5% հանքային նյութեր։

Բուսպերը հրաշալի կեր են ճագարների համար։ Շնորհիվ նրանց մեջ մեծ քանակությամբ գտնվող սպիտակուցային և ճարպային նյութերի, նրանք զգալի դեր են խաղում անասնի մկանունքների (մսի) գոյանալու և ոսկորների մեծանալու և ձևակերպվելու գործում։ Նրանք շատ օգտակար են մանավանդ ճագարներին չաղացնելու ժամանակ։

Ն. Լիսովսկին ասում է, որ կտավատի և կանեփի քուսպերը նպաստում են ճագարների մազափոխությանը և խորհուրդ է տալիս կերցնել քուսպերն հենց այդ շրջանում։ Կանեփի քուսպը շատ չպետք է կերցնել. փորձը ցույց է տվել, որ այդ կերը մշտականապես գործածող տնտեսություններում, ճագարի միսը համեղ չի լինում։ Ճագարներն հաճույքով ուտում են արևածաղկի և գոնդեղի քուսպերը։ Բամբակի քուսպն իհարկե, նույնպես կարելի յե կերցնել ճագարներին, յեթե բամբակի մազոտ թնացորդները շատ չեն նրանց մեջ։

Քուսպերը տալիս են անասուններին յեռացող ջրում թրջելուց հետո։ Ճագարի կրծելու բնական պահանջը բավարարելու նպատակով, հաճախ տալիս են նրանց քուսպը նաև չոր, կտոր-կտոր արած։

Ցողաբույսերի հունդերը։ Մեծ հաճույքով ուտում են ճագարները նաև յուղաբույսերի հունդերը (սերմերը), որոնք շատ հարուստ են սննդանյութերով։ Օրինակ, կտավատի սերմը բաղկացած է 24% սպիտակուցից, 36% ճարպային նյութերից և 22% ածխաջրածնից։ Ճագարներին գիրացնելու ժամանակ յուղաբույսերի հունդերն անփոխարինելի յեն, սակայն մեր պայմաններում նրանք գործնական նշանակություն չունեն։

Ալյուրը և թեփը։ Վարսակի, գարու, ցորենի և տարեկանի թեփն ու ալյուրը շատ հարուստ են սպիտակուցային, ճարպային և ածխաջրածնային նյութերով։ Նրանց սովորաբար առանձին չեն տալիս ճագարներին, այլ գործ են ածում որպես համեմունք ուրիշ, անախորժելի և կամ կոշտ կեր տալու ժամանակ։ Ալյուրն ու թեփը ծախսվում է գլխավորապես խաշած բանջարանոցային բույսերով կերակրելիս։ Թեփը որքան մանր է, այնքան ավելի օգտակար է։

Հացը։ Սովորական հացը (ցորենի, գարու, տարեկանի և այլն) նույնպես արժեքավոր կեր է ճագարների համար։ Հացը, միջին թվով պարունակում է 6% սպիտակուց, 50% ածխաջրածին, 1 % ճարպային նյութեր և 2% հանքային նյութեր։ Կարելի յե կերցնել անասուններին չորացած, քարթու հաց, որն ավելի օգտակար է, քան նոր թխած հացը։ Բորբոսնած և մգլած հացը վնասակար է։

Կաթը։ Կաթն իր բաղադրությամբ ամենալավ կերակուրն է ճագարների համար, մանավանդ նրանց հղիության և կամ ձագերին կերակրելու շրջանում։ Կաթը շատ օգտակար է իհարկե նաև ձագերի համար և միանգամայն անհրաժեշտ է նրանց, յերբ ինչ-ինչ պատճառներով նրանք մնում են առանց մոր և առանց ծծմոր։ Որովհետև շատերն, անմայր ձագերին կերակրելիս, կովի կաթին ջուր են խառնում, կարծելով թե նա ավելի սննդարար է, քան ճագարի կաթը, անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այստեղ մի աղյուսակ, որը ցույց է տալիս, որ

ճագարի կաթն ավելի հարուստ է սննդանյութերով, քան մյուս բոլոր ընտանի կենդանիների կաթը․

Աղյուսակ № 4

Ամեն 100 գրամի մեջ գտնվում է	Ճագարի կաթը	Վոչխարի կաթը	Այծի կաթը	Կովի կաթը	Էշի կաթը	Ձիու կաթը	Կատվի կաթը
Ջուր	69,5	83,6	86,9	87,3	90,1	77,0	81,7
Ճարպային նյութեր	10,5	6,2	4,1	3,7	1,4	9,3	3,4
Սպիտակուցային նյութեր	15,5	5,2	3,8	3,4	1,9	9,7	9,5
Շաքար (ածխաջրածին)	1,9	4,2	4,4	4,9	6,2	3,1	4,9
Հանքային նյութեր	2,6	0,9	0,9	0,7	0,5	0,9	0,6

Յեթե այն կովը, վորի կաթը տալիս են ճագարներին, առողջ է, կարելի յե կերակրել հում կաթով, իսկ հակառակ դեպքում, կաթն անպայման պետք է յեփել։ Սակայն կաթն այժմս դեֆիցիտային առարկաներից է և, չնայած նրա բազմաթիվ դրական հատկություններին, պետք է գործ ածել այն ժամանակ, յերբ նա ծայրահեղորեն անհրաժեշտ է, ուրիշ վոչնչով փոխարինել չի կարելի և իհարկե, միայն այն դեպքում, յերբ կաթը պետք է թանգարժեք զտարյուն ճագարների ձագերին մեծացնելու համար։

Հանքային նյութեր։ Այն բոլոր հանքային նյութերը, վորոնք անհրաժեշտ են ճագարի օրգանիզմին, նա համարյա բավարար քանակությամբ ստանում է կերի՝ վերևում թված տեսակների միջոցով, նրանց հետ։ Բայց և այնպես ճագարներն ավելի լավ են զարգանում և աճում յերբ կերին ավելացնում են մի քանի կարևորագույն հանքային նյութեր։ Այսպես օրինակ, վոսկորների ամրացումն ու առհասարակ կմախքի ձևակերպումն արագացնելու նպատակով, տալիս են ճագարներին վոսկրալյուր (սովորական վոսկորը ալյուրի պես մանրած), ամեն մի գլխին օրական մի գրամի հաշվով (5 գլխին 1 թեյի գդալ)։ Արյունը մաքրելու համար, շաբաթը մի անգամ տալիս են ճագարներին ծծմբի ալյուր, ամեն մի գլխին քառորդ գրամի չափ (10 գլխին 1 թեյի գդալ)։ Այս, նյութերը տալիս են անասուններին կաթի և կամ ուրիշ վորևէ թաց կերի հետ խառնած։

Բացի դրանից տալիս են ճագարներին նաև սովորական աղ, ամեն մի գլխին օրական 1—2 գրամի չափ։ Աղը լավացնում է ճագարի ախորժակը և կանոնավորում նրա ստամոքսի աշխատանքը։

Աղը, ծարավ առաջ բերելով և շատ ջուր խմեցնելով անասունին, շատացնում է նրա կաթը, այդ պատճառով խորհուրդ է տրվում ձագերին կերակելու ժամանակ, մայր ճագարներին անպայման պարբերաբար աղ տալ։ Կանոնավոր կերպով առօրյա օրաբաժնի հետ անհրաժեշտ քանակությամբ աղ ստացող ճագարների մորթին ավելի լավ փայլք է ունենում։

Ջուրը։ Այն կարծիքը, վոր իբր ճագարները ջրի կարիք չեն զգում, իհարկե թյուրիմացության հետևանք է և, հավանականորեն, բղխում է այն փաստից, վոր կանաչ խոտ, կամ այլ հյութալի կեր ուտող ճագարները, բավարարելով իրենց ծարավը կերի մեջ գտնվող ջրով, այլևս առանձին ջրի պահանջ չեն զգում։ Թե կիսաբնական սիստեմներով պահվող ագարներին ինչպես պետք է ջուր տալ, ասված է այդ սիստեմների մասին խոսելու ժամանակ։

Վանդակների մեջ ապրող ճագարներին պետք է ամեն օր թարմ ջուր տալ, լցնելով ջուրն ամանի մեջ կեր տալուց առաջ։ Սովորաբար ջուրը վանդակի մեջ չեն թողնում, վորովհետև անասունը կարող է կեղտոտել և ապա խմել և հիվանդանալ։ Խմելուց հետո ջրի մնացորդը թափում են։ Աշնան և գարնան հով յեղանակներին, յերբ անասունները մասամբ հյութալի կեր են ստանում, կարելի յե մի անգամ ջրել նրանց (առավոտները), իսկ ամառվա շոգերին անհրաժեշտ է ջրել 2 անգամ։ Ջուրը պետք է առատորեն տալ նաև մայր ճագարներին, ձագերին կերակրելու շրջանում։ Իսկ մորից կտրած զտարյուն ձագերին, սկզբի 15—20 օրվա ընթացքում, ավելի լավ է տալ ջուրը կիսով չափ կաթի հետ խառնած։

Անասուններին տրվող ջուրը պետք է լինի թարմ, մաքուր և թափանցիկ։ Ամանները, նախ քան նրանց մեջ ջուր լցնելը, պետք է ամեն անգամ լվանալ։ Ամառները ջուրը պետք է զով լինի․ տաք և գոլ ջուրը անասնի ծարավը չի հագեցնում։ Ձմեռները, փակ շենքում ապրող ճագարներին պետք է տալ շենքի ներսի օդի տաքությունն ունեցող ջուր, իսկ բացօթյա պահվող ճագարներին կարելի յե տալ դրսի ջուր և կամ ջրի փոխարեն ձյուն։

Գարեններում, պարկետներում, վոլյերներում և խրամատներում, ինչպես ասել ենք արդեն, ցանկալի յե, վոր հոսող ջուր լինի։ Միայն թե, ինչպես վերևում նկարագրված է, ջրանցքերն այնպես պետք է դասավորել, վոր մի գարեննով, և կամ պարկետով անցնող ջուրը մյուս գարեննը և պարկետը չմտնի։ Իսկ յերբ ջրի առու գոյություն չունի, անհրաժեշտ է կիսաբնական սիստեմներում հատուկ ջրամաններ գործածել։ Ճագարների ամեն մի բջիջ, ամեն մի խմբակ իր առանձին ջուրը պետք է ունենա։ Հակառակ դեպքում, յեթե վորևէ տարափոխիկ հիվանդություն հանդես գա, նա արագությամբ կտարածվի ու կվարակի ամբողջ ճագարաբուծական տնտեսությունը։

Ահա սրանք են կերի այն տարածված տեսակները, վորոնք համարյա ամենուրեք գործ են ածվում ճագարներին պահելու համար։

Բացի սրանից կան իհարկե շատ ու շատ տեղական նշանակություն ունեցող բանջարանոցային, անտառային ու դաշտային բույսեր, վորոնք ուտում ե ճագարը և վորոնց պետք ե ճագարաբուծական տնտեսություններն ոգտագործեն ամենալայն չափերով։

Հասկանալի յե իհարկե, վոր, կերի տեսակներն ընտրելիս, պետք ե նրանց սննդարարության ու ոգտակարության հետ միասին խստորեն հաշվի առնել նաև տնտեսական նպատակահարմարությունները։

Կոլտնտեսականների կամ անհատականների փոքր տնտեսություններում 5—10 ճագար կերակրելը դժվար բան չի․ տալիս են անասնին մի քանի բուռ կեր, ինչ վոր պատահի՝ հացի փշրանքներ, կերակրի ավելցուկ, խոտ, տերևներ և այլն և դրանով խնդիրը փակվում ե։ Բայց խոշոր տնտեսություններում, վորտեղ հազարավոր ճագարներ են կերակրում, կեր հայթայթելու և կերը նպատակահարմար կերպով ոգտագործելու խնդիրը կարևորագույն խնդիրներից մեկն ե։

Պետք ե ընտրել կերի այնպիսի տեսակները, վորոնք, բավարարելով ճագարի սննդի բոլոր վերոհիշյալ պահանջները, լինեն միաժամանակ ամենաաժանն ու ձեռնտու։ Կամ, ուրիշ խոսքով, գործն այնպես պետք ե կազմակերպել, վոր, ինչքան կարելի յե քիչ կեր ծախսելով, պահել ճագարներին պատշաճ վիճակում և վորքան կարելի յե, շատ ոգուտ ստանալ նրանցից։

ԻՆՉՈՎ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԿԵՐԱԿՐԵԼ ՃԱԳԱՐՆԵՐԻՆ

Չնայած վոր ճագարը, կերի բազմաթիվ տեսակները գործածելու շնորհիվ, ամենակեր անունն ե վաստակել, բայց և այնպես կան մի շարք բույսեր, վորոնք նա չի ուտում, մասամբ նրանց անհամության պատճառով (ըստ իր ճաշակի) և մասամբ ել այն պատճառով, վոր նրանք կամ վնասակար են և կամ ուղակի թունավոր։

Վայրենի ճագարն, ինչպես և բոլոր կենդանիներն, արածելիս ինքը բնազդաբար ջոկջոկում ե կերը և խույս տալիս վնասակար բույսերից։ Կիսով չափ բնազդները կորցրած ընտանի ճագարների բախտը մարդու ձեռքին ե, վորը, գործին անտեղյակ լինելու դեպքում, կարող ե հիվանդացնել կամ թունավորել նրանց, ահագին վնասներ հասցնելով տնտեսությանը։ Ապա ուրեմն անհրաժեշտ ե, վոր մեր ճագարաբույծները գոնե մոտավոր գաղափար ունենան այն բույսերի մասին, վորոնցից պետք ե անպայման խուսափել։

Այս բույսերի մասին մոտավոր գաղափար տալու համար մեջ ենք բերում նրանց նկարները։

1 2 3 4 5 6 7

1. Ընձախոտ (Лютик ядовитый)։ 2. Մորմ (Паслен)։ 3. Մատնոցակ (Наперстянка)։ 4 Ալպիական վոլոռ (Ракитник)։ 5. Աղվեսախաղող (Вароный глаз)։ 6. Ծափկոտրուկ (Ветреница анемона)։

8 9 10 11 12 13 14

8. Խնդակոթ (Болиголов)։ 9. Շնախաղող (Беладона)։ 10. Արջընկույզ (Дурман)։ 11. Ափարբի (Молочай)։ 12. Շնկարոս (Сабачья петрушка)։ 13. Մոլեխոտ (Белено)։ 14. Վորոմ (Куколь)։

Պետք ե աչքի առաջ ունենալ, վոր բացի այս բույսերից, թունավոր են ճագարի համար նաև սովորական կարմիր կակաչն ու սոխը. այս վերջինս յերբեմն անմիջապես մահ ե բերում մանավանդ մատղաշ ճագարներին։ Թունավոր են մանավանդ կարտոֆիլի տերևներն ու բողբոջած կարտոֆիլը։

Իսկ վնասակար բույսերի շարքում գտնվում են նաև սպանախը, սալաթը, (պարտեզի աղցանը) և չհասած, կանաչ ցորենը։ Կոտավոր պտուղ ունեցող ծառերի ճյուղերն ու տերևները նույնպես վնասակար են (գեղձենին, սալորենին, ծիրանին և այլն)։ Կաղամբը, յերբ չափից ավելի յեն կերցնում, նույնպես վնաս ե բերում։ Վարունկ ճագարները բոլորովին չեն ուտում։

ԻՆՉՔԱՆ ՊԵՏՔ Ե ԿԵՐ ՏԱԼ ՃԱԳԱՐՆԵՐԻՆ

Մի ժամանակ վորքան ճագարաբույծ, այնքան ել տարբեր կարծիք ե յեղել այս խնդրի շուրջը։ Բայց վերջերս, թե մեր, թե արտասահմանի ճագարաբույծները վիճելով յերբեմն, թե վոր կերից վորքան և որվա ինչ ժամանակ պետք ե տալ ճագարներին, հիմնականում ըն-

դունել են գիտության առաջադրած այն սկզբունքը, որ, ինչպես բոլոր կենդանիներին, այնպես էլ ճագարներին, պետք է կերակրել ըստ նրանց ծանրության, քաշի։ Ուրիշ խոսքով այլևս տարակուսություն չկա այն մասին, որ փոքր (թեթև) ճագարն ավելի քիչ պետք է կեր ստանա, քան մեծ (ծանր) ճագարը, որովհետև որքան ճագարը մեծ է, այնքան նրա սննդի պահանջն էլ ավելի յէ։

Ֆրանսիացի և գերմանացի գիտնական ճագարաբույծներ Վ. Շինավարդը և Պ. Մալիխը, ուսումնասիրելով ճագարներին, հաշվել են թե ինչ ծանրություն ունեցող ճագարին, ինչքան սննդանյութեր են հարկավոր՝ նրանց օրգանիզմի նորմալ կյանքի և զարգացման համար։ Նրանք տալիս են հետևյալ աղյուսակը, որը ցույց է տալիս թե, որ պայմաններում և որ հասակում որքան սննդանյութ է պահանջում ճագարը։ (Տես աղյուսյակ № 5)

Աղյուսակ № 5

ՃԱԳԱՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍՆՆԴԱՆՅՈՒԹԵՐԸ (ԳՐԱՄՆԵՐՈՎ)

Ճագարի հասակն ու դրությունը:	Չոր նյութեր	Սպիտակուցային նյութեր	Հանքային նյութեր	Ածխաջրատային նյութեր	Սպիտակուցային հարաբերութ.
Ձագ ճագարը սկսած 1 ամսականից	70	6,5	1,7	30,0	1 : 5
» » » 2 »	65	5,4	1,6	26,3	1 : 5
» » » 3 »	60	4,1	1,4	23,7	1 : 6
» » » 4 »	55	3,4	1,2	22,9	1 : 7
» » » 5 »	50	2,6	1,1	21,5	1 : 9
Մեծահասակ ճագարը (թե էգ և թե որձ) . . .	40–45	2,0	0,9	20,0	1 : 11
Մայր ճագարը հղիության և ձագերին կերակրելու շրջանում	60	5,8	1,0	30,0	1 : 5
Զուգավորելու շրջանում	66–70	3,2	1,4	32,0	1 : 11

Ծանոթություն. Այս աղյուսակը կազմված է արագ, 6 ամսվա ընթացքում հասունացող ճագարների համար։

Կ. Գադզյացկին, հենվելով այս աղյուսակի վրա, կազմել է ճագարներին կերակրելու օրաբաժնի հետևյալ աղյուսակը, որը ցույց է տալիս, թե ճագարի կենդանի քաշի ամեն 1 կիլոգրամին որքան խոտ, վարսակ և արմատապտուղներ պետք է տալ։

Աղյուսակ № 6

ՃԱԳԱՐԻ ՕՐԱԲԱԺԻՆՆ ԸՍՏ ՆՐԱ ՔԱՇԻ (ԳՐԱՄՆԵՐՈՎ)

Ճագարների հասակն ու դրությունը:	գրամներով		
	Չոր խոտ	Վարսակ	Արմատապտ.
Ձագ ճագարը սկսած 1 ամսականից	40	40	63
» » » 2 »	45	30	45
» » » 3 »	42	20	30
» » » 4 »	40	10	40
» » » 5 »	35	6	30
Հասակավոր ճագարները (էգ և որձ) հանգստության շրջանում	33	3	10
Էգ ճագարն հղիության և ձագերին կերակրելու շրջանում	42	35	50

Ծանոթություն. Ամառները չոր խոտը պետք է փոխարինել կանաչ խոտով, որի քաշը պետք է չոր խոտի քաշից 3-4 անգամ ավելի լինի։ Չոր խոտը կարելի յէ փոխարինել նաև ծառի կանաչ ճյուղերով ու տերևներով։ Արմատապտուղները նույնպես պետք է մասամբ կամ ամբողջովին փոխարինել կանաչ խոտով։

Անհրաժեշտ է սակայն ասել, որ արտասահմանյան հիշյալ գիտնականների առաջարկությունը դեռևս լավ ստուգված չէ ու վերջնական համարել վաղաժամ է։ Նմանապես և Գադզյացկու աղյուսյակը, որը բղխում է այդ առաջարկությունից, ինչպես ինքը կազմողն է խոստովանում, նույնպես կարիք ունի յերկարատև ստուգման։

Ավելորդ չենք համարում մեջ բերել այստեղ Ա. Գեպլերի աղյուսյակը, որով խորհուրդ են տալիս ղեկավարվել պրոֆեսոր Մակարեվսկին և Վոլկոնսկին։

Աղյուսյակ № 7

1. Կերի օրաբաժինը 2 կիլոգրամանոց (800 գրամմ) ճագարին տալու համար.

Խոտ (չոր)	13	գրամմ	*
Վարսակ	17	»	
Մղեղ (թեփ)	17	»	
Սիսեռ թրջած	13	»	
Կաթ	64	»	
Արմատապտուղ	17	»	

*) Սպիտակուցային հարաբերությունները՝ 2 կիլոանոց ճագարի համար 1 : 4 և 8 կիլոանոցի համար՝ 1 : 6. իսկ 8 կիլոանոց հղի ճագարի համար՝ 1 : 5։

2. Կերի օրաբաժինը 8 գրվանքանոց (3 կիլո 200 գրամմ) ճագարին տալու համար

Խոտ (չոր)	*51 գրամմ*	*
Վարսակ	*34 »*	
Մղեղ (թեփ)	*34 »*	
Սիսեռ	*13 »*	
Արմատապտուղ	*51 »*	

3. Կերի օրաբաժինը 8 գրվանքանոց (3 կիլո 200 գրամմ) հղի կամ կերակրող ճագարին տալու համար

Խոտ (չոր)	*61 գրամմ*	*
Վարսակ	*51 »*	
Մղեղ (թեփ)	*43 »*	
Սիսեռ	*21 »*	
Արմատապտուղ	*68 »*	

Այս աղյուսակը ցավոք սրտի նույնպես զուրկ չէ պակասություններից: Երկրորդ և յերրորդ օրաբաժանում չոր նյութերի պահանջն ավելի քիչ է ցույց տրված, քան իրոք վոր անհրաժեշտ է ճագարի օրգանիզմի համար: Նկատելի յե չոր խոտի սակավությունը և ծառերի ճյուղերի ու տերեվների բացակայությունը: Փոքր ինչ պակաս է ցույց տված նաև արմատապտուղների չափը: Բացի դրանից, առաջին աղյուսակում, ձագերի համար պահանջվող 60 գրամմ կաթը մեր պայմաններում անիրականալի յե: Մեր համայնացված ճագարաբուծական տնտեսություններից և վոչ մեկը չի կարող և հաշիվ չունի անասուններին կաթով կերակրելու, մանավանդ, յեթե աչքի առաջ ունենանք, վոր ձագերի թիվը հաճախ համարվում է հարյուրներով ու հազարներով:

Ըստ պրոֆեսոր Մակարեվսկու այս օրաբաժինը գործադրող տնտեսությունները կարող են փոխարինել հիշյալ 60 գրամմ կաթը 10 գրամ վարսակով, 10 գրամ թեփով և 10 գրամ սիսեռով, բոլորը միասին վերցրած:

Ինչպես տեսնում ենք, Ա. Գեպլերի առաջարկած օրաբաժինները գործածելու համար, անհրաժեշտ է նախ իմանալ ճագարների քաշը, ծանրությունը: Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, վոր հազիվ թե բոլոր կոլտնտեսությունները կշեռք ունենան այդ նպատակի համար, և բացի դրանից հաշվի առնելով այն, վոր կշեռք յեղած դեպքումն էլ, հեշտ բան չի (մանավանդ խոշոր տնտեսություններում) ամեն ամիս բոլոր ճագարներին մեկ առ մեկ կշռելը, մեջ ենք բերում

**) Սպիտակուցային հարաբերությունները՝ 2 գրվանքանոց ճագարի համար 1:4 և 8 գրվանքանոցի համար՝ 1:6, իսկ 8 գրվանքանոց ճագարի համար 1:5:*

այստեղ գերմանացի Կենիգի կազմած աղյուսակը, վորը ցույց է տալիս, թե ճագարի վոր տեսակը վորքան քաշ ունի իր տարբեր հասակում: Սակայն և անհրաժեշտ ենք համարում շեշտել, վոր Կինիգն իր փորձերը կատարել է գերմանական ընտրովի ճագարների վրա, վորոնք ընդհանուր առմամբ, մեր ճագարներից ավելի խոշոր են: Հետեվապես այս աղյուսակը օգտագործող մեր կոլտնտեսությունները պետք է իրենց ճագարների քաշը փոքր ինչ պակաս համարեն, քան ցույց է տված այս աղյուսակում:

Աղյուսակ № 8

ՃԱԳԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՔԱՇԸ ՋԱՆԱԶԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ (ԳՐԱՄՆԵՐՈՎ)

Ճագարի տեսակները	*Քանի ամսական է ճագարը*									
	1 ամսակ.	*2 ամսակ.*	*3 ամսակ.*	*4 ամսակ.*	*5 ամսակ.*	*6 ամսակ.*	*7 ամսակ.*	*8 ամսակ.*	*9 ամսակ.*	*10 ամսակ.*
«Ֆլանդրը»	750	1750	2750	3750	4750	5250	5700	6125	6625	7000
«Սպիտակ աժդահան»	625	1500	2500	3500	4250	4750	5250	5500	5750	6000
«Անգլիական խոյը»	500	1000	1500	2125	2750	3250	3750	4200	4600	5000
«Վիենայի սպիտակը»	438	875	1375	1875	2375	2750	3125	3438	3625	4000
«Վիենայի կապույտը»	500	1125	1812	2438	3000	3500	3875	4185	4375	4625
«Շինշիլլ» (խոշորը)	500	1125	1750	2375	2875	3250	3625	3938	4125	4375
«Շինշիլլ» (մանրը)	312	687	1000	1375	1750	2062	2312	2500	2625	2750
«Ֆրանսիական արծաթավունը» . .	500	1062	1812	2250	2750	3125	3500	3750	3938	4125
«Գերմանական արծաթավունը» .	500	1000	1625	2125	2625	3000	3375	3625	3812	4000
«Սեվահուրը»	375	750	1187	1562	1938	2187	2438	2562	2687	2875
«Գորնոստայը» (ռուսականը) . . .	250	500	750	1000	1200	1500	1625	1750	2000	2250
«Անգորայինը»	438	875	1375	1875	2187	2750	3125	3438	3625	4000
«Կաստորեքսը»	312	687	1375	1875	2375	2750	3000	3250	3375	3625

Վերեվում մեջ բերված օրաբաժնի բոլոր նորմաները մշակված են արհեստական սիստեմներում պահվող ճագարների համար: Կիսաբնական սիստեմների համար վորոշ նորմաներ առաջարկելը դժվար է, վորովհետեվ անհնարին է նախատեսել, թե գարեններում և պարկետներում վորքան խոտ, վարսակ և կամ այլ բույս է ցանվելու և, հետեվապես, վորքան սննդայնութ են ստանալու անասուններն իրենց ապրելատեղում և ինչքան հավելյալ կեր պետք է տալ նրանց: Սակայն անհրաժեշտ ենք համարում ասել այստեղ, վոր կիսաբնական սիստեմներում ապրող ճագարներն, իրենց կյանքը պահպանելու և մթերատվությունը վորոշ մակարդակի վրա պահելու համար, ամեն օր պահանջում են մո-

տովորապես այնքան սննդանյութ, վորքան ցույց է տրված հետեվյալ աղյուսակում։

Աղյուսակ № 9

Ճագարի հասակը	Ամառը					Ձմեռը				
	Չոր խոտ	Հացահատիկ	Քուսպ	Մզիկ	Կանաչ խոտ	Չոր խոտ	Հացահատիկ	Քուսպ	Մզիկ	Արմատապտուղ
Չափահաս .	60	40	15	15	250	100	40	10	20	100
Ձագ	—	5	5	10	300	80	35	10	15	80

Կիսաբնական սիստեմները գործադրող տնտեսությունները ճագարների համար որաբաժին մշակելիս, պետք է հաշվի առնեն գարեններում և պարկետներում ցանված բույսերը։

Ինչպես արդեն ասված է, դեռևս շատերը վիճում են այն մասին, թե որվա ինչ ժամանակ, ինչ կեր պետք է տալ ճագարներին։ Այդ խնդրում մենք օգտակար ենք համարում Վոլկոնսկու առաջադրությունը, վորով և հանձնարարում ենք ղեկավարվել։

Աղյուսակ № 10

	Ամառը	Ձմեռը
Առավոտը	1. Խոտ 2. Արմատապտուղ և բանջարեղեն	1. Խոտ։ 2 Արմատապտուղ և բանջարեղեն
Կեսօրին	1. Խմելիք 2. Վարսակ	
Յերեկոյան	1. Կանաչ խոտ 2. Ճյուղեր և տերևներ	1. Խմելիք 1. Վարսակ 3. Խոտ

ՃԱԳԱՐՆԵՐԻՆ ՉԱՂԱՑՆԵԼԸ

Սովորաբար ավելի շատ, ավելի համեղ և ավելի յուղոտ միս ստանալու համար, ճագարներին մորթելուց առաջ չաղացնում են, վորի հետեվանքով միաժամանակ լավանում է նաև նրանց կաշին և ամրանում նրանց մորթին։ Վորպեսզի քիչ կեր ծախսելով ավելի լավ արդյունք ստանալ, անհրաժեշտ է, բացի կերակրման վերոհիշյալ ընդհանուր կանոններից, կատարել նաև հետեվյալ պայմանները։

1. Չաղացնելու համար պետք է ընտրել բոլորովին հասունացած և առողջ ճագարներ։ Չաղացնելու ամենալավ ժամանակը 6—5 ամսական հասակն է, սակայն չաղացնել կարելի յե նաև մինչև 2—3 տարեկան հասակը։ Պառավ ճագարները դժվարությամբ են չաղանում և հաճախ նրանց վրա ծախսած կերը կորչում է անհետեվանք։

2. Չաղացվող անասունների համար պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, վոր նրանք այդ շրջանում հանգիստ վիճակում գտնվեն և շատ շարժվելու հնարավորություն չունենան։ Ամենալավ միջոցը՝ նրանց, հատկապես այդ նպատակի համար պատրաստած, նեղ վանդակներում տեղավորելն է։ Կիսաբնական սիստեմներով պահվող ճագարներին չաղացնելիս՝ պետք է նույնպես տեղավորել նեղ վանդակի մեջ։

3. Չաղացվող անասուններին պետք է այնքան կեր տալ, վոր նրանք կարողանան ամբողջովին ուտել։ Պետք է ուժեղացնել նրանց ախորժակը կերին հոտավետ բույսեր խառնելով։ Չափից ավելի կերը ստամոքսի քայքայում է առաջ բերում և գործն ապարդյուն է անցնում։

4. Չաղացնելու շրջանում պետք է ամեն 5—7 որը մի անգամ կշռել ճագարներին և յերբ պարզվի, վոր նրանց սկզբնական քաշը 20 տոկոսով ավելացել է, պետք է դադարացնել կերակրելն ու անմիջապես ուղարկել մորթելու, վորովհետեվ այդ չափով չաղանալուց հետո, նրանք բոլորովին կորցնում են ախորժակը և կարող են նորից նիհարել։

5. Չաղանալու շրջանը պետք է տեվի վոչ ավելի քան 15—20 որ։ Այդ ժամանակամիջոցը պետք է բաժանել 3 հավասար մասերի և ամեն մի մասում տալ ճագարներին կերի առանձին որաբաժին։ Այսպես. առաջին 5—7 որյակում պետք է տալ այն որաբաժինը, վորը տրվում է սովորական կերակրման ժամանակ, կիսով չափ (50 %) ավելացնելով միայն կերի ուժեղ տեսակները։ Յերկրորդ 5—7 որյակում պետք է դադարել արմատապտուղներ տալուց, փոխարինելով նրանց սպիտակուցային նյութեր պարունակող կերով՝ խաշած սիսեռ, ձգեղ, քուսպ։ Յերրորդ 5—7 որյակում պետք է շատացնել կերի ճարպ կազմող տեսակները՝ սիմինդրը, յեփած կարտոֆիլը և այլն՝ համեմելով նրանց բուրմունքավոր բույսերով։

Գոնչարովն ասում է, վոր Ֆրանսիայում ճագարներին չաղացնելիս գործադրում են հետեվյալ սիստեմը։

Առաջին 7 օրյակում. առավոտները տալիս են թեփով խառնած յեփած կարտոֆիլ, կես որին՝ գազար և լխուրի (սեխերիյ), յերեկոյան խաշած սիմինդր։

Յերկրորդ 7 օրյակում. *առավոտները տալիս են ցորենի ալյուրով խառնած, յեփած կարտոֆիլ, կեսորին խաշած սիմինդր, կանաչեղեն, յերեկոյան թեթեվ աղած վարսակ։*

Յերրորդ 7 օրյակում. *առավոտները տալիս են ալյուրով խառնած, յեփած ու տրորված կարտոֆիլ, կեսորին խաշած սիմինդր, յերեկոյան՝ կաթով թրջած հաց և կերբելուկ։*

Նպատակահարմար է վորձ ճագարներին չաղացնելուց $1^1/_2$—2 ամիս առաջ կրտել (զրկել նրանց սեռական հարաբերություն ունենալու ընդունակությունից)։ Այդ դեպքում նրանք ավելի շուտ և ավելի լավ են չաղանում։

Պետք է աչքի առաջ ունենալ նաև այն, վոր ճագարի միջակ տեսակներն ավելի արագ և ավելի լավ են չաղանում, քան խոշոր տեսակները։

ՃԱԳԱՐՆԵՐԻՆ ԲԱԶՄԱՑՆԵԼԸ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ժառանգականությունն, ինչպես անասնաբուծության բոլոր ճյուղերում, այնպես էլ ճագարաբուծության մեջ, շատ մեծ դեր է խաղում և կարեվոր է, վոր բոլոր ճագարաբույծները ծանոթ լինեն այդ խնդրին։ Սակայն վորովհետև ճագարաբուծության որենքների մանրամասն արծարծումը մեզ շատ հեռու կտանի, այստեղ անհրաժեշտ ենք համարում գոնե հիմնական գաղափար տալ նրանց մասին։

Նախ ինչ է ժառանգականությունը։ Ժառանգականություն կոչվում է ծնողների և զավակների նմանությունը և այդ նմանությունը մի սերնդից մյուսին փոխանցելու միջոցը։

Բոլորին հայտնի յե, վոր շատ անգամ զավակները նմանում են կամ հորը կամ մորը և կամ նմանում են վոչ թե ծնողներին, այլ պապերին։ Հաճախ էլ պատահում է, վոր զավակները վոչ իրար են նմանում, վոչ էլ ծնողներին, տարբերվելով վոչ միայն արտաքին նշաններով (մարմնի ձևը, գույնը և այլն), այլ և ներքին հատկություններով (աճեցողության, բնավորության և այլն)։

Շատ սերունդներ գլուխ են կոտրել այդ փոփոխականությունն ու անկայունությունը հասկանալու համար, բայց մինչև անցյալ դարի 2-րդ կեսերը, դեռ վոչ մի գիտական տվյալ չի յեղել այդ բնագավառում։ Միայն 1865 թվին գիտնական Մենդելին հաջողվում է գտնել այն բանալին, վորը զգալի չափով ոգնում է մեզ հասկանալու բնության այդ վերին աստիճանի հետաքրքրական յերեվույթը։ Մենդելն

իր բազմաթիվ փորձերը կատարել է բույսերի՝ ոլոռի վրա, սակայն հետագա պրպտումները հաստատել են, վոր նրա գյուտը հավասար չափով գործադրելի յե ամբողջ կենդանական աշխարհի վերաբերմամբ։

Այդ գիտնականը պարզել է ժառանգականության յերեք որենք, վորոնք հաստատում են, վոր ծնողների նշաններն ու հատկությունններն անցնում են զավակներին վոչ թե պատահաբար, այլ խիստ որինականությամբ։

Վորո՞նք են այդ որենքները։

Առաջին որենքը *կայանում է նրանում, վոր տարբեր տեսակի կենդանիների առաջին սերնդի մեջ, հանդես են գալիս ծնողներից մեկի այն նշաններն ու հատկությունները, վորոնք, ընդունակ են գերակշռելու մյուս ծնողի համապատասխան նշաններին ու հատկություններին։ Պարզենք որինակով.*

Յերբ զուգավորվում են յերկու, ասենք մեկ գույն ունեցող և նույն տեսակին պատկանող զտարյուն ճագարներ, նրանց թե արտաքին նշանները և թե ներքին հատկություններն ամբողջովին անցնում են ձագերին, վորոնք ուրեմն նույնպես լինում են զտարյուն և ընդունակ իրենց նմանող սերունդ արտադրելու։ Նույնն է ստացվում, յերբ զուգավորվում են, ասենք, կապույտ գույն ունեցող զտարյուն ճագարներ. նրանց ձագերն էլ լինում են զտարյուն և կապույտ։ Բայց բոլորովին այլ է լինում, յերբ զուգավորվում են յերկու տարբեր տեսակի ճագարներ. այս դեպքում սերունդն ունենում է ծնողներից մեկի գույնը։ Վերցնենք, որինակի համար. «ալյասկայի» սև վորձին և, «վենայի կապույտի» էգին։ Նրանց առաջին սերունդը կլինի ամբողջովին սև գույնով։ Սխալ կլինի կարծել, վոր այդ սերունդը պատկանում է զտարյուն «ալյասկայի» տեսակին։ Այստեղ կապույտ գույնը ժամանակավորապես թաքնվել է, տեղի տալով սև գույնին։

Այստեղ սև գույնը ճնշողն է, գերակշռողը (դոմինանտ) իսկ կապույտը՝ ճնշվողը, նահանջողը (ռեցեսիվ)։

Ճագարների մեջ մի շարք այդպիսի նշաններ կան, վորոնք գերակշռող են հանդիսանում. սև գույնը գերակշռում է սպիտակին ու կապույտին, մոխրագույնը գերակշռում է սևին, կարճ մազերը գերակշռում են յերկար մազերին, մանրոտ մարմինը գերակշռում է խոշոր մարմնին, կարճ ականջները գերակշռում են յերկար ականջներին և այլն։

Յերկրորդ որենքը—*նշանների բաժանման որենքն է, վորի գործողությունն առաջ է գալիս 2-րդ սերնդի մեջ։ Որինակ, յերբ զուգավորվում են միմիանց հետ նույն, սև «ալյասկայից» և, «վենայի կապույտից» ծնված սև գույն ունեցող ճագարները, ստացվում են ձագեր, վորոնց մի մասը լինում է սև, իսկ մյուս մասը՝ կապույտ։ Այլ խոսքով կատարվում է նշանների ճեղքում, այսինքն ժամանակավորապես նա-*

հանջած, թաքնված նշանը բաժանվում է ու նորից հանդես գալիս։ Բայց կարևորն այստեղ այն է, վոր նշանների այդ բաժանումը կատարվում է վոչ թե «ինչպես պատահի», այլ կայուն որինականությամբ՝ 3 գերակշռող նշան ունեցող ձագի հետ լինում է 1 նահանջող նշան ունեցող, այսինքն ամեն 3 սև ճագարից մեկը լինում է կապույտ։ Հետաքրքրականն այն վոր այդ 1 կապույտը լինում է զտարյուն, (ինչպես իր տատը) և ուրիշ է, զտարյուն կապույտի հետ զուգավորվելիս տալիս է սերնդին իր տեսակին հատուկ բոլոր նշանները։ Նմանապես և 3 սևերից մեկը լինում է զտարյուն (ինչպեն պապը) և ուրիշ զտարյուն սևի հետ զուգավորվելիս՝ տալիս է զտարյուն սերունդ։ Իսկ մնացած 2 սևը կրում են իրենց մեջ յերկու ծնողների նշանները։ Յեթե այս վերջիններիս զուգավորենք կապույտների հետ, ստացված սերնդի կեսը կլինի սև, կեսը՝ կապույտ։

Յերրորդ օրենքը կայանում է նրանում, վոր յերբ ծնողները տարբերվում են միմյանցից մի քանի նշաններով, որինակ՝ թե գույնով, թե մազերի յերկարությամբ, այդ դեպքում նշանների բաժանում կատարվելիս, նրանցից ամեն մեկը փոխանցվում է սերնդին մյուս նշաններից անկախ։ Այսպես, որինակ, յերբ զուգավորում են սև գույնի յերկար մազեր ունեցող վորձին և սպիտակ գույնի կարճ մազեր ունեցող եգին, սերունդը լինում է սև գույնի և կարճ մազերով։ Այսինքն, այստեղ այդ յերկու նշաններն անցնում են սերնդին, ամեն մեկն իր գծով. վորձի սև գույնը, վորպես գերակշռող, ճնշում է եգի սպիտակ գույնին, իսկ եգի կարճ մազերը, վորպես գերակշռող, ճնշում են վորձի յերկար մազերին։ Նույն որենքի գործողությունը կնկատենք, յեթե զուգավորենք որինակ, մանրոտ մարմին ունեցող սև վորձին՝ խոշոր մարմին ունեցող մոխրագույն եգի հետ. վորձի սև գույնը կնահանջի եգի գերակշռող մոխրագույնից, միաժամանակ եգի նահանջող խոշոր մարմինը տեղի կտա վորձի մանր ու մոխրագույն մարմնին և սերունդը կստացվի մանր ու մոխրագույն։

Տարբեր տեսակներին զուգավորելիս լինում են դեպքեր, յերբ վոչ մեկի, վոչ էլ մյուսի գույնը, կամ վորևէ այլ նշանը չի արտահայտվում սերնդի մեջ, վորը ծնվում է բոլորովին ուրիշ գույնով։ Այսպես որինակ, զտարյուն «սպիտակ աժդահան» և զտարյուն «Վենայի կապույտը» տալիս են, առաջին սերնդում, սև գույնի ձագեր, վորոնք հետագայում բազմանալիս տալիս են սպիտակ, կապույտ և սև գույնի սերունդ։ Այդ յերևույթը բացատրվում է նրանով, վոր ծնողներից վորևէ մեկը, — այս դեպքում «սպիտակ աժդահան», կրում է իր մեջ սև գույնի նահանջած, թաքնված նշանը, վորը բարենպաստ պայմաններում, ճնշում է մյուս նահանջող գույնին և հանդես գալիս սերնդի մեջ։

Հետագա գիտական պրպտումները պարզել են սակայն, վոր յերբեմն կենդանիների գերակշռող նշաններն ու հատկությունները հանդես

են գալիս առաջին սերնդում վոչ թե իրենց ամբողջ ուժով, այլ կիսով չափ թուլացած։ Որինակ, սև և սպիտակ ճագարներին զուգավորելիս հակառակ սպասված սև (գերակշռող) գույն ունեցող սերնդի, ստացվում է յերբեմն սևի ու սպիտակի միջին տեղը բռնող՝ մոխրագույն սերունդ։ Այդպես է լինում նաև յերբեմն սև ու կապույտ գույնի ճագարներին զուգավորելիս. նրանց ձագերը փոխանակ գերակշռող սև գույնի, ունենում են մուգ-կապույտ գույն։

Սակայն գերակշռող նշանների ու հատկությունների այս թուլացումն արտահայտվում է միայն առաջին սերնդի մեջ։ Հետագա սերունդներում գերակշռող նշաններն ամբողջովին վերականգնում են իրենց ուժը։

Անհրաժեշտ է ասել այստեղ նաև ժառանգականության վերջերումս հայտնաբերված մի ձևի մասին։ Պատահում է, վոր զուգավորվող տարբեր տեսակի ճագարների առաջին սերնդում աշխարհ են գալիս այնպիսի ճագարներ, վորոնք իրենց ձևերով, նշաններով ու հատկություններով բոլորովին նման չեն վոչ ծնողներին, վոչ էլ պապերին և ներկայացնում են իրենցից ճագարի մի նոր, դեռևս գոյություն չունեցող տեսակը, վորն ընդունակ է փոխանցնելու սերունդներին իր բոլոր առանձնահատկությունները։ Կենդանական ու բուսական աշխարհում այսպիսի անսպասելի կերպով նոր տեսակների առաջանալը կոչվում է **մուտացիա**։

Մուտացիայի թեորիան պատկանում է Դե-Ֆրիզին։ Շատերը յենթադրում են, վոր «ռեքսերն» իրենց կարճ մազերով ու գույնով, «անգորայի» ճագարն իր յերկար մազերով և «Ֆլանդրն» իր հսկայական մարմնով, առաջացել են ժառանգականության այս ձևի, մուտացիայի միջոցով։

Կարծում ենք վոր ժառանգականության հիմնական որենքների այս թռուցիկ ծանոթությունը բավական է նախ համոզվելու համար, վոր ժամանակակից գիտությունը հսկայական նվաճումներ է կատարել բնության այդ «գաղտնիքը» պարզելու ասպարեզում և յերկրորդը՝ գաղափար ստանալու համար, թե վորքան կարևոր է մեր ճագարաբույծներին տեղյակ լինել այդ նվաճումներին, նրանց առորյա աշխատանքում գործադրելու նպատակով։ Յերբ ճագարաբույծները ծանոթ են ժառանգականության այս որենքներին, նրանք, հնարավորություն ունենալով նախատեսելու թե վոր ծնողներից ինչ սերունդ է ստացվելու, կարող են վոչ միայն պահպանել ու ամրացնել իրենց ցեղային ճագարների արժեքավոր հատկությունները, այլ և, համապատասխան ընտրություն կատարելով եգերի ու վորձերի մեջ, ստանալ այս կամ այն ցանկացած սերունդը։ Ժառանգականության որենքներին ծանոթ լինելը կարևոր է մանավանդ մետիզացման համար։

ՄԵՏԻԶԱՑՈՒՄ

Յերկու տարբեր տեսակի ճագարների կամ ցեղային ու հասարակ ճագարների զուգավորման միջոցով սերունդ ստանալը՝ կոչվում է մետիզացում։ Մետիզացումը կատարում են հասարակ ճագարներին լավացնելու, ազնվացնելու նպատակով։ Ճագարների բազմացման այդ միջոցը վերին աստիճանի նպատակահարմար է մանավանդ մեր ժամանակակից պայմաններում, յերբ ցեղային ճագարների պակասության պատճառով անհնարին է լրիվ կերպով բավարարել մեր նոր կազմակերպվող ճագարանոցների որ որի վրա աճող պահանջները։

Փորձը ցույց է տվել, վոր հասարակ եգ ու ցեղային զտարյուն վորձ ճագարներից ստացված առաջին սերունդը կրում է իր մեջ հայրական գերակշռող նշաններն ու հատկությունները՝ մորթու գեղեցիկ գույնը, արագ մեծանալու ընդունակությունը և այլն։ Սակայն միաժամանակ առաջին սերնդի մեջ արտահայտվում է նաև մայրական գերակշռող նշաններն ու հատկությունները՝ դիմացկունությունը, կենսունակությունը և այլն։ Յերբ ժառանգականության որենքներին անծանոթ ճագարաբույծներն ընդունելով առաջի սերնդի այդ մետիս ճագարներին զտարյունի տեղ (ըստ նրանց արտաքին տեսքի), փորձում են բազմացնել նրանց նույնանման սերունդ ստանալու հույսով, հիասթափությունն անխուսափելի յե, վորովհետև յերկրորդ սերնդում նշանների բաժանում է կատարվում։

Մետիզացման միտքն ել կայանում է հենց նրանում, վոր թույլ չտալ նշանների այդ բաժանումը։ Այդ նպատակով հասարակ ու զտարյուն ճագարներից ստացված առաջին սերնդի եգերին զուգավորում են վոչ թե նրանց նման, այսինքն հասարակ ու ցեղային ճագարներից ստացված վորձի հետ, այլ դարձյալ ցեղային զտարյուն վորձի հետ։ Զտարյուն ճագարի գերակշռող նշաններն ու հատկություններն ավելի ևս ճնշելով հասարակ ճագարի նահանջող նշաններին, ավելի ուժեղ են արտահայտվում սերնդի մեջ, վորը սակայն դարձյալ շարունակում է կրել իր մեջ հասարակ ճագարի վերոհիշյալ գերակշռող նշանները։ Յերկրորդ սերնդի եգ ճագարներին դարձյալ զուգավորելով ցեղային զտարյուն վորձի հետ, ստանում են յերրորդ սերունդը, վորի մեջ ցեղային ճագարի նշաններն ու հատկություններն այնքան են ձևակերպվում ու ամրանում, վոր ընդունված է այդ սերենդին համարել արդեն ամբողջովին զտարյուն, թեպետ ի հարկե հասարակ ճագարի գերակշռող նշաններն ու հատկությունները դեռևս մնում են այդ սերնդի մեջ:

Թե ինչպես մետիզացման շնորհիվ սերնդից սերունդ, կլանվում է հասարակ ճագարի արյունը զտարյուն ճագարի արյան կողմից, արտահայտվում է հետևյալ սքեմայում. (տես 99-րդ եջի նկ. № 36)։

Յեթե այդ նույն ձևով դարձյալ շարունակենք զուգավորել նոր ու նոր սերնդների եգերին՝ զտարյուն ցեղային վորձերի հետ, 7-րդ



Նկ. 36

սերնդի ճագարի մեջ կլինի 1/128 հասարակ ճագարի արյունը և 127/128 ցեղային ճագարի արյունը։ Սակայն, ինչպես ասացինք, արդեն 3-րդ սերունդն ընդունված է համարել զտարյուն և այդ սերնդի վորձերին գործադրում են վորպես ցեղային արտադրողներ։ Այդ սերնդի ճագարները կրելով իրենց մեջ ցեղային ճագարի արժեքավոր նշաններն ու հատկությունները, միաժամանակ լինում են հասարակ ճագարների նման դիմացկուն և կենսունակ։ Յերբ մեր ճագարաբուծական տնտեսությունների կողմից համապատասխան ուշադրություն դարձվի մետիզացման վրա, կհաջողվի շատ կարճ ժամանակամիջոցում ազնվացնել մեր յերկրի բոլոր հասարակ ճագարներին և ստանալ ամեն տեսակետից ավելի արժեքավոր ճագարներ։

ՃԱԳԱՐԻ ՎՈ՞Ր ՏԵՍԱԿՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՊԱՀԵԼ

Շատ կոլտնտեսություններ, ձեռնարկելով ճագարանոցի կազմակերպման, իրար են անցնում և այս ու այն կողմն ընկնում, վորպեսզի անպայման գտնեն իրենց համար ճագարների «ամենալավ» տեսակը։ Այդ յերևույթը առաջ է գալիս նրանից, վոր շատերը կարծում են, թե ճագարների մեջ իրոք վոր կան այնպիսի տեսակներ, վորոնք ամեն տեղ և ամեն պայմաններում գերազանցում են մյուս բոլոր տեսակներին: Դա, ի հարկե, սխալ ե։ Ճագարների մեջ «ամենալավերն» ու «ամենավատերը» գոյություն չունեն։ Նրանք բոլորն ել լավ են, բո-

լորն ել ոգտակար ու շահավետ, յերբ նրանց պահելու ու խնամելու վրա համապատասխան յեռանդ ու վարպետություն ե գործադրվում։ Նրանք բոլորն ել վատ են ու վնասաբեր, յերբ ճագար պահողները նրանց խնամելու մասին գաղափար չունեն և յերբ մանավանդ այն կարծիքն ե տիրում, թե իբր ճագարն այնպիսի անասուն ե, վորին ինչ պայմաններումն ել վոր պահես, անպայման կապրի, կբազմանա և ոգուտ կբերի։

Ճագար ընտրելիս պետք ե անպայման կանգ առնել այն տեսակի վրա, վորն հանձնարարվում ե յերկրային կամ ռայոնական համապատասխան որգանների կողմից։

Միայն այն ժամանակ պետք ե ինքնուրույն կերպով ճագարի տեսակներն ընտրել, յերբ հիշյալ որգանների կողմից ցուցմունքներ չկան։ Այդ դեպքում ճագարներից ամենալավը պետք ե համարել այն, վորը նախ՝ ամենահարմարն ե տվյալ կլիմայական պայմանների համար յեվ վորը մյուս բոլոր տեսակներից ավելի յե ծանոթ այն մարդուն, վորի տընորինությանն ու պատասխանատվությանն են հանձնվում ճագարները։

Այս յերկու նկատառումներն ել շատ կարևոր են ու արժանի ամենալուրջ ուշադրության։

Այն տնտեսությունները, վորոնք հաշվի չեն առնում իրենց ճագարաբույծի պատրաստականությունն ու ընդունակությունները և «ամենալավ» ճագարի հետևից ընկնելով, այնպիսի տեսակներ են ձեռք բերում, վորոնց ճագարաբույծը, ինչպես հարկն ե, ծանոթ չե, ի հարկե սխալվում են և հաճախ վնասներ կրում։ Քանի դեռ, ցավոք սրտի, մասնագետ ճագարաբույծներ շատ չկան, ճագարաբուծական տնտեսություններն ստիպված են հարմարվել սպասարկողներին և վոչ թե հակառակը։

Լուրջ նշանակություն ունի նաև կլիմայի խնդիրը։ Յեթե ճագարի ընտրված տեսակն հարմար չե տվյալ կլիմայական պայմաններին, ի հարկե տնտեսությունը զարգանալ ու բարգավաճել չի կարող, թեկուզ և ամենալավ մասնագետներն ունենա իր ձեռքի տակ։ Կլիմա ասելով չպետք ե այնպես հասկանալ, վոր իբր ճագարի ամեն մի տեսակի համար անպայման պահանջվում ե վորոշ կլիմայական պայմաններ, վորոնց բացակայության դեպքում, անասունները կոտորվում են ու վոչնչանում։ Խոսքը կոտորվելու մասին չե։ Ճագարները, պատշաճ խնամք յեղած դեպքում, բոլոր պայմաններում ել կարող են իրենց գոյությունը պահպանել։ Սակայն բոլոր պայմաններում ապրելով, նրանք հավասար արդյունավետություն չեն ունենում։

«Անգորայի» ճագարը տաք տեղ ապրելիս, հրաշալի, նուրբ աղվամազ ե տալիս, իսկ ցրտում ապրելիս նրա աղվամազը կոշտանում ե ու կորցնում իր արժանիքները։ Ընդհակառակը, «Շինշիլի» մորթին

խտանում ե ու փարթամանում ցուրտ կլիմայում, իսկ տաքությունից նա զգալի չափով կորցնում ե իր գովական հատկությունները։ Տաք կլիմա պահանջող ճագարներին ցուրտ յերկրներում պահելը անոգուտ ե և անշահավետ, ինչպես և ցուրտ կլիմա սիրողներին տաք յերկրում պահելը։

Այն խորհրդային մարմինները, վորոնք անմիջապես շահագրգռված են ճագարաբուծության արդյունավետության բարձրացման խնդրում, հատկապես զբաղվում են այն հարցով, թե նախ, ճագարների վոր տեսակները պետք ե պահել Խ. Միության սահմաններում և յերկրորդը՝ վոր տեսակը յերկրի վոր մասում։ «Գոստորգն» առաջարկում ե բազմացնել ու տարածել գլխավորապես հետևյալ տեսակները.

«Ֆլանդրը»	Հարավային գոտում
«Սպիտակ աժդահան» . . .	» »
«Վենայի կապույտը» . . .	Միջին գոտում
«Շամպայնը»	Հարավային և միջին գոտում
«Շինշիլը» (խոշոր և մանր)	Հյուսիսային գոտում
«Վենայի սպիտակը»	» »
«Գորնոստայը»	» »

Ծանոթություն։ Ըստ «Գոստորգի», Հյուսիսային Կովկասում «սպիտակ աժդահան» պահվելու յե համարյա բացառապես հասարակ ճագարներին ազնվացնելու, խոշորացնելու նպատակով։

Հասկանալի յե ի հարկե, վոր «Գոստորգի» այդ հանձնարարականը բառացի չպետք ե հասկանալ, մանավանդ գոտիների խնդրում։ Հարավային, հյուսիսային և միջակ գոտիներ ասելով, «Գոստորգն» աչքի առաջ ունի Խ. Միության տաք, ցուրտ և միջակ կլիմա ունեցող ռայոնները։ Այնպես վոր կոլտնտեսությունները, ճագարի տեսակներն ընտրելիս, պետք ե յելակետ ունենան վոչ այնքան իրենց աշխարհագրական դիրքը, վորքան կլիման։ Յեթե կոլտնտեսությունը գտնվում ե հարավային գոտում, բայց փաստորեն զով ամառներ ու ցուրտ ձմեռներ ունի,—որինակ Հյուսիսային Կովկասի կամ Անդրկովկասի լեռնային շրջանները, պետք ե ընտրի ճագարի այն տեսակները, վորոնք «Գոստորգը» խորհուրդ ե տալիս Հյուսիսային գոտու համար։

Անկախ նրանից, թե ճագարների տեսակներից վորի վրա յե կանգ առնվում, պարտադիր պետք ե համարել այն, վոր կոլտնտեսությունները պահեն մեկ կամ ամենաշատը՝ յերկու տեսակ ճագար։ Վորքան տեսակները քիչ են, այնքան նրանց սպասարկողները շուտ են ուսումնասիրում նրանց և ընտելանում նրանց խնամելու գործին։ Բացի դրանից, յերբ տեսակները քիչ են, նրանց միմիանց խառնվելու և այլասերվելու վտանգն ել քիչ ե լինում։ Շատ ցանկալի յե նույնիսկ

վոր ամբողջ ռայոնի բոլոր կոլտնտեսությունները մի տեսակի ճագար պահեն։

Անհրաժեշտ ե շեշտել նաև այն, վոր գործնականորեն ավելի նըպատակահարմար ե, յերբ նոր կազմակերպվող ճագարաբուծական տնտեսությունները ձեռք են բերում վոչ թե զտայրուն ճագարներ, այլ հասարակներ։ Զտարյուն ճագարները, վորոնք միշտ, թե մեզ մոտ և թե արտասահմանում, պահվել են համարյա բացառապես վանդակների մեջ, փակ ճագարանոցներում, սովորաբար վատառողջ են լինում և անփորձ կոլտնտեսականների վորեվե սխալի պատճառով, կարող են շատ շուտ հիվանդանալ ու կոտորվել։ Հասարակ ճագարներն ավելի դիմացկուն են և լավ նյութ են հանդիսանում սովորելու և փորձառություն ձեռք բերելու համար։ Անհրաժեշտ ե ինարկե հասարակ եգերի հետ մեկ տեղ զտայրուն վորձեր պահել և հետզհետե ամբողջ տնտեսությունը գլխովին մետիզացնել։

ՔԱՆԻ ՀԱՏ ՃԱԳԱՐ ՊԵՏՔ Ե ՊԱՀԵԼ

Այն կոլտնտեսությունները, վորոնք իրենց ճագարանոցները ըստեղծում են կոլտնտեսականների կամ անհատական տնտեսությունների ունեցած ճագարների կամավոր համայնացման միջոցով, նրանք պետք ե աշխատեն պահել ու պահպանել բոլոր ճագարները, բացի ի հարկե պառաված ու ավելորդ վորձերից ու տոհմի համար անպետք եգերից։ Այդպիսի կոլտնտեսականները գործին ծանոթ և փոքր ե շատ փորձված մարդիկ ունենալով, կարող են հենց սկզբից և յեթ մի քանի հարյուր գլուխ մայր ճագար ունեցող տնտեսություն կազմակերպել և ապա մի քանի տարվա ընթացքում, հասցնել տնտեսությունը խոշոր չափերի։

Իսկ այն կոլտնտեսությունները, վորոնք վոչ համայնացված ճագար ունեն և վոչ էլ վարպետ ճագարաբույծներ, պետք ե գործն ըսկսեն փոքր չափերից։ Գործի սկզբի շրջանի համար բավական ե ձեռք բերել 100 գլուխ եգ ճագար և համապատասխան քանակությամբ վորձեր (5—7 եգին 1 վորձ), վորոնք կարգին խնամք լինելու դեպքում, կարող են տալ մի տարում 1800 գլուխ սերունդ։ Դա նշանակում ե, վոր հենց առաջին տարում կոլտնտեսությունը կստանա 1800 հատ մորթի և առնվազը 16 ցենտներ միս (96 փութ)։

Գործին կանոնավորապես տիրապետելուց և սպասարկողների կադրեր դաստիարակելուց հետո, կոլտնտեսությունները կարող են հետզհետե լայնացնել իրենց ճագարաբուծությունը, հասցնելով մայր ճագարների թիվը մինչեվ 500-ի, վորոնք կտան տարեկան 9000 մորթի և 80 ցենտներ միս (480 փութ)։

Այն կոլտնեսությունները, վորոնց համար ճագարաբուծությունը յերկրորդական, ոժանդակիչ ճյուղ ե հանդիսանում, 250—300 մայր ճագարով պետք ե բավարարվեն և, կանգ առնելով այդ քանակության վրա, կենտրոնացնեն իրենց ուշադրությունը ճագարների վորակի բարձրացման վրա։ Իսկ այն կոլտնտեսությունները, վորոնք մտադիր են դարձնել ճագարաբուծությունն իրենց տնտեսության հիմնական ճյուղերից մեկը, կարող են հասցնել մայր ճագարների թիվը մինչեվ 1000-ի, 2000-ի, 3000-ի և նույնիսկ 5000-ի։

Այդպիսի խոշոր ճագարաբուծական տնտեսություններ չկան դեռևս աշխարհի վոչ մի ծայրում, բացի Խ. Միությունից։ Ինչպես վերեվում ասել ենք, Մոսկվայի մոտ գտնվում են 6—7 խոշոր ճագարաբուծական խորհտնտեսություններ՝ 2000-ից մինչեվ 5000 գլուխ մայր ճագարներով։

Ռոստով-Նախջեվանի ճագարաբուծական ընկերության տնտեսությունն ունի մոտ 2500 մայր ճագար։

Կոլտնտեսային ճագարանոցի մեծությունը վորոշվում ե վոչ թե այս կամ այն մասնագետի կամակորությամբ և կամ վարչության լոկ ցանկությամբ, այլ գլխավորապես և համարյա բացառապես առկախ կերի իրական աղբյուրներից։ Յերբ ճագարաբուծական ֆերմը հույսը դնում ե դրսից ստացվող կերի վրա և նրա բախտը միշտ կապված ե պատահականություններից, նա նորմալ կերպով ապրել ու զարգանալ չի կարող։

Յեթե կոլտնտեսությունը իրոք շահագրգռված ե իր ճագարաբուծության զարգացման գործում, նա պետք ե որ առաջ պարզի կերի իր սեփական բազը և ըստ այնմ վորոշի ճագարանոցի չափը։ Կոլտնտեսությունը պարտավոր ե ամեն տարի նախատեսել իր արտադրական ֆինանսական պլանում ճագարների կերի պահանջը և անհրաժեշտ քանակությամբ հողամասեր հատկացնի համապատասխան ցանքսերի համար։

Համաձայն կուսակցության Յերկրկոմի այս տարվա ապրիլի 2-ի վորոշման, կոլտնտեսությունը պետք ե միաժամանակ հոգ տանի նաև կոլտնտեսականների չհամայնացված ճագարաբուծության կերի պահանջները բավարարելու մասին, նախատեսելով այդ նպատակի համար կոլտնտեսականների ագարակների և բանջարանոցների հողամասերի ոգտագործումը։

Կերի պահանջները պարզելիս պետք ե աչքի առաջ ունենալ վոր 1 մեծահասակ ճագարն իր 18 ձագերով միասին, նորմալ ապրելու և մթերատվությունը պահպանելու համար, պետք ե ստանա տարեկան մոտավորապես 90 կիլոգրամ ուժեղ կեր, 140 կիլոգրամ արմատապտուղ և 160 կիլոգրամ չոր խոտ։

ԵԳԵՐԻ ՈՒ ՎՈՐՁԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Անկախ նրանից, թե ինչքան և ինչ տեսակի ճագարներ է պահում կոլտնտեսությունը, եգերի ու արտադրող վորձերի ընտրությունը վերին աստիճանի կարեվոր խնդիր է, վորից և զգալի չափով կախված է տնտեսության հաջողությունն ու շահավետությունը։ Ամեն մի կոլտնտեսություն, արտադրող ճագարի ընտրության անցնելուց առաջ, պետք է, համաձայն յերկրային կամ ռայոնական համապատասխան որգանների ցուցմունքին, հաստատապես վորոշած լինի թե ի՞նչ ուղղությամբ է զարգացնելու իր ճագարաբուծությունը։ Յեթե նպատակ է դրվում հատկապես ցեղային ճագարներ ստանալը՝ նրանց վողջ-վողջ վաճառելու համար, այդ դեպքում թե վորձերը և թե եգերն ընտրվում են ամենամանրակրկիտ ուշադրությամբ և հաշվի առնելով վոչ միայն նրանց եքստերյերը (մարմնի կազմությունը) ըստ ստանդարտի, այլև նրանց ժառանգական՝ տոհմային հատկությունները։

Ցեղային ճագարների այդ հատկությունները սովորաբար արձանագրված են լինում այսպես կոչված «տոհմային գրանցումների գրքում», վորտեղ մեկ առ մեկ նշանակված է լինում, թե վորոնք են այս կամ այն ճագարի պապերը, ծնողները, ինչ առանձնահատկություն ու արժանիքներ ունի նա և այլն։ Նոր ճագար ձեռք բերող կոլտնտեսությունները պետք է անպայման պահանջեն այդ «գրանցումն» ամեն մի գլխի համար։ Յեվ յեթե ձեռք բերվող ճագարների մեջ կան այնպիսիները, վորոնք ըստ իրենց արտաքին նշանների, միանգամայն համապատասխանում են ստանդարտին, բայց հիշյալ փաստաթղթերից չունեն և կան այնպիսիները, վորոնք այնքան էլ չեն համապատասխանում ստանդարտին, բայց կանոնավոր կազմած թղթեր ունեն,—պետք է նախապատվություն տալ այս վերջիններին։

Իսկ յեթե կոլտնտեսությունը հետապնդում է արդյունաբերական նպատակներ, այսինքն, նա ցանկանում է վորքան կարելի յե շատ ճագար ստանալ, թեկուզ և փոքր ինչ ցածր հատկություններով,—այն ժամանակ ճագարներ ընտրելիս, ղեկավարվում են վոչ այնքան ստանդարտի պահանջներով, վորքան նրանց լավ աճեցողության նշաններով։ Յեվ այս դեպքում ուշադրությունը կենտրոնացվում է գլխավորապես վորձերի ընտրության վրա։

Առհասարակ ճագարաբուծական բոլոր տիպի տնտեսությունների համար էլ վորձերի հաջող ընտրությունը կարելի յե ասել, համարյա վճռական նշանակություն ունի։ «Լավ բուղան նախրի կեսն արժե» ասում են անգլիացիները։ Այդ առածն ավելի ևս սազում է վորձ ճագարին։ Կանոնավոր կազմակերպված ճագարաբուծական տնտեսություններում մեկ վորձը բեղմնավորում է միջին թվով 10 եգի, վորոնք տալիս են առնվազը տարեկան 150—200 գլուխ, սերունդ։ Յեթե վորձը լավն է, նրա լավ հատկությունները զգալի չափով անցնում են սերունդներին և ուրեմն այդ 150-200 գլուխը, շնորհիվ իրենց մորթու լավ հատկությունների և կամ մսի ու աղվամազի մեծ քանակության, ավելի մեծ յեկամուտ են տալիս կոլտնտեսությանը։ Իսկ յեթե վորձը լավը չի, կոլտնտեսությունն, ավելի քիչ միս և ավելի վատ մորթի ու աղվամազ ստանալով և ուրեմն ցածր գներով իրացնելով նրանց, կարող է վնաս կրել, չծածկելով անասունների կերի արժեքն ու կոլտնտեսականներին հասանելիք ծախսը, համաձայն նրանց գործադրած աշխատանքային օրերի։

Գ. Գաղզիացկին ասում է, վոր արդյունաբերական ճագարաբուծությունների համար ճագարներ ընտրելիս, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նախ՝ նրանց առողջության, մարմնի կազմության, հասակի և տարիքի վրա, յերկրորդ՝ նրանց ծագման վրա, յերրորդ՝ մորթու կամ աղվամազի վորակի վրա, և չորրորդ՝ մի քանի կարեվոր արտաքին տոհմային նշանների վրա։

Առողջությունը։ Առողջ ճագարը նախ և առաջ պետք է ունենա առողջ տեսք և լավ ախորժակ։ Նրա մորթին պետք է լինի հարթ և չխճճված։ Աչքերը՝ պարզ, չարտասվող։ Կզկզանքն ամուր և չոր։ Ականջներն՝ առանց քոսի։ Մարմինն՝ առանց վորեվե ուռուցքի և վերքի։ Քիթը՝ մաքուր, լորձունք չարտադրող։ Սեռական որգաններն՝ առանց ուռուցքի կամ վերքի։

Մարմնի կազմությունը։ Մարմնի կազմությունն այն ժամանակ է լավը համարվում, յերբ ճագարի կռնակը կլոր է, բայց առանց սապատի։ Վորձերը պետք է լավ զարգացած կուրծք ունենան, իսկ եգերը լայն հետույք և վոչ պակաս քան 8 հատ պարզ նշմարվող պտուկներ։ Վոտքերը չպետք է ծռված լինեն, այլ ուղիղ։ Պոչը նույնպես ուղիղ, իսկ ականջներն էլ վեր ցցված։ Ցանկալի յե, վոր ականջների յերկարությունը լինի վոչ պակաս, քան ամբողջ մարմնի յերկարության $1/4$ մասը, հաշվելով մարմնի յերկարությունը քթի ծայրից մինչև պոչի արմատը։

Հասակը։ Ցանկալի յե, վոր արտադրող ճագարների հասակը լինի վոչ ավելի, քան 2 տարեկան։ Յեթե հայտնի չե թե ճագարը յերբ է ծնվել, նրա հասակը մոտավորապես վորոշվում է ճանկերի միջոցով և ուրիշ նշաններով։ Բացի դրանից, պառաված ճագարների աչքերը սովորաբար խավար են լինում, մորթու մազերը ցանցառ ու խճճված, կողքերն էլ ներս ընկած։ Պառավ ճագարը դանդաղ է ուտում և քիչ։

Բարքը։ Լավ վորձը պետք է լինի համարձակ, առույգ և յեռանդուն, իսկ եգը հանդիստ բնավորությամբ, բայց վոչ խեղճ։

Մորթու հաստությունը։ *Լավ մորթին պետք է պինդ լինի։ Մորթու պնդությունը վորոշվում է նրա տեսքով և կամ շոշափելու միջոցով։ Ձեռքով շոյելիս բուրդն իսկույն պառկում է և դար ու փոս չի ունենում։ Մորթու փափկությունը նույնպես վորոշվում է աչքով կամ շոշափելով։ Լավ մորթին ձմռանը առանձին փայլ է ունենում։ Մանրամազի խտությունը վորոշում են մորթու վրա փչելով. փչելիս, մազերի տակից կաշին չպետք է յերևա։ Մորթու գույնը պետք է հավասար լինի, առանց լաքաների։ Ամենալավ մորթին պետք է լինի ձմռամտին, մազափոխությունից հետո։*



Նկ. 37 Հիվանդ և աննորմալ մեծացած ճագարների մարմնի մասերը

Աղվամազի հաստությունը։ *Աղվամազավորի մորթին պետք է լինի կամ մաքուր սպիտակ գույնի կամ այլ հավասար, միապաղաղ գույնի։ Մազերի յերկարությունը՝ 9—10 սանտիմետրից վոչ պակաս։ Աղվամազը պետք է քնքույշ լինի, մետաքսանման, խիտ և ալիքավոր (միջին չափի ալիքներ), իսկ կոպիտ և յերկար ու դուրս ցցվող մազերը վորքան կարելի յե սակավ։ Մորթու վրա խճճված ու թաղիք դարձած մազեր չպետք է լինեն։ Յերբ աղվամազը ճագարի կռնակի վրա բաժանվում է յերկու մասի, դա նշան է, վոր մորթին բավական խիտ չէ։*

Ճագարների ծագման ու պտղյունության վրա այստեղ կանգ չենք առնում, վորովհետև այդ խնդիրների մասին վերեվում արդեն բավական խոսվել է։

ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ

Թե սերունդ ստանալու համար, ինչպե՞ս պետք է կազմակերպել եգ ու վորձ ճագարների պարբերական հանդիպումը ճագարաբուծության զանազան սիստեմներում, մանրամասն ասված է արդեն այդ սիստեմների մասին խոսելու ժամանակ։ Այստեղ կանգ առնենք փոքր ինչ զուգավորման վերաբերյալ մի քանի լրացուցիչ խնդիրների վրա։

Ճագարները սեռական արթնացման նշաններ են ցույց տալիս շատ ավելի առաջ, քան փաստորեն ընդունակ են սերունդ առաջ բերելու։ Եգերը 3—4 ամսական հասակում, իսկ վորձերը 4—5 ամսական հասակում արդեն պարզորեն փոխադարձ ձգտումներ են արտահայտում և հենց այդ պատճառով էլ նրանց անհրաժեշտորեն, այդ ժամանակ բաժանում են միմիանցից, վորպես զի նրանք ուժերը իզուր չվատնեն ու չկորցնեն իրենց սեռական արտադրողական ընդունակությունները։ Փորձը ցույց է տվել, վոր ճագարի մանր տեսակների սեռական հասունության շրջանն սկսվում է 6—7 ամսականից, միջակ տեսակները՝ 8—9 ամսականից, իսկ խոշոր տեսակներինը՝ 9—10 և նույն իսկ 12 ամսականից։

Եգի սեռական հասունությունն արտաքին նշաններով դժվար է վորոշել. յեթե նրա մարմինն ամրացած է, ձևակերպված և իր տեսակին համապատասխանող հասունության հասակը յեկել է, ուրեմն կարելի յե թողնել զուգավորման։ Իսկ վորձերն հասունացած են համարվում այն ժամանակ, յերբ նրանց ձվիկներն իջած են վայր և անպայման շոշափվում են ձեռքով։

Հասունացած և առողջ վորձերն ընդհանրապես շատ վավաշկոտ են լինում և կարելի յե ասել, միշտ պատրաստ են զուգավորման։ Սակայն առողջապահական պայմանները պահանջում են չշահագործել վորձի սեռական յեռանդը, նրան ավելի յերկար ժամանակ և ավելի նպատակահարմար կերպով ոգտագործելու համար։ Նորմալ է համարվում, յերբ վորձը զուգավորվում է 10—12 եգի հետ և կատարում է որական մի սեռական ակտ։ Ծայրահեղ պարագային պետք է թույլ տալ մի որում յերկու ակտ և այդ դեպքում անհաժեշտ է հետեվյալ որը հանգիստ տալ նրան, ույժերը վերականգնելու համար։

Զուգավորման արձակելուց առաջ, պետք է տնտղել վորձի սեռական որգանները և ավելորդ կարմրություն, պզուկներ, վերքեր ու հիվանդության այլ նշանները նկատելու դեպքում, թողնել նրան հանգիստ, փոխարինելով նրան ուրիշ վորձով։

Զուգավորման վերոհիշյալ պայմանները կատարող տնտեսությունները, յեթե ի հարկե միաժամանակ հետեվում են նաև կանոնավոր խնամքին ու կերակրման, կարողանում են լավ վորձերին ոգտագործել

վորպես արտադրողների՝ մինչև 3 և նույն իսկ 4 տարեկան հասակը, առողջ և կենսընդունակ սերունդ ստանալով նրանցից:

Եգ ճագարները զուգավորման վորոշ շրջաններ ունեն, վորոնք առաջ են գալիս ամիսը մեկ անգամ, իսկ յերբեմն՝ ավելի հաճախ: Այդ կրկնվող շրջանները կոչվում են «ցանկության» շրջաններ և տևում են սովորաբար 4—5 որ: Ցանկության այդ շրջանի նշաններն այն են, վոր եգի սեռական օրգանի շրթերն ուռչում են և վարդագունանում, անասունն անհանգստություն ու կամակորություն է ցույց տալիս, յերբեմն հրաժարվում է ուտելուց և խոտով ու հարդով բույն շինելու փորձեր է կատարում:

Գարեննի կիսաբնական պայմաններում, եգ ու վորձ միասին ապրող ճագարները զուգավորման խնդրում ազատ են ու իրենց կամքին հանձնված: Յերկու սեռի ներկայացուցիչները, ղեկավարվելով սեփական բնազդներով, հանդիպում են միմյանց, զուգավորվում ու նորից բաժանվում իրարից՝ մինչև հետևյալ պատահական հանդիպումը: Գարեննում մարդն անկարող է ղեկավարել ճագարների սեռական կյանքը:

Բայց ճագարաբուծության մյուս բոլոր սիստեմներում և մանավանդ արհեստական սիստեմներում, մարդու կամքը վճռական դեր է խաղում զուգավորման խնդրում: Նախ և առաջ մարդն է վորոշում, թե վոր եգը վոր վորձի հետ պետք է զուգավորել՝ ցանկացած սերունդն ստանալու համար: Յեվ այդ դեպքում, եգին վորձի մոտ բերելով, թողնում են նրան այնտեղ՝ մինչև սեռական ակտի կատարումը: Այստեղ տեղն է հիշատակելու, վոր պետք է անպայման եգին տանել վորձի մոտ, վորովհետև յերբ վորձին են տանում եգի մոտ, նա ընկնելով նոր, իրեն անծանոթ պայմանների մեջ, մոլորվում է ու խեղճանում և բավական ժամանակ է պետք, վորպեսզի նա ընտելանա միջավայրին ու ինքն իրան հավաքի: Ինչպես նկարագրել ենք վերևում, պարկետի և բլինդաժի սիստեմներում, վորձին արձակում են եգերի մոտ 10—12 որով և կրկին բռնում ու առանձնացնում նրան իր տեղը: Սակայն շատ ավելի նպատակահարմար է այդ սիստեմներումն ել եգերին տանել վորձի մոտ:

Մարդն է վորոշում նաև թե առհասարակ յերբ, այսինքն տարվա ինչ ժամանակ է կատարվելու զուգավորումը, համաձայնեցնելով այդ՝ տնտեսական նպատակահարմարության: Գարեննում իրենց կամքին հանձնված ճագարների սերունդներն աշխարհ են գալիս, այսպես ասած, առանց հերթի ու կարգի: Տարբեր ժամանակ ծնված ճագարները տարբեր ժամանակ ել մեծանում են, մանր ու խոշոր ճագարները խառնվում են իրար ու, այդ պատճառով, մորթելու ժամանակ, դժվար է լինում ջոկջոկել հասունացած ճագարներին: Թե առողջապահական և թե տնտեսական նպատակահարմարությունը թելադրում է այնպես կազմակերպել ճագարների զուգավորումը, վոր նրանք ծնեն վոչ ավելի

քան տարեկան չորս անգամ և, բացի դրանից, ծնելուց հետո վորոշ, քիչ թե շատ յերկարատև ընդմիջում ունենան հանգստանալու և ուժերը վերականգնելու համար: Համաձայն այդ նկատառման, ճագարաբուծության այն բոլոր սիստեմներում, վորտեղ հնարավոր է մարդու անմիջական ազդեցությունը, զուգավորումը դասավորում են մոտավորապես հետևյալ ժամկետներով:

Աղյուսակ № 11

Զուգավորումը	Ձագերի ծնումը	Մորից կտրելը
Փետրվարի 15-ին	Մարտի 15-ին	Ապրիլի 30-ը
Մայիսի 1-ին	Հունիսի 1-ին	Հուլիսի 15-ը
Հուլիսի 16-ին	Ոգոստոսի 15-ին	Սեպտեմբերի 30-ը
Հոկտեմբերի 1-ին	Նոյեմբերի 1-ին	Դեկտեմբերի 15-ը

Այսպիսով ուրեմն, մի զուգավորումից մինչև մյուսը, անցնում է մոտ 75 որ, վորից 30 որը հղիության շրջանն է, իսկ 45 որը ձագերին մոր կաթով կերակրելու շրջանը: Ինչպես տեսնում ենք, վերջին անգամ ճագարը ծնում է նոյեմբերի 1-ին և ազատվում ձագերին կերակրելուց դեկտեմբերի 15-ին: Այդ որվանից մինչև հետևյալ տարվա փետրվարի 15-ը, այսինքն 60 որ, մայր ճագարը մնում է ազատ ու հանգստանում: Ցուրտ վայրերում, վորտեղ ճագարները, կլիմայական պայմանների պատճառով, փաստորեն ծնում են վոչ ավելի, քան տարեկան 3 անգամ, նմանապես և զտարյուն ճագարներ պահող տնտեսություններում, վորտեղ, արժեքավոր մայրերի առողջությունը պահպանելու նպատակով, նույնպես 3 ծնունդից ավելի չեն թույլ տալիս, զուգավորումը դասավորում են հետևյալ կերպով.

Աղյուսակ № 12

Զուգավորումը	Ձագերի ծնունդը	Մորից կտրվելը
Մարտի 1-ին	Ապրիլի 1-ին	Մայիսի 15-ը
Մայիսի 15-ին	Հունիսի 15-ին	Ոգոստոսի 1-ը
Ոգոստոսի 1-ին	Սեպտեմբերի 1-ին	Հոկտեմբերի 15-ը

Այս դեպքում մայր ճագարն զբաղված է ձագերի արտադրությամբ և նրանց իր կաթով կերակրելով $7\frac{1}{2}$ ամիս: Հոկտեմբերի 15-ից մինչև հետևյալ տարվա մարտի 1-ը (4—5 ամիս) նա մնում է, այսպես ասած, անգործ ու վերականգնում է իր ուժերը: Հասկանալի

չէ իհարկե, որ զուգավորման մեր ցույց տված ժամկետները պարտադիր չպետք է համարվեն բոլոր տնտեսությունների համար, որոնք իրենց տեղական կլիմայական պայմանների համեմատ, կարող են հետ ու առաջ տանել զուգավորման ժամանակը։

Յերբեմն եգ ճագարների ցանկության շրջանը չի զուգադիպում մարդու նշանակած ժամանակին։ Այդպիսի պարագայում դիմում են բանի զուգավորման և կամ եգին, 2—3 օր շարունակ, թողնում են որձի հետ, որը հարմար րոպե գտնելով, անպայման գլուխ է բերում զուգավորումը։

Առհասարակ զուգավորման հաջող ավարտումը որոշվում է նրանով, որ որձն, ուժասպառ յեղած, եգի վրայից ընկնում է ցած և մի քանի վարկյան մնում անշարժ կողքին փռված։ Հաճախ ընկնելուց առաջ որձը շվոց (ճիչ) է արձակում։

Շատ ճագարաբույծներ կարծելով որ մի զուգավորումը չի ապահովում եգի բեղմնավորումը, անպայման կազմակերպում են յերկրորդ զուգավորումը։ Փորձը ցույց է տվել սակայն, որ առհասարակ մի անգամվա զուգավորումների խոշորագույն մասն հասնում է նպատակին։ Իսկ յեթե ճագարաբույծներն անհրաժեշտ են համարում կրկնակի զուգավորումը, պետք է սարքեն այդ անմիջապես, առաջին զուգավորումից 1—2 ժամ հետո։ Յերբ յերկրորդ զուգավորումն ուշացնում են, շատ անգամ, արդեն հղիացած ճագարը, շնորհիվ իր օրգանիզմի առանձին կազմության (յերկու արգանդ), յերկրորդ անգամ է բեղմնավորվում։ Դրա հետևանքը վտանգավոր է ճագարի համար և հաճախ մահ է պատճառում նրան։

Պատահում է, որ եգը, ցանկության շրջանն ապրելով, անձնատուր չի լինում որձին և ամեն կերպ խուսափում է զուգավորումից։ Այդպիսի դեպքերում նույնպես թողնում են նրան որձի մոտ մեկ յերկու օր։ Իսկ յեթե այդ չի օգնում, մերժված որձին փոխում են ու խնդիրը բարեհաջող լուծում է ստանում։ Բայց որովհետև յերկրորդ որձը, եգի վրայից առաջին որձի հոտն առնելով, կատաղում է և սկսում գզգզել եգին, սովորաբար նախորոք յերկրորդ որձի բուրդը քսմսում են եգին ու այդպիսով ծածկում առաջին որձի հետքերը։

Պատահում է, որ որձն էլ չի մոտենում եգին և զուգավորման ձգտում բոլորովին չի արտահայտում։ Յեթե որձը պառավ կամ հիվանդ չէ, ուրեմն այդպիսի յերևույթը պետք է բացատրել նրանով, որ նրա սեռական յեռանդը շահագործման է յենթարկված՝ հաճախ զուգավորման ստիպելով։ Լավ է իհարկե, հոգնած ու թույլ որձին փոխարինել մի ուրիշ, առույգ ու յեռանդուն որձով։ Իսկ յերբ այդպիսին չի լինում ձեռքի տակ, թմրած որձին յեռանդի բերելու համար մի քիչ համեմ (պետրուշկա) և կամ լախուր (սելդերեյ) են տալիս նրան ուտելու, որոնք գրգռում ու կենդանացնում են նրան։

ՀՂԻՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս չի գտնված մի միջոց, որով կարելի լինի հաստատապես որոշել, հղիացե՞լ է ճագարը թե ոչ։ Ոմանք ասում են, որ յեթե ճագարը, զուգավորումից հետո, սովորականից ավելի յե պառկում և անհանգստացնելու դեպքում, ջղայնության նշաններ է ցույց տալիս, դա նշանակում է, որ՝ նա հղի յե արդեն։ Ոմանք յենթադրում են, թե հղիության ամենալավ նշանն այն է, յերբ ճագարն սկսում է բուն շինելու մասին հոգալ։ Ոմանց կարծիքով էլ յեթե եգ ճագարը, մի զուգավորումից հետո, այլևս չի ընդունում որձին և ամեն կերպ խույս է տալիս նրանից, դա հղիության նշան է։

Սակայն այս բոլոր նշանները հաճախ խաբուսիկ են լինում և բոլորովին չեն արդարացնում մարդու սպասելիքները։ Ճագարի հղիությունն հաստատապես պարզվում է միայն զուգավորումից 20—25 օր հետո, յերբ ձագերը մոր արգանդում այնքան են մեծանում, որ կարելի յե լինում դրսից ձեռքով շոշափել նրանց։ Բայց այսպիսի ստուգումներից պետք է խուսափել, որովհետև անզգույշ շոշափումներն հաճախ վնաս են բերում թե մորը և թե մանավանդ սերնդին։



Նկ. 38 Զգույշ շոշափումով կարելի յե որոշել ճագարի հղիությունը

Առհասարակ հղի ճագարներին պետք է վերաբերվել քնքշորեն և տեղի անտեղի չանհանգստացնել նրանց։ Անսպասելի աղմուկը և վախ առաջ բերող յերևույթները շատ վատ են ազդում նրանց վրա և կարող են վաղաժամ ծնելու պատճառ դառնալ։ Այս տեսակետից, կիսաբնական սիստեմներում ապրող ճագարներն անկասկած գտնվում են ավելի բարենպաստ պայմաններում. նրանք, իրենց կամքին հանձնըված լինելով, ցանկացած ժամանակ մտնում են գետնի տակ և կտրը-

վում դրսի աշխարհից։ Այստեղ պետք է հետևել, վոր մոտիկ տեղերում, խլուր հրացանաձգություն չլինի և կամ գազազած շներն իրենց հաջոցով չվախեցնեն ճագարներին։ Արհեստական սիստեմներում պետք է բոլոր միջոցներ ձեռք առնվեն հղիության շրջանն առանց ցնցումների անցկացնելու համար։ Վանդակները մաքրելիս և կեր ու ջուր տալիս, անհրաժեշտ է մոտենալ ճագարներին հանդիստ շարժումներով, և տեղի անտեղի չհանել նրանց վանդակից։ Իսկ այն դեպքում, յերբ անհրաժեշտ է լինում վերցնել ճագարին իր տեղից, պետք է բռնել վոչ թե ճագարի ականջներից (դա բարբարոսություն է), այլ կռնակի կաշուց (վզից), (ինչպես ցույց է տված № 39 նկարում), իսկ մյուս ձեռքով միաժամանակ դեմ տալով ճագարի վոտքերին։

Սովորաբար հղի ճագարները ծնելուց մի քանի որ առաջ (յերբեմն մի քանի ժամ առաջ) բույն են պատրաստում սպասվող ձագերի համար վանդակի մի անկյունում և կամ ծննդարանում։ Նրանք կակուղ խոտ և հարդ հավաքելով, կույտ են կազմում և ապա սեփական կրծքից աղվամազ պոկպոկելով, փռում են այդ կույտի վրա։ Կիսաբնական սիստեմներում ապրող ճագարները այդ բույնը շինում են գետնի տակ և մարդն անկարող է խառնվել այդ գործին։ Իսկ վանդակում ապրող ճագարներին շատ անգամ անհրաժեշտ է լինում մարդու ոգնությունը, վորովհետև յերբեմն յերիտասարդ, առաջին անգամ ծնող ճագարները, չեն կարողանում բույնը ժամանակին պատրաստել և կամ այնպես են շինում բույնը, վոր նա չի տեղավորում ձագերին։ Այդ նպատակի համար անհրաժեշտ է, որ առաջ, հավաքել այս ու այն կողմ թափված աղվամազն ու պահել։

Նկ. 39 Ճագարին վերցնելիս, պետք է բռնել նրա վզի կաշվից

Կարևորագույն խնդիրներից մեկն է հղի ճագարի կանոնավոր կերակրումը։ Կերի որաբաժինների մասին վերեվում արդեն ասված է մանրամասնորեն։ Այստեղ հիշեցնենք միայն այն, վոր հղի ճագարի համար անհրաժեշտ է նախ ընտրել կերի սննդարար ու դյուրամարս տեսակները և յերկրորդ՝ ուժեղացնել կերի այն տեսակները, վորոնք հարուստ են սպիտակուցային և հանքային նյութերով։ Հանքային նյութերը (գլխավորապես կալցին) մեծ չափով նպաստում են արգանդում գտնվող սերնդի արագ զարգացման և մանավանդ կմախքի կազմելուն։ Հղիության վերջին շրջանում պետք է որաբաժնին ավելացնել կերի այնպիսի տեսակները, վորոնք նպաստում են կաթ առաջանալուն (գա-

զար, ճակնդեղ և այլն). իսկ ծնելուց մի քանի որ առաջ պետք է կերի որաբաժնից բոլորովին դուրս ձգել վարսակը և կարելույն չափ հետևել, վոր ճագարները ստամոքսի ամրություն չունենան։ Հղիության ամբողջ ընթացքում և մանավանդ վերջին շրջանում պետք է հետևել, վոր անասունը ջրի պակասություն յերբեք չզգա։

Հղիությունը սովորաբար տեվում է 30—32 որ, բայց լինում են դեպքեր, յերբ ճագարները ծնում են բեղմնավորմոն 33 րդ և նույնիսկ 35-րդ որը։

ԾՆՈՒՄԸ

Ճագարը, ծնելու ժամանակ, սիրում է մենակ լինել և ամեն կերպ աշխատում է առանձնանալ։ Կիսաբնական սիստեմներում ապրող ճագարներն, համարյա առանց բացառության, մեկուսանում են իրենց բներում և ծնում գետնի տակ, մարդու աչքից հեռու։ Վանդակում ապրող ճագարները քաշվում են նրա մութ անկյունը կամ ծննդարանը, յեթե այդպիսին կա վանդակում. այդ ժամանակ շատ ոգտակար է նույնիսկ վարագույրով ծածկել վանդակի լուսամուտը։ Անկախ ծնվող ձագերի քանակից, ծնումը տևում է 1—$1^1/_2$ ժամ և միմիայն բացառիկ դեպքերում, ձգձգվում է 30—40 ժամ։ Այդ ժամանակամիջոցում մարդը վոչ մի բանով ոգնել ճագարին չի կարող և լավ է, յեթե նա բոլորովին չխառնվի ու թողնի անասունին մենակ։

Սովորաբար ճագարը ծնում է իր շինած բնի կողքին, ապա լիզելով ու մաքրելով ձագերին, մեկ առ մեկ հրում է նրանց մռութով ու տանում տեղավորում բոլորին բնի մեջ և ծածկում նրանց աղվամազով։ Յերբեմն լինում են դեպքեր, յերբ, ծնելուց անմիջապես հետո, մայրն ուտում է իր ձագերին։ Այդ յերևույթը շատերը բացատրում են նրանով, վոր ճագարը, ծնելու ժամանակ, սաստիկ ծարավ է զգում և վորովհետև նորածին ձագերին լիզելիս, հաճախ պոկում է նրանց նուրբ կաշին և ակամայից ծծում նրանց արյունը, այլևս չի կարողանում իրեն զսպել և, ծարավը հագեցնելու համար, շարունակում է անհագորեն խմել արյունն ու, արյան հետ միասին, լափում է նաև կենդանի ձագերին։ Վորովհետև այս յենթադրությունը շատ հավանական է, անհրաժեշտ է հետևել, վոր վանդակում ապրող ճագարները, ծնելու ժամանակ, առատ ջուր ունենան իրենց մոտ։

Ս. Վոլկոնսկին այս յերևույթը բացատրում է այլ կերպ։ Նա ասում է. «ճագարն ուտելով իր ձագընկերը, շատ անգամ չի կարողանում տարբերել ձագերը ձագընկերից և, տաքության մեջ լինելով, լափում է նաև ձագերին։ Այս կարծիքն ամենից ավելի հավանական է, վորովհետև ծնելու ժամանակ ճագարի տաքությունն հասնում է 42 աստիճանի»։

Կա նաև այն կարծիքը, որ ճագարն ուտում է իր ձագերին որևէ բանից սաստիկ վախենալու դեպքում, երբ նրան թվում է, որ ձագերին վտանգ է սպառնում։ Երբեմն մայրն ուտում է ձագերին, երբ նրանք խիստ ցավ են պատճառում պտուկները ծծելիս և այլն։

Այսպես թե այնպես, այս վատ երևույթը գոյություն ունի և երբեմն զգալի վնաս է պատճառում մանավանդ թանգարժեք, ցեղային տեսակները պահող ճագարաբուծական տնտեսություններին։ Մարդը կարողանում է միջամտել ու ազատել ձագերին միայն այն դեպքում, երբ վրա է հասնում իսկույն և յեթ և բռնի ուժով բաժանում է մորը ձագերից։ Այդպիսի դեպքերում մորը տեղավորում են առանձին վանդակում, իսկ ձագերին պահում են որևէ տաք տեղում, կերակրում նրանց արհեստական միջոցով և կամ ժամանակավորապես հանձնում են ծծմոր դեր կատարող մի ուրիշ ճագարի։ Երբ 1—2 օրից հետո, ձագերին վերադարձնում են իրենց մորը, նա սովորաբար քընքշությամբ է ընդունում նրանց և խնամում է ու մեծացնում ինչ պես հարկն է։

Այս վնասակար երևույթի դեմ կռվելու (մանավանդ երբ նա կրկնվում է) ամենալավ միջոցը հենց իրենց ձագերին ուտող ճագարներին վոչնչացնելն է, վորովհետև նկատված է, վոր այս վատ ձգտումը շատ անգամ փոխանցվում է սերնդից սերունդ։

ՁԱԳԵՐԻ ԶՏՈՒՄԸ

Փորձն հաստատապես ցույց է տվել, վոր վորքան ձագերի քանակությունը փոքր է, այնքան մայրն ավելի լավ է կերակրում ու խնամում նրանց։ Երբ ձագերի քանակությունը գերազանցում է մոր պտուկների թվին (նրանք լինում են սովորաբար 8 հատ), ձագերի մի մասը (թույլերը) մշտականապես կիսաքաղց է մնում։ Երբ ձագերը շատ են, մոր օրգանիզմը չի կարողանում բավարար քանակությամբ կաթ հասցնել նրանց բոլորին։ Այս հանգամանքները զըրկելով ձագերին կանոնավոր զարգանալու հնարավորությունից, միաժամանակ վնասում են մորը, ուժասպառ անելով նրան։

Լավ սերունդ առաջացնելու նպատակով շատ անգամ անհրաժեշտ է լինում ձագերի քանակությունը պակասեցնել։ Ծնունդից 6—8 ժամ հետո, մորը ժամանակավորապես հեռացնում են ձագերից և զննելով նորածիններին, վոչնչացնում են նրանցից ամենանվազներին ու թույլերին, թողնելով մոր մոտ վոչ ավելի՝ քան 5—7 ձագ։ Դուրս են ձըգում միաժամանակ ի հարկե նաև սատկածներին։ Սակայն պետք է ասել այստեղ, վոր ձագերի զտումը կատարելու համար վորոշ հմտու-

թյուն է պահանջվում. հաճախ անփորձ ճագարաբույծները թույլերի փոխարեն լավերին են վոչնչացնում։

Զտայրուն թանգարժեք ճագարներ պահող տնտեսություններին խորհուրդ է տրվում նույնիսկ թողնել մոր տակ վոչ ավելի՝ քան 3—4 ձագ, վորպեսզի առողջ ու կենսունակ սերունդ ստանալու խնդիրը հաստատապես ապահովված լինի։

Վորպեսզի ակներև լինի, թե ինչ նշանակություն ունի ձագերի քանակությունը նրանց զարգացման համար, ավելորդ չենք համարում մեջ բերել այստեղ հետևյալ տեղեկությունը։

Հատուկ փորձեր են կատարվել 10 եգ ճագարի վրա, վորոնցից 5-ը կերակրել են ու մեծացրել 5-ական ձագ, իսկ մնացած 5-ը՝ 9-ական ձագ։ Փորձը կատարվել է 2 տարի շարունակ, վորի ընթացքում այդ ճագարները տվել են 6 սերունդ (տարեկան 3 ծնունդ)։ Եվ վորպեսզի արդյունքները չվերագրվեն ծնողների դրական ու բացասական հատկություններին, ամեն մի ծնունդից հետո, փոփոխության է յենթարկվել տվյալ ճագարի մոտ գտնվող ձագերի քանակը, այսինքն այն ճագարները, վորոնք մի անգամ կերակրել են 5 ձագ, հետևյալ անգամ կերակրել են 9 ձագ, իսկ այն ճագարները, վորոնք մի անգամ կերակրել են 9 ձագ, հետևյալ անգամ կերակրել են 5 ձագ և այլն։ Այս փորձը ցույց է տվել, վոր երբ ձագերի քանակությունը փոքր է, նրանք զգալի չափով ավելի արագ են մեծանում ու զարգանում։ Ահավասիկ այդ փորձերի համառոտ արդյունքները։

Աղյուսակ №13

Ճագարի հասակը	Մոր մոտ թողնված է 5 ծագ 1 ձագի քաշը	Մոր մոտ թողնված է 9 ձագ 1 ձագի քաշը
3 ամսական	2000 գրամմ	1600 գրամմ
4 ամսական	2600 »	2050 »
5 ամսական	3400 »	2400 »
6 ամսական	3760 »	2900 »

Կիսաբնական սիստեմներում ձագերի զտում անհնարին է կատարել, վորովհետև այնտեղ ճագարը ծնում է գետնի տակ, բնի մեջ։ Հենց դա յե այն բանի պատճառներից մեկը, վոր գարեննում, պարկերում և խրամատում ապրող ճագարները հետզհետե մանրանում են և անհրաժեշտություն են առաջ բերում փոխարինել հին վորձերը նոր, ավելի խոշոր վորձերով։

Կիսաբնական սիստեմներում անհնարին է նաև դուրս ձգել մոր տակից սատկած ձագերին, վորոնք մնալով նեղ բնի մեջ, պետք է վոր հոտեն, նեխեն օդը և անհնարին դարձնեն ճագարի կյանքն այնտեղ։

Այս խնդիրը մեծ մտահոգություն է պատճառում կիսաբնական սիստեմների կողմնակիցներին, վորոնք ամեն կերպ աշխատում են պարզել, թե ինչպե՞ս են վարվում այդպիսի դեպքերում գետնի տակ ապրող վայրի ճագարները։ Վոմանք պնդում են, վոր կիսաբնական սիստեմներում ճագարներն իրենք են դուրս գցում բնից սատկած ձագերին։ Դա շատ հավանական է։ Այս գրքի հեղինակն իր աչքերով տեսել է այդպիսի մի դեպք Սալտիկովկայի խորհտնտեսությունում 1930 թվի ապրիլ ամսին։

ԾԾՄԱՅՐԵՐԸ

Ծծմայրերի կարիքն այն ժամանակ է առաջ գալիս, յերբ մայր ճագարը, հիվանդ լինելու պատճառով և կամ բավարար քանակությամբ կաթ չունենալով, անընդունակ է լինում կերակրելու իր ձագերին, յերբ ձագերը չափազանց շատ են լինում քանակով է և նրանց զտելն ու վոչնչացնելն աննպատակահարմար է համարվում, յերբ վերջապես, մայր ճագարը, ինչ-ինչ պատճառով, սատկում է ու վորբ թողնում ձագերին և այլն։ Այդ բոլոր դեպքերում (մանավանդ զտարյուն ճագարներ պահող տնտեսություններում), անհրաժեշտ է լինում անխնամ մնացած ձագերին տեղավորել մի ուրիշ, առատ կաթ ունեցող և կամ ձագերին կորցրած մայր-ճագարի մոտ։

Այդ նպատակի համար նախ ծծմորն հեռացնում են բնից, ոտար ձագերին բերում են դնում բնի մեջ նրա հարազատ ձագերի մոտ և 1—2 ժամ անցած, նորից բերում են մորն իր տեղը։ Բայց վորովհետև ճագարներն, ոտար ձագերի հոտն առնելու դեպքում, կատաղում են ու վոչնչացնում նրանց և, յերբեմն, միաժամանակ նաև իրենց հարազատ ձագերին, անհրաժեշտ է ձագերի այդ տեղափոխումը կատարել հմտությամբ ու մեծ զգուշությամբ։ Ոտար ձագերին նախորոք պետք է մաքրել ու փաթաթել ծծմոր վանդակից վերցրած աղվամազով ու թողնել այդպես առնվազը 1—$1^1/_2$ ժամ։ Բացի դրանից, տեղափոխման ժամանակ, պետք է տեղավորել ձագերին բնի մեջ վոչ թե բոլորին միասին, այլ մեկ առ մեկ, վորոշ ընդմիջումներով և աչալուրջ կերպով հետևել ծծմոր վարքին։ Այս գործը կատարող մարդու ձեռքերը պետք է մաքուր լինեն, վորովհետև, յերբ ձագերի վրայից ծխախոտի կամ սապոնի հոտ է գալիս, դա վատ հետևանք է ունենում ձագերի համար։ Յերբ ճագարը խաբվում է և ընդունում ոտար ձագերին, այնուհետև նա բարեխղճորեն կերակրում է ու խնամում նրանց, իրեն հարազատներին հավասար։

Նկարագրածս միջոցը, վորը վաղուց արդեն հաջողությամբ գործ են ածում անհատական ճագարաբույծները, հարմար չէ խոշոր տն-

տեսությունների համար, վորտեղ հաճախ հարյուրավոր անխնամ ձագեր են լինում և նրանց այս միջոցով տեղավորելն ահագին ժամանակ և ուշադրություն է պահանջում։

Ճագարաբուծական խոշոր տնտեսությունների համար անշուշտ ավելի հարմար է Ս. Վոլկոնսկու առաջարկած հետևյալ միջոցը։ Վորովհետև պարզված է հաստատապես, վոր ճագարն ոտար ձագերին կարողանում է ճանաչել միայն հոտառությամբ, ուրեմն պետք է ոգտագործել այնպիսի մի միջոց, վորը ժամանակավորապես զրկի նրան հոտառությունից։ Այդ միջոցը՝ կամֆարայի յուղն է, վորը հրաշալի ծառայություն է մատուցում այս խնդրում։ Յերբ այդ յուղից 2—3 կաթիլ կաթեցնում են ճագարի քթածակերը, նա մի քանի ժամ շարունակ բոլորովին կորցնում է հոտառությունն ու ամենայն հեշտությամբ ընդունում ոտար ձագերին և շուտ ընտելանում նրանց։

Ճագարների տեսակների մեջ ամենալավ ծծմայրություն անողներն են համարվում «Հավաննը», «Սեահուրը» և այլն։ Սակայն կարևոր ենք համարում շեշտել այստեղ այն, վոր ծծմայրության համար անհրաժեշտ չէ անպայման գործադրել ցեղային ճագարներին։ Այդ դերն ամենայն հաջողությամբ կատարում են հաճախ և հասարակ ճագարները։ Այն կարծիքը, թե հասարակ ճագարները հարմար չեն ծծմայրության համար, վորովհետև նրանք իբր թե իրենց կաթի հետ միասին տալիս են ցեղային ձագերին նաև իրենց վատ հատկությունները, վոչ մի հիմք չունի և բոլորովին սխալ է։

Կիսաբնական սիստեմներում ծծմայրությունն անկարելի յե գործադրել և կարիք էլ չկա։ Այնտեղ մայրերն ու ձագերը խառնվում են միմյանց և անխնամ ձագերի մի մասն ինքն է վորոնում ու գտնում առատ կաթ ունեցող մայր-ճագարներ և կպչում նրանց, իսկ մի մասն էլ (վորբ մնացած նորածիններն ու թույլերը) մնում են անտեր ու վոչնչանում։ Դա անխուսափելի յե և այդ պետք է նախորոք հաշվի առնել։

ԿԵՐԱԿՐՈՂ ՄՈՐ ԽՆԱՄՔԸ

Մայր ճագարի խնամքը ձագերին կերակրելու շրջանում, համարյա վոչ մի բանով չի տարբերվում հղի ճագարի խնամքից։ Քնքույշ և մեղմ վերաբերմունքը դեպի նա անհրաժեշտ պայմաններից մեկն է։ Պետք է ամեն կերպ խույս տալ նրան ի զուր տեղը անհանգստացնելուց և աշխատել յերբեք չվախեցնել նրան, մանավանդ ձագերին կերակրելու ժամանակ։ Վախն, ինչպես ասել ենք արդեն, հաճախ պատճառ է դառնում ձագերի վոչնչացման։ Յերբեք չպետք է ձեռք տալ ձագերին մոր ներկայությամբ. այդպիսի դեպքերում շատ անգամ մայրը բոլորովին դադարում է նրանց կերակրելուց։ Յերբ ձագերին ձեռք

տալն անհրաժեշտ ե լինում, պետք ե անպայման մորը նախորոք առանձնացնել մի ուրիշ տեղ։

Մայր ճագարի կերակրումն ամենակարևոր խնդիրներից մեկն ե, վորովհետև դրանից ե կախված ձագերի առողջությունն ու կանոնավոր զարգացումը։ Կերակրման շրջանում ճագարներին պետք ե տալ, և վորքան կարելի յե շատ, կերի այն տեսակներ, վորոնք առատացնում են նրա կաթը։ Ձմեռները չոր խոտն ու արմատապտուղները (մանավանդ գազարը), իսկ գարունն ու ամառը բացի դրանից նաև առվույտն ու առհասարակ կանաչ խոտը հրաշալի սննդանյութեր են հանդիսանում կերակրող ճագարի համար։ Պետք ե անպայման, բայց չափավոր քանակությամբ, կերցնել ճագարին նաև կերի ուժեղ տեսակներից՝ մանավանդ վարսակը։ Առհասարակ կերակրման արդյունքն անհամեմատ ավելի լավ ե լինում, յերբ ճագարի կերը բաղկացած ե բազմատեսակ սննդանյութերից, վորոնք բարենպաստ ազդեցություն են գործում անասնի ախորժակի վրա, լավացնում ստամոքսի մարսողությունն ու բարձրացնում կաթի արտադրությունը։

Սովորաբար ճագարը կերակրում ե իր ձագերին գիշերները և կամ վաղ առավոտյան, մարդկանց բացակայության ժամանակ։ Յերբ ձագերն առույգ են ու շարժուն, դա նշանակում ե, վոր մոր կաթն առատ ե և ուրեմն նրանք կերակրվում են բավարար չափով։ Իսկ յերբ ձագերը նվաղ են ու դանդաղաշարժ, դա նշանակում ե, վոր նրանց սնունդը պակաս ե և ուրեմն անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առնել նրանց մոր կերն ուժեղացնելու ուղղությամբ։

Լինում են դեպքեր, յերբ ջահել մայրերն առատ կաթ ունենալով հանդերձ, չեն կերակրում իրենց ձագերին։ Այդպիսի մայրերի վերաբերմամբ անհրաժեշտ ե լինում մի փոքր բռնություն գործադրել։ Նրանց պառկեցնում են կողքի վրա և ամուր բռնելով առաջի ու հետևի վոտքերից, մեկ առ մեկ մոտեցնում են նրանց պտուկներին բոլոր ձագերին, վորոնք հաճույքով սկսում են ծծել։ Սովորաբար մի այդպիսի ստիպողական կերակրումից հետո, կամակոր մայրերը կակղում են և այնուհետև իրենք են սկսում կերակրել ձագերին։

Լինում են և այնպիսի դեպքեր, յերբ մայր ճագարն ավելի յե կաթ ունենում, քան հարկավոր ե ձագերին, և ավելորդ կաթը մնալով նրա ծծերում, թթվում ե, փչանում և բարդ հիվանդություն առաջ բերում։ Այդպիսի դեպքերում շատ լավ ազդեցություն ե գործում ծծերի պնդած տեղերի տրորումը (մասաժ), վորը պետք ե կատարել որական 1—2 անգամ։ Տրորելու ժամանակ պետք ե ծծերին փոքր ինչ յուղ քսել։

Կերակրման շրջանում կարևորագույն պայմաններից մեկն ել բնի մաքրությունն ե, վորովհետև այդ շրջանում թե մայրը և թե

ձագերը յենթակա յեն զանազան հիվանդությունների։ Ձագերին առհասարակ ինքը մայրն ե մաքրում պարբերաբար լիզելու միջոցով, իսկ վանդակների մաքրությունն այդ շրջանում մարդու ամենաանհրաժեշտ պարտականությունն ե։

ՁԱԳԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Ճագարի ձագերը ծնվում են փակ աչքերով և բոլորովին մերկ, այսինքն առանց բրդի։ Յեթե մոր կաթն առատ ե և ձագերի քանակությունն ել շատ չե, նրանք, լավ սնունդ ստանալով, մեծանում ու զարգանում են բավականին արագ։ Սովորաբար 7—9 որից հետո նրանց մարմինը սկսում ե ծածկվել քնքուշ մետաքսանման բրդով, իսկ 10—15 որից հետո բացվում են նրանց աչքերը։ 15—17-րդ որից նրանք, մոր կաթի հետ միասին, սկսում են քիչ քիչ համտես անել նաև մորը տրվող կերից, իսկ 20—22-րդ որից նրանք արդեն սկսում են ուտել կերի բոլոր դյուրամարս տեսակները։

Մինչ այդ հասակը, ձագերը վորևե առանձին խնամք չեն պա-
հանջում մարդուց, վորովհետև եգ ճագարները, չնայած արտաքին, թը-
վացող սառնության, մեծ մասամբ քնքույշ ու սիրող մայրեր են հան-
դիսանում և բարեխղճորեն կատարում են իրենց պարտականություն-
ները։ Նրանք թե մաքրում են և թե կերակրում ձագերին, ինչպես
հարկն ե։ Ծիծ տալու ժամանակ նրանք մռութով զգուշությամբ մի
կողմն են քաշում բնի վրա փռված աղվամազն ու մոտեցնում պտուկ-
ները ձագերին, վորոնք հոտառությամբ կաթի մոտիկությունն զգա-
լով, ագահությամբ խլխլում են պտուկներն ու ծծում։ Անհրաժեշտ ե
աչքի առաջ ունենալ, վոր յերբ մայրը, կերակրելու ժամանակ, ինչ
ինչ պատճառով (որինակ վախից) վեր ե ցատկում, նա քաշում ե իր
հետ նաև պտուկներին կպած ձագերին, վորոնք կարող են ընկնել
նրա վոտքերի տակ և տրորվել։

Կիսարնական սիստեմներում ձագերի խնամքը, նրանց ծնված
որից մինչև $1\frac{1}{2}$—2 ամսական դառնալը, ամբողջովին ընկած ե մոր
վրա, և մարդը խառնվել այդ գործին համարյա թե անկարող ե։
«Պարկետում» և «բլինդաժում», սկսած այդ հասակից, հաճախ նույն իսկ
ավելի շուտ մայրը ձեռք ե քաշում ձագերից, վորովհետև նա այդ
ժամանակ նորից ե ծնում և իր ամբողջ ուշադրությունն ու կաթը
տալիս ե նորաշխարհ յեկած սերնդին։ Այդ պատճառով, հենց վոր
ճագարը նորից ե ծնում, մեծացած ձագերի բախտն անցնում ե
մարդու ձեռքը։ Թե ինչպես պետք ե հեռացնել ձագերին մորից, տե-
ղավորել ու խնամել նրանց, ասված ե այդ սիստեմների մասին խո-
սելիս։ Իսկ «գարեննի» սիստեմում ճագարի ամբողջ կյանքը, սկսած

ծնված ժամից մինչև նրա վերջին որը, ընթանում է համարյա առանց մարդու միջամտության։ Այստեղ ձագերը, զրկվելով մոր խնամքից, ստիպված են լինում իրենք իրենց ճարը տեսնել և հարմարվել պայմաններին։

Այլ են պայմաններն արհեստական սիստեմներում։ Այնտեղ մարդը պարտական է շատ շուտ առնել ձագերին իր հսկողության ու խնամատարության ներքո, վորովհետև նրանք, փակված լինելով վանդակի մեջ և կամ պարկետի նեղ սահմանում, անկարող են սեփական ուժերով կեր գտնել։

Արհեստական սիստեմներում մարդու միջամտությունն սկսվում է այն որից, յերբ, ինչպես տեսանք, ձագերն այնքան են մեծանում, վոր հետզհետե սկսում են մասնակից լինել մոր կերին։ Այդ ժամանակվանից արդեն ոգտակար է փոքր ինչ ուժեղացնել նրանց սնունդը կանաչ և չոր խոտին մղեղ կամ փշրած վարսակ խառնելով։ Իսկ յերբ ձագերը դառնում են 1 ամսական, անհրաժեշտ է հատուկ նրանց համար մարսելի կեր դնել վանդակի մեջ, համաձայն նրանց քաշի ու քանակի։ Պետք է աշխատել հետզհետե վարժեցնել ձագերին կերի տարբեր տեսակներին, վորպեսզի նրանք, մոր կաթից կտրվելուց հետո, կարողանան կերակրվել ու ապրել։ Չպետք է մոռանալ աղն ու վոսկրալյուրը։ Թանգարժեք զտայրուն ճագարներին տալիս են նաև ձկան յուղ, վորն արագացնում է ձագերի մեծանալը և միաժամանակ հրաշալի միջոց է վոսկրացավի ու լնդերացավի դեմ։ Ձագերը 4 ամսական հասակում վերջնականապես վարժվում են կերի բոլոր տեսակներին։

Չպետք է մոռանալ յերբեք, վոր յերբ ձագերը, սկզբի շրջանում, լավ չեն կերակրվում և նվաղ են մնում, հետագայում անհնարին է և արդեն վերադարձնել կորուստը։ Բացի դրանից, վորքան ձագերը լավ են կերակրվում, այնքան նրանք ավելի դիմացկուն են լինում հիվանդություններին։

Յերբ ձագերը դառնում են 30—35 որական, մայրը, յեթե մանավանդ նա նորից է հղիացել, սկսում է մի տեսակ ձանձրույթի նշաններ ցույց տալ, հեռացնելով նրանց իրենից։ Այդ ժամանակվանից արդեն պետք է հոգալ ձագերին ծծից կտրելու մասին։ Սակայն այդ խնդրում շտապել պետք չէ, վորովհետև վորքան ձագերը յերկար ժամանակ են սնվում մոր կաթով, այնքան նրանք առողջ ու խոշոր են լինում։ Կերի վոչ մի տեսակը չի կարող փոխարինել մոր կաթին, վորը պարունակում է իր մեջ որգանիզմի զարգանալու համար անհրաժեշտ բոլոր նյութերը։ Հաշված է, վոր յերբ ձագերին կտրում են մոր կաթից մինչև 20 որական հասակը, հետագայում, նրանց 50 տոկոսը սատկում է, իսկ յերբ կտրում են կաթից մինչև 25 որական հասակը, սատկում են նրանցից 25 տոկոսը։ Ծծից կտրելու ամենալավ հասակը 45—50 որական հասակն է։

Ձագերին ծծից կտրելիս կամ մորն են հեռացնում ձագերից, կամ ձագերին մորից։ Փորձը ցույց է տվել, վոր ավելի նպատակահարմար է առաջինը, վորովհետև, յերբ ձագերին են տանում նոր տեղ, նրանք ընկճվում են, յերբեմն հրաժարվում կերից ու նիհարում կամ հիվանդանում են։ Իսկ յերբ մորն են հեռացնում, ձագերը, մնալով իրենց ծանոթ տեղում, ավելի հեշտությամբ են տանում մոր բացակայությունը։ Վանդակից հեռացված մորը սակայն, սկզբի մի քանի որը պետք է գիշերները բերել ձագերի մոտ, վորպեսզի նրա ծծերում հավաքվող կաթը չթթվի ու վնաս չպատճառի նրան։ Սովորաբար 2—4 որվա ընթացքում ձագերը վարժվում են մենակության և բոլորովին մոռանում մորը։

Մորից բաժանած ձագերին, եգ թե վորձ, պահում են միասին, մինչև 3—5 ամսական հասակը, յերբ արթնանում է նրանց մեջ սեռական բնազդը։ Այդ ժամանակ անհրաժեշտ է բաժանել նրանց միմիանցից, տեղավորելով նրանց առանձին պարկետների, վոլյերների և առանձին վանդակների մեջ՝ եգերին փոքրիկ խմբակներով — 4—5-ական, իսկ վորձերին՝ մեկ-մեկ, վորովհետև նրանք այդ ժամանակվանից արդեն կատաղի կռվի յեն բռնվում միմիանց հետ և հաճախ փչացնում միմիանց մորթին։ Վորպեսզի վորձերն ավելի խաղաղ ապրեն իրար հետ և քիչ էլ տեղ (վանդակ) գրավեն, սովորաբար նրանց կրտում են, նախորոք իհարկե ջոկելով նրանց միջից ամենալավերին տոհմի համար, և արձակում պարկետը կամ վոլյերը և կամ խմբերով (2—3-ական) պահում վանդակում։

Ձագերի կանոնավոր խնամատարությունը,—սկսած նրանց 20 որական հասակից մինչև 4 ամսական հասակը, ճագարաբույծի կարևորագույն հոգսը պետք է լինի, վորովհետև նրանց կյանքի այդ շրջանն ամենավտանգավոր ժամանակն է հիվանդություններ ստանալու տեսակետից։ Նրանց վանդակները պետք է մաքրվեն ամեն որ, կամ առնվազը, որը մեջ։ Նկատված հիվանդներին պետք է անմիջապես մեկուսացնել, իսկ նույն վանդակի մնացած ձագերին բաժանել միմիանցից և վանդակը հականեխել։ Միաժամանակ պետք է գործադրվեն հիվանդությունների նախազգուշական բոլոր միջոցները։ Վանդակի մեջ մսուրն այնպես պետք է սարքված լինի, վոր բոլոր ձագերը հավասարապես կերակրվեն և ուժեղները չխանգարեն թույլերին սնունդ ստանալու։ Այդ տեսակետից նպատակահարմար է թույլերին տեղավորել թույլերի հետ, առանձին վանդակում, իսկ ուժեղներին՝ ուժեղների հետ։

Ժամանակ առ ժամանակ պետք է զննել ձագերին և այնպիսիներին՝ վորոնք, իրենց մարմնի անկանոն կազմությամբ, չեն համապատասխանում պահանջներին, ուղարկել մորթելու։

Կարևոր պահանջներից մեկն էլ ձագերի հետ սիրով ու քնքուշորեն վարվելն է. վորպեսզի նրանք շուտով ընտելանան մարդուն ու խույս չտան նրանից: Յերբ ճագարները, կոպիտ վարմունքի հետեվանքով, սկսում են վախենալ մարդուց, բավական բարդանում է նրանց խնամքը և ահագին դժվարություններ են առաջ գալիս նրանց բժշկելիս և մանավանդ զուգավորելու ժամանակ:

ՄԻ ՔԱՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈՐԹՈՒ ԽՆԱՄՔԸ

Լավ մորթի ստանալու համար պետք է հոգ տանել այդ մասին վոչ թե ճագարին մորթելիս, այլ գլխավորապես, նրա կենդանի ժամանակը: Բացի անասուններին կանոնավոր կերակրելուց և նրան առհասարակ մաքրության մեջ պահելուց, անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել նրա մորթու մաքրության վրա: Փորձը ցույց է տվել, վոր յերբ ճագարին կենդանի ժամանակ պարբերաբար սանրում են կամ սրբում խոզանակով, մորթին անհամեմատ ավելի լավն է ստացվում:

Ճագարներին այդ կերպով մաքրելը կրկնակի օգուտ է տալիս. սանրն ու խոզանակը, ազատելով մորթին կեղտից, փոշուց և թեփից, միաժամանակ ուժեղացնում են արյան հոսանքը դեպի մազերի արմատը, վորի հետեվանքով բուրդն ավելի խիտ է բունում:

Մանր տնտեսություններում փոքրաքանակ ճագարներին ձեռքով սանրելն մեկ առ մեկ հնարավոր է ու հեշտ. բայց խոշոր տնտեսություններում բազմաթիվ ճագարներին պարբերաբար սանրելն ու խոզանակելը հեշտ բան չէ, դա ահագին աշխատանք ու ժամանակ է պահանջում: Այդ պատճառով ավելի նպատակահարմար է համարվում հատուկ բարակ մետաղալարե սանրեր և կամ կիսալուսնի ձեվ ունեցող խոզանակներ դնել վանդակներում, վորպեսզի ճագարներն, անց ու դարձ անելիս, քսվեն նրանց ու մաքրվեն: Կիսաբնական սիստեմներում այդ սանրերն ու խոզանակները տեղավորում են այնտեղ, վորտեղով ճագարները մտնում են կեր ստանալու և նրանք ներս ու դուրս անելով, քսվում են ու մաքրվում:

Ճագարների մորթու մաքրելն օգտակար է մանավանդ նրանց մազափոխության ժամանակ, վորն, ինչպես ասված է արդեն, տեղի յէ ունենում տարեկան յերկու անգամ, գարնանը՝ սկսած մարտից, և աշնանը՝ սկսած սեպտեմբերից և կամ փոքր ինչ շուտ և ուշ, նայած կլիմայական պայմաններին:

Ավելի մեծ խնամք ու մաքրություն են պահանջում աղվամազավոր ճագարները, վորոնց մորթին շատ ավելի յէ յենթակա կեղտոտվելու և փչանալու: Խոտի փշրանքները, անասնի աղբը և այլն, կպչելով մորթուն, խճճում են մազերը և թաղիք կազմում, վորի հետեվանքով աղվամազը փչանում է ու անարժեք դառնում: Անգորայի ճագարների մորթին շատերը մաքրում են կեղտոտ մազերը պոկպոկելու միջոցով, սակայն դա նպատակահարմար չէ, վորովհետեվ հաճախակի պոկպոկումը գրգռում է անասնի կաշին և, բացի դրանից, շատ անգամ կեղտոտ մազերի հետ զոհ են գնում և մաքուր մազերը: Մաքրելու ամենալավ միջոցը վոսկրե կամ ալյումինե սանրով սանրելն է, վորը պետք է սկսել անասնի 1—1,5 ամսական հասակից, սկզբում առնվազը 7—8 որը մեկ, իսկ հետագայում գոնե 15—20 որը մեկ: Ճագարները փոքր հասակից սովորելով սանրվելուն, վոչ միայն այլևս չեն դիմադրում, այլ կարծես նույնիսկ հաճույքով ընդառաջ են գալիս:

ՃԱԳԱՐ ՄՈՐԹԵԼԸ

Մորթել բառը այս դեպքում չի սազում, վորովհետեվ ճագարին փաստորեն չեն մորթում, այլ այնպես են մահացնում, վոր նրա մորթին անվնաս մնա: Մահացման մի քանի միջոցներ կան, վորոնցից ամենատարածվածը հետեվյալն է:



Նկ. 40 Ճագարին մահացնելը

Ձախ ձեռքով բռնում են ճագարի հետեվի վոտքերից և գլուխը կախում դեպի ցած, հետո մի անգամ ցնցում են նրան այնպես, վոր նա անշարժ մնա և այդ միջոցին աջ ձեռքում բռնած կլոր տաշված փայտով խփում են նրա վզակոթին: Մի հարվածը բավական է անմիջապես մահացնելու համար: Դրանից հետո, սուր դանակով հանում են ճագարի աչքերից մեկը, և կամ ասեղ կոխում նրա քթածակերից մեկը, նորից ցնցում նրան ու կախում կեռից՝ գլուխը դեպի ներքեվ: Արյունը դուրս է հոսում աչքի կամ քթի միջով և մորթին մնում է բոլորովին մաքուր:

Մորթելու այս միջոցն ամենահեշտն է, սակայն նա ունի մի բացասական կողմ, դա այն է, վոր վզի մորթին, հարված հասցրած տեղում փչանում է և լավ չի մաշկվում:

Մյուս ավելի մշակված միջոցը, հետևյալն է: Ճագարի հետևի վոտքերը մարդն առնում է ծնկների մեջ և ամուր բռնում: Ձախ ձեռքով բռնում է նրա ականջներից և քաշում վեր, դեպի հետ, ապա աջ ձեռքով արագությամբ խրում է նրա քթածակերի մեջ յերկար պողպատե ասեղ: Այս միջոցն էլ վարկենապես մահ է բերում: Դրանից հետո նույնպես մարմինը կախվում է կեռին՝ արնաքամ լինելու համար:

Մորթած ճագարին անմիջապես արնաքամ անելն անհրաժեշտ է, վորովհետև յերբ արյունը յերկար ժամանակ մնում է մարմնում, միսն ավելի շուտ է փչանում: Անհրաժեշտ է դուրս հանել մարմնից նաև միզը, հակառակ պարագային աղիքները հանելիս, միզափամփուշտը կարող է պատռվել և միզը տարածվելով մարմնի մեջ, կարող է անհամացնել միսն ու անհաճո հոտ կպցնել նրան: Արյունը դուրս հոսելուց ու վերջանալուց հետո, վերից վար տրորում են անասնի փորը և դուրս հրում միզը միզափամփուշտի միջից:

Սովորաբար ճագարներին մորթելուց մի որ առաջ դադարում են նրանց կեր ու ջուր տալուց:

ՃԱԳԱՐ ՄԱՇԿԵԼԸ

Ճագար մաշկելու յերկու միջոց կա: Նրանցից լավն այն է, յերբ մաշկում են առանց փորի կաշին կտրելու, այսինքն, յերբ մորթին հանվում է ճագարի վրայից ամբողջովին՝ տկճորի նման: Դրա համար նախ դանակով ճեղքում են հետևի վոտների կաշին, ներսի կողմից, կրունկներից մինչև պոչի տակը ծակեր բաց անելով, բարակ փայտ են խրում նրանց մեջ ու կախում ճագարին կեռին՝ գլուխը դեպի վար: Հետո ճեղքելով կաշին ծնկներից մինչև կրունկները, հանում են մորթու միջից առաջին վոտերը: Հետո կտրում են բկան մոտ, տանելով դանակը դնչի մոտով և աչքերի բոլորքով այնպես, վոր շրթունքները բաժանվեն ծնոտներից և ականջները, քիթն ու բեխերը մնան մորթու վրա: Վերջապես այդ բոլորից հետո, յերկու ձեռքով բռնում են մորթին և շուռ տալով դեպի վար, այսինքն հետևի վոտքերից դեպի գլուխը, հանում են ամբողջ մորթին մարմնի վրայից: Մորթին այս միջոցով հանելիս՝ աշխատում են ձեռքերով և գլխավորապես բթամատի ոգնությամբ: Դանակի աջակցությանը դիմում են բացառիկ դեպքերում:

Մաշկելու յերկրորդ միջոցն համարյա այն է, վորը գործ են ածում վոչխարի մորթին քերթելիս: Հանելով հետևի և առջևի վոտքերը մորթու միջից և կտրելով բկան մորթին իսկ և իսկ այնպես, ինչպես նկարագրված է վերևում, ճեղքում են նաև ճագարի փորի կաշին վերևից վար, կոկորդից մինչև պոչի տակը և դրանից հետո, դանակի ու բթամատի ոգնությամբ, մաշկում են մորթին, քերթելով փորի կողմից դեպի կռնակը:



Նկ. 41 Մորթին մաշկելը

Այս յերկրորդ միջոցով մաշկված մորթին ավելի ցածր է գնահատվում քան ամբողջովին, տկճորի պես հանվածը, վորովհետև վերջինս ավելի լավ է չորացվում և ավելի հեշտությամբ է մշակվում: Անկախ նրանից, թե մաշկելու վոր միջոցն է գործադրվում, պետք է աշխատել վոչ մի կտոր մորթի չթողնել ճագարի վրա, վորովհետև վորքան կաշին մեծ է, այնքան նրա գինն ավելի յե: Ցանկալի յե նույն իսկ, վոր թե առաջի և թե հետևի վոտքերի ճանկերը նույնպես մորթու վրա լինեն, նրանք ոգտագործվում են գլխարկներ և մուֆտիներ կարելիս:

Ճագարին պետք է մաշկել վոչ ուշ, քան մորթելուց մի ժամ անց, հակառակ դեպքում կաշու տակ տեղ-տեղ հավաքված արյունը լաքաներ է թողնում նրա վրա և փչացնում: Դանակ գործածելիս, պետք է այնպես վարվել, վոր մորթին չկտրատվի ու չծակծկոտվի և նրա վրա մսի կտորտանք չմնա:

Առհասարակ ճագարին լավ մաշկելու համար, վորոշ հմտություն է հարկավոր: Պետք է այս գործն հանձնել այնպիսի մարդկանց, վորոնք առանձին ձգտում ու ընդունակություն են ցույց տալիս:

ՄՍԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ճագարի փորը պետք ե մաքրել մորթին հանելուց անմիջապես հետո, քանի դեռ մարմինը չի փայտացել: Նախ ճեղքում են դանակով ճագարի հետևի անցքը, (փորի տակը) և դուրս են թափում ուղիղ աղիքի ու միզափամփուշտի միջի կեղտոտությունները: Դրանից հետո պատռում են փորի վերևի մասն ու կուրծքը՝ մինչև կոկորդը և դուրս հանում բոլոր աղիքները, ստամոքսը, սիրտը, թոքերն ու լյարդը: Կրկնակի զգուշությամբ պետք ե մոտենալ լեղապարկին, վորպեսզի նա չպատռվի և իր անտանելի համը չտա մսին: Յերիկամունքները սովորաբար թողնում են իրենց տեղը:

Տարվա տաք ժամանակը պետք չե լվալ միսը ջրով: Ավելի լավ ե, փորը թափելուց հետո, մի վորոշ ժամանակ կախել միսը քամի շարժվող ստվերոտ տեղում, մինչև վոր բոլոր ճագարները մաքրվեն և տարվեն սառցարան: Իսկ ձմեռներն, ընդհակառակը, նպատակահարմար ե նախ թրջել միսը ջրով և հետո կախել մաքուր ոդում, վորպեսզի նա ծածկվի սառցի թաղանթով: Յերկու դեպքումն ել սիրտը, թոքերն ու լյարդը նորից դնում են փորի մեջ և մարմնի հետ սառեցնում:

Յեթե ճագարի միսն ուղարկում են խոշոր կենտրոնները կամ տեղում հանձնում են վորևե կազմակերպության (կոոպերացիա), այդ դեպքում միսը պատրաստում են հետևյալ կերպով. փորը մաքրելուց հետո, առաջի վոտքերը ծալում են դեպի ներս և կապում կրծքին, իսկ հետևի վոտքերը ձգում են դեպի հետ: Հետո մարմինները շարում են յերեսն ի վար, տախտակի վրա և վերևից մի ուրիշ տախտակ դնելով նրանց վրա, սեղմում են վորևե ծանրությամբ: Մեկ-յերկու ժամ անցած, հանում են տափակ ձև ստացած մարմինները և սառեցնում: Ուղարկելուց առաջ մարմինները մեկ առ մեկ փաթաթում են պերգամենտով (մոմած թուղթ) կամ հարդով և շարում արկղների մեջ

Շատ հեռու տեղ ուղարկելիս, շարում են նաև տակառների մեջ առանց թղթի, մեջ-մեջ մեծ քանակությամբ աղ լցնելով:

Ճագարի մսից բազմատեսակ կերակրներ են յեփում, վորոնք ավելի համեղ են լինում, յերբ միսը գործ ե ածվում մորթելուց մի որ հետո: Կերակուր պատրաստելու միջոցների նկարագրությունը մեզ շատ հեռու կտաներ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում ասել միայն այն, վոր յեփելիս՝ ճագարի մսի հետ այնպես են վարվում, ինչպես հավի մսի հետ:

ՄՈՐԹԻՆ ՉՈՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ճագարին մաշկելուց հետո պետք ե իսկույն և յեթ հոգ տանել մորթին չորացնելու մասին:

Յերբ մորթին հանված ե ամբողջովին, տկճորի նման, նրան չորացնում են կամ մեջը լիքը խոտ լցնելով և կամ հատուկ կաղապարի վրա քաշելով: Խոտով լցնելը տնայնագործական միջոց ե: Խոշոր տնտեսություններում, մեծ թվով մորթիներ չորացնելու համար, ամեն տարի ահագին քանակությամբ խոտ պետք ե ծախսել, ուստի ավելի նպատակահարմար ե կաղապարով չորացնելը:

Կաղապարը ուրիշ վոչինչ ե, յեթե վոչ մի զույգ 70—80 սանտիմետր յերկարություն ունեցող բարակ փայտեր, (8—10 քառ. սանտիմետր), վորոնք իրենց մի ծայրերով միացված են իրար, իսկ մյուս ծայրերով 15—20 սանտիմետր հեռու յեն իրարից և վորոնց միջև, նրանց իրար կապող 1 կամ 2 հատ կարճ փայտեր են ամրացված:

Ճագարի թաց մորթին անց են կացնում այդ կաղապարի վրա այնպես, վոր բուրդը դեպի ներսի կողմը լինի, և հետևի վոտքերը գան կաղապարի լայն կողմը, իսկ առաջի վոտքերն ու գլուխը՝ նեղ կողմը: Անհրաժեշտ ե, վոր փայտերի վրա ընկնեն մորթու կողքերը և վոչ թե փորն ու կռնակը, վորովհետև փորի կաշին ավելի բարակ ե և ձգվելիս կարող ե պատռվել: Կաղապարին քաշելուց հետո, պետք ե մորթին տրորել վերից վար և ուղղել, վորպեսզի վոչ մի տեղ ծալքեր չմնան:



Ա Բ Գ Դ

Նկ. 42 Աջ կողմի նկարը (Դ) ցույց ե տալիս թե ինչպես պետք ե քաշել մորթին կաղապարի վրա, իսկ ձախ կողմի 3 նկարը (Ա. Բ. Գ.) ցույց են տալիս սխալ, անկանոն կաղապարումը:

Ֆերմում պետք ե միշտ բավական քանակությամբ պատրաստի կաղապարներ լինեն, վորպեսզի մորթիները չմնան իրար վրա թափված: Այդ դեպքում նրանք կամ հոտում են ու անպետքանում և կամ չորանում են անկանոն ու անճոռնի ձևերով: Իսկ ծուռ ու մուռ չորացած մորթին հետագայում դժվար ե լինում ուղղելն ու նրանց գինն ավելի ցածր ե լինում:

Կարելի յե ոգտագործել նաև յերկաթե ձողերից շինված կաղապարներ, վորոնք հարմար են այն տեսակետից, վոր գործ են ածվում բո-

լոր չափի մորթիների համար։ Սակայն փայտե կաղապարները, ժամանակակից պայմաններում, ամենանպատակահարմարը պետք է համարել, որովհետև նրանք և արժան են և բավական դիմացկուն և, խնայողաբար վարվելու դեպքում, կարող են օգտագործվել երկար տարիներ։

Սակայն փայտե կաղապարները պետք է պատրաստել զանազան մեծության՝ 2—3 չափի։ Փոքր մորթին մեծ կաղապարի վրա քաշելիս չափից ավելի ձգձգվելով բարակում է, իսկ խոշոր մորթին փոքր կաղապարի վրա ծռմռվում է և ծալքեր տալիս։ Ամերիկայում գործ են ածում զսպանակավոր կաղապարներ, վորոնք նեղացվում ու լայնացվում են ըստ կարիքի և շատ հեշտացնում են գործը։

Երբ մորթին մաշկված է սովորական ձևով (փորը ճեղքված), գործադրում են չորացնելու ուրիշ միջոց։

Փռում են մորթին լայն տախտակի վրա (բուրդը դեպի ներս) և մանր մեխերով ամրացնում են այնպես, վոր նա ուղիղ պառկած լինի։ Մեխելիս մորթին չպետք է շատ ձգձգել. լավ է ամրացնել նախ դեմ առ դեմ մի կողմից, հետո դեմ առ դեմ մյուս կողմից և ապա մեխել մյուս մասերը։

Նկ. 43 Մորթին տախտակի վրա չորացնելու միջոցը

Թե կաղապարով և թե տախտակով չորացվող մորթիների կաշու վրայից անպայման պետք է զգուշությամբ քերթել մսի ու ճարպի մնացորդները։ Ոգտակար է փոքր ինչ տրորել կաշին աղի ու շբի խառնուրդով (կես առ կես)։ Չորանալու համար պետք է կախել մորթիները այնպիսի տեղ, վորտեղ միշտ օդ է շարժվում, վորտեղ արևի ճառագայթները չեն մտնում և վառարան չի վառվում։ Չորացնելու տեղը պետք է վոչ շատ տաք լինի և վոչ էլ շատ ցուրտ։ Մեծ տաքությունից մորթիներն, արագությամբ չորանալով, ճաքճքում են ու կոտրատվում։ Սառած մորթին նույնպես փչանում է։ Բարենպաստ պայմաններում կաղապարած մորթիները չորանում են 4—5 օրվա ընթացքում, իսկ տախտակած մորթիները 8—10 օրվա ընթացքում։

Յեթե մորթիները չորացվում են տարվա տաք ժամանակը, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել նրանց ցեցից, ճանճերից ու այլ միջատներից պաշտպանելու համար։ Ցեցից լավ պաշտպանում է նաֆ-

տալինը, վորը փոքրիկ տոպրակներով պետք է կախել մորթիների կողքին։ Իսկ ճանճերից ու այլ միջատներից պաշտպանելու համար, խորհուրդ է տրվում վերևում հիշված աղի ու շբի խառնուրդի մեջ մի քանի կաթիլ կարբոլյան թթու կաթեցնել։

Չորացած մորթիները վար իջեցնելուց հետո, նրանց վրա տաքացած մաքուր ավազ են փռում՝ բրդին փայլք տալու համար։ Ապա ավազը թափ տալուց հետո, մորթին համարում են պատրաստ՝ համապատասխան մարմիններին (Սոյուզպուշնինա) հանձնելու համար։ Իսկ յեթե, ինչ-ինչ պատճառներով, մորթիները մնում են տնտեսության մեջ, պետք է պահել նրանց հով տեղում, զույգ զույգ փաթաթելով թղթի մեջ (բուրդը բրդին) և նաֆտալին ցանելով նրանց մեջ։

ՃԱԳԱՐՆԵՐԻ ՆՇԱՆ ԴՆԵԼՆ ՈՒ ԳՐԻ ԱՌՆԵԼԸ

Կիսաբնական և մանավանդ վանդակի սիստեմը գործադրող ցեղային ֆերմերը, վորտեղ անհրաժեշտ է լինում խստորեն հաշվի առնել, թե վոր էգը վոր վորձի հետ է զուգավորվել և վոր ճագարը վոր ծնողներից է ծնվել, պետք է ճագարներին այնպիսի նշան դնել, վորը չի մաշվում, չի անհետանում մինչև նրանց կյանքի վերջը։ Նշաններից ամենամնայունը ականջները ծակելն է, վորի համար գործ է ածվում հատուկ մկրատաձև կցմթիչ մեքենա։ Այդ մեքենայի բերանը շարժական համարներ ունի, վորոնք, ըստ կարիքի, տեղափոխվում և դասավորվում են այնպես, վոր կարելի յե ստանալ ամեն մի ցանկացած թիվ։ Սակայն այդ մեքենան բավական տանջանք է պատճառում ճագարներին։ Պատահում է, վոր անասունը, ցավից վախենալով, անդամալույծ է լինում և նույնիսկ սատկում։ Բացի դրանից այդ մեքենայից դեռևս քիչ կա մեր յերկրում և ճարելը դժվար է։

Տարածված է ականջներին դանակով նշան անելը, վորը նույնպես բավական մնայուն է և վորին անասուններն անհամեմատ ավելի հեշտությամբ են տանում։ Նախ ականջները ներսի կողմից մաքրում են բենզինով կամ սպիրտով և ապա մաքուր ու հականեխված սուր դանակի ծայրով համարներ են նշանակում կաշվի վրա։ Վորպեսզի կաշին կտրելիս արյունահոսություն առաջ չգա, նշանները գրում են ականջի այն մասում, վորտեղ արյան յերակներ չկան։ Դա հեշտությամբ կարելի յե պարզել՝ ականջները լույսի դեմ զննելու միջոցով։ Վորովհետև, վերքերը լավանալուց հետո, նշանները կարող են անհետանալ, սովորաբար վերքերի մեջ վորևէ անվնաս ներկ են լցնում զգուշությամբ տրորելու միջոցով։ Շատ հարմար է այդ նպատակի համար սովորական մուրը, վորը պետք է նախ սպիրտով բաց անել (լուծել)։

Դանակի ծայրով ականջի մեջ բարդ համարներ գրելը, բավական դժվար ե։ Այդ պատճառով սովորական թվերի փոխարեն կտրում են հետևյալ պայմանական նշանները, վորոնցից ամեն մեկը կազմված ե 1 կամ 2 ուղիղ գծից։



Նկ. 44 Ականջներին դրվող պայմանական նշանները։

Այս նշանները գործադրելով, կարելի յե կազմել ամեն մի ցանկացած թիվ։ Յենթադրենք ճագարը գրի յե առնված 6-րդ ցուցակում և նրա համարը ուզում ենք նշանակել 350։ Անասնի աջ ականջին կտրում ենք 6-ի նշանը, իսկ ձախ ականջին 350-ի նշանը, ինչպես վոր ցույց ե տրված նկարում։

Յերբ ճագարները ջոկ-ջոկ համարներ ունեն, դժվար չե գրի առնել հատուկ գրքում, թե նրանցից ամեն մեկը յերբ ե ծնվել, վորոնք են նրանց ծնողները և այլն։

«Տոհմային գրանցումների գրքում» պետք ե գրի առնվեն ցեղային ճագարների գոնե հետևյալ հիմնական, ամենաանհրաժեշտ տեղեկությունները։

Աղյուսակ № 14

ՑԵՂԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ №

Հերթական № №	Ցե՞ղը և գրի առնված	Վո՞ր տեսակին ե պատկանում	Սեռը	Ականջների № №-ը (աջը №...... ձախը №......)	Վո՞րտեղ ե գտնվում (վանդակի, պարկետի, փոսերի №-ը)	Ծագումը (Հոր №...... Մոր №...... Վո՞ր ցուցակումն են նրանք գրված)	Հասակը (ծնված որը)	Գույնը	Մյուս արտաքին, բնորոշ նշանները	Ներքին ցեղային հատկությունները (Ցեթե եզ ե՝ քա՞նի ձագ ե ծնում, առա՞տ ե կաթը, թե վոչ. ի՞նչպես ե խնամում և այլն։ Յեթե վորձ ե՝ լա՞վ ե զուգավորվում, ի՞նչպիսի սերունդ ե տալիս և այլն	Հիվանդությունները	Ճագարի վերջը, (մորթված ե, ծախված ե, սատկել ե և այլն)	Ընդհանուր գնահատականը՝. շատ լավն ե, լավն ե, բավարար ե։
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14

Այս ցուցակում, ինչպես տեսնում ենք, գրի յեն առնվում թե եզ և թե վորձ արտադրողները։ Սակայն ցեղային ճագարանոցներում անհր-

րաժեշտ ե միաժամանակ եզերի համար առանձին ցուցակ պահել. վորում պետք ե լինեն գոնե հետևյալ տեղեկությունները։

Աղյուսակ № 15

ՑԵՂԱՅԻՆ ԵԳԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Հերթական № №	Վո՞ր տեսակին ե պատկանում։	Զուգավորման որը։	Ծնելու որը։	Ծնվ. ձագերի թիվը (կենդանի, պակասավոր, մեռած)	Քանի՞ հատ ե թողնված մոր մոտ	Քանի՞սն ե հանձնված ծըծմորը (ծծմոր №-ը)	Քանի՞ հատ ե ծծից կտրրված (ցանկալի յե նրանց քաշը)	Յե՞րբ են ձագերը ծծից կտրվել	Քանի՞սն ե պահված տոհմի համար (նրանց սեռը)	Տոհմի համար պահված ձագերի ականջների № №	Ինչպես են օգտագործված մնացած ձագերը՝ ծախված են, մորթված են և այլն	Հիվանդությունները	Ճագարի վերջը (յեթե սատկել ե՝ ինչ պատճառով, յեթե մորթված ե վո՞ր հասակում և ի՞նչու)	Ծանոթություն (ձագերը մի՞րն են նման թե հորը)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

ՃԱԳԱՐԻ ՀԱՍԱԿԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ճագարներին մորթելու ժամանակ (աշունն ու ձմեռը) անհրաժեշտ ե լինում ընտրություն կատարել ըստ նրանց հասակի, վորպեսզի յերիտասարդ ու տոհմի համար դեռևս պիտանի ճագարները ժամանակից առաջ չմորթեն։ Անհրաժեշտ ե լինում գիտենալ ճագարների հասակը և ուրիշ շատ դեպքերում, մանավանդ օտար տեղերից նոր ճագարներ ձեռք բերելիս։

Սակայն դեռևս չի գտնված այնպիսի մի միջոց, վորով կարելի լիներ հաստատապես վորոշել ճագարի հասակը և այդ պատճառով մարդն ստիպված ե, ընտրություն կատարելիս, ղեկավարվել մի քանի յենթադրական նշաններով։

Յերիտասարդ ճագարները սովորաբար ավելի աշխույժ և շարժուն են լինում, իսկ հասակավորները հանդարտաբար, դանդաղաշարժ ու հանգիստ։ Սակայն պետք ե աչքի առաջ ունենալ, վոր առհասարակ ճագարի խոշոր տեսակներն ավելի դանդաղաշարժ են լինում, քան մանր տեսակները։

Յերիտասարդ ճագարների ճանկերն ավելի յերկար ու սուր են լինում, քան հասակավորներինը, վորոնց ճանկերը մաշված ու բթացած են լինում։ Սակայն այս նշանն ել, անվիճելի չե, վորովհետև կիսաբնական սրահներում ապրող ճագարները, գետինը փորփրելով արագությամբ մաշում են իրենց ճանկերը, իսկ վանդակներում ապրող ճագարների ճանկերն այնքան են յերկարում, վոր մարդն ստիպված ե լինում պարբերաբար կտրել նրանց։

Երբ ճագարի մարմինը բոլորովին ձևակերպված է ու կլորաձև է վոչ թե անկյունավոր, նրան համարում են ավելի հասակավոր: Ցեղային ճագարների բրուկը նույնպես նշան է նրանց վորոշ հասակի: Հայտնի յե, վոր բրուկը մեծ մասամբ կազմվում է վոչ շուտ՝ քան 6 ամսական հասակում և քանի գնում մեծանում է ու ծանրանում, կախվելով յերբեմն համարյա մինչև անասնի վոտքերը:

Ճագարի հասակի փոքր ի շատե հաստատ նշանը—նրա ատամների գույնն է: Մի տարեկան հասակից ատամներն սկսում են դեղնել: Դեղնությունն սկսվում է ատամների արմատից (լնդերքների մոտ,) և հետզհետե բարձրանում է վեր: Պառաված ճագարների ատամները մեծ մասամբ, դըսի կողմից բոլորովին դեղնած են լինում:

ՃԱԳԱՐԻ ՍԵՌԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Զափահաս ճագարների սեռը վորոշելիս պետք չե անպայման զննել նրա սեռական որգանները, վորովհետև սեռը կարելի յե վորոշել և ուրիշ արտաքին բնորոշ նշաններով: Վորձի գլուխն, ինչպես ասված է վերեվում, ավելի խոշոր է, կուրծքը լայն, աչքերը փայլուն ու համարձակ, մորթու գույնն ավելի պայծառ ու բուրդն ավելի կարճ: Իսկ եգի գլուխը նեղ է ու յերկարաձև, կուրծքը նույնպես ավելի նեղ, հետևի վոտքերն ավելի լայն, աչքերը քնքույշ ու բարի: Բացի դըրանից, եգի կրծքի վերեվի մասը փոքր ինչ ավելի լայն է լինում:

Ինչ վերաբերվում է մատղաշ ճագարներին, վորոնց մարմինը դեռ վերջնականապես չի ձևակերպված, նրանց սեռը կարելի յե պարզել միմիայն սեռական որգանների զննությամբ: Անասնին պառկեցնում են կռնակի վրա և մատներով յերկու կողմից են քաշում (դեպի վար) սեռական որգանի կաշին: Յեթե սեռական ճեղքը յերկարաձև է ու նեղ, դա նշանակում է, վոր զննվող անասունն եգ է, իսկ յեթե ճեղքը կլոր ձև ունի նշանակում է՝ վորձ է:

ՃԱԳԱՐՆԵՐԻՆ ԿՐՏԵԼԸ

Կրտելու մի քանի միջոց կա, սակայն նրանցից ամենահարմարը կապելու միջոցն է: Նախ պետք է մատներով վորոնել անասնի ձվիկները և զգուշությամբ հրել նրանց դեպի տոպրակի դրսի կողմը, ապա քաշելով տոպրակը (ձվիկների հետ միասին) դեպի դուրս, պետք է թելի ողակ գցել տոպրակի արմատին ու ամուր կապել: Անհրաժեշտ է վոր կապողը, ողակ ձգելուց առաջ, անպայման զգա (շոշափի) ձեռքում բռնած ձվիկները, վորովհետև պատահում է, վոր ձվիկները մնում են տոպրակից դուրս և գործն անհաջող է անցնում: Ցանկալի յե, վոր կրտելիս գործածվող թելը մետաքսե լինի: Յերբ կապը հաջող է գցած,

արյունը դադարում է հոսել դեպի ձվիկները, վորոնք հետզհետե սեղմվում են, մեռնում և ընկնում ցած: Սովորաբար 7—10 որ անցած ճագարն իրեն լավ է զգում և սկսում է նորմալ կյանքով ապրել:

Սակայն անհրաժեշտ ասել, վոր այս հեշտ թվացող ոպերա-



Նկ. 45 Ճագարներին կրտելիս գործածվող հանգույցը

ցիան պահանջում է զգուշություն և հմտություն: Շատ անգամ յերբ կրտելիս վերք են առաջացնում, բարդություններ են առաջ գալիս և անասունը սատկում է: Այս գործը պետք է հանձնարարել կամ անասնաբույժներին և կամ հատուկ փորձառություն ունեցող կոլտնտեսականներին:

ՃԱԳԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

Ճագարներին վորևե հեռու տեղ տեղափոխելու ժամանակ գործ են ածում փայտից պատրաստված հատուկ արկղներ: Վորպեսզի այդ արկղները համապատասխանեն անասունների տեղափոխման նվազագույն պայմաններին, նրանք պետք է այնպես լինեն շինված, վոր.

ա. Յուրաքանչյուր ճագար առանձին բաժանմունք ունենա իր համար:

բ. Յուրաքանչյուր ճագար բավական ոդ ու տեղ ունենա արկղի մեջ.

գ. Արկղն այնքան ամուր լինի, վոր ճանապարհին չկոտրատվի.

Այս պահանջներին բավարարելու համար արկղը շինվում է յերկարաձև սնդուկի նման: Նրա մեջ, միմիանցից վորոշ հեռավորության վրա, տախտակներ են ամրացված, վորոնց միջի տարածությունը մի-մի առանձին աչք է կազմում: (Տես նկար 46)

Այս ձևով շինված արկղներում համարձակ կարելի յե տեղափոխել ճագարներին թե սայլերով, թե յերկաթուղով և թե նավով: Հասկանալի յե ինքն ըստ ինքյան, վոր յերբ ճանապարհորդությունը յեր-

կարատեվ է լինում, անհրաժեշտ է անասուններին պարբերաբար կերակրել, ջուր տալ և դուրս թափել աղբը նրանց տակից։

Անհրաժեշտ է տեղը հասնելուն պես հանել ճագարներին արկղի միջից։



Նկ. 46 Ճագարներին տեղափոխելու արկղ

ՃԱԳԱՐՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ճագարն իր համեղ մսով ու արյունով շատ ու շատ գիշատիչների համար գրավիչ կերակուր է հանդիսանում։ Բնական պայմաններում ճագարը խույս է տալիս ու ազատվում թշնամիներից՝ գլխավորապես փախչելու և թաքնվելու միջոցով, որը և նրա ինքնապաշտպանության համարյա միակ զենքն է կազմում։ Արհեստական պայմաններում, ուր ճագարները զրկված են փախչելու հնարավորությունից, մարդը պարտավոր է իր վրա վերցնել նրա պաշտպանությունը։

Ճագարի ամենավտանգավոր թշնամին ժանտաքիսն է (խարյոկը), որը հարձակվում է ոչ միայն ճագերի, այլ և յերբեմն մեծահասակների վրա։ Նա գիշերները որևէ նեղ անցքով ճանապարհ գտնելով դեպի ճագարանոցը, մտնում է բների և նույնիսկ վանդակների մեջ և կրծելով ճագարների կոկորդը, ծծում է նրանց արյունը։ Այդ փոքր, բայց ագահ գիշատիչը մի անգամ ներս մտնելով ոչնչացնում է մի քանի, յերբեմն 7—8 ճագար։ Նրա դեմ կռվելու համար, նախ պետք է փակել բոլոր անցքերը, որոնցով նա կարող է մտնել ճագարանոցը և յերկրորդը, ամեն կերպ ոչնչացնել նրան համապատասխան թակարդներ դնելու և թունավորելու միջոցով։

Կզաքիսը յերբեմն, ուր կազմակերպված դիմադրության չի հանդիպում, մեծ ավերումներ է առաջ բերում։ Այսպես օրինակ, 1931 թվին այդ գիշատիչը Ռոստով-Նախիջևանի ճագարաբուծական ընկե-

րության տնտեսություններից մեկում ոչնչացրել է ճագերի 40 տոկոսը։ Հետաքրքրական է այստեղ նկատել, որ այդ գիշատիչը առատ սնունդ գտնելով այնքան է աճել ու բազմացել, որ ամբողջ Դոնի շրջանի որսորդների ուշադրության առարկա յե դառել։

Ճագարի թշնամիներն են նաև գիշատիչ թռչունները՝ արծիվը, բազեն և այլն, որոնք յերբեմն մեծ վնասներ են հասցնում նմանապես կիսաբնական սիստեմները գործադրող ճագարանոցներին։ Անհրաժեշտ է շարունակաբար վախեցնել ու քշել այդ թռչուններին՝ մարդանման շարժվող խրտվիլակներ շարելով ճագարանոցների շուրջը։

Յերբեմն բավական վնաս են հասցնում նմանապես և խոշոր մկները, որոնք հարձակվում են գլխավորապես ճագերի վրա։ Շները և մանավանդ կատուները, յերբ նրանք սովորում են ճագարի միս ուտելուն, նույնպես կորուստներ են պատճառում տնտեսությանը։

Ճագարաբուծական ֆերմերը պետք է կատաղի կռիվ մղեն այդ բոլոր վնասատուների դեմ՝ գործադրելով բոլոր մատչելի միջոցները։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՃԱԳԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄՈՒՄ

Ինչպես սոցիալիստական գյուղատնտեսության բոլոր ճյուղերի, նմանապես և ճագարաբուծության զարգացման հիմնական պայմաններից մեկն աշխատանքի կանոնավոր կազմակերպումն է։ Սակայն չնայած այն հանգամանքին, որ մեր անասնաբուծության մյուս ճյուղերում աշխատանքի կազմակերպման ամենաբարդ խնդիրները մեկը մյուսի հետևից բարեհաջող լուծման են հանգում, ճագարաբուծության բնագավառում նրանք դեռևս ընկած են յերեսն ի վար։

Անհրաժեշտ է ասել ի հարկե, որ այդ կարևոր խնդիրների լուծման դանդաղությունն այս դեպքում բխում է մի շարք լուրջ պատճառներից։ Նախ ճագարաբուծությունը նոր և կիսով չափ չուսումնասիրված ճյուղ է մեր գյուղատնտեսության մեջ և յերկրորդը՝ խորհրդային ճագարաբուծությունը դեռևս հաստատապես կանգ չի առել գործածվող սիստեմներից և ոչ մեկի վրա, համարելով նրանց ժամանակավոր, անցողական։ Անտարակույս, յերբ սոցիալիստական ճագարաբուծությունը գտնի իր հարմարագույն սիստեմը, համապատասխան լուծումն կստանա և աշխատանքի կազմակերպման խնդիրը։

Հիշյալ դժվարությունները կանգնած են և մեր առաջ։ Նախ դեռևս շատ քիչ է մեր կոլտնտեսային ճագարանոցների այն փորձը, որի վրա կարելի լինի հենվել աշխատանքի կազմակերպման մասին խոսելիս և յերկրորդ՝ քանի դեռ սիստեմներից և ոչ մեկը չի ընդուն-

ված վերջնականապես, դժվար է վորոշել, թե այս դեպքում սիստեմներից վո՞րի վրա պետք է կանգ առնել։

Ելնելով այն նկատառումից, վոր այսպես թե այնպես, գոյություն ունեցող սիստեմներից ամենահարմարն առայժմս պետք է համարել պարկետի սիստեմը (նմանապես և բլինդաժինը), վորը և կարելի յե ասել ամենատարածվածն է Հյուսիսային Կովկասում, նպատակահարմար ենք համարում տալ այստեղ այդ սիստեմի աշխատանքի կազմակերպության գոնե հիմնական գրույթները։

ԲՐԻԳԱԴԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Նախ և առաջ պետք է ասել, վոր ինչպես կոլտնտեսային անասնաբուծության մյուս ճյուղերում, նմանապես և ճագարաբուծության մեջ, աշխատանքը լավ կազմակերպված համարվում է այն ժամանակ, յերբ պարտականությունները կանոնավոր բաժանված են աշխատողների միջև, յերբ յուրաքանչյուր աշխատողի համար բեռնվածքի վորոշ նորմաներ են մշակված, յերբ դիմազրկությունը գոյություն չունի և ամեն մի աշխատող գիտե պարզ ու վորոշակի իր անելիքներն ու շահագրգռված է նրանց կատարելու և գերակատարելու գործում։ Իսկ վորպեսզի աշխատանքի կազմակերպությունը համապատասխանի հիշյալ պահանջներին, անհրաժեշտ է նախ՝ ճագարաբուծական ֆերմում գործադրել աշխատանքի բրիգադային սիստեմը և յերկրորդ՝ կիրառել գործարքը։

Յեթե ընդունենք, վոր բրիգադը սպասարկում է պարկետի սիստեմով պահվող 300 ճագարների (250 էգ և 50 վործ), այն ժամանակ նա պետք է կազմված լինի 1 ավագ ճագարաբույծից (ինքը և բրիգադիրը), 1 ոգնականից, 3 կրտսեր ճագարաբույծներից, 1 սայլապանից և 1 պահապանից։ Բրիգադի անդամների պարտականությունները կայանում են հետևյալում.

Ավագ ճագարաբույծ (մասնագետ)։ Ղեկավարում է ամբողջ ֆերմը և պատասխանատու յե նրա վիճակի և զարգացման համար։ Նա յե կազմում ֆերմի արտադրական ֆինանսական պլանը և հետևում նրա կիրառմանը։ Նա յե կազմակերպում ամբողջ բրիգադի աշխատանքը և սովորեցնում կոլտնտեսականներին ճագարին խնամելու և կերակրելու ձևերը։ Բաժանում է ճագարներին խմբերի ըստ տեսակների և մշակում նրանց կերի որաբաժինները։ Ընտրում է արտադրողներին և նշանակում զուգավորման ժամանակը։ Մորթելու ժամանակը նա յե ջոկջոկում տոհմի համար պետքական ու անպետք ճագարներին։ Նա հսկում է կերի պաշարների կանոնավոր ծախսման։ Նա պահում է բո-

քոր յելևմտից հաշիվները։ Ավագ ճագարաբույծն աշխատում է նաև ֆիզիքապես, մանավանդ ճագարներին մորթելու և մաշկելու ժամանակ։

Ոգնականը։ Ավագ ճագարաբույծի բացակայության ժամանակ փոխարինում է նրան, կատարելով նրա պարտականությունները։ Համարներ է գրում ճագարների ականջներին և գրի առնում ցեղականներին։ Անմիջապես հսկում է ճագարներին նրանց զուգավորման շրջանում։ Ցուցակագրում է հիվանդներին, առանձնացնում է նրանց և բժշկում անասնաբույծի ցուցմունքներով։ Կատարում է բրիգադի անդամների աշխատանքի հաշվառումը։ Հետեվում է կերակրելուն ու ինքն էլ անձամբ մասնակցում է այդ աշխատանքին։ Մյուսների հետ հավասարապես աշխատում է ճագարներին մորթելու, մաշկելու և մորթիները չորացնելու ժամանակ։

Կրտսեր ճագարաբույծները։ Պատրաստում են կերի բոլոր տեսակները, մաքրում են ուժեղ կերը, կտրում և պետք յեղած դեպքում, յեփում են արմատապտուղները։ Ծառերից (յեթե հեռու չեն) կտրում են ճյուղերն ու տերևները։ Բաժանում են կերը, դնելով պարկետների կերամանների մեջ։ Մաքրում, ավլում են մսուրներն ու կերամանները։ Հավաքում և դուրս են ձգում սատկած անասուններին։ Մյուսների հետ աշխատում են ճագարներին մորթելու, մաշկելու և նրանց մորթին չորացնելու ժամանակ։ Ոգնում են ավագ ճագարաբույծին և նրա ոգնականին ճագարներին ջոկջոկելու և զուգավորելու ժամանակ։

Սայլապանը։ Տակառով ջուր է կրում։ Կտրատում ու կրում է ծառի ճյուղերն ու տերևները՝ յեթե նրանք հեռու յեն ճագարանոցից։ Բահով լցնում է սայլի մեջ աղբն ու սատկած անասուններին և կրում նշանակված տեղը։ Սատկած անասուններին թաղելու համար փոր է փորում։ Ավլում է ու մաքրում պարկետների միջև յեղած արձակ տարածությունները։

Պահապանը։ Գիշերները հսկում է ու պահպանում ամբողջ ճագարանոցն ու նրա վողջ գույքը։ Նրա պարտականությունն է նաև գիշատիչների դեմ կռվելու համար մշակված բոլոր միջոցների կիրառումը։

Բրիգադի անդամների պարտականությունները վորոշելուց հետո, անհրաժեշտ է տալ յուրաքանչյուրին վորոշ բեռնավորում և վորոշել գործարքի հիմնական պայմանները, այսինքն հաստատապես պարզել, թե նախ՝ աշխատողներից ամեն մեկն ինչ քանակության ճագարների յե սպասարկելու, յերկրորդը՝ ինչ նվազագույն վորակական ցուցանիշներ է ունենալու և յերրորդը՝ ինչպես է վարձատրվելու նրա աշխատանքը աշխորերով հաշված։

ԳՈՐԾԱՐՔԻ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՈՒ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախ՝ վորակական ցուցանիշների մասին։ Առաջավոր ճագարաբուծական ֆերմերի փորձի վրա հենվելով, կարելի յե ասել վոր.

1. Ամուլի (չբերք) եգ ճագարների քանակը պետք է լինի տարեկան վոչ ավելի, քան 10%.

2. Զափահաս ճագարների կորուստը, հիվանդություններից և այլ պատճառներից, պետք է լինի վոչ ավելի, քան 6%

3. Ձագերի կորուստը մինչեվ 1,5 ամսական հասակը վոչ ավելի քան 10%.

Ձագերի կորուստը 1,5 ամսականից մինչև 6 ամսական վոչ ավելի, քան 15%

5) Զափահաս եգ ճագարը պետք է ծնի տարեկան 4 անգամ։

6. Զափահաս եգ ճագարը պետք է տա տարեկան ապրանքային ձագ վոչ պակաս, քան 18 հատ։

7. Մատղաշ ճագարի քաշը (6 ամսական) միջին թվով պետք է լինի վոչ պակաս, քան 1,5 կգ.

8. Զափահաս ճագարի քաշը պետք է լինի վոչ պակաս, քան 2 կգ.

Քանակական ցուցանիշներն ու աշխատանքի վարձատրության նորմաներն այս դեպքում (այսինքն, յերբ ֆերմի հիմնական հոտը կազմված է 250 եգից և 50 վորձից) հետեվյալներն են.

Աղյուսակ № 14

Աշխատանքի անունը	Բեռնավորման նորման ըստ ճագարների հասակի: Մեծահասակ	Ջահել 1-6 ամսական	Ընդամենը	Վոր խմբին է պատկանում աշխատանքը	Աշխատանքի գնահատումն աշխորերով: Մի կով պահելու համար	100 կովի համար
Ավագ ճագարաբույծ . .	300	4100	4400	Վորակավոր	1,50	0,034
Ոգնական	300	4100	4400	Ծանր բարդ	1,25	0,028
Կրտսեր ճագարաբույծ . .	100	1370	1470	Ծանր	1,00	0,069
Սայլապան	300	4100	4400	Միջակ	0,75	0,017
Պահապան	300	4100	4400	Թեթև	0,50	0,012

Ինչպես ցույց է տալիս այս աղյուսակը, ավագ ճագարաբույծը՝ նրա ոգնականը, պահապանն ու սայլապանը, ըստ իրենց աշխատանքի բնույթի, սպասարկում են հավասար քանակությամբ ճագարների, այսինքն, բոլոր մեծահասակ ճագարներին և ամբողջ տարվա ընթացքում (գարնանից մինչև աշուն) ծնված ձագերին. սակայն նրանց աշխատանքը տարբեր է գնահատվում, վորովհետեվ ավագ ճագարաբույծի ու նրա ոգնականի աշխատանքը համարվում է վորակավորյալ և ծանր (բարդ)։ Իսկ կրտսեր ճագարաբույծների աշխատանքի շրջանը սահմանափակված է. նրանցից ամեն մեկը սպասարկում է ֆերմում գտնըվող բոլոր ճագարների մեկ յերրորդ մասին, այսինքն յուրաքանչյուր կրտսեր ճագարաբույծին հանձնվում է վորոշ քանակությամբ պարկետներ՝ իրենց բոլոր ճագարներով միասին։ Դա նպատակահարմար է այն տեսակետից, վոր վերացնում է դիմազրկությունը, վորը, մանավանդ անասնաբուծության այս ճյուղում, շատ բացասական հետեվանքներ է ունենում։

Յերբ բրիգադը սպասարկում է նորմայով նշանակված քանակությամբ ճագարների և միաժամանակ անխախտ է պահում վերոհիշյալ վորակական ցուցանիշները, յուրաքանչյուր անդամի հաշվին գրվում են նրան հասանելիք աշխորերը, համաձայն վերեվում բերված աղյուսակի։

ԱՇԽՈՐԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄՆ ՈՒ ՊԱԿԱՍԵՑՈՒՄԸ

Յերբ վորակական ցուցանիշները պահպանվում են, իսկ ճագարների քանակությունը նորմայից վեր կամ վար է լինում, աշխատանքի վարձատրությունն էլ համապատասխան չափով ավելացվում կամ պակասեցվում է, հաշվի առնելով նորմայից ավելի կամ պակաս սպասարկվող ճագարների ամեն 1 գլուխը կամ, ավելի լավ է (հաշվի պարզության համար) ամեն 100 գլուխը։ Իսկ յերբ գերակատարվում կամ թերակատարվում են աշխատանքի վորակական նորմաները, այն ժամանակ աշխատողների հաշվին գրվող աշխորերը նույնպես ավելացվում կամ պակասեցվում են վորոշ, որ առաջ նախատեսնված չափով։ Այդ դեպքերում մենք առաջարկում ենք ղեկավարվել հետեվյալ տըվյալներով (տես 140 եջի № 15 աղյուսակը)։

Այդ տվյալների վրա հենվելով դժվար չե հաշվել, թե քանի աշխոր պետք է ավելացնել բրիգադին, յեթե նա լավ ու բարեխիղճ աշխատանքով հասել է բարձր վորակական ցուցանիշների ճագարներին պահելու, բազմացնելու և կերակրելու գործում և կամ, ընդհակառակը, քանի աշխոր պետք է պակասեցնել վատ, անբարեխիղճ աշխատանքի և ցածր ցուցանիշների համար (տես աղյուսակ № 16)

Այդ որինակը ցույց է տալիս, վոր բրիգադը մի քանի վորակական ցուցանիշների գերակատարման համար ստանում է 150 հավելյալ աշխոր, իսկ մի քանի ցուցանիշների թերակատարման պատճառով պակասեցվում է նրանից 56 աշխոր։ Բայց վորովհետեվ գերակատարում

այս դեպքում ավելի չէ, քան թերակատարումը, բրիգադը, վերջին հաշվով, ստանում է 94 հավելյալ աշխօր. (150 — 56 = 94)։

Աղյուսակ № 15

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Աշխօրեր	
	Ավելացում	Պակասեցում
1. Յուրաքանչյուր, նախատեսնված քանակից ավելի կենդանի մնացած 6 ամսական ճագարի համար . . .	0,5	—
2. Յուրաքանչյուր, նախատեսնված քանակից ավելի սատկած 6 ամսական ճագարի համար . . .		0,5
3. Յուրաքանչյուր նախատեսնված քանակից ավելի կենդանի մնացած չափահաս ցեղական ճագարի համար . . .		2,0
4. Յուրաքանչյուր, նախատեսնված քանակից ավելի սատկած չափահաս ճագարի համար . . .	5,0	—
5. Յուրաքանչյուր նորմայից ավելի ստացված ցնոտներ մսի համար . .		
6. Յուրաքանչյուր նորմայից պակաս ստացված ցնոտներ մսի համար .	—	5,0
7. Յուրաքանչյուր նորմայից պակաս ծախսված ցնոտներ ուժեղ կերի համար . . .	3,0	—
8. Յուրաքանչյուր նորմայից ավելի ծախսված ցնոտներ ուժեղ կերի համար . . .	—	3,0
9. Չափահաս էգ ճագարի նախատեսնված քանակությունից 1 անգամ պակաս ծնելու համար . . .	4,0	—

Աղյուսակ № 16

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Ըստ պլանի	Փաստորեն	Աշխօրեր			
			Ավելացում		Պակասեցում	
			Մեկ գլխի համ.	Ընդամենը	Մեկ գլխի համ.	Ընդամենը
Ամուլի, (չբերք) էգերի թիվը . . .	25	28	—	—	4,0	12,0
Կենդանի մնացած 6 ամս. ճագարների թիվը . . .	4100	4250	0,6	90,0	—	—
Կենդանի մնացած ցեղային ճագարների թիվը . . .	235	225	—	—	2,0	20,0
Ստացված է միս ցնոտներով . . .	82	94	5,0	60,0	—	—
Ծախսված վարսակ՝ ցնոտներով . . .	100	108	—	—	3,0	24,0
Ընդամենը . . .	—	—	—	150,0	—	56,0

Ճագարաբուծության մեջ մանր խմբակային, բրիգադային գործարքն ավելի գերադասելի չէ անհատականից։ Սակայն բրիգադային գոր-

ծարքը կիրառելիս պետք է հաշվի առնել յուրաքանչյուր անդամի աշխատանքը և աշխօրերը բաժանել այնպես, որ բարեխիղճ ու յեռանդով աշխատողները համապատասխան հատուցում ստանան։

Կրկնում ենք, որ մեր այստեղ շոշափած խնդիրը նպատակ ունի տալ ընթերցողին աշխատանքի կազմակերպման միայն հիմնական սկզբունքները։ Մեր առաջադրած բոլոր կետերը կարիք ունեն լուրջ ստուգման, ճշտման և լրացման։

Այս լուրջ և կարևորագույն խնդրում վերջին խոսքը պատկանում է իրենց՝ ճագարաբուծական ֆերմերում աշխատող կոլտնտեսականներին։ Նրանք պետք է իրենց արտադրական խորհրդակցություններում պարբերաբար քննության յենթարկեն աշխատանքի բոլոր խնդիրները և, համաձայն տեղական պայմանների, անհրաժեշտ փոփոխությունները մտցնելով իրենց գործունեության բոլոր բնագավառներում, մշակեն գործարքի այնպիսի նորմաներ, վորոնք որ օրի վրա բարձրացնելով աշխատանքի արդյունավետությունը, ապահովեն տնտեսության զարգացումն ու բարգավաճումը։

ՍՈՑՄՐՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի այս սոցիալիստական ձևերը, վորոնք կարճ ժամանակամիջոցում հսկայական զարկ տվին մեր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացմանը,—մեծ դեր ունեն կատարելու մանավանդ ճագարաբուծության մեջ։ Սոցմրցումն ու հարվածայնությունն այն կարևոր գործոններն են հանդիսանում, վորոնք ստուգելով ու ճշտելով բրիգադի անդամների բեռնավորման և գործարքի նորմաները, բարձրացնելով նրանց աշխատանքի արդյունավետությունը և հետևապես իջեցնելով արտադրանքի ինքնարժեքը,—ապահովում են ճագարաբուծության շահավետությունն ու զարգացումը։ Սոցմրցման ու հարվածայնության այս խոշոր նշանակությունը պետք է գիտակցեն ճագարաբուծական ֆերմում աշխատող բոլոր կոլտնտեսականները և առանց հրավերի սպասելու, սեփական ձեռներեցությամբ կիրառեն նրանց լայն չափերով։

Սոցմրցման կարող են մասնակցել բրիգադի բոլոր անդամները՝ սկսած ավագ ճագարաբույծից մինչև պահապանը, վորոնք յելակետ ընդունելով արտադրական խորհրդակցություններում մշակված աշխատանքի քանակական և մանավանդ վորակական ցուցանիշները, պետք է ձգտեն կատարել ու գերակատարել նրանց։ Սոցմրցումն այն ժամանակ է իրական արդյունք տալիս, յերբ մրցակիցների աշխատանքը կանոնավոր հաշվարկման է յենթարկվում, առանց վորին նա դառնում է լոկ ձևականություն։

Սոցմրցման արդյունքներն ավելի ակներև են լինում, յերբ, մանավանդ, մրցում են միմիանց հետ կրտսեր ճագարաբույծները, վորոնք որ որի վրա նվաճումներ կատարելով տնտեսության իրենց հանձնած մասում, զարկ են տալիս ամբողջ տնտեսության վորակական ցուցանիշների բարձրացմանը։ Ճագարաբուծությունը, անասնաբուծության այս նոր, բայց մեր յերկրում մեծ ապագա խոստացող ճյուղը, պահանջում ե աշխատողներից շատ լուրջ, անընդհատ ու մանրակրկիտ ուշադրություն։ Ահա այդ խնդրում խոշոր դեր ունեն կատարելու հարվածայինները, վորոնք իրենց յեռանդուն ու համառ աշխատանքով, իրենց աննահանջ ուշադրությամբ դեպի գործի առօրյա խնդիրները, որինակ են դառնալու բոլորին, տալով ամենաբարձր ցուցանիշներ ճագարներին խնամելու, բազմացնելու, և նրանց արդյունավետությունը բարձրացնելու գործում։

ԿԱԴՐԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ճագարաբուծության զարգացման կարևորագույն պայմաններից մեկն էլ բավարար քանակությամբ ճագարաբույծների պատրաստման խնդիրն ե։ Պետք ե ասել, վոր այդ ուղղությամբ դեռևս քիչ բան ե արված և այժմ այնպիսի դրություն ե ստեղծվել, վոր կադրերի բացակայությունը անասնաբուծության այս նոր ճյուղի առաջխաղացման խոչընդոտներից մեկն ե դառել։

Կադրերի խնդրի լուծման մի քանի ճանապարհ կա, վորոնցից կարևորագույնը պետք ե համարել՝ համապատասխան ուսման միջոցով մասնագետներ պատրաստելը։ Անհրաժեշտ ե, վոր կոլտնտեսությունները առաջ քաշեն ճագարաբուծությամբ իսկապես հետաքրքրվող և այդ ուղղությամբ վորոշ ընդունակություն հայտնաբերող կոլտնտեսականներին և ուղարկեն նրանց համապատասխան դասընթացքներ անցնելու։ Վերջերս շատ ռայոնական կենտրոններում բացվել են և բացվում են միամսյա ճագարաբուծական դասընթացքներ, վորոնք ընդունում են միայն կազմակերպությունների կողմից ուղղված մարդկանց Այդ կարճատև դասընթացքները տալով սովորողներին ճագարաբուծության հիմնական գործնական տեղեկությունները, պատրաստում են գլխավորապես կրտսեր ճագարաբույծներ, վորոնց շատ մեծ կարիք ե զգացվում ներկայիս։

Հյուսիսային Կովկասում, դեռ անցյալ տարվանից գոյություն ունեն նաև «Սեվկավպուշնինայի» կազմակերպած դասընթացքները, վորոնք գտնվում են Ռոստովից 20 կիլոմետր հեռավորության վրա, Ակսայ կոչվող յերկաթուղակայանի մոտ գտնվող Большой лог-ում։ Այդ դասընթացքները գործում են ամբողջ տարին, սակայն սովորողների կազմը տարեկան չորս անգամ փոխվում ե (3 ամիսը մեկ)։ Այդ դասընթացքները համարեցված են գործին փորձնականապես ծանոթ մարդկանց համար և պատրաստում են ավագ ճագարաբույծներ, վորոնք ավարտելուց հետո կարող են ղեկավարել փոքր ի շատե խոշոր տնտեսություններ։

Խորհրդային Միությունն ունի նաև իր ճագարաբուծական բարձրագույն դպրոցը՝ Ճագարաբուծական Ինստիտուտը, վորը գտնվում ե Մոսկվայից 25—30 կիլոմետր հեռավորության վրա, Սալտիկովկայա յերկաթուղակայանի մոտ։ Այդ Ինստիտուտն ընդունում ե յերկարատև փորձառություն և տեսականորեն վորոշ պատրաստականություն ունեցող մարդկանց և պատրաստում ե բարձր վորակավորյալ մասնագետներ, վորոնք կարող են լինել ճագարաբուծության կազմակերպիչները մարզի կամ ռայոնի մասշտաբով և կարող են ղեկավարել խոշոր ճագարաբուծական խորհտնտեսություններ ու կոլտնտեսային ֆերմեր։

Այս բոլոր դասընթացքներն ու դպրոցները, վորոնք վերջերս աշխատում են կրկնապատկած թափով, մոտ ապագայում կտան խորհրդային ճագարաբուծությանը մեծ քանակությամբ պիտանի մասնագետների կադրեր։ Անհրաժեշտ ե վոր Հյուս. Կովկասի մյուս կոլտնտեսությունների հետ մեկ տեղ, հայկական կոլտնտեսություններն էլ օգտագործեն բոլոր գոյություն ունեցող հնարավորությունները և ընդունակ կոլտնտեսականներ ուղարկելով ուսման, արագությամբ վերացնեն ճագարաբույծների պակասությունը։

Կադրերի խնդրի լուծման գործում մեծ դեր կարող են խաղալ նաև հին մասնագետները, վորոնց ճագարաբուծական ֆերմերի վարիչ (ավագ) նշանակելով, պետք ե պարտավորեցնել, վոր նրանք հատկապես սովորեցնեն իրենց յենթարկվող կոլտնտեսականներին ճագարներին խնամելու և բազմացնելու գործին։ Այս խնդրում մեր յերկրամասի հայ բնակչությունն ավելի բարենպաստ պայմաններումն ե գտնվում քան մյուսները, վորովհետև բազմաթիվ հայ գաղթականներ (1914—1920 թվերին յեկած) արդեն 5—6 տարի յե վոր զբաղվում են ճագարաբուծությամբ (մանավանդ Թերեքի շրջանում) և բավական փորձառություն ու հմտություն են ձեռք բերել անասնաբուծության այս ճյուղում։ Պարզ ե ինարկե, վոր այդ նույն պարտականությունը՝ (չգիտցողներին սովորեցնելը) պետք ե դնել նաև դասընթացքներն ավարտող և կոլտնտեսությունը վերադարձող ճագարաբույծների վրա։

Վերջապես կադրերի խնդրի լուծման վոչ պակաս կարևոր միջոցներից մեկն էլ՝ գրականության միջոցով ճագարաբույծներ պատրաստելն ե։ Գրականության մեջ ընթերցողը կգտնի իրեն հետաքրքրքրող բոլոր հարցերի պատասխանը և կանոնավորապես ծանոթանալով ճագարաբուծության բոլոր խնդիրներին, անհամեմատ ավելի դյուրությամբ և գիտակցորեն կնտելանա գործնականին։ Ի հարկե

գրականությունը շատ մեծ դեր կարող է խաղալ մանավանդ այն դեպքում, յերբ ընթերցողը փոքր ի շատե արդեն ծանոթ է ճագարաբուծության գործնականին։ Սակայն ցավոք սրտի հայերեն լեզվով դեռևս շատ քիչ բան կա տպագրված ճագարաբուծության մասին։ Կարծում ենք, վոր մոտ ապագայում թե Խորհրդ. Հայաստանի Պետհրատը և թե «Հյուս. Կովկաս» հրատարակչությունը լույս կընծայեն մի շարք ուրիշ ձեռնարկներ այս հարցի մասին, բավարարելով զարմանալի կերպով մեծացող պահանջը։ Ռուսերեն գիտցող հայ կոլտնտեսականները կարող են օգտագործել այդ լեզվով գոյություն ունեցող հարուստ գրականությունը։ Արժեքավոր և օգտակար ռուսերեն գրքերի ցուցակը բերված է այս գրքի վերջում։

Անհրաժեշտ ենք համարում շեշտել այստեղ այն, վոր կադրերի խնդիրը լուծելիս, պետք է առաջնակարգ տեղ տալ կանանց։ Ճագարաբույծ լինելու համար մեծ ֆիզիքական ույժ պետք չէ, այդ ճյուղը պահանջում է մաքրություն, ուշադրություն և բարեխիղճ, մանրակրկիտ վերաբերմունք։ Փորձը ցույց է տալիս, վոր կանայք վոչ միայն կարողանում են ամենայն հաջողությամբ սովորել ու առաջ տանել այդ գործը, այլև, մեծ մասամբ, իրենց աշխատանքով, որինակ են դառնում տղամարդկանց համար։ Անցյալ տարի Սալտիկովայի խորհտնտեսության բանվորների միջև տեղի ունեցած սոցմրցման արդյունքը ցույց տվեց, վոր կանայք շատ ավելի բարձր քանակական ու վորակական ցուցանիշների յեն հասնում, քան տղամարդիկ, վոչ միայն աշխատանքի ճշտություն պահանջող բնագավառում (հղի ճագարի կամ ձագերի խնամքը), այլ և մյուս բոլոր բնագավառներում (վանդակների մաքրումը, անասունների կերակրումը, զուգավորումը և այլն)։ Հայկական կոլտնտեսությունները նույնպես պետք է այժմս յեվյեթ առաջ քաշեն կանանց ճագարաբուծության մեջ, վորը, վերջի վերջո— պետք է ամբողջովին անցնի կանանց տնօրինության ներքո։

ՃԱԳԱՐՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ* ՈՒ ՆՐԱՆՑ ԲԺՇԿՈՒՄԸ

Ճագարների հիվանդությունների մանրամասն նկարագրությունը շատ մեծ տեղ կբռներ և այդ պատճառով սահմանափակվում ենք միայն ամենատարածված հիվանդություններով, վորոնց բժշկելը հատուկ բժշկական գիտություն չի պահանջում։ Նկատենք, վոր ընդհանրապես ճագարների բժշկությունը դեռևս սակավ է հասնում նպատակին, ուստի

* Այս գլուխը առնված է Ս. Գ. Վոլկովսկուց, թարգմանաբար (կրճատված)։

ճագարաբույծի հոգատարությունը պետք է ուղղված լինի գլխավորապես հիվանդությունն առաջացնող պատճառները վերացնելու վրա։

Ճագարների վարակիչ հիվանդություններն այնքան են վտանգավոր, վոր յեթե ամենափոքր չափով անգամ ձգձգենք բժշկության ու մեկուսացման համապատասխան միջոցների գործադրումը, կարող ենք պատճառ դառնալ ամբողջ ճագարաբուծական տնտեսության կորստյան։

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարակիչ հիվանդությամբ հիվանդացած ճագարներին պետք է իսկույն և յեթ վոչնչացնել։ Վորպեսզի վարակը չտարածվի, հիվանդությունից սատկած ճագարների մորթին չպետք է հանել, իսկ դիակը պետք է կամ այրել և կամ խորը թաղել, նախորոք հանգած կրով հականեխելուց հետո։ Նույնպես պետք է վարվել նաև հիվանդ ճագարի կերի մնացորդների ու նրա տակի ծղնոտի հետ։ Հիվանդացած ճագարի վանդակը պետք է լվալ տաք ջրով ու սապոնով, կամ կարբոլյան թթուտով և կամ կրեոլոտի լուծույթով (1 մասը) և սպիտակացնել կրով։

Ճագարների վարակիչ հիվանդությունների մեծ մասը մարդուն չի անցնում, բայց կարող է նրա միջոցով փոխադրվել առողջ ճագարներին։ Դրա համար էլ անհրաժեշտ է, վոր մարդը ամեն անգամ, հիվանդ ճագարների հետ գործ ունենալուց հետո, ձեռքերը լվա հականեխիչ նյութերով՝ (սպիրտով, կարբոլյան լուծույթով, կամ սուլեմայով)։ Բացի այս միջոցառումներից, չափազանց կարևոր է հիշել հետևյալը. յերբեք չպետք է թողնել վորձին ուրիշ տնտեսություններից զուգավորելու համար բերված եգերի մոտ, քանի դեռ նրանց առողջությունը ստուգված չէ։ Ստուգելու համար պետք է օտար եգերին 2—3 որ պահել մեկուսացրած վանդակում և հետևել, թե արդյոք չե՞ն փռշտում նրանք և կամ քթերից լորձունք չի՞ հոսում։ Ականջները զննելով պարզում են, թե արդյոք վերքեր չկա՞ն նրանց մեջ։ Առանձին ուշադրություն պետք է դարձնել սննդառության օրգանների վրա (արդյոք փորհարինք չունե՞ն)։ Անթույլատրելի յե այն եգերի զուգավորումը, վորոնց սեռական օրգանից թարախ է հոսում և կամ նրա շուրջը ըծեր կան։ Ուրիշ տնտեսություններից վարակը փոխանցելուց խուսափելու համար, անհրաժեշտ է նաև խստիվ արգելել այցելուներին ձեռք տալ ճագարներին, նրանց կերին ու կերամաններին։ Չի կարելի ճագարներին փոխադրել մի վանդակից մյուսը, առանց վերջիններիս նախորոք մաքրելու և հականեխելու։ Այս նախազգուշական միջոցը պետք է կատա

րել նույն իսկ, յեթե վանդակներում ապրում են առողջ ճագարներ: Նոր ձեռք բերված ճագարները պետք ե անպայման մի քանի որ պահվեն առանձին տեղում, մինչև վոր ստուգվի նրանց առողջությունը: Հիվանդ ճագարների վանդակները չի կարելի պահել ճագարանոցում մյուսների հետ. նրանք պետք ե մեկուսացված լինեն: Հիվանդ անասունների վանդակներն ու կերամանները պետք ե ամեն որ մաքրել ու հականեխել, յեթե վոչ՝ վարակիչ հիվանդության դեմ տարվող կռիվը շատ կբարդանա և միշտ ինքնավարակում տեղի կունենա:

Վերոհիշյալ միջոցառումները կազատեն ճագարանոցները մեծ կորուստներից և ճագարաբույծներին՝ հուսահատությունից: Դժբախտաբար, այդ բանում կարելի յե համոզվել միայն դառն փորձառությամբ:

ԻՆՉՊԵ՞Ս ԻՄԱՆԱԼ, ՀԻՎԱՆԴ Ե ՃԱԳԱՐԸ, ԹԵ ՎՈՉ:

Հիվանդ ճագարին կարելի յե տարբերել հետևյալ նշաններով: Անասունը կորցնում ե ախորժակը, նրա բուրդը կորցնում ե իր սովորական փայլը և ձեռքով հակառակ ուղղությամբ շոյելիս՝ մազերը հավասար կերպով չեն պառկում իրենց տեղը: Աչքերը պղտորվում են և մի տեսակ քողով ծածկվում: Ճագարը դառնում ե թույլ ու դանդաղաշարժ և մեծ մասամբ քաշվում ե վանդակի մութ անկյունը: Նրա տաքությունը բարձրանում ե*: Այդպիսի ճագարներին պետք ե իսկույն մեկուսացնել: Յեթե 2—3 որվա ընթացքում վարակիչ հիվանդության նշաններ յերևան չեն գալիս, այն ժամանակ կարելի յե տեղափոխել ճագարին իր տեղը և բազմազան կեր տալով նրան, բոլորովին առողջացնել:

ԿՈԿՑԻԴԻՈԶԸ (Coccidiosis)

Կոկցիդիոզն իրավացիորեն համարվում ե ամենավարակիչ հիվանդությունը ճագարների համար: Արագությամբ տարածվելով անասունների, մանավանդ 2—4 ամսական ձագերի մեջ, նա պատճառ ե դառնում խոշոր կորուստների: Կոկցիդիոզով վարակված ճագարը կորցնում ե ախորժակը և նիհարում, նրա շնչառությունն արագանում ե, տաքությունը բարձրանում, յերբեմն տեղի յե ունենում փորհարինք: Իսկ քթի կոկցիդիոզի ժամանակ ճագարը հաճախ փռշտում ե և նրա քթից արտադրվում ե նախ ջրալի, ապա թանձր լորձունք: Սովորաբար մահը շատ արագ ե վրա հասնում: Կոկցիդիոզի համաճարակն ավելի կատաղի յե դառնում ամառը, տաք որերին: Ի նկատի ունենալով, վոր այս հի-

* Ճագարի նորմալ տաքության աստիճանը 38 ե: Չափել տաքությունը կարելի յե հետևի անցքում:

վանդությունը յերբեմն վոչնչացնում ե ամբողջ ճագարաբուծական տնտեսություններ, շատերի մեջ այն տպավորությունն ե առաջ յեկել, վոր կոկցիդիոզի դեմ կռվելն անհնարին ե: Սակայն վերջին հետազոտությունները (մանավանդ ամերիկացիների) պարզել են վոր, թեպետ կոկցիդիոզի բժշկությունն առայժմս իրոք վոր անհնարին ե,* սակայն մի քանի հասարակ նախազգուշական միջոցներով կարելի յե պաշտպանվել այդ տարափոխիկ հիվանդությունից:

Մի բան, վորը կարող ե հաստատապես փրկել ճագարներին այս հիվանդությունից, դա այն ե, վոր պետք ե ամբողջ տնտեսությունը պարբերաբար հականեխման յենթարկել: 4—5 որը մի անգամ պետք ե հականեխել բոլոր վանդակները, կերամանները, շուտ շուտ փոխել անասունների տակի ծղոտը և այլն:

ՓՈՐՀԱՐԻՆՔԸ

Փորհարինքն առաջանում ե մրսելուց, փչացած կերից, թաց խոտից և սառած արմատապտուղներից: Հիվանդ ճագարին պետք ե մեկուսացնել, տեղափոխելով տաք ու չոր տեղ և տալ նրան բացառապես չոր կեր: Յեթե փորհարինքը շատ ուժեղ ե, խորհուրդ ե տրվում, որական 3 անգամ տալ կերակրի գդալով 3—5 կաթել հետևյալ դեղից. Ferr sulf p. 3,75; aq. destill. 180,0; Tct. opii simpl p. 1,25. Յեթե փորհարինքի ժամանակ հետևի անցքի շուրջը վերքեր են յերևան գալիս, նրանց պետք ե լվալ կարբոլյան թթվի 2 տոկոսյան տաք լուծույթով:

ՀԱՐԲՈՒԽ

Հարբուխը շատ վարակիչ հիվանդություն ե: Նրա նշանները շատ նման են քթի կոկցիդիոզ կոչվող հիվանդությանը: Ճագարը շատ փռշտում, տրորելով մռութը թաթով: Նրա քթից արտադրվում ե նախ թափանցիկ, ապա թանձր սպիտակ և վերջապես կանաչ գույնի լորձունք: Հարբուխն առաջանում ե մրսելուց, միջանցիկ քամիների մեջ լինելուց, վանդակը կեղտոտ պահելուց և ուրիշ ճագարներից վարակվելուց: Յեթե հարբուխ առաջանալու հենց սկզբից ճագարին փոխադրենք տաք ու չոր բնակարան, հիվանդությունը կբժշկվի: Իսկ անուշադիր թողնված հարբուխը բժշկել չի հաջողվում և վարակի տարածման առաջն առնելու համար մնում ե միայն վոչնչացնել հիվանդ կենդանուն:

* Յենթադրում են, վոր յերբեմն ոգնում ե մարգանցի կալիումով թույլ ներկված ջուր խմցնելը: Ասում են, ոգնում ե նաև սպիրտի մեջ բացված յերկաթը (յերկաթի ածուխը) վորը տալիս են անասունին մի քանի կաթիլ:

ԱԿԱՆՋԻ ԽՈՑԸ

Այս հիվանդությունը պատահում է բավական հաճախ։ Ճագարի ականջակոնքի ներսում կազմվում են վերքի դեղին կեղանքներ, վորոնք հետագայում փոխվում, դառնում են շագանակագույն, յերբեմն էլ թարախ է դուրս գալիս։ Այս հիվանդությունն առաջացնողը առանձին վոջիլներն են՝ աքալաթները, վորոնք վոչ միայն բույն են դնում ականջակոնքում, այլ և մտնում են միջին ականջը և պատճառ դառնում քունքոսկրի և նույն իսկ գանգուղեղի կեղևի բորբոքման։ Այս հիվանդությամբ տառապող ճագարը հաճախ թափ է տալիս գլուխը, հետևի վոտներով քորում է ականջները, փոխում է գլխի նորմալ դիրքը և վերջապես, անվերջ քորելուց հյուծվելով, կորցնում է ախորժակը, նիհարում և սատկում։ Ականջի խոցը յերևան է գալիս վանդակը կեղտոտ պահելուց և ուրիշ ճագարներից վարակվելուց։ Վերքը նկատելուն պես, անհրաժեշտ է, մի կտոր փայտի ծայրին բամբակ փաթաթելով, խնամքով մաքրել վերքի կեղանքները։ Յեթե նրանք շատ ամուր են, պետք է յուղով կամ սապոնով փափկացնել։ Կեղանքները հեռացնելուց հետո, ականջի վնասված մասերը պետք է լվանալ ջրածնի գերթթվուկով կամ բորակի թթույով և ծծմբափոշի ցանել նրանց վրա։ Լավ է նաև ականջը լվալ կրեոլինի 2% լուծույթով։ Բժշկումը պետք է շարունակել մինչև այն ժամանակ, յերբ բոլոր խոցերը լավանան և կեղանքներն անհետանան։ Այս հիվանդությունը շատ վարակիչ է և այդ պատճառով պետք է հիվանդ ճագարներին մեկուսացնել։ Ականջի խոց առաջացնող աքալաթները նույն հիվանդությունն են առաջացնում նաև ձիերի մեջ, դրա համար վոչ մի դեպքում թույլատրելի չէ պահել ճագարներին ձիերի ախոռներում։



Նկ. 47 Ականջի խոց առաջ բերող վոջիլները

ՔՈՍԸ

Քոսը կարող է լինել կամ ճագարի մարմնի մի վորևէ մասում, օրինակ, գլխի վրա, և կամ տարածվել ամբողջ մարմնի վրա։ Հիվանդացած տեղերում բուրդը թափվում է և կազմվում են կեղանքներ։ Հիվանդությունը շատ վարակիչ է և կարող է փոխանցվել նաև մարդուն։ Անասնին մեկուսացնելով, նրա հիվանդ տեղերին հատուկ սպեղանի յեն քսում, վորը

բաղկացած է 1 մաս ծծումբից և 3 մաս խոզի յուղից։ Վարակվելուց խուսափելու համար, անհրաժեշտ է հիվանդ ճագարին դիպչելուց հետո, ձեռքերին էլ քսել այդ դեղը։

ԱՉՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Աչքերը, բորբոքվելու դեպքում, արցունքոտում են և թարախ արտադրում։ Հիվանդությունն առաջանում է խոնավ, խեղդուկ շենքում ապրելուց, վանդակի հակասանիտարական պայմաններից և յերբեմն էլ մրսելուց։ Բժշկելու համար նախ և առաջ պետք է վերացնել հիվանդությունն առաջացնող պատճառները, ապա պետք է լվալ անասնի աչքերը յերեցուկի (առմաշկայի) ջրով։ Յեթե դա չի ոգնում, օրը յերեք անգամ լվալ հետևյալ հեղուկով. Collyr adstr lut 2,5; aq. destill 50,0.

ՆԵԿՐՈԲԱՑԻԼՈԶԸ

Այս հիվանդության ժամանակ ճագարի ներքևի շրթունքի վրա ուռուցք է առաջ գալիս, վորը շատ շուտով տարածվում է ամբողջ ներքևի ծնոտի, կրծքի և նույն իսկ փորի վրա։ Անասնի տաքությունը խիստ բարձրանում է։ Հաճախ ուռուցք առաջացած տեղերում կաշին փետանում է, մեռնում և թափվում՝ վերքեր բաց անելով։ Ճագարը մահանում է հյուծվելու պատճառով։ Այս հիվանդությունն առաջացնողը նեկրոզի բացիլն է, վորը նույն հիվանդությունն է առաջ բերում նաև ձիերի, հորթերի և վոչխարների մեջ։ Սովորաբար ճագարները վարակվում են խոտի կամ արմատապտուղների միջոցով, վորովհետև հիշյալ բացիլն ապրում է հողի մեջ։ Այս հիվանդությունը շատ վարակիչ է և չի բժշկվում, ուստի հիվանդ անասուններին պետք է իսկույն վոչնչացնել։

ՅԵՆԹԱՄԱՇԿԱՅԻՆ ԹԱՐԱԽԱԿԱԼՈՒՄ (ՊԻԵՄԻՅԱ)։

Այս հիվանդությունը չպետք է շփոթել հենց նոր նկարագրված հիվանդության հետ։ Պիեմիյայի ժամանակ ճագարի մարմնի վրա յերևան են գալիս յենթամաշկային թարախոտ ուռուցքներ, յերբեմն բավական խոշոր։ Վորովհետև այս թարախոտ ուռուցքները յերևան են գալիս մարմնի զանազան մասերում, դրա համար էլ վոմանք այս հիվանդությունն անվանում են «թափառող յենթամաշկային պիեմիյա»։ Քանի դեռ թարախ բռնած տեղերը չեն հասնում գլխին, մանավանդ աչքերին, քիչ է պատահում վոր այս հիվանդությունը մահով վերջանա։ Առանց վիրահատության՝ բժշկել չի հաջողվում։ Թարախի բունը բաց անելիս, պետք է սեղմելով դուրս հանել ամբողջ կուտակված թարախը և անցքին յոդ քսել։ Այս հիվանդության պատճառը դեռ հայտնի չէ։

ՃԱԳԱՐԻ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Հետեվի վոտների անդամալուծություն։—*Պետք է տալ մի բաժակ կաթի հետ մի ճաշի գդալ ողի։*

Բ. Հետեվի վոտներին վերքեր են առաջանում անասնի տակը փտող ծղոտի թացությունից յեվ կեղտոտությունից։—*Փոխելով ծղոտը, վերքերը լվանում են տաք ջրով և ապա յոդաֆորմ ցանում։*

Գ. Սեռական որգանների հիվանդանալը։ *Վորձերի սեռական որգանների բորբոքման դեպքում յերեվան են գալիս թարախոտ բշտիկներ։ Այս բշտիկները պետք է դժոխաքարով (լյապիսով) այրել, իսկ սեռական որգանը որական 3 անգամ լվալ կապարաջրով։ Եգերի սեռական վարակիչ հիվանդության ժամանակ ուռչում է որգանը և արտադրվում է թարախոտ լորձունք։ Բժշկելու համար պետք է սրսկել արջասպի 2% լուծույթով։*

ՏԱՆՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐԻՆ ՄԻՍ ՈՒ ՄՈՐԹԻ

Ճագարաբուծությունը, անասնաբուծության այս յերբեմնի մեր յերկրում արհամարհված ճյուղը, այժմ շնորհիվ Կուսակցության Կենտկոմի և Յերկրկոմի մի շարք վորոշումների և խորհրդային համապատասխան մարմինների միջոցառումների, մտնում է զարգացման մի նոր դարաշրջան։ Ճագարը, առաջավոր կապիտալիստական յերկրներում ահագին տնտեսական նշանակություն ունեցող, իսկ մեզ մոտ անցյալում լոկ սիրողների անձնական հաճույքի համար պահվող այդ անասունը, այժմ արդեն արդարացիորեն ապրելու և բազմանալու լայն իրավունք է ձեռք բերում Խորհրդային Միության մեջ, խոստանալով տարածման ու զարգացման չլսված ու չտեսնված թափ։

Մսի պակասությունը դեռևս սուր խնդիրներից մեկն է մեր յերկրում։ Արագությամբ բսող և մեծացող մեր նոր քաղաքները, որ որի վրա մեծացող մեր հին արդյունաբերական կենտրոնները միս սպառողների միլիոնավոր նոր շարքեր են ստեղծում։ Մսի պահանջն ավելի ու ավելի մեծանում է նմանապես և գյուղական ազգաբնակության մեջ, վորովհետև կոլտնտեսականն էլ արդարացիորեն ցանկանում է ավելի լավ ապրել ու սնվել, քան ապրել է նա առաջ։ Իսկ մեր անասնաբուծական խորհտնտեսություններն ու կոլտնտեսային ֆերմերը դեռևս այնքան չեն ամրացել, վոր կարողանան բավարարել լիովին մսի գոյություն ունեցող ու հետզհետե աճող պահանջը։ Ճագարը, վորպես խոշոր կենդանիներից ավելի համեղ, մարսողական ու սննդարար միս տվող և վորպես շուտ հասունացող անասուն, գալիս է իր խոշոր ոժանդակիչ դերը խաղալու մսի խնդրի լուծման գործում։ Նա հավասար իրավունքներով մտնում է մեզ վաղուց ծանոթ գյուղատնտեսական կենդանիների—թռչնի, խոզի, վոչխարի և կովի շարքը, ստեղծելով մսի նոր, հավելյալ խոշոր մի աղբյուր։ Ճագարը բերում է իր հետ նա՛և վալյուտայի նոր աղբյուրներ, շնորհիվ իր հրաշալի, մեծ պահանջ ունեցող մորթու, խոստանալով մտցնել իր խոշոր լուման սոցիալիստական շինարարության գործում։

Մեր կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և անհատականների առաջ բացվում է այս բնագավառում գործունեության լայն ասպարեզ։ Նրանք պետք է ձեռնարկեն ճագարանոցներ կազմակերպելու գործին և ուշի ուշով ուսումնասիրելով այս նոր անասունին, ձգտեն քիչ ծախսեր կատարելով՝ շատ օգուտ ստանալ նրանից։ Նրանք պետք է միջոցներ գտնեն իրենց ճագարների կերի աղբյուրներն հաստատապես ապահովելու համար, պետք է մաքառեն հիվանդությունների դեմ՝ կատաղի կռիվ մղելով ամեն մի գլուխ ճագարի պահպանության համար։ Լուծելով կադրերի խնդիրն ու տիրապետելով ճագարաբուծության տեխնիկային և աննահանջ համառությամբ կիրառելով Ստալինյան պայմանները, պետք է բարձրացնեն տնտեսության մթերատվությունն ու ապրանքայնությունը կապիտալիստական յերկրներում դեռ չտեսնված բարձրության։

Խորհրդային յերկիրը պահանջում է միս ու մորթի։ Կոլտնտեսությունները պետք է առաջին տեղը գրավեն այդ պահանջը բավարարելու գործում։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՈՍԿՎԱՅԻ, ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՅԵՎ ԻՎԱՆՈՎՈ—ՎՈԶՆԵՍԵՆՍԿԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ Կ(Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ 1932 Թ. ՄԱՅԻՍԻ 8-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

1. Հավանություն տալ Մոսկվայի, Լենինգրադի և Իվանովո-Վոզնեսենսկի մարզկոմների ճագարաբուծությունը զարգացնելու նախաձեռնությանը։

2. Մոսկվայում և Մոսկվայի մարզում 1932 թ. վերջին ճագարների թիվը հասցնել 360 հազարի, վորից 100 հազարը համալրել իր արտադրական ունեցվածքից և 260 հազար՝ ի հաշիվ ուրիշ մարզերից բերածների։

3. Լենինգրադում և Լենինգրադի մարզում—մինչև 1932 թ. վերջը ճագարների թիվը հասցնել մինչև 220 հազարի, վորից 30 հազարը համալրել իր արտադրական ունեցվածքից և 190 հազար՝ ի հաշիվ ուրիշ մարզերից բերածների։

4. Իվանովո-Վոզնեսենսկի մարզում, մինչև 1932 թվի վերջը ճագարների թիվը հասցնել մինչև 115 հազարի, վորից 35 հազար համալրել իր արտադրական ունեցվածքից և 80 հազարն ի հաշիվ ուրիշ մարզերից բերածների։

5. Պարտավորացնել Սոյուզպուշնինին համբարակել Մոսկվայի, Լենինգրադի և Իվանովո-Վոզնեսենսկի մարզերի համար 530 հազար մայր-ճագարներ ուրիշ մարզերից։

6. Ճագարաբուծական տնտեսություններ կազմակերպել ֆաբրիկներին, գործարաններին կից փակբանկոոպների և գործարանային ճաշարանների միջոցով։ Հիմնարկներից դուրս աշխատող ժողսննդի ճաշարաններին, դպրոցներին, մանկատներին, հիվանդանոցներին, հանգստյան տներին կից։

7. Ճագարաբուծական տնտեսություններ կազմակերպելիս՝ թույլ չտալ բյուրոկրատիկ կենտրոնացում, այլ զարգացնել նրանց՝ գործարանային կազմակերպությունների ինքնագործունեության հիման վրա և տեղական միջոցների առավելագույն ոգտագործմամբ։ (Համամիութենական Կ(բ) Կ.ԿԿ)։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Скворцов В. К. «Основа кролиководства» *Մոսկվա 1930 թ.*
Кувшинов А. П. «Кролиководство» *Մոսկվա 1930 թ.*
Волконский «Разведении кроликов в Сибири» *Սիբկրայիզդատ 1930 թ.*
Ускова О.И. «Кролиководство и его продукция» *Մոսկվա 1930 թ.*
Гадзяцкий Н. П. «Сельско-хозяйств. меховое и пуховое кролик-во и кооперативный сбыт его продуктов» *Մոսկվա 1929 թ.*
Гадзяцкий Н. П. «Разведение и содержание кроликов» *Մոսկվա 1931 թ.*
Франческо Майокко «Кролиководство» *Մոսկվա 1930 թ.*
Лисовский Н. «Кролиководство» *Մոսկվա 1930 թ.*
Ролофс А. И. «Разведение кроликов на Сев. Кавказе» *Ռոստով 1931 թ.*
Осипов А. «Кролики» *Մոսկվա 1930 թ.*
Осипов «Справочник для кроликовода» *Մոսկվա 1930 թ.*
Макаревский А. Н. (*պրոֆեսոր*) «Кролиководство» *Մոսկվա 1930 թ.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ճագարը յեվ նրա տնտեսական նշանակությունը
   - Ճագարաբուծությունը մեզ մոտ և արտասահմանում 3
   - Ճագարի ծագումն ու տարածումը 7
   - Ընտանի ճագարը 12
2. Ի՞նչ է տալիս ճագարը
   - Միսը 14
   - Մորթին 16
   - Բուրդը և աղվամազը 21
   - Կաշին 24
   - Սոսինձը 25
   - Աղիքները, վոսկորները, արյունը, աղբը 25
   - Ճագարը և գիտությունը 26
3. Ճագարի տեսակները
   - Ցեղական, միտիս և հասարակ ճագարներ 26
   - Խոշոր տեսակները
     - «Ֆլանդրը» 28
     - «Սպիտակ աժդահան» 31
     - «Գերմանական թիթեռը» 32
     - «Նորմանդականը» 33
     - «Անգլիական խոյը» 33
     - «Պատագոնյան» ճագարը 34
   - Միջակ տեսակները
     - «Վենայի կապույտը» 35
     - «Վենայի սպիտակը» 36
     - «Շինշիլլը» 37
     - «Բելգիական նապաստակը» 38
     - «Ֆրանսիական արծաթավունը» 40
     - «Գերմանական արծաթավունը» 41
   - Մանր տեսակները
     - «Անգլիական արծաթավունը» 42
     - «Սեվահուրը» 43
     - «Հավաննը» 44
     - «Գորնոստայը» կամ «Ռուսական ճագարը» 45
     - «Լեհականը» 46
     - «Տրուսը» կամ հասարակ ճագարը 47
     - «Անգորայի» ճագարը 48
   - Ճագարի նորագույն տեսակները
     - «Կաստորեքսը» 50
4. Ճագար պահելու սիստեմները
   - Սիստեմների հիմնական տարբերությունը 52
   - Արհեստական սիստեմները
     - Վանդակը 53
     - Փակ ճագարանոցների սիստեմը 60
     - Արտաքին վանդակների սիստեմը 61
     - Վոլյերների սիստեմը 64
   - Կիսաբնական սիստեմները
     - Գարեննի սիստեմը 65
     - Պարկետի սիստեմը 70
     - Բլենդաժի կամ խրամատի սիստեմը 73
5. Ճագարների կերակրումը
   - Ի՞նչով պետք է կերակրել ճագարներին 76
   - Կերի հյութալի տեսակները 78
   - Կերի կոշտ տեսակները 81
   - Կերի ուժեղ տեսակները 81
   - Ի՞նչով չի կարելի կերակրել ճագարներին 86
   - Ինչքա՞ն պետք է կեր տալ ճագարներին 87
   - Ճագարներին չաղացնելը 92
6. Ճագարների բազմացումը
   - Մի քանի խոսք ժառանգականության մասին 94
   - Մետիզացում 98
   - Ճագարի վո՞ր տեսակները պետք է պահել 99
   - Քանի՞ հատ ճագար պետք է պահել 102
   - Եգերի և վորձերի ընտրությունը 104
   - Զուգավորումը 107
   - Հղիությունը 111
   - Ծնումը 113
   - Ձագերի զատումը 114
   - Ծծմայրերը 116
   - Կերակրող մոր խնամքը 117
   - Ձագերի խնամքը 119
7. Մի քանի անհրաժեշտ լրացուցիչ գործնական տեղեկություններ
   - Մորթու խնամքը 122
   - Ճագար մորթելը 123
   - Ճագար մաշկելը 124
   - Մսի պատրաստումը 126
   - Մորթին չորացնելու միջոցները 126
   - Ճագարներին նշան դնելն ու գրի առնելը 129
   - Ճագարի հասակի վորոշումը 131
   - Ճագարի սեռի վորոշումը 132
   - Ճագարներին կրտելը 132
   - Ճագարների տեղափոխումը 133
   - Ճագարի թշնամիները 134
8. Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսական ճագարաբուծական ֆերմում
   - Վոր սիստեմի վրա կանգ առնել 135
   - Բրիգադը և աշխատանքի բաժանումը 136
   - Գործարքի վորակական ու քանակական ցուցանիշները . . 138
   - Աշխօրերի ավելացումն ու պակասեցումը 139
   - Սոցմրցումն ու հարվածայնությունը 141
   - Կադրերի խնդիրը 142
9. Ճագարների հիվանդությունները ու նրանց բժշկումը . . . 144
   - Ինչպես կանխել վարակիչ հիվանդությունները 145
   - Ինչպես իմանալ հիվանդ է ճագարը, թե վոչ 146
   - Կոկցիդիոզը 146

Փորհարինք 147
Հարբուխ 147
Ականջի խոցը 148
Քոսը 148
Աչքերի բորբոքումը 149
Նեկրոբացիլոզը 149
Ցենթամաշկային թարախակալում 149
Ձագերի այլ հիվանդությունները 150
10 Տանք խորհրդային յերկրին միս ու մորթի 1503
11 Հավելված 152
12 Օգտագործված գրականության ցուցակը 15

Отв. редактор
А. Г. Авакьян
Техн. редактор
Г. М. Маркарьян

2534
С—Х-42

Сдано в наб. 9/VI 1932 г.
Сдано в печ. 26/VII 1932 г.
Об'ем 9 3/4 печ. листа
Тираж 3000 экз.

Уполкрайлита № 1577. Ростов н-Д. Газ.-кн. тип. СККПО Ст.-форм. А5-148x210. Зак. № 3093

ՀՀ Ազգային գրադարան
NL0295731

ԳԻՆԸ 1 Ռ. 20 ԿՈՊ.
Цена 1 р. 20 коп.

На армянском языке

Г. ЛЕВОНЯН

КОЛХОЗНОЕ КРОЛИКОВОДСТВО

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԴԻՄԵԼ ՀԱՍՑԵՈՎ

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)